Իսկ աշխարհն Հնդկաց Գ արթոք են: Առաջինն Սինափաթան () քաղաք, որ է տակ պարիսպ ունի, եւ ամէն պարսպի մէջն ճՌ տուն է, որ է ԷՃՌ. եւ է նա արթոն Հնդկաց թագաւորացն, ուր Աբենէր եւ Յովասափ նստէին: Բ արթոյն Մնդան է անունն, եւ Գ-ին Բեդար. եւ ունի Բ դուն ծովու. մին դնովն ի վեր ի Հրմուզ գան ի Խորասան վաճառականքն (ԲԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ) եւ Բ դնովն ի վերայ Քարկեդոն կղզոյն գան ի Բարելոն: Երատացոց անապատն ի Հնդստան է, ուստի եկն Բարաղամ ճգնաւորն եւ լուսաւորեաց զՅովասափ (ԲԶԷԸԹԺԼԿԶՂՃՊՓՄՆ):

Իսկ ի կողմն արեւմտից հարաւոյ Հապաշտտան է եւ արթո թագաւորաց նոցա: Մայրաքաղաք Եթովպիա է (ԲԶԷԸԹԺԼԿԶՂՃՊՓՄՆ):

Իսկ ի կողմն արեւմտից Տռանգստան է (ԲԺԼԿԶՂՃՊՓՄՆ):

Սպանիա Գ անկիւնի է, ուր կայ նշխարք սրբոյն Յակոբայ (առաքելոյն): Եւ անդ է բովն ոսկեհանաց, ուր չարչարեն զմահապարտսն, եւ յարեւմտից կողմանէ գնայ հասանէ յԱկանացոց աշխարհն եւ անտի ի Պղնձէ քաղաքն, որ այժմ աւերակ է, եւ նա կոչի Լիւրիկէ, որ է եզր աշխարհիս, ուր գնաց Պօղոս առաքեալն: (ԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ):

Եւ ապա աշխարհն Ալամանաց, ուր կայ Եզր Աստուածածինն. եւ են նոքա յազգէն Արշակունեաց՝ յարիական ազգէն Տրդատայ, զոր խնդրեաց Կոստանդիանոս եւ Տրդատ պարեգեւեաց նմա (ԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ) ԴՃ () այր (ԹԺԻԾՂՃՊՓՄՆ):

Յարեւմտից ի հիւսիսոյ կողմն (ԱԲԳԴԵՁ) Գերմանացոց () աշխարհն (ԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ) յելից Գաղիոյ, եւ սահմանի յարեւմտից (ԱԲԳԴԵ) հիւսիսային ովկիանոսիս առ ակամբք Դանուբար գետոյն (ԻՊՃ):

Դաղմատիա յելից կալով Գաղիոյ սահմանի յարեւմտից (ԱԲԳԴԵՁ) ակամբք Դանուբար գետոյն:

Իտալիա յարեւելից Գաղիոյ ի Դաղմատիոյ հարաւոյ կոյս է:

Եւ մեծն Հռոմ, զոր շինեաց Ռոմելոս թագաւորն, ուր կան արեգակունքն աշխարհի Պետրոս եւ Պօղոս, ուր արթո եւ պատրիարքարան է Լատինացոց, որք են Տռանգք:

Եւ Դ արթոք կան յարեւմուտս. Հռոմ եւ Միլան եւ Անկլիգա եւ Փարեզ (ԲԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ) - Գ քաղաքն արթոք են աշխարհակալ թագաւորացն (ԲԷԹԺԻԹԿԶՂՃՊՓՄՆ) - եւ Փարեզ քաղաքն (ԶԼԿԶՂՃ) դասատուն վարդապետաց (ԲԶԷԸԹԺԼԾԿԶՂՃՊՓՄՆ):

Եւ ապա յայնկոյս Դանոբար գետոյն ազգն Գոթաց եւ ապա Ըռուսաց (ԲԶԷԸԹԺԻԼԾԿԶՂՃՊՓՄՆ), որ Մոսկով է անուն քաղաքին որ աթոռ է ազգին Ըռուսաց (ԲԹԺԻԼԿԶՂՃՊՄՆ), եւ Ուլախաց ազգն սահմանակից է նմին (ԲԶԷԸԹԺԻԼԿԶՂՃՊՄՆ), եւ ապա ազգն Բուլղարաց գայ հասանէ ի Սարմատացիք եւ անտի ի Վիրս: Այսոքիկ ամենեքեան յարեւմուտք են ի կողմն հիւսիսոյ (ԲԶԷԸԹԺԻԼԾԿԶՂՃՊՓՄՆ):

Թրակացոց () աշխարհն յարեւելից կալով Դաղմատիոյ, եւ ունի Թրակիա փոքր աշխարհս «, գետք եւ քաղաք եւ կղզիք եւ ունի մայրաքաղաք զերջանիկն Կոստանդինուպոլիս (ԱԲԳԴԵԶ), եւ քաղաքն Սամանդրիա, եւ ի վերայ Լովայ եւ Սէչովայ գայ հասանէ մինչ ի Կոստանդինուպոլիս (ԲԶԷԸԹԺԻԼԾԿԶՂՃՊՓՄՆ):

Եւ Վենետիկն աթոռ է ի մէջ ծովուն, ուր քեմիադարն բանի եւ զարծաթն ոսկի ներկէ: Զի ԺԲ ազգ եւ լեզուք Ֆրանգն է, եւ Ը Հոռոմն եւ Ը Վրացին: Եւ Օշինթոս քաղաք է ի Թրակիա մօտ ի Ըստագիրա, ուստի Արիստոտել էր (ԲԶԷԸԹԺԻԼԾԿԶՂՃՊՓՄՆ):

Եւ այլ բազումք ազգք (ԲԶԷԸԹԺԻԼԾԿԶՂՃՊՓՄՆ) եւ քաղաք եւ աշխարհք, զոր անօգուտ համարիմ զշարակարգելն դոցա. վասն որոյ ոչ կամեցայ գրել զամենայն (ԱԳԴԵԶ), զի մի ձանձրացին լսողքն (Զ):

Եւ Քրիստոսի (ԲԷԹԺԻԾԶՃՊ) մարդասիրին (ԷԾԿԶՃՊ) փառք յաւիտեանս ամէն. (ԲԷԺԻԾԶՃՊ):

ՎԵՐԶ

Մեկնութիւն քերականի

[Ա]

[ԲԱՆ]

«Քերականութիւն է հմտութիւն, որք ի քերթողացն եւ ի շարագրացն իբրու բազում անգամ ասացելոց: Եւ մասունք են նորա վեց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ոմանք ներհակք ասացին, եթէ փոխանակ փարթամ երեւեցուցանելոյ զքերականութիւնն, նա ի յանբանութիւն եւ ի վատթարութիւն ածիք, զի ոչ ասացիք զհտութիւն, այլ հմտութիւն, այսինքն՝ ծանաւթութիւն կամ տեղեկութիւն. զի տեղեկութիւն չէ բոլորովին զհտութիւն: Առ որ ասեմք, եթէ զհտութեամբ ասաց զարուեստն. զի թէ հարցանեն ընդ քեզ անուն կամ բայ, որ է բանի մասն, նա հմտութեամբն, որ է հնմտութիւն, որ մտես ի յարուեստն զերդ ի գետի հուն, որ լինի հնմտութիւն: Նա հնմտութեամբն զքերթողացն եւ զշարագրացն տաս զպատասխանին զերդ զգիտուն, ապա թէ ոչ՝ դու ի նախնեացն անգիտացն անկար ի յոճ եւ ի սովորութիւն ըստ անասնոցն երթալոյ ի սովորական տեղիս: Եւ վասն այնոր ասի *հմտութիւն*, զի կատարեալ զհտութիւնն աստուծոյ միայն է. իսկ մարդկանս մասնաւոր միայն է զհտութիւն՝ կռած բանի կամ կոկ, զոր պարտ է կրթիլ ուսումնասիրացն ի բանս:

[ԲԱՆ]

«Նախ՝ վերծանություն ներկուր ըստ առոգանութեանցն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Գիտություն կռած բանի պիտի ուսումնասիրացն կրթիլ ի բանս. եւ գոր ինչ ասէ կամ գրէ՝ նա տասն առոգանութեամբքն լինին՝ շեշտին կամ բթին եւ կամ այլովքն ի տասանցն՝ առ որ պիտանանայ ի բանն:

[ԲԱՆ]

«Երկիր՝ գրուցատրություն ըստ ներգոյս քերթողական յեղանակս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որ արուեստաս զարուեստիս զբառսն տանիս, այսինքն՝ քերթողական եղենակաս:

[ԲԱՆ]

«Երիր՝ լեզուաց եւ հնագէտ պատմութեանց առձեռն բացատրություն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որ զազգին հնացեալ Կորճայքն եւ զծոռութիւնն ի լեզուացն հանէ, զի ի հնոցն ի վեր է հաստատած քերականութեամբ, որ է առձեռն բացատրություն ի յանուանցն ճշմարտութիւն, որպէս զբերանունն, զերդ զկայծառ եւ կամ զշաքր եռաց, որ են բերանունք:

[ԲԱՆ]

«Չորիր՝ ըստ ստուգարանութեան գիւտ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որ համեմատես զՆոր կտակարանսն ընդ Հինն եւ կամ թէ ասես *Դաւթի* կամ *Դաւթայ*, եւ կամիս զագնիւն ասես: Եւ որպէս դէմընդդիմելն է համեմատելն:

[ԲԱՆ]

«Հինգերիր՝ համեմատութեան տեղեկություն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Դատելն «սահմանել» ասէ զասացուածսն, որ երբ գտնուս զումեք շարագրած, դատես՝ եթէ ուղղափառի՞ է, թէ՞ ոչ, կամ թէ բժշկական է, թէ՞ աստեղաբաշխական:

[ԲԱՆ]

«Վեցերիք՝ դատումն քերթածաց. նա եւ լաւագոյն է յամենեցուն, որք ըստ ներարհեստիս են»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս թէ այս բանս առաւել պիտանի է այս արուեստիս հետեւողացն եւ գիտողացն քան զամենայն:

[Բ]

[ԲԱՆ]

«Վերծանութիւն է մասն քերթածաց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վերծանութիւնն «գիտութիւն» ասի, իսկ քերականացն՝ մասնաւոր գիտութիւն, զի աստուծոյ գիտութիւնն միայն է ընդհանուր, իսկ մարդկային գիտելս ամենայն մասնաւոր է՝ շարագրածաց եւ ժամանա[կա]գրածաց:

[ԲԱՆ]

«Կամ շարագրածացն անվթար յառաջբերութիւն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կրկին գիտութիւն է՝ անսխալ տարբերութիւնն յասելն եւ ի լսելն:

[ԲԱՆ]

«Եւ վերծանելի է ըստ ենթադատութեան»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ենթադատելն «ենթակայ դատել» ասի, եւ *դատելն*՝ քննել զենթակայէ իմն է: Քննէ եւ զվերպէն տայ զպատասխանին եւ զխաւսսն ի գովեստ կամ ի պարսաւ:

[ԲԱՆ]

«Ըստ առոգանութեանցն, ըստ տասանց արուեստիցն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ ահա աստ պարզէ զվերին յիշեալ ենթադատութիւնն, որ դատես եւ պարզես զբանն վասն ո՛ւմ որ լինի, եւ բաժանես ըստ մարդոյն ոճոյն՝ եթէ գոռոզ եւ եթէ ողոք:

[ԲԱՆ]

«Ըստ տրոհություն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որ տաս այնմ, որում եւ կամիս՝ ըստ ոճոյն, որպէս եւ վերագոյն ասացաւ:

[ԲԱՆ]

«Քանզի յենթատուներէն՝ զգարութիւնն, իսկ յառոգանութէն՝ զարուեստն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ըստ արուեստաւոր խոհակերին, զի *խոհակերն* «մսագործ» ասի, որ իմաստութեամբ բաժանէ զոչխարին յաւդուածսն. եւ ամէն յաւդուած զիր միսն ունենայ եւ չելնէ այնոր միսն ի յայն, կամ այնոր՝ ի յայն, եւ միւս անդամոյն՝ ի միւս այլ անդամն: Այս արիւնակաւս լինի ընթերցաւորն եւ խաւսեցաւորն, նաեւ գրագիրն եւս:

[ԲԱՆ]

«Իսկ ի տրոհութենէն զպարունակ միտսն տեսանեմք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսպէս բաժանես զգրոյցսն, որ չխառնես եւ աւերես զբանն:

[ԲԱՆ]

«Զի զողբերգութիւնն դիւցազնաբար վերծանեսցուք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Դին «աստուած» ասի, եւ *դիւցազնաբարն*՝ «աստուածաբար», որպէս եւ գրեալ էր, յորժամ որ սպանին տիտանեանքն զԴիոնեսիոս աստուածազգին եւ անդամ-անդամ կոտորեցին եւ յաւշեցին, նա տանէին զոչխարսն ի զոհն եւ յաւշէին անդամ-անդամ, եւ զոռոգաձայն լային աստուածաբար եւ ասէին, թէ՛ *«Զերդ զքեզ ո՞վ լինի»*, եւ կամ՝ *«Ո՞վ լնու զքո տեղն»*:- Եւ ա՛յդ է դիւցազնաբարն՝ թէ իմանաս:

[ԲԱՆ]

«Իսկ զկատակերգութիւնն՝ աշխարհաւրէն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կատակն բերանուն է. «կատակել» ասէ, եւ *կատակելն* աշխարհաւրէն ասել պարտ է: Եւ կարէ առանց քերականութեան ասիլ, եւ չէ՛ սնիկ առոգանութեանցն:

[ԲԱՆ]

«Եւ գղամբանականն՝ ուժգնակի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի գրաւթաձայնն կանչելով ասեն եւ անհեթեթ ձայնս արձակեն՝ վայիւ եւ կոռոչելով:

[ԲԱՆ]

«Եւ տաղն քաջոլորակի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տաղին եղանակն շարայարմար պիտի, որ քաղցր գայ ե՛ւ ելն, ե՛ւ էջն՝ ի տեղի եւ ուղղորդ, եւ գրառն՝ չափաւոր ըստ չորք արուեստին: Եւ յորժամ բառն եւ եղանակն եւ միտքն եւ տանցն չափն ի յոճի լինին՝ նա ապա լինին տաղքն պատշաճագոյնք եւ դիպաւորք:

[ԲԱՆ]

«Եւ զքնարական քերթութիւնն ներդաշնակապէս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Քնարն գործիքն է՝ զի՛նչ որ լինին՝ թէ՛ երկուադեան է եւ թէ՛ չորսադեանն եւ կամ տասնադեանն, որպէս Դաւթայն, եւ կամ զի՛նչ եւ է հնար արուեստական հնչողաց ծնծղայից եւ այլոց: Իսկ ներդաշնելն [այն] է, որ դաշնես եւ ըդորդես զձայնդ եւ զերգն եւ զտաղն, որ խառնին յիրեար եւ որպէս զմի ելանեն եւ չելնեն խառն եւ անյարմար:

[ԲԱՆ]

«Եւ զխանդաղատականն թուլակի եւ աշխարապէս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իտանդաղատելն «ողորբել» ասէ, որ ողորպականս ձայն է՝ որպէս մայրն ընդ որդին, թէ՛ «Մի՛, իմ հաւատ», եւ կամ թէ՛ «Ար[ի՛], ե՛կ իմ հոգի» եւ այլ այսպիսիք: Եւ աշխարելն՝ «ողորմել», որպէս թէ՛ «ողորմեաց ինձ վասն աստուծոյ» եւ որ սոցին նման են:

[ԲԱՆ]

«Զի որք ոչ ըստ սոցայցն լինին խտրութեան եւ զքերթողացն արութիւնսն տապալեն, եւ զոյնս վերձանողացն ծիծաղելիս յարկացուցանեն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ որ այսպէս չլինի՝ նա զքերթութեան արուեստն ո՛չ պահէ եւ ո՛չ գիտէ զընտրութիւնն, այլ տապալէ եւ աւերէ զքերթածացն զգիւտսն եւ զքաջութիւն գիտնականացն ծիծաղելիս առնէ:

[ԲԱՆ]

«Ոլորակ է բացագանչութիւն պատկանաւոր ձայնի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ոլորակ այս երեք առոգանութիւնքս են՝ *շեշտն, բութն, պարոյկն:*

Ձի թէ ուժով վերացուցանել կամիս զձայնն՝ նա զշեշտն ի դէպ է դնել. եւ թէ հարթ՝ նա զբութն. եւ թէ ոլորակէս զձայնն՝ նա պարոյկն: Իսկ բացագանչութիւնն հեռաձայնութիւն ասի, որպէս որ ասես, թէ «Արի՛ե՛՛ գանչ կամ կանչ է, զի ա՛յլ ուղղորդ է *կանչելն*, քան *զգանչելն*: Եւ *պատկանաւոր* ասելն «պատեհաւոր» ասի. եւ պատկանաւոր ձայնն մարդոյն միայն է, որ բանական արուեստի ուղղէ զձայնն:

[ԲԱՆ]

«Թէ ըստ վերաստութեան՝ շեշտիւն, եւ թէ ըստ հարթութեան՝ բթիւն, եւ թէ ըստ պարբեկութեան՝ պարուկաւն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հաւասարն է՝ որ ոչ երկար լինի եւ ոչ սուղ. բայց ի հաւասարին զբութն այլ պիտի դնել: Այլ պարբեկելն «շրջադարձել» ասէ, զի յորժամ զձայնն ի վեր տանիս եւ կտրես, նա շեշտին պիտոյանայ դնել, որ է ոյժ: Եւ երբ հաւասար՝ նա բթին պիտոյ է դնել, վասն զի եւ հաւասար տանելն ոյժ է, ապա ի շեշտէն եւ ի բթէն պարոյկն գոյանայ, զի ի վեր տանելով զձայնն եւ ի վայր բերելով լինի, որպէս ի սեաւ բրդէ եւ ի սպիտակէ՝ գոշն:

[ԲԱՆ]

«Կէտք են երեք. կէտ աւարտեալ, միջակ, ստորակէտ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կէտն ու ոյժն անմասն իրք են, որպէս անհատն, զի թէ հատանես՝ էլնէ ի կերպէն: Ձի եղ զկատարման զկէտն յառաջ քան զսկզբանն սակս տարակուսելոյ զաշակերտսն, որ աշխատին: Ձի զկատարման կէտն եղ որպէս զթագաւոր, եւ զայլսն՝ որպէս զարքայից ծառայս եւ սպասաւորս, զի կատարման կէտ է:

[Գ]

[ԲԱՆ]

«Կէտ է տրամախոհութեան յանգեցելոյ նշան. եւ միջակ՝ յոգի սակս ընդունելոյ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տրամախոհութիւն բաժանումն իմաստից է, եւ աւարտեալ կէտն վճար եւ հանգիստ է բանին: Եւ յորժամ զայս երեք կէտս դնես՝ նա՛ կատարեցաւ իմաստական բանն, որպէս

եւ է', եւ սահմանեցաւ հանգիստն, որ առնուս հոգի, այսինքն՝ շունչ-ըստ արինի ճանապարհորդաց, որ նստին եւ հանգիստ առնուն. նոյնպէս եւ դու ի բանն յոր եւ լինիս՝ ի կատարմանն հանգի՛ր եւ նստո՛ր՝ զկնտկտոց լեզուիդ՝ շունչ առնելով եւ հոգի: Եւ բանն վճարի ուր մասամբքն՝ սահմանեալ կիսաշնչաւքն: Իսկ ստորակէտ է, որ բանն, վասն որոյ է՝ ջայտնի, որպէս որ ասես ընդ մարդ, թէ՛ *գնա՛*, եւ չասես, թէ՛ ո՛ւր, եւ կամ ասես, թէ՛ *ա՛ռ*, եւ ջայտնես, թէ՛ զի՛նչ առնու:

[ԲԱՆ]

«Եւ ստորակէտ է տրամախոհին չեւ եւս յանգեցելոյ, այլ ա՛յլ եւս կարատացելոյ նշանի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ահա ի վերջին կէտն եկ եւ կու հարցանէ, թէ զի՞նչ իրաւք բաժանի կէտն ի ստորակիտէն. եւ առնէ ինքն զպատասխանին բարառնաբար՝ եթէ ամանակաւն, որ է մասն ի ժամանակէն, որպէս զբանն, զոր առնես. նա ի յընդհանուր ժամանակէն իւր մասն առնու՝ մինչ ուր կատարի:

[ԲԱՆ]

«Ի՞նչ առանձնանայ կէտն ի ստորակիտէն, - ամանակաւն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տեսանե՞ս, զի վասն տարակուսութեան աշակերտացն ի յետին եւ ի մեծ բացատն գնաց, զի յետին բացատն ամենեւին մեծ է, եւ առաջինն՝ ամենեւին փոքր. իսկ զմիջինն չասաց՝ վասն աշխատութեան ուսումնասիրացն: Եւ եթող զմիջինն քան զկատարմանն՝ սուղ, եւ քան զսկզբանն՝ երկար, որ լինի միջին:

[ԲԱՆ]

«Զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն՝ ամենեւին նուազ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ո՞ր է առաջին կէտն.- ստորակէտն, որպէս որ ասես զայս արինակ, եթէ՛ *«Ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ, եւ դու առ ի՞նչ գաս»:* Եւ չէ՛ պարտ ասել հեճկիւ կամ քամահանաւք «զառ իս գալն», այլ՝ խղճիւ, զի հեճկիւն հեշտ է քան զխղճիւն: Եւ բացատնին առաջինն փոքր է քան զմիջինն, եւ միջինն՝ քան զվերջինն:

[Դ]

[ԲԱՆ]

«Հագներգութիւն մասնաւոր է»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ կարէ արուեստս առանց հազներգութեան գոյանալ, բայց հանդիպի ժամանակ, որ պիտանայ իւրն եւ լնու զկարիս նորին:

[ԲԱՆ]

«Հազներգութիւն է մասն քերթածաց՝ ներպարտեալ ստորադրութիւն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի պարունակեալ է զինքն արուեստս եւ ի մէջ առեալ եւ պահէ. յորժամ ի պէտք լինի՝ յառաջ բերէ:

[ԲԱՆ]

«Եւ ողեալ է հազներգութիւն ի հազնելոյ կարկաստուն բանս, եւ կամ ի սարդենի մահակէ պար գալով երգել զհումերական քերթածսն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կարկաստուն բան է այն, որ կարաւտի յառակաւոր բան: Եւ կացուցանէ զառակաւոր բանն որպէս զՃային առակն, զոր եւ հաւուց կամեցան դնել թագաւոր, եւ կան այլ ինչ առակք, որ կամ ասացած վասն կարեաց ինչ բանի:

Իսկ *հազներգութիւնն* «կատակերգութիւն» առ մեզ ասի ի մեր բառս, իսկ ի յունացի բառն՝ «գաւազաներգութիւն», որ է առասպելաբանութիւն, որպէս ասեն յառասպելն՝ զԱպողոն աստուածն ողորմեալ երիտասարդին՝ որ վասն կուսին էր տխրեալ, եւ ետ նմա սարդենի մահակ, այսինքն՝ գործիք ծնծոյալից եւ կամ այլ ինչ ի հնչողականաց եւ զՀովերոնի զքերթածսն երկու գիրս, որ են ԻԴ ճառս դրուատած: Եւ ասաց նմա՝ ձայնի՛ւ մխիթարիլ ի վշտացն, զոր վասն կուսին ունէր: Եւ այսու պատճառաւս զերծոյց զկուսութիւն աղջկանն: Այլ բանս այս երկար է, ո՞վ ուսումնասէր, բայց դու ե՛րթ յիմաստասէրն եւ ուսի՛ր ի նմանէ:

[Ե]

[ԲԱՆ]

«Տառ է անմարմին՝ որպէս զհոգի, եւ գրի է՝ որպէս զմարմին»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իսկ բազմութիւն հայկական գրոյս երկու պատճառս ունի. առաջինն՝ զազգացն զԿորճայսն <է>, այսինքն՝ զբազմութիւն հայոց լեզուիս, զծոռութիւնն եւ զթոթովախասութիւնն գնչատացն: Երկրորդ պատճառն՝ լեզուիս հարստութիւնն:

[ԲԱՆ]

«Գիր է երեսուն եւ վեց՝ յայրէ մինչեւ ցքէ. եւ գիր ասի, վասն զի քերելով իմն գաղափարի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Գրելն քերել ասի, այսինքն՝ որ ծայրիւ գրչին քերէ զգրելին եւ ապա նկարեալ յարինէ զի՛նչ որ կամի:

[ԲԱՆ]

«Քանզի գրելոյ քերել ասիր առ նախնեալքն, որպէս եւ ի Հումերոնին՝ «Եւ [մակա]գրեալ իմ այժմ գոտին քո գարշապար, ունա՛յնս պանծաս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հումերոս յիւր տաղսն գրեալ է, թէ ի տրոյական պատերազմին այր ոմն Դիոմիդէս նետիւ հարեալ զոտն Պարիսի Տրոյացոյ, եւ գանչեալ <է>, թէ՛ «Հարեալ իմ այժմ գոտին քո գարշապար, ունա՛յնս պարծիս»: Եւ նորա պատասխանեալ, թէ՛ «Նետ ի յաղջկանէ արձակեալ ինձ ոչ վնասեաց»: Այս արինակ է գրելոյն, որ է՝ քերելոյն:

[ԲԱՆ]

«Նա եւ նոյնք իսկ տառք կոչին, վասն զի ունին տարրումն իմն եւ դասութիւն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս տարերքոյ, որ ունին հակառակութիւն եւ հաշտութիւն, որ է միաւորութիւն, եւ իւրեանց միաբանութեամբն ծնանին զամենայն, նոյնպէս եւ գիրն ի ձայնաւորաց եւ յանձայնից միացեալք գոյացուցանեն զբանն ի լերկից եւ ի թաւաց, ի բթից եւ յայլոցն, որպէս յառաջ ունիս ուսանել կամ իբր վերոյ ասացաք: Արդ՝ զի՞նչ նմանի քերականութիւնս.- մարդոյ. տառն ի հոգի եւ գիրն ի մարմին: Եւ այս եւթն ձայնաւոր գրերս յեւթն զգայարանքս մարդոյս, որով յարդարի մարդութիւնս: Եւ ո՞ր են եւթն զգայարանքս.- աչքն, ականջքն, քիթն, բերանն, շաւշափականն, հոգին եւ մարմինն: Եւ որպէս ի յանդամսն ոմն քան զոմն պատուականագոյնք են, նոյնպէս եւ ի գրերոյս՝ է՛, որ պատուականագոյն է մինն քան զմիւսն, եւ առաւել զարդարէ զբանն:

[ԲԱՆ]

«Եւ ի սոցանէ ձայնաւորք են եւթն՝ ա, ե, է, ը, ի, ո, լ: Եւ ձայնաւորք ասին, վասն զի ձայնս յինքեանց անպակաս ելուզանեն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս եւթն գիրս՝ թէ ունին լծակից եւ թէ ոչ՝ ինքեանք զիւրեանց ձայնն կու բերեն. եւ որպէս եւթն զգայարանքն աւզնեն հոգւոյն, նոյնպէս եւ այս եւթն գիրս՝ քերական արհեստիս:

[ԲԱՆ]

«Եւ ձայնաւորացն երկայնք են երկու՝ է, Կ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս երկու գիրս աստուածայինք են, զի էն է, արինակ, որ միշտ է աստուած, եւ աւ-ն՝ գործոցն աստուծոյ ի զարմացումն եւ ի տեսութիւն:

[ԲԱՆ]

«Եւ սուղք են երեք՝ ո, է, լ:

Եւ սուղք ասին, զի քան զբուն երկայնսն՝ սակաւք են»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իսկ այս երեքս սուղ վասն այն ասին, զի մարդկայինք են. եւ երկոքին *ոյերն*՝ մին *ոյ* է, եւ միւսն՝ *աւ*, զի *աւ*-ն բերանի բառ է, եւ *ոյն*՝ քթի եւ այս ինքն է. զի յորժամ ասես թէ *ւոյ*՝ նա քնաւք ասի: Եւ վասն այսորիկ են սուղք եւ մարդկայինք:

[ԲԱՆ]

«Եւ երկամանակք երեք՝ ա, ի, ը:

Եւ երկամանակք ասին, զի երբեմն ձգտին եւ երբեմն ամփոփին եւ սղանան»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Երկամանակք են՝ որ ունին ժամ եւ տեղի ձգտելոյ իբրեւ զբուն երկայնսն, եւ ունին ժամանակ, որ կարճին որպէս զբուն սուղսն: Իսկ ոմանք հակառակեցան, թէ երեք պարտ է ասել զամանակն՝ անցեալ, ներկայ եւ ապառնի: Բայց հաւանեալ ի ներկայն, զի ներկայն անցելոյն կատարումն է եւ ապառնոյն սկիզբն,- եւ այսմիկ հաւանեցան իմաստասերքն:

[ԲԱՆ]

«Եւ առաջադիրք են վեց ձայնաւորք՝ ա, է, է, ը, ի, ո:

Եւ առաջադիրք ասին, զի նախադասելով զինին եւ զհինին՝ շաղաշար կատարեն, որպէս՝ աւ, աի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս վեցս առաջ կարեն լինել բանից, եւ այնո՛ւ ճանաչի արուեստաւոր գրիչն, զի յայս վեցէս դրեալ զառաջսն: Եւ այս նախադիրքս ի ձայնաւոր գրերոյն են առաջադիրք. բայց ի յանձայնիցն՝ ա՛յլ եւս յոլովք կան: Եւ *հիւնն*՝ որ չլինի նախադիր, բայց թէ դնեն <զնա> հետ *այբի* կամ հետ *ինւոյ* եւ կամ *զկնի ոյի*. այսպէս՝ *աւ, ու, իւ*. - զի սոքա վերջադասք են. եւ թէ յաւարտ բանին գան՝ համ դնեն եւ խոհեմ երեւեցուցանեն զմարդն եւ զքերականն:

[ԲԱՆ]

«Եւ ստորադասք են ի նոցանէ երկու՝ ի, ւ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ *ինդ* է՝ ուրեք, որ դասական է քան *զհիւնդ*, զի *ինդ* զամենայն զիր բառնայ, եւ *հիւնդ*՝ ո՛չ զոք, վասն զի տկար է ըստ երկուց երեւմանց. իսկ եթէ հարկես՝ լինի բոնութեամբ, որպէս՝ *յիմաստութիւնդ* եւ *յարդիւնդ*: Լինի կատարումն բանի, որպէս թէ ասես՝ *«Աւրհնեալ յամենայնի, զի շալկէ շալակ երթայ»:*

[ԲԱՆ]

«Եւ երկրարքառք են բունք հինգ՝ եւ, աւ, ու, աի, ոի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ե՛ն եւ այլք երկձայնք. իսկ այս բունք նախնականք են եւ յոլովիմաստք. եւ ոլորակք եւ առոգանութիւնք կրեն երկու զաւրեղք ի մի եկեալ, զերդ թէ՛ գնայի-մի ի նոցանէ:

[ԲԱՆ]

«Եւ բոնարարքառք երկձայնք երկու՝ ըւ, իւ»:

Եւ այլքդ ամենայն բաղաձայնք են քսան եւ ինն՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, իւ, ծ, կ, հ, ձ, ղ, ս, Վ, Յ, Ն, Շ, Ո, Ս, Վ, Ս, Ր, Գ, Վի, ք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բաղն մի ասի, զի յորժամ ընդ ձայնաւոր զիրսն միանան եւ խառնին՝ ձայն հանեն. իսկ առանց ձայնաւորաց եւ ո՛չ զինքեանս կարեն անձնացուցանել: Եւ որպէս յարուէ միայն՝ առանց իզի ծնանել անհնար է, նոյնպէս եւ սոքա առանց ձայնաւորացն ոչ կարեն ծնանել բանս անձնաւորս:

[ԲԱՆ]

«Եւ շարաձայնք ասին, վասն զի սոքա յինքեանք ձայն ոչ ունին, բայց շարակցելով ընդ ձայնաւորսն՝ ձայն կատարեն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս երկիր, որ առանց խոնաւութեան եւ ջերմութեան՝ իւր ցրտութեամբն ամուլ է, այլ առեալ ցրտութեամբն իւր եւ չորութեամբն զգիջութիւնն եւ զջերմութիւնն պտղածին լինի եւ ծաղկաբուղիս, նոյնպէս եւ սոքա իւրեանց խառնմամբն:

[ԲԱՆ]

«Եւ ե՛ն ի նոցանէ նուրքք տասն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նուրբն բարակն է եւ նաւարն, որ մերկ եւ ցոփ ձայն հանէ եւ չտանջէ կարի զբերանն ի ձայնելն:

[ԲԱՆ]

«Եւ ստուարք՝ ինն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ստուարն հաստն է եւ թանձրն, որ ի զանչելն զբերանոյն մասունսն աւելի յիրեար բերէ եւ դժուարաւ հանէ զձայնն:

[ԲԱՆ]

«Եւ միջակք՝ եւթն: Եւ միջակք վասն այնորիկ անուանեցան, զի քան զնուրբսն յոյրք են, եւ քան զոյրսն՝ նուրբք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս ի տարերցս միջինքն, որ են ջուրն եւ աւղն, ի մէջ հակառակացն հաշտութիւն առնեն, զի հողն՝ ծանր եւ ցուրտ, իսկ հուրն չոր է եւ թեթեւ: Եւ աւղն միաւորեալ է ընդ հրոյն թեթեւութեամբն եւ ջերմութեամբն, իսկ ջուրն միաւորեալ է ընդ երկիր ծանրութեամբն եւ ցրտութեամբն: Ե՛ւ աւղն, ե՛ւ ցուրտն միաւորեալ են շարժութեամբն եւ գիջութեամբն: Նոյնպէս եւ այս եւթն գիրս միջակք են եւ ի մէջ հաստիցն եւ բարակացն, ծանրիցն եւ թեթեւացն:

[ԲԱՆ]

«Եւ են միջակք եւթն ի մէջ բարակացն եւ յոյրիցն՝ բ, գ, դ, ժ, ձ, ղ, ճ: Եւ թաւք՝ ինն. թ, լ, խ, ջ, զ, ռ, ց, փ, ք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ թաւք ասին, վասն զի զբերանն թանձրացուցանեն յասելն:

[ԲԱՆ]

«Եւ նուրբք են տասն. գ, ծ, կ, մ, ն, շ, պ, ս, տ, ր: Եւ են բարակքն՝ բենն ի մէջ մենի, պէի, եւ փիւրի, վասն զի քան զմենն եւ զպէն իսաժ է, եւ քան զփիւրն բարակ: Եւ զիմն ի մէջ կենի, քէի եւ խէի, զի քան զկենն թաւ է, եւ քան զխէն եւ զքէն՝ լեարկ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս զլուծու եզանց ի չժուժելն փոխել, նոյնպէս եւ զայս գրերս, զոր առ կարիսն փոխաբերեն՝ ոչ ձեռնարկելով ի յաւտարսն, այլ հարկաւ ի սոցանէ փոխաբերեն եւ լնուն զկարիսն:

[ԲԱՆ]

«Եւ դայն ի մէջ տիւնի եւ թոյի, վասն զի քան զտիւնն թաւ է, եւ քան զթօն լեարկ: Նոյնպէս եւ այլքն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս երկու պատճառաւ է դրած. մի՝ որ զլծորդսն ցուցանէ, եւ երկրորդ՝ որ զհաստն եւ զնաւսն բաժանէ: Վասն զի այն, որ լեզուին ծայրին գայ ի յասելն եւ շրթանցն ծայրին՝ նա այն նաւսր է: Եւ որ լեզուին միջաւքն ասի կամ լնդաւքն՝ այն հաստ է եւ թանձր, որպէս *թօն* եւ կամ *քէն*: Իսկ որ լեզուին տակաւքն ասի՝ այն միջակ է, որպէս *գիմն* եւ կամ *կենն* եւ այլ այսպիսիքս:

[ԲԱՆ]

«Չայն միջակ է սէի եւ զայի եւ ցոյի. եւ դատն՝ լիւնի եւ նուի. եւ ճէն՝ ծայի եւ ջէի. եւ ժէն՝ շայի, չայի, զի քան զչայն թաւ է, եւ քան զչայն՝ լեարկ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Արա՛ ընտրութիւն, ո՛վ ուսումնասէր, եւ բաժանեա՛ լեզուաւդ եւ բերանովդ, թէ ո՞ր են, որ լեզուին ծայրն առնու, եւ կամ զո՞ր՝ մէջն, կամ՝ ո՞ր են, որ տակաւք լեզուին ասին կամ շրթամբքն եւ կամ լնդաւքն: Այլ եւ ընտրեա՛ ի մէջ թաւացն եւ լերկիցն եւ միջակացն, զի ա՛ստ է ամէն արուեստն:

[ԲԱՆ]

«Եւ են դարձեալ ի սոցանէ անձայնք ինն՝ բ, գ, դ, պ, կ, տ, թ, փ, ք: Եւ անձայնք ասին, զի քան զայլսն չարաձայնք են, որպէս անձայն ասեմք զողբերգակսն, որ վատաձայն է»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նոյն եւ այս ինն գիրս չարաձայնք են, այսինքն՝ անձայնք ասին. եւ տե՛ս, զի չունին ձայն ի սկիզբն, որպէս թէ կամիս ասել ասել *բէն*. նա առժամայն շրթունքդ յիրեար իսփին եւ ձայնն կորնչի, նոյնպէս եւ այլքն ի յըննիցս: Եւ թէպէտ որ ելանէ սակաւ մի ձայն՝ նա լինի թնդիւն եւ վատ ձայն:

[ԲԱՆ]

«Եւ կիսաձայնք են ութ՝ գ, ց, ն, ծ, շ, մ, ս, ր: Եւ կիսաձայնք ասին, զի փոքր ինչ քաջաձայնք են քան զանձայնսն ի մրմունջս եւ ի սոհնչս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կիսաձայնք վասն այնորիկ ասին, զի սակաւ մի ձայնաւորք են յեղանակս եւ յերգս եւ յայլ ինչ ի խաւսս:

[ԲԱՆ]

«Եւ ի սոցանէ կրկնակք են ութ՝ լ, գ, խ, շ, ջ, ջ, ռ, ց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կրկնակք վասն այնորիկ ասին, զի *ցոն* լնու *զսէին* ու *զտիւնին* տեղիսն, որպէս թէ կամենաս ասել՝ *աստուածազգեստ* եւ *աստուածազգեսց*: Նոյնպէս եւ այլքն ամենայն, որ ի կարգին:

[ԲԱՆ]

«Եւ կրկնակք ասին, զի մի մի իւրաքանչիւր ի սոցանէ յերկուց ձայնակցաց բաղկացեալ է. քանզի բաղկանայ զայն ի սէէ եւ ի ծայէ, եւ իւէն՝ յերկուց քմակից քէից, շայն՝ յերկուց սէից, եւ ռայն՝ յերկուց րէից»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս ի վերոյ կրկնակացն է, որպէս թէ մի *իւէն* զերկու *քէի* տեղ լնու. իբր կամենաս ասել *աքաաք*, եւ ասես՝ *ախաաք*, որ ասացաւ *քէիւ* եւ *իւէիւ*. եւ զմի զաւրութիւն ունին բանքդ: Եւ կամ թէ ասես՝ *Սիմոն* եւ *Շմաւոն*, եւ այլ թէ կամենաս ասել՝ *տարր*, եւ ասես՝ *տառռ*, կամ *Սարրա*, եւ ասես՝ *Սառռա*, կամ այլ եւս թէ ասես՝ *Ռամանոս* եւ <կամ> *Րրամանոս*:

[ԲԱՆ]

«Նոյնպէս եւ այլքն ամենեքեան մի մի յերկուց բա[րբա]ռակցաց շարակացեալ են»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս ամենայն վասն լծորդացն է եւ քմակայիցն, որ են քմակիցքն, այլ եւ վասն միջակացն եւս:

[ԲԱՆ]

«Եւ նայք են չորս՝ դ, մ, ն, ր»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ նայք վասն այնորիկ ասին, զի միջակք են եւ դիւրալուրք, որպէս զմոմոյ բնութիւն, զի կարեն ի ջերմութենէն կակղանալ եւ ի ցրտոյն պնդանալ. նոյնպէս եւ ի սոցանէ լինին փոխադրութիւնք բառից: Իսկ *հօ* եւ *յի* ա'յլ եւս պատճառս ունին:

[ԲԱՆ]

«Եւ վախճանականք անուանց են արուաց եւ իգաց եւ չէզոքաց ամենեքեան՝ բաց ի չորից,- յայբէ, եւ յեչէ, եւ յեթէ, եւ յոէ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բայց դու ազգ խոյզ արա եւ քննէ ի խաւսսն, որպէս յոյնք եւ ֆռանգք. եւ հելլենացիք, որ են մակեդոնացիք, զի մեծապէս աշխատին, մինչ որ հասանեն իւրեանց ջանիցն եւ կարեն ընտրութեամբ խաւսել եւ լսել զբառսն, թէ ո՛ր է՝ արո՞ւ է, էգ, եւ կամ թէ չէզո՞ք է, թէ՞ երկուորական:

Բայց ազգս հայոց յաղագս հարստութեան եւ փարթամութեան լեզուիս եւ գրիս ոչ հարկեցան ի յայս, այլ յոյնք եւ ազգք հարկաւորեցան վասն լեզուացն եւ գրոյն սակաւութեանն, եւ այնու լցին զպակասութիւնն: Իսկ չէզոքն, որ ոչ էգ լինի եւ ոչ որձ, որպէս երբ ասես *տղայ՝* նա զէզն եւ զորձն պարունակեաց: Այլ դու տե՛ս այբբենաւքդ, զի ամէն գրերդ բանի վերջ գան եւ լինին գատ ի չորիցդ:

[ԲԱՆ]

«Եւ են այս՝ ողբ, ազգ, մարդ, պարզ, բազէ, յաղթ, վարժ, բարի, լալ, խորիս, ինձ, տունկ, մահ, հանդերձ, Մանուէլ, կինձ, որմ, խոյ, Տարաւն, ուշ, ունչ, ամպ, որջ, կուռ, հիւս, Խոսարով, կոյտ, այր, ոյց, իրաւ, թուփ, կնիք»:

Եւ բազմաւորականք յանգի անուանց են երկուք՝ *այբ* եւ *քէ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ բազմաւորականք ասին, վասն զի զբանն բազմաւորակի բերեն, որպէս թէ՛ *տքաւ, դոցա, նոցա* եւ կամ *սոցա*, - այս այբիւն բազմացաւ: Իսկ *քէիւն*, որպէս՝ *քաղաքք, զեաւորք, տունք* եւ այլ այսպիսիք:

ՅԱՂԱԳՍ ՎԱՆԳԻ

[ԲԱՆ]

«Փաղատութիւն է իսկապէս պարատութիւն ձայնորդաց՝ ձայնաւորաւ կամ ձայնաւորաւք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Փաղատութիւնն «խառնատութիւն» ասի, որ զամենայն ի յարհեստիցս խառն առնու: Եւ ձայնորդն չէ ձայն, այլ՝ ձայնի ընկեր, որպէս զճանապարհորդ, զի թէպէտ ձայնորդ ասել, թէպէտ ճանապարհորդ, այլ *որդն* յորժամ ասես՝ նա լինի երկրորդ: Իսկ *պարատութիւնն* «պար առնուլ» ասէ, որ պատեալ են ձայնաւորքն զայլսն. եւ *ձայնորաւն՝* որ լինի մի. իսկ *ձայնաւորաւքն* ասացեալ՝ լինեն բազումք, որպիսի՝ կար, գուր. կենն չէ ձայնաւոր, բայց այբն ձայնաւոր է, րէն չէ ձայնաւոր, եւ *զիւն*, եւ *թօն* չեն

ձայնաւորք. ոն եւ *հիւնն* ձայնաւորք են: Եւ այս է վերոյ ասացեալ փաղառութիւնն ի ձայնաւորսն եւ յանձայնաւորսն:

[ԲԱՆ]

«Իսկ պիտակապէս եւ ի նեզէ ձայնաւորէ է, որպիսի՝ այբ, եչ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Պիտակն սոսկ իրք է եւ դատարկ:

ՅԱՂԱԳՍ ԵՐԿԱՐ ՎԱՆԳԻ

[ԲԱՆ]

«Երկար փաղառութիւն լինի ըստ յեղանակս ութ. բնութեամբ՝ երեք, եւ դրութեամբ՝ հինգ»:

Բնութեամբ՝ <1> կամ յորժամ երկար տառիւքն արտաբերիցի, որպիսի՝ Մով-սէս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի յութ յեղանակս եղ գյուրով ձայնառութիւնս, եւ բաժանեաց զբնութեամբն եւ զդրութեամբն: Եւ է՝ բնութեամբն երեք, եւ դրութեամբն՝ հինգ. զի բնութեամբն այնք են, որ յինքեանց են գոյացեալք, որպէս զմովն, որ վանգ մի է երկայնաձայն, եւ յետքաշականք են սէսն, զի արգելաւորք են եւ ի յետ քարշեն որպէս զսէսն, որ լինի մեծաձայն՝ Մով-սէս:

[ԲԱՆ]

<2> «Եւ կամ յորժամ զմին յերկամանակացն ըստ յերկարման առեալ, որպիսի՝ սիրով»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Երկամանակ է՝ որ երբեմն ձգտի եւ երբեմն ի յետ գայ, որպէս *զսիրն* եւ *զովն*. զի *սին* երկար է, եւ *բովն*՝ կարճ. եւ *զրէն* հարկ է ի *յովին* դեհն սահմանել, վասն զի երկարքն ի միադեհ գան, եւ կարճքն՝ ի մի. *րէն* կարճ է: Եւ երկամանակն պատճառ է երկայնիցն եւ սղիցն, եւ երկրորդ դասեցաւ ի վերոյ գրեալ ութիցն:

[ԲԱՆ]

<3> «Եւ կամ յորժամ զմի ի կոչեցելոց երկբարբառից, որպէս՝ հաւ, ուկ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Երկբարբառս, զի յերկուց խառնուած ձայնաւորացն ունին զգոլն, եւ երրորդ դաս է առ ի յութ վերոյ անուանեալ մասնէն, զի որ չափաբերական բան կամիցի շինել՝ վանգով չափեսցի:

[ԲԱՆ]

«Իսկ դրութեամբ՝ <1> կամ յորժամ յերկուս բաղաձայնս յանգեցցի, որպէս՝ աղց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Դրութեամբ՝ չորս է ի յութէն. եւ դրութեամբ վասն այնորիկ ասի, զի ըստ տեղոյն յորժամ դնես եւ ըստ գրոյն. ի յոր զիր որ ի մաստ դնես *գայքն՝* նա առ այն զաւրութիւն ցուցանէ, որպէս աստ *զղատն* եւ *զցօն* զիւրեւ քարշեաց *այքն*, որ է *աղց*:

[ԲԱՆ]

<2> «Եւ յորժամ սղի եւ սղացելոյ ձայնաւորի վերաբերիցին երկու բաղաձայնքն, որպիսի՝ տատրակ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի մի քան զմի աստիճանաւ ի վայր են հինգերորդս ի յութէն, որ սուղ ասէ եւ սղացեալ. զի այքն յերկամանակացն է, որ ժամանակաւ սուղ լինի, եւ աւելի սղացոյց չորք լեարկ զիրն, որ է *տատրակ*. զի միշտ *տիւնն ըէին* յառաջադիր է, որպէս՝ *տրգալ*, զի որպէս ի *յաղցն* յառաջ ձգեաց *այքն զղատն* եւ *զցօն*, նոյնպէս ի *տատրակիս զտիւնն* եւ *զրէն* ի վեր ձգեաց եւ *կենն* արգել անկաւ բանին:

[ԲԱՆ]

<3> «Կամ յորժամ ի պարզ ձայնորդն յանգեցցի եւ զհետինն ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, ուրպիսի՝ երկիր»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զվեցերորդս ի յութէն պարզ անուանեաց, զի *ըէն* պարզ է, եւ չէ ի կրկնակացն, այլ եւ կէս է *նային*: Իսկ պարզն բարակն է եւ յանգիլն կատարիլն է եւ ի *ըէն* վճարի վանգն եւ զհետ գայ *ինին ըէին* առջեւ, եւ զհետ *կենին* գնայ եւ լինի *երկիր*:

[ԲԱՆ]

<4> «Եւ կամ յորժամ ի կրկին ձայնակից վերաբերիցի, որպիսի՝ հեզիկ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զերթերորդս ի յութէն կրկնակ ասէ. զի *գայն* կրկնակ է, որ ի *սէէ* եւ ի *գայէ* բաղկանայ ըստ յունացն. իսկ ըստ մեզ՝ ի *սէէ* եւ ի *ծայէ*. եւ յայսմ տեղուց երկու իրս վճարի՝ զաւրութեամբ *էչին* տայ ձեռն եւ կիտիւն *ինոյն*, թէ իւր բնութեամբն կարդաս՝ *հեզ* գայ, եւ *էչն* յինքն ձգէ եւ քարշէ, այսինքն՝ կիտիւ, եւ լինի *հեզիկ*. եւ առաջինդ վանգ լինի, այսինքն՝ *հ*», եւ *զիկն՝* փաղառութիւն:

[ԲԱՆ]

<5> «Եւ կամ յորժամ յերկայն ձայնորդ յանգեացի, որպիսի՝ աջ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի յութերորդս երկայն կոչի ջէն, զի կրկնակ է՝ ճէէ եւ ի ձայէ գոյացեալ: Եւ ի յայս տեղիս ջէն է ի յաճել զձայնն կիտիւն եւ զաւրութեամբն, զի թէ կիտիւն դնես՝ լինի աջ, եւ աւելի եհան զձայնն, զի լաւ եղբար դիպեցաւ:

[Զ]

[ԲԱՆ]

«Սուղ փաղառութիւն լինի ըստ երկուս յեղանակս.

<1> Յորժամ ունիցի եզ ինչ ի բնէ աղատիցն, հիզան՝ նետող»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յերկարն զսուղն ցուցանէ աստ, վասն զի երկարն ութ մասն ունէր, եւ սուղս՝ երկու, վասն որոյ ի բնէ աղատից ասէ էչ եւ n, զի nn ի սղիցն է, եւ էչն ի մէջն է մտեալ նուին եւ տիւնին, որպէս՝ նետ. զի յո՛ր կողմ գտիւնն դնես, նա փաղառութիւն գայ. նետ՝ այս մի փաղառութիւն, իսկ nղն՝ վանգ: Եւ կամ այսպէս եղեալ զկէտն՝ նե-տող, որ գտողն առնես փաղառութիւն,- արա՛ գոր եւ կամիս:

[ԲԱՆ]

<2> «Եւ կամ յորժամ ունիցի զմի ինչ յերկամանակացն ըստ ամփոփման ընկալեալ, որզան՝ աղատ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Կամէիր իշխանութիւն տալ արուեստաւորին՝ զբոլոր ենթակայն ի ձեռին ունելով զգիրն առեալ որպէ՛ս եւ կամի: Թէ ինքն չափէ եւ թէ զայլոց արարած բան՝ արուեստին կոտորատէ - կիտիւն եւ առոգանութեամբն: Բայց զի ըստ ամփոփման ասաց եւ զմի աղատն յերկուս բաժանեաց, որ եղեւ մի աղատ: Տե՛ս, զի դատն եւ տիւնն ամփոփեցին զայբն, որ երկամանակ է, եւ այբն պիտակ վանգ եղեւ միայն եւ սոսկ:

[Է]

[ԲԱՆ]

«Հասարակ վանգն լինի ըստ յեղանակս երիս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հասարակ վանգս ի Հոմերոնի ասացածն, զի մի՛ միտս բանին ծածկեցին վասն դժուարաչափոցն: Եւ հասարակ է՝ որ առնու ի յերկայնիցն եւ սղիցն ըստ պիտելոյն: Եւ

աւրինակս, ու յիշեալ է, չափաձու բան է յիմաստնոց, զի թէպէտ եւ շա'տ շատ է, բայց հասարակ ամենն վանգակոտոր չափաժ է. «*ինձ, բնաւ, ոչ, ես, դուն*»: Եչն յարուցեալ խորտակեաց *զդայն*: «*Ի,րիք, պատ,ճառ, ա,րեւ, այլ, աս,տու,ածքն*»: Տեսանէ՞ս, զի յերկայնիցն եւ ի սղիցն է աստ ժողովեալ:

[ԲԱՆ]

<1> «*Յորժամ ի ձայնաւոր յերկայն յանգիցի եւ զհետինն ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, որզան՝ ինձ, բնաւ, ոչ, ես, դուն, ի, րիք, պատ, ճառ, ա, րեւ, այլ աս, տու, ւածքն*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Պրիամոս Տրոյացոյ հարճն առաւ ի հելլենացոցն ծառայ, եւ ապականեալ թողին զնա պղծեալ. եւ Պարիս, որդի նորա, տեսեալ ասէ ցլինն՝ «*Մի՛ ամաչեր, զի դու չես իրք արարեալ, այլ աստուածքն մատնեցին վասն մեղաց մերոց, որ չեստուն մեզ յաղթութիւն. մի՛ ամաչեր, այլ եկեսջիր ի տուն քո*»:

[ԲԱՆ]

<2> «Եւ կամ յորժամ աղաւտի եւ աղաւտացելոյ ձայնաւորի վերաբերիցին երկու ձայնորդք, որոց երկրորդն նայ է, իսկ առաջնորդն եզական ձայն, հիզան՝ «Պատ,րոկ,դէ, ինձ, հի,քոյս, կա,րի, յոյժ, սի,ր»,ցեալ անձ[ի]ն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Աղաւտ եւ աղաւտացեալ՝ *այբն* է, վասն զի երբեմն սուղ է, եւ երբեմն՝ երկայն, եւ այլ երկու ձայնորդքն, որ առան, սղացուցին զայբն: Իսկ այն, որ ասէ, թէ երկրորդ *նու* է, նա երկրորդ վանգն է՝ *րոկդէն*, զի *րէն* եւ *դատն* ի նայիցն է, եւ նայն գէջ ձայնն է, որ են գէջքն՝ *դ, ս, ն, ր*: «*Եւ ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձ[ի]ն*»: Եւ վանգիցն աւրինակ է՝ *Պատրոկդէ, Աքիլլէս*. զի սա դայեկորդի էր եւ քաջութեամբ մեռաւ ի պատերազմի, եւ կինն, որ էր հարճն Աքիլլայ, զոր խոստացեալ էր տալ նմա, լայր զնա: Եւ Աքիլլէս մխիթարել զնա կամելով ասէր, թէ՝ «*Ինձ հիքիս, այսինքն՝ ողորմելոյս, ա՛յլ աւելի վնաս նորա մահն է. մի՛ լար, ոչ ատեամ զքեզ*»:

[ԲԱՆ]

«*Եւ կամ յորժամ սղիցի եւ եզերիցի ի մասն բանի եւ զհետինն ունիցի ի ձայնորդէ հաւացեալ, որպիսի՝ զՆես, տոր, ոչ, խա, բեաց, խաւ, շիւնն, թէ, պէտ, եւ, յումպ էր*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Սուղ գէչն ասէ, զի ի սղիցն է, եւ բանի եզեր գայ ի յառաջսն, եւ է՛, որ զյետինն ունիցի, այսինքն՝ որ ի հետն գայ ի ձայնորդէ հաւացեալ. այսինքն յանձայն գրէ սկսեալ զՆեստորն՝ ի *զայէ* եւ ի *նուէ*, եւ յայցանէ սկսանի զաւրինակն՝ «*զՆեստոր ոչ խարեաց*» եւ այլն: Եւ աւրինակն պատմութիւն է բան չափաձու. զի Նեստոր ոմն, ծեր եւ հմուտ ի պատերազմի, եւ հարաւ ի պատերազմին: Եւ ետուն զնա ի բժիշկ ոմն Մաք[աւ]ոն անուն, եւ նա ետ նմա հաց եւ սեաւ զինի: Եւ մինչդեռ ի յումպ էր՝

կազմեցան զարք գաղտնաբար ի նմանէ, զի շիմանայ եւ զհետ երթայցէ եւ մեոցի ի վիրացն: Եւ ոչ կարացին վասն արիութեան նորա, զի թէպէտ եւ յումպ էր՝ իմացաւ զխաւշիւնն, եւ ֆիլիսոֆայ ոմն ետես զայն այնպէս եւ նմա գով ասաց չափաճու բանիւ:

[Ը]

[ԲԱՆ]

«Բառ է մասն դուզնաքեայ ըստ բաղդատութեան բանի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բառն «ասումն» թարգմանի եւ գոյանայ յերկուց վանգից: Եւ սա՛ է սկիզբն եւ հիմն բանի՝ որպէս ողնափայտ նաւի կամ հիմն տան: Եւ ասաց ըստ բաղդատութեան բանի դուզնաքեայ, զի բաղդատելն «համեմատել» ասի եւ կամ «կշռել» զբանն. եւ դուզնաքեայն «սակաւ» ասի, զի յորժամ զբառն ընդ բանն կշռես, նա փոքր է բառն քան զբանն: Եւ ա՛յլ եւս փոքր վասն այնր ասաց բառին, զի ինքն փոքր է, եւ եզերութիւն մեծ ունի, զի ձայն ածելն փոքր է, բայց իւր զարութիւնն մեծ է, վասն զի ամենայն տարբերութիւնք ի նմանէն ելանեն:

[ԲԱՆ]

«Բան է հետեւակ բառի շարադրութեան՝ գտրամախոհութիւնն ինքնակատար յայտնելով»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի վեր ել արուեստաւորս իբրեւ ընդ աստիճանս ի կատար շինուածոյս, զի ասէ վասն բառից, որ է մայր ամենայն բանի: Եւ «հետեւակ բառ» ասաց, որ զհետ ել եւ հետ իրերաց երթայ՝ հիւսելով բանն: Եւ շինի մարմին եւ անդամք որպէս զբնութիւն, այլեւ զներքսակայ իմաստքն կատարեն յայտնելով:

[Թ]

[ԲԱՆ]

«Եւ բանիս մասունք են ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաւղ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ: Քանզի է՛ առասանութիւնդ իբրեւ տեսակ ընդ անուամբ ենթանկեալ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

«Մասունք» ասաց իմաստասէրս, եւ ոչ՝ «տեսակք». զի աստ «մասունքն» պատուականագոյնք են քան «գտեսական», վասն զի «տեսակքն» աւագ եւ կրտսեր հարկաւորին գոլ, բայց մասունքն՝ ո՛չ: Զի բանն որպէս սեռ է, որ կարէ բազում մասունս ծնանիլ ինքնանման, որպէս ի յառաջ գնալով ուսանիս: Եւ ութ վասն այնր ասաց զմասունսն, զի համարէն իմաստասէրքն եւ Արիստոտել եւ Պորփիր հինգ են

ասացեալ, որպէս ի Բնագիրքն գտանելոց ես: Եւ համարէն քերթաւորքն՝ ուր: Իսկ իմաստասերքն հանեալ են ի յութէն զընդունելութիւնն, զդերանունն եւ զյաւղն, զի այս երեքս ընդ անուամբ եւ ընդ բայիւ անկանին: Այլ եւ Արիստոտել հինգ ասաց՝ *անուն, բայ, ստորասութիւն, բացասութիւն, բացերեւակութիւն*:

Տեսանե՞ս, զի Արիստոտել վասն այնորիկ եհան զերեքն յութէն, զի այն երեքն չեն մասունք, այլ՝ մասանց մասունք:

Իսկ ոմանք զառասութիւնն եղին եւ ինն արարին: Իսկ արուեստաւորս հանէ՝ ասելով, թէ ո՛չ է մասն բանի, այլ ընդ անուամբ անկեալ եւ յանունն գտանի, եւ անունն մասն է, իսկ առասութիւնն մասին մասն է ասացած:

[Ժ]

Աստ մեկնէ զմասունսն

[ԲԱՆ]

«Անուն է մասն բանի հոլովական՝ մարմին եւ իր նշանակելով. մարմին, որզան՝ քար. եւ իր, որպէս՝ խրատ: Հասարակաբար եւ յատկապէս. հասարակաբար, որզոն՝ մարդ, եւ յատկապէս, որզան՝ Պաւղոս»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Այս սահման է անուան. ի բառէն եւ ի վանգէն այսիւ բաժանի. զի սա հոլովական է, եւ նոքա՝ ոչ, որպէս՝ *մարմին*: Տեսանե՞ս, աստ *մարն* բառ է, իսկ *մինն*՝ հոլովումն:

Եւ մարմին է այն, որ բոնի ձեռամբ եւ շաւշափի, որպէս՝ *քար* կամ *փայտ*: Եւ իրն անմարմին է՝ անըմբոնելի եւ անշաւշափելի, բայց միայն լսելեալք, որպէս ինքն ասէ, թէ՛ *խրատ* կամ *հանճար* կամ *իմաստութիւն*: Իսկ յատկապէս՝ որպէս ճարտասան եւ կամ թուական եւ կամ այլ արհեստք, որ յատկապէս՝ առանձնանան եւ իւրեանց սահմանան երեւին: Իսկ *հասարակաբար* ասէ զընդհանուր *մարդն*: Եւ յատկապէս անուամբ՝ զի զմի ոք բաժանեալ ի յայլոց անուանցն: - Այս՝ ի վերայ մարմնոցն: Իսկ ի վերայ անմարմնոցն՝ որպէս *մակացութիւն* կամ *խրատ*, *աւրէնք* եւ կամ *իմաստութիւն*, որ են բանի զարութիւնք անմարմինք. - եւ այս հասարակաբարն է:

[ԲԱՆ]

«Եւ հետեւին անուան հինգ՝ սերք, տեսակք, ձեւք, թիւք, հոլովք:

Եւ սերք են երեք՝ արական, իգական, չէզոք: Եւ են ոմանք, որ յաւելուն ի սոսա ա՛յլ եւս երկուս՝ հասարակ եւ մակաւասար: Եւ է հասարակն՝ ձի, շուն, իսկ մակաւասարն՝ ծիծառն, աքիս»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Մերքն «ազգն» է, զի աճելականք են սերմամբ երկոքինն ի միասին: Իսկ չեզոքն անհասարակն է՝ որպէս տղայն. եւ հասարակականն է՝ որպէս ձիւն եւ շունն, զի անուամբ ասին ձի՝ թէ՛պէտ որճն եւ թէ՛պէտ մատակն: Նոյնպէս եւ շունն հասարակական մի անուն է՝ որճն եւ էգն, եւ վասն այսորիկ ասի «հասարակաբար»:

Իսկ մակաւասար է՝ որ ի վեր է քան զհաւասարն, որպէս ծիծառն եւ աքիսն, զի ոչ որ կարէ ճանաչել ի ծիծառն կամ ի յաքիսն, թէ ո՞ր է որճն եւ կամ ո՞ր է էգն: Նաեւ վասն այսորիկ անուամբ իգականք կոչին:

[ԲԱՆ]

«Եւ տեսակք են երկու»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի վեր անդ *զսերն* մեկնեաց, եւ աստ *զտեսակն* կամի յայտնել:

[ԲԱՆ]

«Եւ նախագաղափար եւ ածանցական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նախագաղափար է՝ նոր եւ առաջին արինակ եւ կամ արուեստ, զոր նոր գործէ մարդ, զոր այլ չէ տեսեալ մարդ: Իսկ ածանցականն այն է, որ ի վերոյ գրեալ յարինակէ ա՛յլ նոր գրես կամ ածես եւ յառաջ բերես զի՛նչ եւ կամիս- թէ՛ ի ծնողաց եւ կամ ի յերկրէ բոյսք եւ կամ ի վարդապետաց աշակերտք,- եւ այսպէս արա զամենայն ինչ:

[ԲԱՆ]

«Եւ է՛ նախագաղափարն, որ ըստ առաջին գաղափարին կոչեցաւ. հիբար՝ երկիր:

Եւ ածանցականն է՝ որ յայլմէ զսեռութիւնն ընկալաւ, որպիսի՝ երկրային:

Եւ տեսակք են ածանցական]ացն եւթն. հայրանունական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տեսանե՞ս զտեսակացն զյոլովութիւնն եւ զաճումնն. զի հայրանունական ասի, վասն զի քաջացն որդեացն հարկաւ զհայրական եւ զնախնեացն զանունսն յառաջ բերեն, եւ ոչ՝ զյատկականն, զի գոեհական եւ շինական է եւ այլաձեւ. զի որպէս բնութեամբ հաղորդ են նախնեացն, նոյնպէս եւ անուամբ պարտ է լինել եւ ասիլ:

[ԲԱՆ]

«Ստացական, բաղդատական, գերադրական, փաղաքշական, յարանուն, բայաձական:

<1> Եւ հայրանունական է՝ որ ի հաւրէ իսկ ձեւացեալ է»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ստացականն այն է, որ ըստ անուանն նմանապես եւ ստացուածքն կոչին, որպէս յառաջն ասացաւ, թէ՛ *Դաւթեան երիվարն, Պաւղոսական գիրն:*

Իսկ *բաղդատելն* «դէմ ի դէմ» ասէ, կամ հաւասարել, որպէս զԴաւիթ ընդ Սաւուղ կամ զՍմբատ ընդ Գրիգոր:

Իսկ հայրանունական է՝ որ ի ճշմարիտ հաւրէն ունենայ զանունն:

[ԲԱՆ]

«Իսկ պիտակապէս՝ որ ի նախնեացն, հիբար՝ Համագասպեան եւ Մանուէլ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Պիտակապէս ասէ՝ որ ի նախնեացն անուանէ կոչեն, որպէս՝ *Հեթում* արքայի որդին *Լեւոն* կոչի ըստ նախնւոյն անուանն, եւ ո՛չ՝ ըստ հաւրն իւրոյ Հեթում: Եւ կամ որպէս *զՀամագասպեանն*, որ *Համագասպայ* որդւոյն *Համաքսեան* դնի, որ զառաջին վանգն, այսինքն՝ *զՀամն* ի հաւրն ի յանուանէն առնու, եւ կամ որպէս ի *Մանուէլեանցն*, *Մանան*՝ հայրն, եւ -էլն՝ որդին:

[ԲԱՆ]

«Եւ զաղափարք են հայրանուանցն արականացն վեց, որզոն՝ մէնն, էլն, իթն, ի գէնն, էճն, ակն, որպիսի՝ Մամէն, Մանուէլ, Մամիթ, Բարգէն, Մանէն, Արտակ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս վեցս է, որ զառաջին վանգն հաւրն տայ, եւ զվերջինն՝ որդւոյն դնէ, որպէս ի *Մամայ* հաւրէն որդւոյն *Մամէն* լինի, ի *մէնէն* միայն է յատկութիւն որդւոյն ի հաւրէն *Մամայ*, եւ զայլսն *նուի* տես եւ մտածեա:

[ԲԱՆ]

«Եւ գորդէիցն զաղափար յատկական, որպէս՝ Մանայն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի ահա ի գորդէիցն, այսինքն՝ ի ծոպլեգուացն, որ *զՄանէճն Մանայճ* ասաց:

[ԲԱՆ]

«Եւ իգականացն՝ չորք. նին, ոյշն, նուհին, ոցն, որզոն՝ Վարդենի, Մանանոյշ, Տրդատուհի, Վարդոց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յորժամ ի հարէն դստերաց անուանս կամենայ որ իգացուցանել, նա զվերջին վանգն սոյն արինակաւս պարտ է առնուլ:

[ԲԱՆ]

«Եւ գիտասցիք, զի ընդ կանայս ոչ պճներ Հումերոս գհայրանուն տեսակսն, այլ՝ համբակագոյնքն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տեղեակ առնէ, թէ Հումերոս հարցն անուամբն ոչ զարդարէր զէգ ազգն, վասն զի չառնէր արժանի, որ հարցն անուամբն անուանէր զդստերսն, այլ ի յետոյ նորահասակ իմաստունքն ասացին, թէ որպէ՛ս ամենայնիւ հաւասարորդ եւ կարեկից են ի պէտս աշխարհիս, նոյնպէս եւ այսու այլ պարտ է պատուակից լինել եւ հարցն անուամբն պճնիլ:

[ԲԱՆ]

<2> «Իսկ ստացական է՝ որ ընդ ստացչիքն ստորանկեալ է՝ ներբակառեալ զստացողէն, որզոն՝ Դաւիթեան երիվարն, արքունի պատմուճանն, Պաւղոսական գիրն»:

<3> Եւ բաղդատական է՝ որ հասարակութիւն ունի եզ առ մու՝ նմանասեր, որզոն Դաւիթ արուորագոյն քան զՍաւուղ: Եւ կամ ի միոյ առ բազումս այլասերս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ աստ ցուցանէ, որ ստացուածքն անուամբն իմանին. եզ առ մու՝ ցուցանէ մէկ առ մէկ զնմանասերութիւնն, որպէս՝ Դաւիթ արուորագոյն քան զգէթացիսն: Երբ ի մի ազգէ երկու մարդ համեմատես՝ նմանասերս՝ որ ի մի ազգէ սերեցան, այսինքն՝ աճեցին, եւ մինն քաջ լինի քան զմիւս այլն, որպէս՝ Դաւիթ քան զՍաւուղ: Եւ յորժամ զմի որ ընդ բազումս համեմատես, որպէս՝ Դաւիթ քան զգէթացիսն, եւ կամ Լեւոն քան զպարսիկս:

[ԲԱՆ]

«Եւ բաղդատականացն են գաղափարք երկու. ի գոյն, հիբար՝ արագագոյն կամ յամբագոյն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յորժամ ասես թէ՝ Լեւոն քաջ է քան զՌուբէն, դու մասամբ եւ զՌուբէն զովեցիր քաջ գոյ, վասն զի ասացեր, թէ «քան զՌուբէն»: Եւ յորժամ զքանն ասացեր՝ նաեւ զՌուբէն զովեցեր քաջութեամբն: Իսկ յորժամ ասես, թէ Լեւոն քաջագոյն է քան զՌուբէն, նա զամենայն քաջութիւնն Լեւոնի տուեր եւ զՌուբէն ունայն թողեր:

[ԲԱՆ]

«Եւ ի զին, որզոն՝ սաստկագին, ուժգին»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ամրագոյնն՝ որձացն է, ամրագինն՝ իգացն:

[ԲԱՆ]

<4> «Գերադրական է «մակսաստութիւննէ՝ միոյ առ բազումս յարառոցեալ ըմբադդատութեան. եւ գաղափարք են նորա երկու՝ եղն, որզոն՝ արագեղ, յամրեղ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Գերադրական ա՛յն է, որ ի վերայ խստութեանն այլ խստութիւն դնես, եւ ի զարմանալիսն յաւելուս, որ է մակսաստութիւն, եւ զմին առ բազումս յաւելուս: Իսկ գաղափարն երկու աւրինակ է, որ է յղատն, եւ ի յինն, յղատն է՝ զաւրեղ, իսկ ինին՝ սքանչելի:

[ԲԱՆ]

«Եւ ելին, որպէս՝ սքանչելի, զարմանալի:

<5> Եւ փաղաքշական է՝ որ զնուագութիւն նախագաղափարին ընդ բաղդատականին յայտնէ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս աղջիկն անկատարութիւն է, նոյնպէս եւ այս նուագութիւն է անուանց: Բայց իմաստունքն եւ զայս ածեն ի բան՝ առ ի քաղցրացուցանելոյ զբառսն, որպէս՝ մայրիկ, քուրուկ, եղբայրուկ, հայրիկ, զի ողորական եւ քաղցրագոյն բերէ զբառսն: Բայց անկատար ասի, որպէս՝ աղջիկ, զի աղջիկն անկատար ասի, նոյնպէս եւ այս բանս ցուցանի:

[ԲԱՆ]

«Որզոն՝ այրիկ, քարուկ, խոչկորակ:

<6> Եւ յարանուն՝ որ յար ինչ քերթոցեալ է, որպիսի՝ Տիրիճան, խրախճան»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս վերոյ գրեցաք, այրիկն՝ «մարդուկն», քարուկն՝ «քարն»: Քարն նախագաղափար է, եւ ուկն՝ նուագութիւն. քաղակ, այսինքն՝ «քաւշակ», խոչկորակ, այսինքն՝ «անմեռուկ». քերթոցեալ՝ «սրբեալ», «ողորկեալ», «քերեալ»: Տիրիճան, որպէս ի յառաքինութենէն՝ «առաքինի» եւ կամ տէր ծառայից՝ կարաւղ կամ բարձր եւ յաղթաւղ: Խրախճան՝ «խնդալ», «ուրախանալ», «բերկրիլ»:

[ԲԱՆ]

<7> «*Բայածական է՝ որ ի բայէ ածանցեալ է*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսինքն՝ ի բայէ ածեալ եւ եկեալ յառաջ եւ յայլ եւս ի տեսակ ածեալ, որպէս ի *սիրելոյն*՝ սիրուն, զի *սիրն* բայ է, եւ *ունն*՝ յառաջ ածաւդ:

[ԲԱՆ]

«*Հիբար՝ սիրուն, իմաստուն, մարթուն*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսոքիկ բայք են, որպէս իրք՝ որ ի լինելութենէն զեղեալն կացուցանէ, որպէս ի *զարաւորէն*՝ զարութիւնն:

[ԲԱՆ]

«*Եւ ձեւք անուանց են երեք՝ պարզ, բարդ, յարաբարդ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Պարզն «մեկնակ» ասի, եւ *բարդն*՝ որպէս որ այլ իրք դնես ի վերայ: *Պարզ*՝ յորժամ երբ ասես «Լեւոն», եւ *բարդ*՝ որպէս որ ասես, թէ՛ «քաջ Լեւոն». եւ *յարաբարդ*՝ որ ի բարդն այլ եւս իրս կացուցանես, որպէս զերդ երբ ասես, թէ «*քաջ առեւծ Լեւոն*»:

[ԲԱՆ]

«*Պարզն, որզոն՝ Մանան. եւ բարդն, որզան՝ քաջ Մանան. եւ յարաբարդն, հիբար՝ քաջ Մանուէլ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

- *Էլն յարաբարդիւն առաւել է, քան զՄանանն*:

[ԲԱՆ]

«*Եւ բարդիցն զանազանութիւնք են չորք, քանզի ե՛ն ի նոցանէ, որ յերկուց ասարտեցելոց են, որպէս՝ Նոր-այր*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս երկուքս կատարեալ բայք են, զի *նորն* բայ է կատարեալ, նոյնպէս եւ *այրն*:

[ԲԱՆ]

«*Եւ ե՛ն, որ յերկուց պակասեցելոց են, որպէս՝ իմաստնա, պատում*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Երկուքն պակաս գան, որպէս թէ ասես *խմաստնա*՝ նա իրք չէ ի կացուցանել, նաեւ ո՛չ *ուսն* չէ իրք. այլ յորժամ շարադրես ընդ իրեար, նա *խմաստապատում* լինի:

[ԲԱՆ]

«Եւ ե՛ն՝ որ ի պակասելոյ եւ յաւարտեցելոյ, որպիսի՝ սիրա, մարգ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս մէկ բանս իրք է յառաջ եկեալ, եւ միւս այլն չէ իրք, վասն զի *սիրայն* իրք չէ, բայց *մարզն* անուն է:

[ԲԱՆ]

«Եւ ե՛ն՝ որք ի լիոյ եւ ի պակասելոյ, որպէս՝ մարդ, իթ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նոյնպէս եւ այս *մարդս* լիանուն է, եւ *իթն* չէ իրք:

[ԲԱՆ]

«Թիւք՝ երեք. եզական, երկական, յոքնական, որզոն՝ Պետրոս, Պետրու, Պետրոսք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի յորժամ ասես *Պետրոս*՝ վասն միոյ ասացեր, իսկ *Պետրոսք*՝ յաղագս բազմաց: Իսկ *Պետրուն* զերկուորականն ցուցանէ, որպէս թէ առու եւ կամ այլ ինչ այսպիսի, վասն զի հելլենացիք, յոյնք եւ հռովմայեցիք յոյժ ընտրութիւն առնեն վասն միաւորին եւ երկուորականին: Իսկ մեր ազգս ոչ ունի այսպիսի քննութիւն՝ վասն փարթամութեան եւ արձակ լեզուիս մերոյ:

[ԲԱՆ]

«Եւ են ոմանք եզականք զծածք եւ ի վերայ բազմաց ասացեալք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Միաւորական անուն են գտեալ առաջինքն՝ դիմագրեալ եւ նշանակեալ ի գիրս սակս ուսումնասիրացն, թողեալ ի յիշատակ իւրեանց, որպէս եւ ասեն, թէ *տոհմ* կամ *քաղաքն* կամ *գեհն* կամ *ազգն* եւ այլ եւս, որ սոցին հետեւեալ՝ նմանին ի բանս:

[ԲԱՆ]

«Հիզան՝ տոհմ, պար, ամբոյս»:

Եւ յոքնականք ի վերայ եզականացն եւ երկականացն ասացեալք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վասն զի *քէն*, յորժամ ի յաւարտ քանին գայ՝ յոքնական եւ բազմաւորական ասի, նոյնպէս եւ *ցօն* եւ *սէն*, որպէս իրք՝ որ անունն մի լինի, եւ յոլով իրս ցուցանէ, որպէս՝ *տոհմն*, զի *տոհմին* անունն մի է, եւ թիւն՝ բազում. եւ կամ որպէս՝ *պարն* եւ կամ *ամբոյն*, եւ *յոլով* անունն զյոլովս պարունակէ:

[ԲԱՆ]

«Որզան՝ խոյարան»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տեսանէ՞ս, զի *խոյարան* միաւոր է, բայց յորժամ *խոյարանք* ասես՝ նա *քէին* բազմաւորական լինի:

[ԲԱՆ]

«Եւ երկականացս, որպիսի՝ երկու»:

Իսկ հոյովք անուանց են վեց. ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վասն երկականացն վերոյ ասացաւ. իսկ սեռականն որպէս ընդհանուր՝ *կենդանին*. եւ տրականն՝ որպէս *Աստուածատուր* կամ *Տիրատուր*. առաքականն՝ որպէս դեսպան կամ առաքեալ. հայցականն՝ որպէս խնդիրք կամ յոյգք. իսկ հոշականն հիացական ասի եւ կամ կոչած իրք եւ եկած:

[ԲԱՆ]

«Եւ ասի ուղղականն անուանական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ուղղական ասէ, զի անուամբ ուղղի ամենայն: Եւ անու[ա]նականն պարզ է, որպէս որ ասես՝ *Սմբատ*, *Գրիգոր*:

[ԲԱՆ]

«Եւ պարզեւք՝ սեռական, ստացական եւ հայրենի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս տարսնացի, սելէկացի եւ կամ կեսարացի, եւ կամ որպէս ի հայրական սեռէ, որպէս՝ *Պահլաունի, Բագրատունի* եւ կամ այլ այնպիսիք:

[ԲԱՆ]

«Եւ տրականն՝ պատուիրական, եւ առաքականն՝ ցուցական, եւ հայցականն՝ խնդրական, եւ կամ ըստ հելլէն լեզուին՝ ստացական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Տրականն ըստ յունացն «թղթական» ասի, որպէս զերդ ասես «թղթաւոր» եւ կամ «թղթաբեր». եւ ըստ մեզ՝ *տրականն* «պատուիրական» ասի, իբր թէ տուեալ լինի ումեք իշխանութիւն եւ առաքեալ ի գաւառ եւ յաշխարհ հրամանաւ թագաւորի կամ հայրապետի, եւ ըստ այնմ իրացն եւ զանունն կոչեն՝ ասելով *նուիրակ* կամ *պատուիրաւոր*: Իսկ հայցականն, որ ասի խնդրական, որպէս՝ Աննա, որ զորդւոյն անունն *Սամուէլ* կոչեաց, որ թարգմանի «խնդիրք», զի հայցեաց յաստուածոյ եւ էառ: Եւ որ ասէ ըստ հելլէնացոց լեզուին *փաստական*, որ է «պատճառական», իբր թէ կոչես զոք ի բարի կամ ի չար, զի բարին եւ չարն պատճառ է կոչեցելոյն. զի թէ ասես, թէ միայն՝ *ե՛կ*, այդ անփաստ է. եւ թէ ասես՝ *ե՛կ ի չար* եւ կամ ի *բարի*, ապա զփաստն ասացեր՝ յայտնելով զպատճառն, թէ յինչ կոչեցեր՝ *ի յո՞րս, ի հո՞ւնձ* եւ կամ թէ՛ *ե՛կ ի պահ*:

[ԲԱՆ]

«Եւ հոշականն՝ առասական: Ենթանկաւ անուամբ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հոշականն «կոչական» ասի. եւ զի՞ ասէ զհոշականն «առասական», որ է հասարակ անուն, որպէս յորժամ ասես՝ *«Մա՛րդ կոչեա առ իս եւ կամ կին»*, որ է հասարակ անուն, երբ չասես, թէ՛ *կոչեա՛ զԼէւոն կամ զՄարգիս, զՇուշան եւ կամ զԹամար*. Եւ իսկական անուամբն, որպէս որ ասէ «ենթանկաւ անուամբն», այսինքն՝ առընթեր՝ մերձակայ անուամբն. զի մարդն մերձաւոր անուն է, քան *զՎարդանն* եւ *զՍմբատն*, որ է յատուկն:

[ԲԱՆ]

«Եւ ա՛սք, որք եւ սոքա տեսակք կոչին. իսկ, առասական, մակդիր, առինչունակ, համանուն, փաղանուն, բերանուն, երկանուն, մականուն, ազգական, հարցական, անորիշ, վեր՛բերական, որ եւ նմանական, ցուցական եւ դերհատուցական կոչի, բազձաձական, մակբաշի, պարունակ, քերթեալ, սեռական, յատուկ, դասական, թուական, բացարձակ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իսկ այս անուանց տեսակք թուով քսան եւ երեք են. ոչ որպէս ի սեռէ հատեալ տեսակք կոչեաց, այլ որպէս նշանակք անուանց՝ որ ի յամենայն իրաց վերայ ասուին, գոր եւ ինքն ֆիլիսոֆայն մեկնէ որպէս *զկերպարան*:

[ԲԱՆ]

<1> *«Իսկ է՝ որ զինքեան գոյացութիւն ցուցանէ, որպիսի՝ Մարկոս:*

<2> *Առասական է՝ որ զհասարակաց զեութիւնն ցուցանէ, որզոն՝ մարդ»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Սակս *իսկիդ* եւ *առասականիդ* վէճ եղեւ, վասն զի Պղատոն *զառասականն* յառաջ ասաց, քան *զիսկն* ժամանակաւ՝ որպէս ընդհանուր եւ նախագաղափար: Եւ Արիստոտէլէս *զիսկն* յառաջ ասաց՝ զՄարկոսն կամ զՄմբատն, զի զո՛ր տեսանես՝ ա՛յն է հաստատն. զքո մերձակայն՝ քան զանցած մարդկութիւնն, զլուեալն եւ զչտեսեալն. զի զարեգակն չկարէ ոք ուրանալ գոր տեսանէ, բայց զչտեսած իրն բազումք ուրանան: Եւ *իսկն* ի ստոյգն, յատուկն, մեկն, եւ առասական է ընդհանուրն, հասարակն եւ ազգն:

[ԲԱՆ]

<3> *«Մակադրական է՝ որ ի վերայ իսկիցն եւ կամ առասականացն եղեալ է. եւ յայտ է գով կամ պարսաւ: Եւ ձաւնձի եռակին՝ ոզւոյն, մարմնոյն եւ արտաքնոցն»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

«Մակդիր» ասաց ի թուելն, եւ ի մեկնելս՝ «մակադրական», զի մէկ են. *մարդիրն* «վերադիր» ասի, եւ *մակադրականն*՝ «վերադրական», որպէս ինքն մեկնէ, թէ որ ի վերայ իսկիցն եւ առասականացն դնի, եւ յայտնի ասէ՝ գով կամ պարսաւ: Զի երեք իրաւք գովի մարդ եւ պարսաւի.

<ա> *հոզւոյն* բարուվն, որ ասի՝ «խոհեմ» կամ «ողջախոհ». կամ հոզւոյն չարութեամբն պարսաւի՝ «անզգամ» կամ «վաւաշոտ»: <բ> Իսկ *մարմնական* բարեաւքն՝ «արագ» կամ «գեղեցիկ», եւ պարսաւի՝ «հեղզ» կամ «զազրելի»: <գ> Այլեւ *արտաքին* բարութեամբն գովի՝ «հարուստ», «փարթամ», եւ պարսաւի՝ «աղքատ» կամ «տնանկ»: Բայց մեծ է հոզւոյն քան զմարմնոյն, եւ մարմնոյն՝ քան զարտաքնոցն, որպէս ասի՝ ձաւնձի եռակի, այսինքն՝ բաժանումն հոզւոյ, մարմնոյ, արտաքնոցն:

[ԲԱՆ]

«Հոզւոյն՝ իբր թէ «ողջախոհ», «բիջախոհ», եւ մարմնոյն՝ «արագեղ», «յամրեղ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ արտաքնոցն՝ «փարթամ», «աղքատ», որպէս յստակագոյն վերագոյնդ ասացաւ:

[ԲԱՆ]

<4> *«Առինչունակ՝ իբր թէ հայր, ուստր, սիրելի, աջողակ»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Առինչունակն այն է, որ զմինն յիշելով անուամբ լծակցի եւ յիշուի միւս եւս այլ՝ որպէս արինակդ է, զի հայր ասելն ցուցանէ, որ որդի ունի. եւ թէ գորդին յիշես՝ հայրն զհետ զայ. եւ երբ սիրելի ասես՝ յատնեցեր զատելին. եւ երբ աջ ասես՝ նաեւ զձախն յայտնեցեր:

[ԲԱՆ]

<5> *«Իբրառինչունակ է, <այսինքն> իբր թէ գիշեր՝ յաւր»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իբրառինչունակդ նման է առնչին, եւ չէ՛ նոյնպէս. զի առինչքն բառնան զմիմեանս, որպէս հայրն՝ գորդին, եւ որդին՝ զհայրն, որ զմիմեանս բերեն, եւ իբրառինչունակն՝ ոչ. զի թէ ասես գիշեր մի՝ չբերէ զաւրն, բայց իբր է՝ «նման» է, զի գիշերն աւուրն է, այլ աւրն՝ չէ գիշերոյն: Եւ կամ թէ ասես՝ «Գրիգորն զերդ Սմբատն է», նա «զերդն» որոշեաց, որ չէ Սմբատն, այլ նման է Սմբատին:

[ԲԱՆ]

<6> *«Եւ հոմանուն է՝ որ ի վերայ բազմաց հոմանունակի եղեալ է. ի վերայ իսկիցն, որպէս՝ Յովհաննէս Չաքարեան, եւ Յովհաննէս Չեբեթեան: Եւ ի վերայ առասականացն՝ որպէս մուկն ծովային եւ մուկն երկրային»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հումն՝ «մէկ» ասի, եւ այն է հոմանունն, որ երկուք լինին. հասակաւ՝ այլեւայլ, եւ անուամբ՝ մի, որպէս արինակդ է. ի Յովհաննէս երկոքին ի յայլեւայլ հաւրէ եւ յազգէ. Յովհաննէս Չաքարեայ որդին Ղեւտացին, եւ Յովհաննէս Չեբեթեայ որդին զԱբուղովնացին. եւ բազումք են սոցայց անուանակիցք: Է եւ այլ տեսակք հոմանուանց, որ անուամբ մի են, եւ բնութեամբ՝ այլեւայլք, որպէս կենդանի մարդն եւ ի քարն նկարեալ դեղով, եւ կամ յայլ ինչ:

Եւ առասական է, որոյ գոյութիւնն եւ բնակութիւնն որիշ են, եւ անուամբ՝ մի, որպէս՝ մկունքդ ջրային եւ երկրային, եւ կամ շունքդ ջրային եւ ցամաքային, այլեւ շունք երկնայինք:

[ԲԱՆ]

<7> *«Եւ փաղանուն է՝ որ ի զանազան անունս գնոյնս ցուցանէ, որզոն՝ խաղ, դալապր, մարտոց, վաղակաւոր, սուսեր, նրան»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ճարտասանի գործ է այս եւ զարութիւն, որ զմէկ իրքն բազում անուամբ ցուցանէ եւ հարուստ, գոր քերթաւորն «բազմանուն» ասացին, եւ այլ իմաստասէրքն՝ «փաղանուն»: Եւ զհոմանունքդ ըստ երկուց իրաց ասացին ըստ պատահման՝ յորժամ պատահէ, որ նկարեն թոչնոյ կերպ եւ անուն ի փայտի. կամ մտածութեամբ՝ յորժամ յուսով սրբոց անուն դնէ իւր որդւոյն եւ կամ պատուեն գոք եւ արեգակն անուանեն կամ Լեւոն կամ այլ ինչ: Եւ փաղանուն դարձեալ՝ որպէս *կենդանին* զբազում բնութեանց անուանս փաղեաց, այսինքն՝ ժողովեաց եւ արար մի:

[ԲԱՆ]

«Բերանուն է, որ յիմեքէ պատահմանէ եղեալ է, հիբար՝ վանեալ, մեծասուգ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որ ի յիրացն բերմանէ կոչի, յաղթութենէ՝ *յաղթաւոյ*, եւ երբ յաղթեալ լինին՝ *վանեալ* կոչին, եւ իբր ի գաղութ ծնեալ տղայն *գաղթայր* կոչի:

[ԲԱՆ]

<9> *«Երկանուն է անուանք երկու ի վերայ միոյ իսկի դասեալ, որզոն՝ Եղիազարոս, որ եւ՝ Աւարեան. այլ սակայն ոչ անդրադարձի բանս, քանզի ոչ էթէ ո՛ր Եղիազարոս՝ նո՛յն եւ Աւարեան կոչի»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Երկանուն ասէ զայն, որ մէկ մարդ երկու անուն ունենայ, որպէս՝ *Պետրոս եւ Կեփաս*, կամ Սմբատ եւ Սպարապետ, որպէս որ ասէ, թէ՛ ո՛չ որ *Եղիազարոս*՝ նաեւ *Աւարեան* կարէ կոչիլ, զի այս *Եղիազարոս Յուդայ Մակաբեանց* եղբայր էր, որ ի յաւարառութեան ժամանակին ծնաւ, վասն որոյ եւ *Աւարեան* կոչեցաւ:

[ԲԱՆ]

<10> *«Մականուն է՝ որ եւ երկանուն կոչի, որ հանդերձ այրով իսկիւ ի վերայ միոյ ասացեալ է, որզոն՝ Բաներեգէս Յովհաննէս եւ Չայն գոչման Յովհաննէս»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այնու բաժանին երկանունն եւ մականունն, զի մականունն առաւելումն է, եւ երկանունն հարկաւոր պիտոյնայ եւ յետոյ դնուի: Իսկ զմականունն թէ՛պէտ յետոյ դիր, թէ՛պէտ յառաջ՝ որպէս զսպարապետականն ասես, թէպէտ որ թուի մականունն գոլ, բայց զանագանութիւն ունի. զի երբեմն զառաքինութեան անունն դնէ յառաջ եւ երբեմն զբուն անունն, որպէս եւ աստ ասէ՝ Բաներեգէս Յովհաննէս եւ Յովհանէս Բաներեգէս. զի Բաներեգէսն «Չայն գոչման» ասի եւ «Որդի որոտման», որ իբրեւ զձայն որոտման գոչեաց զաւետարանն, վասն որոյ եւ ի վերայ իսկ անուանն զայս անունն ընկալաւ հաւաստի:

[ԲԱՆ]

<11> «Ազգական է՝ որ ազգի է յայտական, որպէս՝ գողերձական, տուհ, վրացի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ազգական ասէ, որ միով անուամբ զբովանդակ ազգն յայտնէ, որպէս արինակդ որ յիշէ՝ գողերձական եւ տուհ, վրացի եւ հայ կամ հռոմ:

[ԲԱՆ]

<12> «Հարցական է՝ որ հարցանելով կոչի, ըստ հարցմանն ասացեալ՝ *n*^օ, *n*^օ ըք, *n*^օ ըքան, *n*^օ ըչակ, *n*^օ ըչան»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հարցական ասէ, որ ինքն տարակոյս ունի եւ յայլմէ կամի ուսանել: Նախ՝ միաւոր ասէ, թէ՛ *n*^օ, - զտեսակն հարցանէ, եւ *n*^օ ըք-որք ի տեսակէն հարցանէ, եւ *n*^օ ըքան՝ զթիւն հարցանէ, եւ *n*^օ ըչակ՝ զքանակն հարցանէ. եւ *n*^օ ըչան՝ զնշանն հարցանէ: Իսկ որ ի տեսակէն են՝ նաեւ զանուանսն հարցանէ:

[ԲԱՆ]

<13> «Անորիշ է՝ որ հարցականին հակառակ ասի, որզոն՝ *n*^օ ըք, *n*^օ ըչակի ըք, *n*^օ ըքան, *n*^օ ըչակի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Անորիշ ասէ զանյայտն, որ ձայնէ, եւ զանունն չասէ եւ զովն, այլ խրոխտալով ասէ եւ սպառնալով. *n*^օ ըք են, *n*^օ ըչակի ըք են, *n*^օ ըքան կարեն: Վասն որոյ ասաց, թէ «հարցականին հակառակ» է, զի որ հարցանէ՝ հանդարտ հարցանէ, զի ուսանել կամի: Իսկ աստ բարկացեալ անարգէ, որպէս որ ասեմք՝ *n*^օ ըք են Հռոմնին եւ *n*^օ ըք վրացիքն, *n*^օ ըքան է նոցա կարողութիւնն եւ զարութիւնն:

[ԲԱՆ]

<14> «Վերբերական է՝ որ եւ «նմանական» եւ «ցուցական» եւ «դերհատուցական» կոչի՝ նմանութիւն իմն ցուցանելով, որզոն՝ *այսանակ, այսպիսի, այսչափ, այսքան*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վերբերական ասի այն, որ հաստատ զիրքն չգիտէ, բայց իմաստուն է եւ յիւր իմաստիցն ի վեր բերէ զո՛ր ինչ իմանայ, եւ նմանական բանիւ ցուցանէ զեղած բանն կամ զլինելոցն, փոխանակ աչաց տեսութեան՝ մտաւք վճարէ զխաւսսն, զի դերհատուցականն «փոխհատուցական» կոչի, վճար հաւանականին՝ *այսանակ, այս արինակ, այսքանակ, այս կերպիւ, այսչափ* լինի լիեալ իրքն, *այսքան* մարդ լինի:

[ԲԱՆ]

<15> «*Բազձաձական է՝ որ եզական թուով բազում ինչ ցուցանէ, որգոն՝ տոհմ, պար, հոյլ, ջոկ, գեհ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բազձաձական ասի «բակառական», որպէս որ բակն յոլով կենդանիս ժողովէ, նոյնպէս բազձաձական անունն, որ է հաւաքողական, որպէս արիւնակդ՝ ջոկ, խաշն եւ ոչխար:

[ԲԱՆ]

<16> «*Մակբաշխ է՝ որ յերկուց եւ կամ յաւելեաց ի մին ունիցի զվերաբերութիւնն, որգոն՝ երկաքանջիւր, իւրաքանջիւր*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Մակբաշխն «կրկնաբաշխ» ասի, կամ «վերաբաշխ». իրք հրամայես բաշխել եւ թէ երկու մարդոյ կամիս տալ, ասես ճորտոյն՝ տո՛ւր *երկաքանջիւրոցն*: Եւ թէ ա՛յլ աւելի քան զերկուսն, ասես՝ տո՛ւր *իւրաքանջիւրոցն*. առաջին եւ վերջին վանգն ի մի վերաբերին, զի յառաջսն ունի զբաժանիլն:

[ԲԱՆ]

<17> «*Պարզունակ է՝ որ երեւեցուցանէ ինչ յինքեան պարփակեալ, որգոն՝ որթոց, կուսաստան, մարդաստան, ընկուզուտ, կթոց*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս յայտնի է *պարունակ* անունս, զի *որթոցն*՝ «այգին» է, որ գորթսն պարունակէ, եւ *կուսաստանն*՝ հաւատաւորացն զկուսանսն, եւ *կթոցն*՝ զխաղողն, եւ այլ պարունականք:

[ԲԱՆ]

<18> «*Քերթեալ է՝ որ ըստ հնչմանն յատկութեան նմանակի ասացեալ է, որգոն՝ խա՜զմ, վրդո՜վ, յո՜յզ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Որպէս ի քաղցր իրացն *քաղցրութիւն* ասի, եւ ի դառնէն՝ *դառնութիւն*, նոյնպէս եւ Հոմերոս դիպեալ ի պատերազմի՝ քերթեաց նման պատահմանն, զի լսեաց Հոմերոս խառն ձայն ի պատերազմին եւ հնարեցաւ քերթութիւնս, եւ զպատերազմին անունն եղ *վրդո՜վ*՝ նման պատահմանն ըստ հնչելոյն եւ յուզմանն եւ թնդմանն եւ պղտորմանն եւ պատերազմականացն խառնակմամբն զարհաւիրսն:

[ԲԱՆ]

<19> «*Մեռական է՝ որ կարէ ի բազում տեսակս կոտորիլ, որզոն՝ կենդանի, տունկ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վասն զի *կենդանին* սեռ է, որ յոլով տեսակս ունի յինքեան՝ զչորքոտանիս եւ զերկոտանիս, զբանաւորս եւ զանբանս: Նաեւ *տունկն* բազում ազգս ծառոց պարունակէ՝ ընկուզի, խնձորի, նոնենի, ձիթենի եւ զայլսն:

[ԲԱՆ]

<20> «*Յատկական է՝ որ ի սեռէն է զատեալ, որզոն՝ եզն, ձի, իւղենի*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յատկական զանհատսն ասէ, իսկ *անհատն* երեք ազգ է. մինն ըստ կարծրութեան նիւթոյն եւ պնդութեան՝ որպէս ադամանդն, եւ միւսն ըստ մանրութեան՝ որպէս զփոշին ի շողն. եւ միւսն ըստ անխառնութեանն՝ որպէս ձիոյն ի յառաջոյն տեսակ: Նաեւ այլ յատուկ է՝ *մի ձի, մի եզն, մի ձիթենի եւ մի մարդ*:

[ԲԱՆ]

<21> «*Դասական է՝ որ զդասն յայտնէ, որզոն՝ առաջին, երկիր, երիր*»:

<22> *Թուական է՝ որ զթիւն նշանակէ, որզոն՝ մի, երկու, երեք*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զանազան են դասն եւ թիւն ի միմեանց, զի *դասն* է կարգաւորութիւն աստիճանաց, որպէս՝ թագաւոր եւ իշխան եւ ձիաւոր, որ առաջինն վերջին չէ, եւ ոչ վերջինն՝ առաջին պատուով: Բայց թիւն մի պատիւ է, թէպէտ ի ներքուստ ի վեր սկսանի, թէպէտ ի վերուստ ի վայր՝ անհակառակ են միմեանց ի յարուեստս յայս:

[ԲԱՆ]

<23> «*Բացարձակ է՝ որ առանձինն իմանի, որզոն՝ սստուած, բան*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Աստուած անունն բացարձակ է, զի ոչ տեսանի գոյութիւնն եւ ոչ ըմբոնի արարչական զարութիւնն, բայց միայն ի հեռուստ հաւատով ճանաչի, զի ի բացեայ է եւ արձակ, զի զհտութեամբ ոչ կապի: Նոյնպէս եւ *բանն* բացարձակ է, որպէս զպտուղս հոգւոյն՝ սեր, խնդութիւն, խաղաղութիւն, որ ի բաց արձակի ի շրթանց ի լսելիս, եւ ի յայս ազգ բանս այլ գիր չկապի, զի յանձնէ բաւական է:

Դարձեալ բացարձակ ասի՝ *հրէշտակ, հոգի, շունչ, իմացումն*, զի անմարմինք են: Եւ բանն յորժամ գրի՝ ի մարմին կապի, եւ երբ առանց գրոյ ասի՝ բացարձակ է եւ անմարմին:

[ԲԱՆ]

«Եւ անուանն հաստա[տա]դրութիւնք են երկու. ներգործութիւն եւ կիր:

Եւ ներգործութիւն է՝ իբր դատաւոր, ընտրաւդ:

Եւ կիր՝ իբր թէ դատեալ, դատեցեալ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի յերկարեաց ի մասունս ճառիս եւ յիշատակէ աստ զանունն, զի ծանուցէ, թէ անուանն են ասացեալ ամենայն մասունքս: Եւ երկու եղանակաւ, ասէ, զամենայն անուանակոչութիւնս հաստատուն եղեալ, զոր հաստա[տա]դրութիւն ասէ: Եւ են ամենեքեան կա՛մ ներգործական եւ կա՛մ կրական, որպէս ինքս ասէ զաւրինակն՝ *դատաւոր, ընտրաւդ* կամ *տէր* եւ *իշխան, սպարապետ, հազարապետ* եւ կամ *արարիչ* եւ *ստեղծիչ* եւ այլք:

Իսկ կիր է՝ *դատեալ, հարեալ, գանեալ*, եւ կամ տէրունի կամ իշխանի սպահ՝ որ է զաւրք կամ *հազարապետն* ներգործական անուն է, եւ հազարն՝ կրական, զի զո՛ր նայն հրամայէ՝ նոքա կատարեն: Եւ ամենայն՝ որ ընդ այլոց ձեռամբ է եւ ընդ հրամանաւ՝ զո՛ր ինչ որ մեծամեծքն գործեն՝ ներգործական է, եւ զո՛ր հնազանդեալքն առնեն՝ կրական կոչի. նոյն եւ այլն ամենայն:

[ԺԱ]

[ԲԱՆ]

«Բայ է բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց եւ թուոց, որ ներգործութիւն եւ կիր յարկացուցէ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նախ՝ զանունն ասաց, եւ ապա՝ զբայն, զի անունն էութիւն է, իսկ բայ՝ պատահումն: Եւ յառաջ է էութիւնն, քան զպատահումն: Եւ չասէ, թէ բայ մասն է բանի, զի անդ ի վերն ասաց, թէ բանի մասունք են ութ՝ անուն, բայ

Եւ բայն «ասութիւն» ասի:

Եւ զի՞ ասէ, թէ բայ է բառն:

Բառն յերկու եւ յերեք վանգից գոյանայ. զաւ-րու-թիւն բառ է. բայց ասէ, թէ անհոլով <է>, այսինքն՝ անտապալ, անշուրջ: Զի *զաւրու* բայ է, եւ թէ *զթիւնն* դնես՝ հոլովի եւ բառ լինի:

Եւ դարձեալ անհոլով ասաց, զի զատուցէ յանուանէն, վասն զի անունն հոլովական է՝ *Ղաւ-իթ* անուն է. *ղաւն* բայ է՝ ընդունակ ամանակաց, դիմաց եւ թուոց:

Երբ ասես, թե *գրեցի*՝ զանցեալ ամանակն նշանակեաց եւ ընդունեցաւ, եւ զքո դէմդ եւ թիւ՝ մի, զի դու միայն գրեցիր: Եւ թե ասես, թե *գրենք*՝ ժամանակ զապառնուոյն ընդունեցաւ բանն, եւ դէմք՝ զքոյդ եւ զայլոց, թուով՝ բազումք, զի ասացեր *գրենք*: Եւ թե *ենք* ասես՝ *գրենք*, զներկայն ժամանակ նշանակեցեր:

Եւ որ ասէ՝ «ներգործութիւն եւ կիր յարկացուցէ», - ներգործութիւն՝ *տանջեմ*, կիր՝ *տանջիմ*. «յարկացուցէ», այսինքն՝ միշտ, հանապազ եւ զամէն՝ կամ գործ եւ կամ կիր յարկացուցէ՝ «կեց[ու]ց[ա]նէ»:

[ԲԱՆ]

«Եւ յարեւանայ բայի ուր»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յարեւանայն «զհետ երթալն» ասէ, այսինքն՝ թե հետեւի ուր մասն:

[ԲԱՆ]

«Խոնարհմունք, տրամադրութիւնք, տեսակք, ձեւք, թիւք, դէմք, ամանակք, լծորդք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Փիլիսոփայս մեծացուցեալ բարգաւաճ առնէ զբայս. եւ որպէս եղ բանին ուր մասն, նոյնպէս եւ բայիս դնէ, զոր ինքն ի կարգի պարզէ՝ ասելով զառաջին մասն զխոնարհմունսն:

[ԲԱՆ]

«Խոնարհմունք են հինգ՝ սահմանական, աներեւոյթ, հրամանեան, ըղձական, ստորադասական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի հինգ դէմս խոնարհի բայն. ի սահմանականն՝ յորժամ ասես *կոփեմ*, զի կատարումն դրեր: Եւ թե ասես *կոփել*՝ աներեւոյթ է, զի թե ո՞վ կոփէ եւ կամ ե՞րբ՝ չյայտնեցաւ:

Իսկ հրամանեան՝ յորժամ հրամայես՝ *կոփեա՛*:

Իսկ ըղձականն՝ *կոփիցեմ*, որ ցանկալով ասես՝ *ա՜ւ թե կոփիցեմ*:

Իսկ ստորադասականն, նախ *կոփիցեմ*՝ կամ *առնեմ* ասես եւ կամ *գործեմ*:

[ԲԱՆ]

«Տրամադրութիւնք են երեք. ներգործութիւն, կիր, միջին: Ներգործութիւն՝ զանեմ, իսկ կիր՝ զանիմ. եւ միջին է՝ որ երբեմն ներգործութիւն, երբեմն կիր յարկացուցէ, որզոն՝ մեռանիմ, տանջիմ, խոնարհիմ, սփածայ, մոռացայ»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Տրամադրությունն «փոխադրություն» ասի, որ փոխես. եւ երբեմն մեռանիմասես՝ որ կիր է, եւ երբեմն տանջեմ՝ որ ներգործություն է, որպէս խոնարհիմն եւ սփածայ եւ մոռացայ՝ կիր է. եւ թէ խոնարհես զայլս եւ զգեցուցանես կամ մոռացնես՝ քո գործ է, եւ նոցա՝ կիրք:

[ԲԱՆ]

*«Տեսակք՝ երկու,- նախագաղափար եւ ածանցական:
Եւ նախագաղափարն, որզոն՝ ռոռզեմ, եւ ածանցականն, որպէս՝ ռոռզանեմ»:*

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Տեսակք, այսինքն՝ կերպ[ք], երկու լինին. ա) նախագաղափար՝ նախաւրինակ, երբ դու ռոռզես, եւ բ) ածանցականն՝ երբ ի քէն ի յայլս անցանէ հրամանն, եւ միջնորդի՝ ռոռզանեմ ասի կամ կտրատեմ:

[ԲԱՆ]

*«Եւ ձեւք են երեք՝ պարզ, բարդ, յարաբարդ:
Եւ պարզն, որզոն՝ գիտեմ:
Եւ բարդն, որկէն՝ ըստգիտեմ:
Եւ յարաբարդն, որզան վարդապետեմ կամ սահմանաբանեմ»:*

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Երեք ասաց զձեւս բայի, որպէս յանուանն. պարզ՝ նախագաղափարն, մեկնակն, որպէս՝ գիտեմ, բարդ՝ ըստգիտեմ, քաջ գիտեմ ըստ բնութեանն: Յարաբարդ՝ աստուածաբանեմ. զի զՍա[h]ակն մեր աստուածաբան ասէին յառաջ, ի պարզն յաւելեալ բարդ եւ նման նմա եւ յար եւ այլ յաւելեալ յարաբարդէ:

[ԲԱՆ]

*«Թիւք երեք. եզական, երկական, յոքնական:
Եզականն, որզոն՝ գանեմ:
Երկականն, որպիսի՝ գանում
Եւ յոքնականն, որզան՝ գանեմք»:*

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Յայտնի է, զի յոլով անգամ ասացած է, որ երկուորականն կարկատ է եւ բռնադատութիւն է յիմաստնոց, զի չկայ ըստ մերում լեզուիս: Իսկ գանեմն եւ կոփեմն շինած է վասն հասկացնելոյ. դու զինչ քեզ պիտի, զայն ասա՝ գրել, գործել, բրել, ընթեռնուլ:

[ԲԱՆ]

«Դէմք՝ երեք. նախ՝ յո՛րմէ քանն. երկիր՝ առ ո՛վ քանն. երիր՝ յաղագս ո՛յր քանն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Դէմք, այսինքն՝ մարդ, որ պատճառ լինի քանին՝ երեք են. նախ՝ յո՛րմէ քանն, - այն ասաւոյն է. եւ առ ո՛վ քանն՝ լսաւոյն է, որ ի մաւտ լինի. եւ յաղագս ո՛յր քանն՝ պատճառն է քանին, որ հեռաւոր լինի. - թէ ի հրապարակս ոմն գովէ գոք կամ պարսաւէ, եւ այլքն միտ դնեն, եւ յաղագս որոյ խաւսին՝ չլինի մաւտ:

[ԲԱՆ]

«Ամանակք երեք. անցեալ, ներկայ, ապառնի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսքան են հաւաստի ժամանակն, գոր քայն ցուցանէ. *զնացի՝* անցեալն, *զնամ՝* ներկայս, որ ի ներս կամք, *զնալոց եմ՝* ապառնին, որ ապա առնի եւ դեռ չէ: Բայց ոմանք երիցագոյն զանցեալն ասեն վասն նախ եղելոյն. եւ կէսք՝ զներկայս, զի ընդ երկուսն ի յառաջէ անցեալ որպէս աւագ, գոր եղ արուեստաւորս նախ զներկայս:

Հարցաւ յիմաստնոց, թէ ժամանակ ի գոյի՞ց է, թէ յոչ գոյից: Որք ի գոյից ասացին՝ ա՛յս պատճառաւս, թէ լուսաւորացոյ շարժմունք եւ բնաւ լինելութիւնք եւ աճմունք աշխարհական իրաց եւ ամենայն ինչ ի ժամանակի կատարի: Իսկ Արիստոտէլէս յոչ գոյից ասաց, որպէս զյուշկապարկացն եւ զեղջիրաքաղուն համբաւ՝ անուամբ միայն ասացեալ, եւ ոչ՝ ճշմարտութեամբ, զի անցեալն իբրեւ էանց՝ ապականեցաւ, իսկ ներկայս աներեւութաբար անցանէ՝ որպէս ջուր ի խողովակէ իջանէ յաւազին տեղի եւ անյայտ լինի, այսպէս մեք ի զբաւսանս կամ ի քուն կալով ամանակ ծախի անզգայաբար: Եւ ապառնին ոչ էւս է, այլ յուսով միայն իմանի:

[ԲԱՆ]

«Եւ ի սոցանէ անցեալն ունի զանագանակս չորս՝ յարաձգական, յարակայ, գերակատար, անորիշ, որոց քաղագանութիւնք են երեք. ներկային ընդ յարաձգին, յարակային ընդ գերակատարին, անորիշին ընդ ապառնւոյն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յարաձգական է՝ որ մասն ինչ անցեալ է, եւ մասն ինչ՝ դեռ է, որպէս ասես՝ դեռ առնէի զայս իրքս:

Եւ *յարակայ է՝* որ յերէկ եւ կամ մէկ այլ ար եւ կամ երեք աւուրբ յառաջ գործեցաք ինչ, եւ յարակայ՝ ամանակն չէ հեռացեալ, շատ ար չէ անցեալ:

Եւ *գերակատար է՝* որ գեր ի վերոյ քան զքսան կամ զերեսուն ամ կատարեցաք գործ ինչ:

Եւ *անորիշ* է՝ որ լոկ ասես, թէ կատարեցաք զայս իրքս, ու չցուցանես ժամանակ, թէ ի քանի՞ արն կատարեցաւ, որ հասարակ զամէն ժամանակն առնու եւ ոչ որոշէ զմի ոք ի ժամանակաց. այս է զանազանակն չորս, այսինքն՝ որոշմունք:

Իսկ *բաղազանութիւնք* են, ասէ երեք՝ ազգակցութիւնք կամ միաբանութիւնք կամ միաւորութիւնք. <ա> ներկային ընդ յարածգին՝ մասն մի արարաւ եւ մասն մի կու առնենք դեռ: <բ> Յարակային ընդ գերակատարին՝ որպէս հուպ է յարակայն, որ երկու աւուրքք եւ կամ մի շաբաթով յառաջ եղած է, յարածգականն՝ որ դեռ յառնում ենք: Նմանապէս եւ <գ> անորիշն ընդ ապառնւոյն միաբանութիւն ունի, որպէս յորժամ ասես՝ *«Ընդ մեզ է տէր»*, նա զամէնն էառ՝ զերեք ամանակն պարունակելով:

[ԺԲ]

[ԲԱՆ]

«Լծորդութիւն է կարգաւոր խոնարհութիւնք բայից»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Լծորդութիւնս խառնուած է բայի. յորժամ կարգաւ խոնարհեցուցանես զլծորդ գրեարն, կարի աւզնէ քեզ՝ ի ստուգաբանութիւն զբայսն խառնելով:

Եւ լծորդք ասին, զոր արինակ՝ յորժամ որ ելանէ մէկ եզն ի լծէն, նա մէկ մի այլ դնեն ի լուծն, որ բառնալ կարէ: Այսպէս, յորժամ *պէն* չկարէ հերկել զբանն եւ զսերմն պտղոյ մեկնութեանն յայտ բերել՝ դնես *զբենն* կամ *զկենն*, նոյն եւ զայլ ամենայն լծորդսն:

[ԲԱՆ]

«Եւ են լծորդութիւնք շեշտոլոր բայից ութ, որոց առաջինն արտաբերիցի բենիւ, պէիւ, մենիւ, փիւրիւ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Շեշտն սուրն է եւ մի է յառոգանութեանցն, յորժամ սոսկ ասես *«Ջբանն բերեմէ՝ չորեր ոլորակ*. Իսկ յորժամ ասես՝ *«Չայս իրքս բերեմէ՝ ոլորեցեր շեշտիւ զբայն եւ ի յայտ ածեր լսողին»:*

[ԲԱՆ]

*«Եւ բենիւ, որգոն՝ ջամբեմ. մենիւ՝ ծամեմ, պէիւ՝ ընպեմ, փիւրիւ՝ չտիեմ:
Երկիրն՝ գիմիւ, կենիւ, քէիւ, խէիւ, որպիսի՝ կարգեմ, փակեմ, կնքեմ, ախեմ:
Երկիրն՝ դայիւ, տիւնիւ, թօիւ. որպիսի՝ ազդեմ, աւարտեմ, յաղթեմ:
Եւ քառորդն՝ գայիւ, սէիւ, ցոյիւ, ձայիւ, որգան՝ կորգեմ, սաեմ, հայցեմ, փորձեմ:
Եւ զհինգերորդն՝ ժէիւ, շայիւ, չայիւ, որպիսի՝ շարժեմ, մաշեմ, կոչեմ:
Եւ վեցերորդն՝ լիւնիւ, դատիւ, նուիւ, որպիսի՝ ծալեմ, մաղեմ, մանեմ:
Եւ թներորդն՝ ծայիւ, ճէիւ, ջէիւ, որգոն՝ կարժեմ, կարճեմ, տանջեմ»:*

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Առանց ծուլութեան յիշեցուցանէ զամենայն լծորդքդ ի յանուանէ, զի յոլով շահս տացէ ուսումնասիրացն, զի ոչ միայն ի ստուգաբանութիւն եւ ի մեկնութիւն անուանց պիտանացու է, այլեւ ի տաղաչափութիւնս, զի որ սահմանական չափով տաղ կամի շինել՝ կարի գեղեցիկ է լծորդաւք շինել զբանն տաղին, որպէս այս՝ *գ, ս, ց*. զարմանագեղ հասակ. *տրտապինդ Սմբատ, ցանկապատեալ շնորհիւ*. եւ զայլդ նոյնպէս արա՝ որպէս տեսերդ:

[ԲԱՆ]

«Եւ ութերորդն երկուորեակ յատուկքն ըէիւ, ռայիւ. որպիսի՝ բերեմ, վառեմ»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Ջրէ եւ գոռ երկուորեակ ասէ, զի *ռայն* յերկուց *ըէից* գոյանայ, որպէս՝ *տարր* եւ *տար*. Եւ յատուկ՝ զի սոցայց միայն է երկուորեակս եւ սոքաւք իմանաս զերկուորեակսն»:

[ԲԱՆ]

«Եւ իններորդն՝ հոյիւ, որգոն՝ պահեմ»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Հատոյց եւ ծախեաց առհասարակ զանձայն զրեարն, եւ *հո* միայն մնաց, վասն որոյ զայս «միաւոր» ասաց, զի չունի աւզնականս. բայց թէ ուրեք հանդիպի *հիւնն*՝ այլ ոչ կատարելապէս:

[ԲԱՆ]

«Եւ տասներորդն՝ մաքուր էչիւ, որպէս՝ դիեմ, գովեմ, արշաւեմ, հովուեմ, հրամայեմ, համբաւեմ»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Վճար եղեւ բաղաձայնիցն, կամի եւ զձայնաւորսն ի նոյն դասակարգել, վասն որոյ եւ մաքուր կոչէ զտասն թիւն եւ *զէչն*, զի տասանորդն աստուծոյ բաժին է, մաքուր է եւ *էչն*, զի պարզ եւ *մէն* առանց լծորդի է, եւ այսքան բառեար շինեաց ի յետին վանգին՝ *դիեմ, գովեմ* եւ այլն. այն ա՛յլ զաւրութիւն է, որ մի ձայնաւոր գրով ի վերջին վանգին դնելով բան շինէ, որպէս ասացն եւ որպէս յոտանաւորն:

[ԲԱՆ]

«Եւ պարոյկ բայից լծորդութիւնք են երեք, որոց առաջինն արտաբերի յառաջին եւ յերկուս դէմս այբիւ երկայնիւ. որգոն՝ գամ, գաս, գայ, եւ երկրորդն ոյիւ երկբարբառով, որգոն՝ առնում, առնուս, առնու»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Տեսակ է եւ այս խաւսից իմաստնոց, զոր պարոյկ անուանեաց, որ լինի պարոյկն ի սրէ եւ ի բութ գրերոյ. զի գիմն բութ է, եւ *մենն*, եւ *սէն*, եւ *յին*՝ սուր. եւ *այբն*՝ որպէս հոգի սոցա, զոր երկայնիւ ասաց, զի երկամանակ է *այբն*՝ ձգտի եւ ամփոփի. այլ աստ *յերկայն* տեղն է՝ գամ, գաս, գայ:- Եւ արուեստաւոր խաւսք լինի այսցեղս որպէս այս լծորդքս՝ *բ*, *ւ*, *փ*- *բազուկ*, *ւրազուկ*, *փազուկ*: Եւ թերալեզուքն զմէկն կարեն ի յայս լծորդացս ասել, եւ յայտնեն զբանն լտողացն իմացիւք:

[ԲԱՆ]

«Եւ երրորդն եջիւ եւ այբիւ դարձեալ, որզան՝ գեամ, գեաս, գեայ: Եւ ըստ լեզուաց՝ ոյիւ, որզոն՝ զոմ եւ յղոմ»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Ջեչ եւ *զայբ* դասէ ի միում հեզի եւ զԿորճէիցն յայտնէ մեզ զթանձր եւ զբարբարիկոն բառն, զի նոցայց է այս բառ՝ *գեամ*, զոր մեք *զամք* ասենք, զի զայս բարգուշատեցին ասէ եւ գորոզացին: Եւ *զյարկեմն* եւ *զյդեմն*՝ յղոմ, եւ զլոյսն՝ *լուս* ասեն ոմանք, եւ *զգայլն*՝ *գոյլ*, եւ *զգառնն*՝ *գոռնի*: Բայց ասեն, թէ կայ առ մեզ եւս գեղեցկաբանութիւն, զոր այլք չունին յազգաց՝ *սոցա*, *նոցա դոցա*, որք առ իս կան՝ *սոցա* ասեմ, եւ զոր առ քեզ՝ *դոցա*. եւ որ յիսնէ եւ ի քենէ հեռի են՝ *նոցա* ասեմ. բայց յետոյ գտաւ այս արուեստաւոր բառս:

[ԺԳ]

[ԲԱՆ]

«Ընդունելութիւն է բառ ընչունական բայից եւ անուանց յատկութեանց, եւ յարեւին նմա այսք, որք եւ բային, թարց դիմաց եւ ներխոնարհութեանց»:

[ՄԵԿՆՈՒԹԻՒՆ]

Ընդունելութիւնդ հասարակ ասի գոյանալ ի բայէ եւ յանուանէ՝ մասն մի անտի եւ մասն մի աստի առեալ, որպէս ասեմք՝ *Սմբատ գրէ*, զի *Սմբատն* անուն է, եւ *գրէն*՝ բայ:

«Եւ յարեւին սմա այսք», այսինքն՝ հետեւին սմա այսք, որք եւ բային, «թարց դիմաց եւ ներխոնարհութեանց», այսինքն՝ բային մասունք եւ ընդունելութեանս մասունք են. «թարց», որ է «առանց» դիմաց. զի զդէմքն չյայտնէ ընդունելութիւնն եւ ոչ զխոնարհմունսն, ապա այլքն հասարակ է: *Ընդունելութիւն է՝ շինեալ, արարեալ, բերեալ*. ահա դէմք ոչ ցուցանէ, թէ ով շինէ կամ առնէ, այլ որպէս կենդանին զտեսակս յինքեան ընդունի, եւ երկինք՝ զաստեղս, եւ մարմին ախտական՝ զմարդիկ, նոյնպէս ընդունելութիւն՝ զանուն եւ զբայ:

[ԺԴ]

[ԲԱՆ]

*«Յաւղ է մասն բանի հոլովական նախադասեալ <եւ ստորադասեալ>
ներիտնարհութեան անուանցն»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

*Յաւղն «կցումն» եւ «միաւորութիւն» կոչի. որպէս ջիլք եւ կապք մարմնոյն, այսպէս եւ
յաւղ՝ բանի: Բայց ասելն «հոլովական նախադասեալէ՝ ըստ յունին առաւել բանի, քան
մեզ, զի հոլովեն արական բառովն նախադասելով՝ *ն'վ Գրիգորիոս, ն'վ Գէորգիոս,*
որպէս եւ ասէ.*

[ԲԱՆ]

«Նախադասական է այս, որզոն՝ ո. եւ ստորադասական է այս, որզան՝ որ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

*Յունացն բացարձակ մէկ գիր է՝ ա, որ զարականն նշանակեն. իսկ մեք չառնեմք փոյթ.
եւ դիրին է մեզ ասել զնոյնն՝ *ն'վ Տրդատիոս, ն'վ Սմբատ:* Երբ միաւոր է՝ *ո*
նախադասական է, երբ որ է՝ ստորադասական է. զի *որ* երկու գիր է, եւ մէկն ի ստորեւ
է դասեալ եւ իգական կարեմք ասել՝ *ն' Մանի ն' Նունի,* զի *ո* ասելն փաղաքշական է.
մանկական է՝ տղայական: Այլ մեք զյաւղն առաւել յաւարտն ունիմք քան ի սկիզբն,
որպէս՝ *երկնային, երկրային, ծովային, ցամաքային,* այսպիսիքս հոլովական յաւղք
են, եւ այս յառատութենէ լեզուիս է, զի չկարատանամք բոնադատել ի
նախադասականն եւ յառաջն դնել զյաւղն, այլ միշտ եւ յաճախ ի վճարն:*

[ԲԱՆ]

*«Եւ յարեւին սմա այսք՝ սերք, թիւք, հոլովք:
Եւ են սերք, որզոն՝ արարաւղ, արարած, արարուած:
Թիւք՝ երեք. եզական՝ այս, այդ, այն.
Երկուորական՝ այսու, այդու, այնու.
Յոքնականք՝ այսք, այդք, այնք:
Եւ հոլովք՝ այսոյ, այսր, այսմ, այսու, զայսով»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

*Ասացաւ, թէ հայք չունին զնախադասականն յաճախ յաւղդ՝ որպէս յոյնք եւ
իսմայելացիք, եւ չէ՛ պակասութիւն, զի որ չգիտէ ասել երկոտասան՝ ի՞նչ պակաս է ի
յասելն տասնեւերկու:*

Իսկ «յարեւանալն» զհետ հետեւիլն է:

*«Մերք» ոչ է սեռն, այլ արուեստին կամ առնաւղքն, որպէս ասէ՝ *արարաւղ՝* բանին
առնաւղն է, եւ *արարած՝* արուեստն, եւ *արարուած՝* արուեստն, եւ արուեստին
արարեալ՝ բանն եւ գործն:*

Եւ եզական թիւն երեք՝ այս, այդ, այն, որպէս երեք միակ ասեմք ի վերայ աստուծոյ. *մի, եւ մի, եւ մի*:

Եւ եզական թիւն երեք՝ *այս, այդ, այն*, որպէս երեք միակ ասեմք շրջեցեր. եւ *այսմ՝* ի մենին տապալեցեր *այսու՝* ի վերայ *հիւնհին* բերեր, եւ *գայտովդ* յայտնեցեր:

Ե՛ւ երկուորականն, ե՛ւ յոքնականն՝ եւ ա՛յլ եւս ասին, զի մերս ի վախճանին գայ նշանաւոր յաւոդ, իբր թէ՛ *ձին* եւ *ձիդ* եւ *ձիս*, զի թէ ասես *ձիակն՝* ոչ նշանակեցեր, թէ ինչ ասացեր, իսկ դնելով զյաւոդն եւ ասիցես *ձին՝* անդէն նշանակեցեր, զի յաւոդն է, որ նշանակէ զյաւոդն զիրին թէ՛ յառաջն եւ թէ՛ ի յետն. զի թէ այլք դնեն ի սկիզբնն, մեք՝ ի վերջն. այսպէս՝ *կոյսն յասցի, հովին քաջ, գիտութիւն էակացն, կիլիկեցին*, եւ զիտեմք անդէն զնշանակեալն նուիւն կու յարակայանայ յաւոդն:

[ԺԵ]

[ԲԱՆ]

*«Դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ՝ որոշեալ դիմաց յայտնական, փոխանուն, թերանուն, հասարակ անուն:
Եւ հետեւին դերանունութեան վեց՝ դէմք, սերք, թիւք, հոլովք, ձեւք, տեսակք»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Գիտելի է, զի որպէս անունն նախադասեցաւ քան զբայ, նոյնպէս եւ դերանունութիւնս՝ քան զմակբայ: Եւ ասի *դերանունն* «փոխանուն»:

Եւ ընդէ՞ր ասաց երեք՝ դերանուն եւ թերանուն եւ փոխանուն. զի երեքս զմէկ իրք յայտնեն. զմէկն ասաց փոխանակ ճշմարիտ անուանն, այսինքն՝ զդերանունն:

Եւ *գթերանունն* ասաց, զի չկարաց դերանունն զճշմարիտ անունն յայտնել, վասն որոյ թերանուն ասաց, այսինքն՝ թերի:

Եւ *գփոխանունն* ասաց, վասն զի ի վերայ հասարակին առեալ լինի արականին, իգականին եւ չեզոքին՝ փոխանակաւ ի դէպ տեղոջ, որպէս՝ մարգարէք եւ արդարք եւ սարկաւազունք, արք եւ կանայք եւ մանկունք, որ ի գրոց վկայեցան:

[ԲԱՆ]

«Եւ դէմք նախազադափարացն՝ ես, դու, նա: Եւ ածանցացն՝ իմ, քո, նորա: Եւ սերք նախազադափարացն ձայնիւ ոչ ընտրին, այլ յատուկ ի վերայ ինքեանց ցուցցին»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նախազադափարն առաջին արինակն է, որ յառաջն ի մենէ սկսանինք՝ *եւ, դու, նա*, որ միաւոր է եւ պարզ. եւ ածանցացն՝ որ ի քէն ի քո ստացուածն անցանէ, եւ յիսնէ՛ յիմն. *իմ բանն, քո բանն, իմ այգին կամ իմ ձին*: Եւ զի՞ ասէ, թէ սերք նախազադափարացն ձայնիւ ոչ ընտրին. այս է, որ ասեն ձայնիւ՝ *եւ, դու, նա*.- զազգն

չցուցանէ, թէ արո՞ւ է, թէ՞ էգ, այլ յատուկ ի վերայ մեր երեւի նշանակն եւ յաչաց տեսանին:

[ԲԱՆ]

*«Իսկ ածանցական, որգոն՝ իմն, քոյն, նորայն,
Եւ թիւք նախագաղափարացն՝ <եզական> ես, դու, նա. երկուորական՝ մոնք, դոնք,
նոնք. յոքնական՝ մեք, դուք, նոքա:
Եւ ածանցացն, եզական՝ իմ, քո, նորա. երկուորական՝ իմէն, քովրա, նովրա.
յոքնական՝ իմք, քոյք, նորայք:
Հոլովք նախագաղափարացն.
ուղղակի՝ ես, դու, նա.
սեռական՝ իմոյ, քոյոյ, նորայոյ.
տրական՝ ինձ, քեզ, նմա.
առաքական՝ ինեւ, քեւ, նովաւ.
հայցական՝ զիս, զքեզ, զնա.
հոշական՝ դու.
ածանցանցն՝ իմ, քո, նորա, նոյր.
իմոյ, քոյոյ, նորա.
իմում, քում, նորում.
իմով, քով, նով.
զիմ, զքո, զնորայն»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Չոր արինակ, որ *մարդ* անունն ի վերայ բոլոր *տեսակին* ասուի, նոյնպէս եւ դերանունս ի վերայ ամենայնի երթայ՝ եզականաց եւ երկուորականաց եւ յոքնականաց, մատաւորաց եւ հեռաւորաց, զի երբեմն զհեռաւորն յիշեմք՝ ասելով, թէ նա աստ էր, կարաւ էր կատարել զայս իրքս, <բայց> չասաց, թէ ո՞վ. լուկ ասաց, թէ նա, ու այն դերանուն է: Եւ այս անուանն նմանութիւն է եւ յիրաւի ասի թեարնուն, զի զգոյութիւն բնութեանն ոչ ցուցանէ ասելն, թէ՛ *նոցա, նոքա, նա, իմոյ, քոյոյ, նորա*: Բայց զհոլովն այլ ուրեք չէ ի պարզել քան աստ, զի աւելի մասն դերանունութեանս յոլովականք են, որպէս՝ *իմոյ, քոյոյ, նորայոյ, սորայոյ*: Բայց եւ տիրանուն ասի դերանունս, այսինքն՝ ճշմարիտ անուն, զի ասեն այս հին է եւ մշտնջենաւոր՝ *եւ, դու, նա, նորա, նոցա, նոքա*, քան *զՄովսէս* եւ *զԱհարովն* եւ *զՊաւղոս* եւ *զՊետրոս* կամ *զՊղատոն* եւ *զՍոկրատ*, զի սոքա յետոյ եղան եւ ոչ կան եւ մնան յաւիտեան. եւ ստոյգ անունն անժամանակ, անդէմ եւ անտեղի է, որպէս դերանունս ցուցանէ, զի միշտ էր եւ ոչ անկանի ի յետութիւն, զի ասելն՝ *եւ, դու, նա, նոքա, նոցա*՝ գոյութիւնք են, եւ ոչ սոսկ անուն, որ այսաւր ասի եւ վաղիւ ոչ վախճանի, զի դրականք են, եւ ո՛չ՝ բնութեամբ. այլ արինակդ շատ է կրկնած:

Իսկ սեռականն, որ ասէ՝ *իմոյ, քոյ, նորա* - զազգն ցուցանէ. *իմոյ ազգին, քոյոյ ազգին, նորա ազգին* կամ *նախնեացն*:

Եւ տրականն «թղթական» կոչի. *թուղթ է բերած ինձ, քեզ, նորա*, կամ թէ՛ *Ետ արքայ զայս ինչ՝ ինձ, քեզ, նմա*:

Առաքականն՝ *ինեւ, քեւ, նովաւ: Ինեւ երթայ այս անուն, քեւ երթայ:*

Հայցականն՝ *զիս առաքէ յայն բան, զքեզ առաքէ, զնա առաքէ:*

Հոշականն «կոչնական» թարգմանի, որպէս ասէ՝ *դո՛ւ, այսինքն՝ ե՛կ, կամ՝ Դո՛ւ կոչեալ այս անուն, Դո՛ւ կոչեցեր զիս:*

[ԲԱՆ]

«Ձեւք պարզք, որգոն՝ իմ, քո, նորա: Եւ բարդ՝ անձին իմոյ, անձին քոյ, անձին նորա»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Խրատ տայ, թէ ի հոլովեցուցանելն զանունն զդերանուան տեսակն նախ պարտ է ի պարզէն առնել սկիզբն՝ *իմ, քո, նորա*, եւ ապա յողջականէն՝ *անձին իմոյ, անձին քոյ, անձին նորա*. զի բոլոր էութիւնն յիշուի անձամբն՝ *Անձին իմոյ հանգիստ ի տեսունէ կամ պարզեւք եւ կամ փառք եւ պատիւ:*

[ԲԱՆ]

«Եւ տեսակք՝ զի ոմանք են նախագաղափար՝ ես, դու, նա. եւ ոմանք՝ ածանցականք, որպէս ամենայն ստացականք, որք եւ երկդիմիքն կոչին»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զգուշացաւ իմաստասէրս, զի մի՛ երկայնաբան կոչեցուք վասն կրկնելոյն յոլով անգամ. ասաց, եթէ երկդիմիք կոչին. այս, որ աստ յիշեաց՝ ա՛յլ է. զի է՛ ժամ, որ ասես՝ *իմ ստացուածն, իմ այգին*:- Եւ այս մէկ ածանցութիւն է, որ ի քէն ածանցին: Իսկ յորժամ ասես՝ *իմ այգւոյն բերն, իմ ստացուածոցն աճն*, որ ի քո ածանցացն ածանցի՛ ունելով այլ տեսակս:

[ԲԱՆ]

«Եւ ածանցացն եզական է, որ մու զստացաւդն յայտնէ՝ իմ, քո, նորա: Եւ են, որ ներկականաց՝ նովրա - «երկու»: Եւ յոքնական, որ բազումս՝ *մեք, մեր:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եզական, որ միայն զստացաւդն յայտնէ՝ Սմբատաշէն. եւ երբ դու ասես՝ *իմ բերդն*, թէպէտ որ զանունն չասես՝ ճանչուի, այլ յայտնի է:

[ԲԱՆ]

«Եւ ի դերանուանսն ե՛ն՝՝ որ բաղյաւդք են, որպէս՝ իմս, քոյդ. եւ ոմանք՝ անբաղյաւդք, որպէս՝ իմ, քո»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ասեն, թե սխալանք է այս արուեստաւորիս զայս աստ յիշելս, զի յիրում տեղւոջն ասացեալ է վասն յաւղիդ, զի բաղյաւդ է՝ որ մի յաւդ ունի, որպէս *Մսքատն*, զի գիր մի յաւդեցաւ յանունն. իսկ անբաղյաւդ է՝ որ առանց յաւղի ասի՝ *Մսքատ*, եւ չունի յաւդ ի յաւարտն՝ որպէս յառաջն:

[ԺԶ]

[ԲԱՆ]

«Նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ըստ բարդութեան եւ ի բաղդասութեան, եւ ե՛ն ամենայն յիսուն՝ ներ, արտ, ատր, ապ, բաց, ին, ըն, բար, բաղ, շար, շաղ, մուշտ, զով, ջոկ, պատ, նախ, կանուխ, վաղ, առ, արդ, վեր, ըստ, ընդ, ենթ, ստոր, խուն, ունջ, զկնի, յետ, տար, մատ, յար, քող, գաւ, թափ, պար, կարա, փար, բակ, հեռ, թեռ, հակ, դեր, փոխ, մակ, քան, գեր, աւել, վասն, յաղագս: Եւ ստորադասք են ի սոցանէ երեք՝ սակս, կից, որդ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Նախադրութեանս անուն եւ տեղի հակառակ են միմեանց, զի թէ նախդիր է՝ նա յետոյ է՞ր է դրած. եւ երբ յետոյ եղաւ՝ նախադրութիւն է՞ր կոչի. այլ թէ սխալանք էին՝ ո՛չ վարէին այսու մինչեւ ցայսար:

Եւ հաւաստի՝ այսպէ՛ս. նախդիր ասի այնք աղագաւ, զի նախ եղեալ լինի եւ յառաջ քան զանուն եւ զբայ եւ յամենայն տեղիս՝ ո՛չ իբրեւ զպատուաւոր, այլ իբրեւ զսպասաւոր, զի վասն այսորիկ յետոյ եղաւ տեղեաւ, զի սպասաւոր է: Եւ իբրեւ զկարապետ նախադասեալ լինի յամենայն մասունս բանի, որ չէ պատուական քան զթագաւոր, եւ յաղագս զարդու եւ գեղեցկութեան իմացեալ եղեւ նախադրութիւնս, եւ բարւոք իմացեալ եղեւ. զի իրք՝ որ սահմանաւ բաժանի, պարտ է, որ անուամբ զանազանի՝ որպէս նախդիրս, զի սահմանաւ եւ անուամբ կատարեցաւ յայլոցն, զի թէ ըստ մասին զամենայն ինչ քննես՝ առաջին եւ վերջին գտանես, որպէս մեր ելն յաշխարհէս չէ առաջին, եւ որդին վերջին է հաւրն, եւ յերկս մշակաց նախ սերմանելն է, եւ ապա՝ հնձելն: Այլ ի հոռոմին նախդիրդ յիսուն՝ պարզ է, եւ երկոտասան՝ բարդ: Իսկ ի մերս վասն առատութեան լեզուիս՝ անբաւ, եւ ոչ միայն՝ յիսուն:

Եւ ստորադասքս մէկդ նախդիր կարէ լինել եւ ստորադաս. յորժամ ասես՝ *սակս քո եւ քո սակս. կից՝* որպէս *գրկակից, հաղորդակից*, եւ *որդ*, որպէս՝ *ճանապարհորդ*: Եւ նախադրականս յառաջ է քան զմակբայն, զի նախադրութիւնն անուան մասն է, եւ մակբայն՝ բայի, զի եւ լինի ծառայ հարուստ քան զտէր, այլ չէր քան զնա պատուական: Եւ նախադրութիւնս թեպէտ որ յառաջ է՝ պակաս է քան զմակբայ: Իսկ զի՞ ասէ ի բարդութեան. երբ ասես *տուր*՝ պարզ է, եւ երբ ասես, թէ *վաղտուր*՝ բարդ է: Եւ բաղդատութիւն առնես, թէ ո՛ր աղէկ նախդիր է՝ զա՛յն դնես. դու քեզ շինէ գլխունն:

զՆերն՝ ներքոյ եւ արտաքոյիշխան եւ տէր.

Արտաքոյ տարբերինացս շնորհաւորեալ.

Ատրագեղ որակութեամբ փայլատակեալ.

Ապենիագն՝ աննուագ ձեռամբ պարսպեալ.

Բարձողին զբնաւս բազկաւ պսակեալ.

ի նմանութիւն աստեղագեղ փառաւք երեւեալ.
Ընդ լուսոյ համեմատեալ, տէր իմ արքայ.
Բարեբոյս զաւակաւք ծաղկաւետեալ.
Բաղիւսածոյ թելաւք ոստայնեալ.
Շարմարգարտակոռ ուլամբք պճնեալ
Մուշտ բազուկ ուժամուխ հարեալ յերեսս իսմայելի.
Ջովարար սիք ամարայնոյ քաղցրութեամբ մեզ տուեալ:
Զայլդ դու շինեա աստուծով:

[ԺԷ]

[ԲԱՆ]

«Մակբայ է մասն բանի անխաղաց ի ստոր բայի ասացեալ եւ կամ մակասացեալ բայի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

«Անխաղաց» ասաց զմակբայս, զի ոչ ունի խոնարհմունս իբրեւ զբայ եւ ոչ հոլովս իբրեւ զանուն: «Ի ստոր բայի ասացեալ եւ կամ մակասացեալ բայի»: *Մակբայն* «կրկնաբայ» ասի կամ «վերնաբայ», որպէս թէ ասես՝ *զայս շինեմ* եւ կամ *շինեմ զայս*. «զայսն» բայ է, եւ «շինեմն»՝ մակբայ: Թէ ի ստորեւ դնես զբայն կամ ի վերջէ՝ մակբայ կոչի եւ անսխալ զբանն յայտնէ: Եւ վասն վերջադասութեանս մակբայի ասացաւ ի նախադրութեանն:

[ԲԱՆ]

«Եւ մակբայիցն ոմանք պարզք են, եւ ոմանք՝ ջոկադիրք: Եւ են պարզք՝ վաղ, նախ. եւ ջոկադիրք՝ վաղվաղ, նախավաղ»:

<1> Եւ ե՛ն, որք ամանակի են յայտնիչք, որզոն՝ այժմ, յայնժամ:

Եւ դարձեալ ընդ սորաւք իբրեւ զտեսակս դասելի է զամանակի յարակայականն, որպիսի՝ սերկ, վաղիւ, ցայս, ցայն, ցայնժամ, ցայսքան, մինչեւ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Իսկ արինակդ պարզ է՝ զոր ասէ ի կարգին. *վաղ*՝ անցեալ իրքն, *նախավաղ*՝ յառաջ քան զամենայն եւ վաղ ժամանակաւք. *այժմ*՝ որ է ներկայ, յայնժամ՝ զանցելոյն, դարձեալ եւ ապառն[ւ]ոյն ունի: Յարակայ ժամանակի, որպէս ասենք՝ *այսաւր, յայգուց, յառաւաւտէ մինչեւ ցայս ժամս* եւ այլ սոյնպիսիք:

[ԲԱՆ]

<2> «Եւ միջակութեան, որզոն՝ բարուք, յատկապէս, բնաւ, ամենեւին, համարէն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Միջակութիւն ասէ զիրքն՝ որ ի միջի կայ. եւ շաղկապով եւ այլեւայլ բառիւ հաստատես. *բարւոք*՝ որպէս յարեւելք բարի ասեն եղեալ իրացն, եւ ստոյգ՝ որ անսուտ լինի: *Յատկապէս*՝ թէ այսցեղ. այլ չէ լիեալ՝ *բնաւ, ամենեւին. համաւրէն*՝ ողջապէս եղեւ իրքդ եւ հաւաստի կատարեցաւ:

[ԲԱՆ]

<3> «*Եւ քերթութեանն, որպիսի՝ բոնցի, մուրցացի, ծղացի, աքացի, ողկուզարէն, տարմաբար*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յորժամ քերթողաբար խաւսիս՝ պաճուճագարդ, եւ ոչ՝ գեղջկապէս, որպէս արինակս զոր եղ առաջի, զոր ասեն, թէ քերթողի աշակերտ ոք կատարեալ ուսեալ՝ գնաց ի դրախտն միրգ բերել իւր վարդապետին: Եւ առեալ ծեծեցին զնա եւ արինաշաղախ թողին. եւ տեսեալ վարդապետին՝ հարցանէր զպատճառն: Եւ նա քերթողապէս քերածու բանիւ եւ չափածու վանգիւք պատմեաց զեղեալ գործն, թէ ի՛նչ ազգ ծեծեցին եւ ի՛նչ նիւթով: Ասաց՝ *բոնցի, մուրցացի*- «մատանցն կոճերովն», *ծղացի*՝ բազկացն ծղաւքն եւ արմնկամբքն, *աքացի*՝ ոտաւքն, *ողկուզարէն*՝ զերդ զխաղող կոխեցին, *տարմաբար*՝ ի վերայ դիմեցին բազմութիւնքն առհասարակ:

[ԲԱՆ]

<4> «*Եւ քանակութեանն, որգոն՝ բազում անգան, սակաւ անգամ*:

<5> *Եւ թուոյ յայտականն[ն]՝ երկիցս, երիցս, չորիցս*:

<6> *Եւ ետեղականն՝ վերին, ստորին, որոց կայք երեք՝ ներտեղուց, կամ <ի> տեղի կամ ընդ տեղ[ւ]ոյր, որգոն՝ ներտան, ի տուն, ընդուստ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Քանակն «չափն» է, որպէս ասեմ՝ *բազում անգամ աղաչեցի*: Եւ որ զթին յայտնէ՝ *երիցս առ նա գնացի* կամ *չորիցս*:

Եւ *ետեղականն* գտեղին յայտնէ եւ ցուցանէ զներքինն եւ զվերինն. կալն՝ զոտն կալն եւ զնստիլն ի տուն կամ ըստ տեղոյն ուր եւ իցէ ասել՝ *անդուստ գամ*, կամ գտեղին միայն ցուցանէ՝ լեառն եւ կամ դաշտն:

[ԲԱՆ]

<7> «*Ըղձից նշանակք են՝ ի ֆր, թէ, իցի, ա, զո, մարտա*»:

<8> *Եւ խրոխտականն՝ ի շտ*:

<9> *Եւ սպառնականն՝ տի՛ր, տի՛*:

<10> *Եւ հեշտականն՝ վա՛շ, յա՛յ*:

<11> *Եւ շնորհակալուն՝ գէն, արգէն, դրուատ*:

<12> *Եւ ողորականն՝ փոխան, փարելի*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ըղձական է ցանկալին. երբ լսես աւետեաց լուր, ասել յաւժարիս այսպիսի բան՝ *իցի՜ւ, յօ՛հ թէ լինէր*, կամ՝ *երանի՜, ա՜ւշ թէ, գո՜ւշ, մարտա՜ն*, գոր «մակար» ասեմք:

Եւ *խրոխտականն*՝ իշտ. յորժամ մարդոյ սպառնաս՝ *իշտ թէ* ի ձեռս անկանէիր:

Եւ *սպառնականն*՝ երբ ի մաւտ լինի զայրացուցիչն զակնդ ածես եւ զձեռքդ այս դէս եւ յայն, եւ ի խիստ զայրացմանէն կատարեալ բան չկարես ասել, այլ՝ *տի՛ր, տի՛, որպէս թէ* ասել կամիս՝ տե՛ս զլրբութիւնն. եւ երկու կիս որ լինի բանն ի դողալոյ եւ ի կաղկանծելոյ շրթանցն:

Եւ *հեշտականն*՝ յորժամ սրտահեշտ եւ անոյշ բան լսես եւ կամ տեսանես՝ *վա՜շ* ասեն տեսողին եւ լսողին, եւ զքո անուշութիւնն ցուցանես, ասելով՝ *յա՜յ*, որ շունչն արձակելնէ, եւ դիւրանաս, կամ երբ կերակուրն թուի ախորժ:

Եւ *շնորհակալուն*՝ ի գէն, արգէն. ի *գէնն* «պատիւ» է, եւ *արգէնն*՝ «մեծութիւն», եւ *դրուատն*՝ «գովութիւն», որպէս եւ ասացին հրեայքն Կոստանդիանոսի մաւրն Հեղինեայ՝ «Արգէն ի գէն քեզ տիկին»:

Եւ *ողորականն*՝ որ ողորքես գորդի եւ կամ զսիրելի. «*Ես քո փոխան. իմ փարելի, որ միշտ փարի զինեւ սէր քո*»:

[ԲԱՆ]

<13> *«Եւ ապաշնորհենին՝ դժմիտ, ձառադէմ, ապաժաման:*

<14> *Եւ աւաղականն՝ ո՜ւհ, ո՜ւիս, վա՜յս, իսա՜յ:*

<15> *Եւ եղկականն՝ վա՜յ, աւա՜ղ, ադէ՜տ, եղո՜ւկ:*

<16> *Եւ հրաշականն՝ ի՜հ, ո՜:*

<17> *Պասքական՝ բէք ասէ, ջէք ասէ:*

<18> *Եւ հենզնականն՝ ո՜ւհ, ա՜հ, է՜հ:*

<19> *Եւ ուրացութեանն կամ ապերախտութեանն՝ չէ՛, ո՛չ, ո՛չ իւիք, եւ ո՛չ միով իւիք»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ապաշնորհենին «ապաշնորհն» է. մարդ լինի «անհեթեթ», «փցուն», «անշնորհք», «լիրք», «դժմիտ», «խոժոռամիտ», «ձառադէմ», «լրբադէմ», «ապաժաման» անժամ գաս:

Իսկ *աւաղականն՝ ուհ, ուիս, վաիս, իսայ*. ցեղացեղ <լինի> ըստ լեզուաց եւ ըստ իւր բառին աւաղէ, երբ տեսանէ զոք ի վշտի եւ ի ցաւս խիստս:

Եւ *եղկական է*, երբ բարթ լսէ իւր պակասութեան եւ զինքն վայ եւ եղուկ ասէ:

Իսկ *հրաշականն*՝ որ ասէ «պաքսական», եւ ասեն, թէ «դարբնական» ասի, զի ի հրաշապէս եւ յուժգին հարկանելն եւ ի բախելն ի վերայ սայլին ուռամբն պիտի որ շատ շունչ կլանէ եւ ի դուրս բերէ շատ եւ թանձր շունչ եւ զհետին անհեթեթ բան ասէ՝ *ջէք ասէ, բէք ասէ, ջէք բէք*, որ զբերանն յիրեար բերէ *ջէքն՝ էջք*, եւ *բէքն՝ պայքար*:

Իսկ *հենգնականն* «արհամարհանք» է՝ երբ տեսանես, որ մարդ սուտ ի պարծել լինի եւ կամ իւր մեծ եւ փառաւոր թուի, նա դու ծաղր առնելով ասես՝ *«Ուհ, ահ, է, ի՞նչ քաջ ես, եւ ո՞վ է քո ընկերն»*։

Իսկ *ուրացութեանն*՝ որ ուրանայ զվնասն, գոր գործեալ լինի, եւ կամ ապերախտ լինի առ իւր երախտաւորն եւ ասէ՝ *«Ոչինչ ես արարեալ ինձ բարի, ոչ, ոչ իւիք»*։

[ԲԱՆ]

<20> *«Եւ բաղատ[որ]ադրութեան՝ այո, հայո:*

<21> *Եւ ապաստութեանն՝ մի՛, մի՛, մի՛ իւիք, մի՛ եզով իւիք»*։

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բաղատ[որ]ադրութիւնն միաւոր յանձնառութիւն է, որ զինչ ասեն՝ յանձին կալնու եւ իրաւունք տայ՝ *այո, հայո*, որ յանձն առնու զհիլայքն։

Ապաստութիւն է լռարարութիւն, որ մարդոյ խաւսիլ չտայ գոր ինքն չախորժէ՝ *մի՛, մի՛, մի՛ իւիք, մի՛ եզ իւիք*, որպէս ասելով՝ *մի՛* եւ *մի՛ իւիք*, զի եզն մի է եւ միաւոր ասի։

[ԲԱՆ]

<22> *«Եւ զգուշականն՝ զգոյշ, գուցէ:*

<23> *Եւ մարտարկացն կամ ճշգրտութեանցն, որպէս, զիպէս, զհարդ, ըստ որոյ, որզոն:*

<24> *Եւ դիպուածոյն՝ թերեւս, ինձ թուի, ի դէպ:*

<25> *Եւ դասականն՝ յետ այսորիկ, զկնի սորա, զատ առանձինն, մի ըստ միոջէ:*

<26> *Եւ ժողովոյն՝ միանգամայն, խոււք, համբաւ, համուռ, հոյլ»*։

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զգուշական է, որ պատրաստեցնես զոք՝ *«Զգոյշ կաց, գուցէ վնասիս»*։

Եւ մարտարկացն է այն, որ մարտ եւ վեճ արկանեն ի բանն, թէ ի՞նչ ցեղ եւ կամ ո՞րպէս լինի, ըստ որոյ յ իրաց, որպէս սուրբ կոյսն ցԳաբրիէլ ասաց՝ *«Զիա՞րդ լինիցի ինձ այդ, զի զայր ոչ զիտես»*, - զճշմարիտն հաստատելոյ աղագաւ եւ ոչ հակառակելոյ, - որպէս ասաց, թէ՛ կամ ճշգրտութեանցն, որ ճշգրտել կամի զիրքն։

Եւ դիպուածոյն՝ որպէս թէ զոք ի բան յղարկես, եւ <նա> յամելով գայ, ասես՝ *«Թերեւս պատճա՞ն անկաւ, ինձ թուի՝ ծուլացար. դէ՞պք եղաւ ինչ ցաւոց»*։

Դասական է՝ որ խաւսք մի վճարէ եւ մէկ այլ խաւսից շաղկապ դնէ, առաջք արկանէ եւ ասէ՝ *«Ե՞րբ այս եղաւ»*, - զկնի այսոր, յետ այսորիկ, զատ աստի, առանց այսոր. մի ըստ միոջէ կարգաւ խաւսեցաք զբանն որպէս ձեր կաճդ է, որ ասես ի գրոյցն, թէ կաճ ի սա ու ի սա եղաւ։

Եւ ժողովոյն՝ շատ մարդ ի մէկ բան երթան. երբ հարցանեն, ասես՝ *միանգամայն* զնացին, *խոււք* արարին, *համուռ, հոյլն* ամէն զնաց զհետ նոցա։

[ԲԱՆ]

<27> «Եւ մատերամանոյն՝ աղէ, թող, ած, եկ, բեր:

<28> Եւ բաղդատականն՝ առաւել, նուագ:

<29> Եւ հարցականն՝ ուստի՞, ե՞րբ, զի՞ բր, ի՞ բր, զի՞ բար, հի՞ զան:

<30> Եւ սաստկութեանն՝ յորդ, յոյժ, կարի, շատ, սաստիկ, մանաւանդ, յաւետ:

<31> Եւ ապերդմնականն՝ տա՜, քա՜:

<32> Եւ խուներդմնականն՝ հա»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Մատերամայն թուի, որ վարանական է. յորժամ մեծ բարւոյ չհանդիպի՝ մարդ վարանեալ տարակուսի առ վայր մի եւ ապա ասէ. «Աղէ, թող զայս առնենք» եւ ածն, թէ՛ «Զպակասդ բեր, որ յայտորմէ այլ չզրկինք»:

Եւ բաղդատական է՝ որ զշատ եւ զսակաւ համեմատես:

Եւ հարցական է՝ ուստի՞ զաս, ե՞րբ եկիր, զի՞ բր կաս, ի՞նչ ցեղ կեաս եւ այլն նոյնպէս:

Եւ սաստկութեանն, որ շատցն եւ զիրքն եւ ասես՝ «Շատ անձրեւ եկեր եւ յորդ». յոյժ, եւ կամ՝ կարի, խիստ, մանաւանդ, որ է «առաւել»:

Ապերդմնականն ասէ, որ աներդնուլ հաւանական բանիւ հաւատարիմ առնէ զիրքն՝ «տա՛», «քա՛», որպէս՝ «Տա՛ քեզ տէր քաւութիւն, մեղք կու խաւսիս, քա՛ւ եւ մի՛ լիցի»:

Եւ խուներդմնականն, այսինքն՝ պակասն: Հա որպէս մեք ասեմք փոխանակ այոյի:

[ԲԱՆ]

<33> «Եւ հաստատութեանն՝ յայտ:

<34> Եւ դրականն՝ ամուսնանալի, քետաղիմելի, տամկացելի:

<35> Եւ մոլութեանն՝ ե՜հ, ը՜հ, հը՜, ըհը՜»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի հաստատութեան բանի վերայ ասես՝ յայտ է, երեւելի է ամենոյ:

Եւ դրականն՝ զինչ ամուսինքն ասեն ընդ իրեարս խաղալով եւ կատակաբանելով: Դրական խաւսք են շինել՝ քետաղիմելի, որ է «հեշտալի», տամկացելի՝ «կակղագոյն շունչ բերեն արտաքս ի հեշտացեալ փորոտեացն»:

Եւ մոլութեանն՝ որ պոռնիկքն եւ չարագործքն ի խառնից ժամն թալացեալ ի զիջութենէն, այսցեղ թանձր գոլորշով հեզ հանեն շրթամբքն՝ դարձեալ երկիւղն աստուծոյ ի սրտիցն, եւ խոզացեալք ի տղմի գարշութեանն՝ եհ, ըհ, ըհը, ուստի պահեսցէ տէր զձեզ:

[ԺԸ]

[ԲԱՆ]

«Շաղկապ է բառ, որ կապէ գտրամախոհութիւնն ոճով եւ զմեկնութեանն փեռեկումն յայտնէ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Շաղկապս՝ որ ի վերջէ դասեցաւ. գիտելի է, զի ոչ ամենայն ի վերջէ դասեալքն պատուական են, եւ ոչ բնաւ՝ անարգ, զի ահա կառավարն ի վերջէ մտանէ, եւ առաջոյն նստի ո՛չ վասն պատուոյ, այլ զի տեղին զայն պահանջէ: Նոյնպէս եւ շաղկապս ո՛չ պատուոյ աղագաւ աստ եղաւ, այլ զի նախ այլեւայլ իրք հաւաքել արժան է, եւ ապա՝ կապել: Նախ ամենայն մասունք քերականիս, եւ ապա՝ շաղկապ. զի կապն միոյ իրի ոչ լինի եւ ոչ ասի. վասն որոյ ասէ՝ *«Շաղկապ է, որ կապէ գտրամախոհութիւնն ոճով»:* *Տրամախոհութիւնն* իմաստքն եւ բանին միտքն է, զոր շաղկապն կա՛մ յառաջքն մեկնէ, կա՛մ ի վերջքն ոճով, իբր թէ ասես *«Գնանք ի Հռովմ ես եւ դու»,- եւ զմեկնութեանն փեռեկումն յայտնէ, այսինքն՝ զբանն տարածանէ, որ մեկնութիւնն չթաքչի:*

Բարութք դաս կալաւ շաղկապս ի յայսմ տեղուջ, զի յառաջ՝ նիւթ, եւ ապա՝ կապ, այսպէս, նախ՝ անուն եւ բայ եւ այլն, եւ ապա՝ շաղկապս:

Եւ «շաղկապ» ասի ի շաղղելոյ իմն եւ միաւորելոյ եւ կապելոյ ի կարգի զբառն ընդ բառն եւ զմիտս ընդ միտս, զի զմեկնութիւն բանին յայտնեացէ, եւ ոչ զայն մեկնութիւնն՝ որ մեծապէս լուծմանց է կարաւտ, այլ զսովորական խաւսից, եւ բառն ի սմա որպէս սեռ իմանի:

Իսկ ջոկամանդ անհուն իմն է ըստ երկուց արինակաց. կա՛մ որ ի սկզբանէ աշխարհի լիեալ են իրք մինչեւ ցայժմ ի մէջ առնուցուս՝ վերաբերելով եւ ջոկջոկ ամանես ի լսաւոսն, եւ կա՛մ՝ ի քէն ինչ մտածելով խորինս բաներ ամանես ի քեզ եւ ի պատեհ տեղուջ յառաջ բերես:

Եւ է դարձեալ ջոկամանս միաբանութիւն առ իրեարս առաջի արկեալ դիմացն՝ որպէս արինակդ ցուցանէ:

Ասի *Շաղկապդ* եւ «ոգի», զի զկապն դնելով կենդանացնէ զբանն եւ շունչ եւ ոգի կլանէ ինքն ի յասելն, որպէս՝ *եւ, դու* բաժանած բանք են. իսկ *եւ եւ դու*՝ միաւորեաց *եւ*-ն:

Իսկ անջատականն ընդդէմ սմին զդէմսն որոշէ, այլ զմիտսն ոչ բաժանէ, որպէս թէ՛ *առնեմ, արա*, եւ չկապես ընդ գործն՝ թէ զայս իրքս արա:

[ԲԱՆ]

«Եւ շաղկապացն ոմանք ջոկամանք են, եւ ոմանք՝ անջատականք, ոմանք բաղմատք, եւ ոմանք՝ տարբաղմատք, փաստ[ա]բանականք, տարակուսականք, բաղբանականք, թարմատարք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եցոյց գիանգամանս շաղկապիս, թէ որք են ջոկամանիդ իմանալի, որպէս ասացաւ ի մակբային կամ ի սկզբանէ աշխարհիս բուն հարկանել զգոյացութենէ աշխարհիս ինչ եւ գալ կարգաւ եւ որ ինչ եղեն ընդ ժամանակս ժամանակս՝ ի մէջ առնուլ եւ լնուլ ի լսաւոսն եւ ջոկ առնուլ, այսինքն՝ հաւաքել եւ կամ ի քո խորհուրդդ ծնանել խորինս ինչ եւ ճառել ի լսաւոսն: Եւ է ջոկամանս իբրեւ զմիաւորութիւն եւ զմիաբանութիւն:

Իսկ *անջատական* է՝ որ զմիտս իրին ոչ բաժանէ, այլ զդէմսն միայն. թէ ասես՝ *ես եւ դու*, զդէմս ցուցեր, այլ չասացեր, թէ ի՞նչ առնենք, - այս է անջատական: Եւ երբ ասես՝ «Ես եւ դու երթանք առ թագաւորն», - ջոկամանք են, եւ միտք յայտնեցաւ:

Իսկ *բաղմատ* է՝ որպէս ի վերայ ճանապարհի հաստատուն իրք ասես, եւ զիրքն չասես, թէ քա՞ր է, թէ՞ ծառ: Եւ երբ ասես «*Լուսաւորեա՛ե՛*՝ «զարեկագն» նշանակեցեր, բայց զգոյութիւնն յայտնի չասացեր, թէ արեգա՞կն կամ լուսի՞ն կամ ա՞ստղ:

Արդ՝ բաղմատ է, որ իրք յայտնէ, եւ գոյութիւն՝ ոչ, այսինքն՝ յայտնիչ իրք առանց գոյութեան:

Իսկ *տարբաղմատ* է յայտնիչ իրաց՝ գոյութեամբն հանդերձ, որ չասես իրք ի վերայ ճանապարհին, այլ զգոյութիւնն ոճով յայտնես, որպէս ասես, թէ՛ «*Արեգակն կամ լուսին կամ աստեղս՝ որպէս զայս բանս արարեր դու զիս, ուրախ արարից եւ ես զքեզ*»:

Իսկ *փաստաբանականն* «պատճառական» է, որպէս որ յամեալ ի յորս եւ յետոյ եկեալ՝ հարցանես զպատճառն յամելոյն:

Իսկ *տարակուսական* է՝ որ դու չհարցանես զճանապարհորդն, թէ ի՞նչ էր պատճառն յամելոյն, այլ դու յանձն տարակուսիս քեզ ընդ քեզ ասելով՝ «*Արդեւք ի՞նչ եղեւ, զի՞նչ եղեւ, է՞ր յամեաց թշուառականն*»:

Իսկ *բաղբանական* է «պատճառադրականն»՝ յորժամ շատ բաղբաղէ ճանապարհորդն զպատճառ յամելոյն, եւ ի բազում ասելոյն զպատճառադրականն հաւանիս եւ ասես՝ «*Ապա ուրեմն ա՛յդ էին պատճառքն. հեմա՛յ զիտացի զիրաւաբանութիւնդ*»: Որպէս եղբարքն Յովսէփայ զպատճառ յամելոյն յԵգիպտոս ասացեալ՝ հաւանեցուցին զՅակովբ զհայրն իւրեանց, եւ եգիպտացիքն փորձիւ ուսեալ զեւթնամեայ սովոյն իրքն, ասէին՝ «*Ուրեմն այս էին երազքն Փարաւովնի*»: Եւ Յակովբ ասէր՝ «*Ուրեմն ա՛յս էին երազքն Յովսէփայ*»: Իսկ «*ապա ուրեմն*» ասելն յետ տարակուսանաց լինի, երբեմն եւ է՛, զի ի տարակուսանս:

Իսկ *թարմատարդ* «անհարկաւոր» թարգմանի, այլ որպէս եւ անուանի, նոյնպէս է՛. եւ աստ ոչ հարկաւոր պիտոյիք եղաւ, այլ որպէս ճամուկ ի մեկնոցի, այսինքն ի հանդերձի՝ ոչ զպէտս հանդերձին վճարէ, այլ զգեղեցկութիւնն ցուցանէ. նոյնպէս եւ թարմատարն՝ կա՛մ միայն զտեղին լնլոյ աղագաւ եղաւ, եւ կա՛մ պայծառացուցանելոյ եւ զարդարելոյ աղագաւ եղաւ, եւ ո՛չ՝ ի պէտս հարկաւոր պիտոյից, զի ըստ աշխարհականաց *թարմատարն* «վայրապար» ասի, եւ *ճամուկն*, զոր դուք «տրեզ» ասէք:

[ԲԱՆ]

<1> «Եւ ջոկամանք են, որ զմեկնութիւնն յանհունս արտաբերեալ ջոկամանեն, եւ են այսոքիկ՝ եւ, զի, այլ, թէպէտ, անքեցիկ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս է ջոկամանս, զոր ինքս մեկնէ, որ ի լինելութենէ արարածոց երթաս մինչեւ ի կատարած աշխարհիս, եւ երբ խաւսք մի վճարես՝ եւ դնես, որզան՝ «Գնացի եւ եկի»: Գի յորժամ ասես՝ «Գիտե՞ս», կու հասրկնաս եւ այս հայնց բառ է *զի*, որպէս որ կիլիկեցիք կաճ ասեն՝ *զհաճն* կարճելով, որպէս որ ի գրոյցն ասես շաղկապ, թէ *կու հասկնա՞ս* կամ *գիտե՞ս*, - եւ այս է. *այլ, թէպէտ՝* եւ ի խաւսից մէջ դնես զայս, զի «*Թէպէտ զաւրաւոր էր, յաղթեցաք սուլտանին*»: Իսկ *անքեցիկն* բառ է՝ «գոնեայ» կոչի, զի՝ «*Թէ երէկ չեկիր, գոնեայ այսաւր եկ*», զոր դուք «բարե» ասէք:

[ԲԱՆ]

<2> «Եւ անջատականք են՝ որ եզ անգամ զայլս շաղկապեն, բայց սակայն յիրէ յիր խտրոցեն, եւ են այսոքիկ՝ կամ, եւ կամ, կամ թէ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Անջատականք են, որ զդէմսն բաժանեն, բայց զմիտսն՝ ոչ. եզ անգամ, մի անգամ զայլս մակշաղկապեն՝ *կա՛մ դու, եւ կա՛մ ես, եւ կա՛մ թէ չէ դա*: Բայց սակայն «յիրէ յիր խտրոցեն», այսինքն՝ թէպէտ անջատականքն զմիտքն բանին չյայտնեն, այլ յիրէ յիր խտրոցեն, այսինքն՝ միջոցեն, կտրատեն, որպէս թէ՝ *դո՛ւ եւ դա՛*, - թէպէտ զմիտսն չասացեր, թէ ի՛նչ առնէք *դու եւ դա*, բայց *զեւն* դնելով զերկուքն բաժանեցեր եւ արարեր հանգիստ բանին:

[ԲԱՆ]

<3> «Եւ բաղմատք են՝ որ գոյութիւն ոչ յայտնեն, այլ ոճ իմն նշանակեն, եւ ե՛ն այսոքիկ՝ թէ, թէպէտ, զի թէպէտ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ասացաւ արինակ բաղմատիդ յառաջագոյն, եւ զի ասէ՝ «ոճ իմն նշանակեն», «*Թէ դու չգնաս, դա՛ գնայ*», զի «*Թէպէտ որ իսելաւք ես, այլ զքեզ չգիտես*»:

[ԲԱՆ]

<4> «Եւ տարբաղմատք են, որ[ք] ընդ գոյութեանն եւ ոճ յայտնեն:

<Եւ են այսոքիկ՝ > քան, քան[զ]ի, <վասն>, վասն զի»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

xՄտաւոր պիտի այսպիսի խաւսաւղն, որ ի յայն իրացն դնէ զայս ազգ շաղկապս, որ գոյութիւն եւ ոճ յայտնեն, այսպէս՝ «Քանզի դու բերեր ինձ ոսկի, տամ ես քեզ ակն պատուական». ոսկին եւ ակն՝ գոյութիւն, եւ «դու՝ ինձ, եւ ես՝ քեզե- այս ոճ է:

[ԲԱՆ]

<5> «Եւ փաստականք <են>, որք ի բացատրութեան սակս բաղայս յարառոցեն. եւ են այսք՝ զի, որպէս, եթէ, արդ եթէ, վասն, յաղագս. վասն որոյ, վասն զի, վասն ոյր, ըստ որոց, ըստ որքան, որքան, մի անգամ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ասացաւ, թէ պատճառականք են փաստականքն, եւ զի ասէ՝ «ի բացատրութեան սակս բաղայց յարառոցեն»: Առաքեալ ի քէն մարդ թղթատար, եւ յամեալ, ի բացատրութեան սակս եւ ուսանելոյ սակս բաղայս՝ պատճառս յարես խաւսից եւ ասես՝ «Զի՞ եղև քեզ, ո՞րպէս յուշացար, եթէ արգելի՞ն՝ զքեզ»: Արդ՝ եթէ չկար պատճառ, վասն որոյ՞ յամեցեր, վասն զի՞ չվախեցեր, ըստ ո՞րքան ուժոյ չերկեար դու»:- Միանգամ միով բանիւ յայտնեա:

[ԲԱՆ]

<6> «Եւ տարակուսանք են՝ որք տարակուսեալք յերկրայս սովորեցաք մակշաղկապել. եւ են այսք՝ արդեւք, ապա, ապաքէն, ապա ուրեմն, իսկ ընդէ՞ր, էրո՞ւմ, զմէ՞»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ասացաւ եւ այս, որ յառաջ քան զգալ մարդոյն դու քեզն տարակուսիս՝ «Արդեւք ի՞նչ եղաւ, ապա ուրեմն հիւանդացա՞ւ, իսկ ընդէ՞ր առաքեցի զնա, զմէ՞ անգիտացայ, զի ծոյլ եւ անարի էր»:

[ԲԱՆ]

<7> «Եւ բաղբանականք են, ոյք առ մակբերսն եւ առ շաղկապսն բացատրութեան քաջ տրամակային. եւ են այսք՝ արդեւք, ուրեմն, այլ, այլ սակայն, այսուհետեւ, վասն որոյ, յաղագս որոյ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վերագոյն ասացաւ եւ բաղբանականս, թէ որ գայ ի գործոյ ինչ հեղզացեալ եւ կամ զրպարտեալ ինչ՝ կամիցի արդարանալ բանիւ, եւ շատ պատճառ միաբանէ եւ առաջի դնէ, զի բաղն մի ասի, վասն որոյ առ մակբերսն եւ շաղկապսն. մակբերն՝ «վերնաբերն» եւ «կրկնաբերն» է, ի վերայ բերէ նմանագոյն պատճառս եւ շաղղէ, այսինքն՝ խառնէ առակ եւ արիւնակս բազումս բացատրեալ, որ քաջ տրամակային, այսինքն՝ ստուգին եւ իմացեալ լինին, մինչ հաւանիս եւ ասես՝ «Արդեւք ա՞յդր աղագաւ յամեցեր, ուրեմն չէին իրաւ զրպարտաւորքն քո, այսուհետեւ հաւանեալ եմ քեզ, վասն որոյ այլ ոչ եղից ունկն քոյոց թշնամեացն, զի դու ճշմարիտ ես»:

[ԲԱՆ]

<8> «Եւ թարմատարք են՝ որ ի չափու սակս կամ զարդու յարառոցեալ լինին. եւ են այսք՝ իզն, մակ, իբք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Լիով ասացաք եւ զայս զթարմատարս, որ վասն զտեղն լնլոյ եւ զարդու աղագաւ եղաւ, եւ ոչ՝ ըստ կարեաց, զոր եւ ինքս ասէ. իզն՝ բանհատ է այս, զերդ որ ասես՝ թէ «Ինչո՞ւ ի գաս, ինչո՞ւ ի գնաս, իզն գաս, իզն գնաս, իզն ասա ընդ այս անուն մարդ»։ Իսկ եւ մակս այլ է բանհատ, զերդ ասուքն եւ ընցայն եւ կաճն, նոյնպէս եւ համայն. «Համայն լսէ, համայն ասա զայս»:

[ԲԱՆ]

<9> «Եւ են ոմանք, ոյք առադրեն եւ ընդդիմակս, որպիսի՝ սակայն, համայն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զայլս ասէ այսմ պատճառ, զի սովորութիւն է իմաստնոց զստոյզն յանձանց միայն կարգել, իսկ զկարծելիսն ոչ ինչ յերկուց վերայ կայ, որպէս թէ այլք ասացին, եւ ես չանարգեմ, որ թէ զայ ժամանակ՝ վարին նովաւ, եւ որ աղէկ լինի եւ լաւ՝ հետ այնոր երթան, որպէս թէ հեղզն զհետ արագին, եւ անգործն՝ զկնի գործաւորին, որպէս ասել՝ «Սակայն թէպէտ որ կռուաւդ էր, յաղթեցի»։ «Համայն թէեւ արագ էր, յառաջեցի ես զնա»:

[ԲԱՆ]

<10> «Եւ վարանականք են՝ ոյք ակամայ ընտրելի առնեն զերկրորդն, որզոն՝ զէթ, զոնէ, փարթար»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հաւաստէ եւ ինքս արուեստաւորս զմիտք բանիս, եւ մեք եւս վերագոյն ցուցաք, թէ յորժամ ի յառաջին բարւոյն վերջանան, զերկրորդն յանձն առնուն՝ վարանեալ եւ չգտեալ զառաջինն գէթ. «Թէ մեկնիչ քաջ ոչ եղէ՝ [զէթ] ինձ բանիկ ուսանիմ» եւ «Թէ կարդացաւդ չկարեմ լինել գովելի, զոնեայ յամաւթոյ զերծայց» եւ «Թէ ի քաղաքն չհասի, փարթար փութալի է, զի ի գեաւդ հասից ի յորս»:

[ԺԹ]

[ԲԱՆ]

«Առոգանութիւնք են տասն՝ շեշտ, բութ, պարոյկ, երկար, սուղ, թաւ, սոսկ, ապարթարց, ենթամնայ, ստորատ»:

Եւ առոգանութիւնք սեռականք են չորք՝ ոլորակ, ամանակ, հագագ, կիրք: Եւ ի սոցանէ

ոլորակք են երեք՝ շեշտ, բութ, պարոյկ: Ամանակք՝ երկու. երկար, սուղ: Հագագ՝ երկու. թաւ, սոսկ: Կիրք՝ երեք. ապաթարց, ենթամնայ, ստորատ:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Առոգանութիւնն «առովասութիւն» ասի. եւ դարձեալ կոչի «արուեստ» եւ «գարդ» բանի, զի որպէս ամենայն որ ի ներքոյ երկնից բովանդակի ի տասն ստորոգութիւնս, նոյնպէս եւ տասն են, որով բաժանին եւ գեղեցկանան ամենայն բանիւ բովանդակեալ իմաստք: Իսկ ասելն, թէ առոգանութիւնք են տասն՝ զքանի՛ս սորա յայտնեաց հանդերձ անուամբք. իսկ զգարութիւնս սորա եւ բացայայտեցից:

Արդ, ասի շեշտ՝ սուր, բութ՝ ծանր կամ խոնարհ կամ մանր, պարոյկ՝ շուրջառ, երկարն՝ երկայն, սուղ՝ կարճ կամ սոսկ, թաւ՝ խոշոր կամ թանձր, սոսկ՝ ողորկ կամ լեաշկ, ապաթարց՝ առանց, ենթամնայ՝ ներքսադրական, ստորատ՝ ներքեւահատ:

Եւ զի՞ ասաց առոգանութիւնք սեռականք են երեք, զոր պարտ էր չորս ասել. զի յառաջիկայս բաժանի ոլորակն ի շեշտ եւ ի բութ եւ ի պարոյկ, ամանակն՝ յերկար եւ ի սուղ, հագագն՝ ի թաւ եւ ի սոսկ, կիրքն՝ յենթամնայ եւ յապաթարց եւ ի ստորատ:

Բայց *ենթամնայդ* եւ *ստորատդ* հակառակ են միմեանց, զի ենթամնայդ խառնիչ է բանի, իբր թէ՝ *Գամաղիէլ ւարէնսուսոյց*. իսկ ստորատդ ի բաժանել գտոյն, թէ՝ *ւարէնս ուսոյց*:

Իսկ *ապաթարցդ* եղեալ ի տեղի նշան՝ վասն ունելոյ զձայնաւորն առ ի պարզ ասելոյ զբանն, որպէս անունդ յայտնի՝ հանել այբի եւ դնել զդա ի վերայ տեղոյն՝ ասասցես ապադարձ:

Եւ ասելն՝ թէ առոգանութիւնք են սեռականք երեք, այսինքն՝ առովասութիւնք ազգականք. առովասութիւնք վասն այնորիկ ասի՝ սակս այսր եւ անդր դառնալոյ բանին եւ զբազումս ամփոփելոյ: Իսկ *ազգական* վասն այնորիկ ասի, զի ազգ ի բազումս հատանի՝ ի հայր եւ ի մայր, յեղբայր եւ ի քոյր եւ կամ որք մի անգամ ասին յարենէ քումմէ, այնպէս եւ սորա:

Դարձեալ՝ *ոլորակն* թարգմանի «վերացեալ ձայն» կամ «ցուցումն»: Եւ զի ասէ, թէ յերեք բաժանի առոգանութիւնն. եւ մին ոլորակն է, այսպէս եւ *ոլորակ* անունն բաժանի յերեք՝ ի շեշտ եւ ի բութ եւ ի պարոյկ. *ամանակն*՝ յերկար եւ ի սուղ. *հագագն*՝ ի թաւ եւ ի սոսկ. *կիրքն*՝ յապաթարց եւ յենթամնայ եւ ի ստորատ:

Իսկ *ամանակն*՝ «ժամանակ», *հագագդ*՝ բառ, եւ *կիրդ*՝ պատահումն: Արդ՝ ոլորակդ այսգոյն ծնանի զշեշտ եւ զբութ եւ զպարոյկ. իսկ ժամանակն զկարճն եւ զերկարն. իսկ բառդ՝ զողորկն եւ զխոշորն. իսկ պատահումն՝ զբարձրարձումն զրոյ ի միջոյ վանգին կամ կցեալ զգիրն ի յանգի վանգին եւ կամ ի բաց բառնալ դարձեալ ի վանգէն:

Արդ՝ ոլորակն արիւնակաւ ասացաւ ի տեղուց իւրում, իսկ զողորկ եւ զխոշորիդ բառ ի գրոց թաւացն իմասցիս. յորս թաւքն պատահին ի վանգս՝ եւ նոքա թաւք ասին. իսկ յորս լեարկքն՝ եւ նոքա ողորկք. իսկ յորժամ գիր ինչ յանգի անուան դիցես՝ յաղագս ցուցական զիրքն առնելոյ, որպէս՝ *մարդս, մարդն* եւ կամ *մարդքս* եւ կամ *մարդքն* եւ

կամ *մարդքդ*, - այսօրիկ ենթամնականք են: Եւ արդ՝ այս քեզ յաղագս տասն
առոգանութեանցն:

[ԲԱՆ]

«Շեշտոլոր անուն է, որ յանգին ունի գոլորակն, որպիսի՝ Սահա՛կ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ասաց դարձեալ գորպիսութիւն եւ զգանազանութիւն ոլորակացոյ ճշմարիտ եւս
աւրինակաւք, եւ ա՛յս է ուսումնդ:

Արդ՝ ասէ, թէ շեշտոլոր անուն է, որ յանգին ունի գոլորակն, որպիսի՝ *Սահա՛կ*:
Այսպէս ամենայն անուն, որ ի վերջին վանգին *գայք* կամ *զէչ* կամ *զին՝* ամենեքեան
նորա յանգաշեշտք ասին, որպէս՝ *Սա[հ]ա՛կ* կամ *Սմբա՛տ* կամ *Կոստանդի՛ն* կամ
Աւշի՛ն կամ *Քաղե՛փ*:

[ԲԱՆ]

*«Յարաշեշտոլոր անուն է, որ նախ եզով <վանգի> յանգէն ունի գոլորակն, որպիսի՝
Պե՛տրոս»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եւ *յարաշեշտ* է՝ որ նախ եզով, այսինքն՝ որ յառաջին վանգն մի ձայնաւոր ունի՝ *էչ*
կամ *այք* կամ *ին*. յարաշեշտ ասին. որպէս՝ *Սի՛մեովն*, *Պե՛տրոս*, *Յա՛կովք* եւ այլն
սոյնպէս:

[ԲԱՆ]

*«Նախ[ա]յարաշեշտոլոր անուն է, որ նախ երկուք <վանգիք> յանգէն ունի գոլորակն,
որպիսի՝ Դի՛կղիկոն կամ Սի՛մեովն»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսինքն՝ ամենայն անուն, որ երկու հեզով յառաջ քան զվերջին վանգն ունին *գայք*
կամ *զէչ* կամ *զին*, ամենեքեան նորա առաջնայարաշեշտք ասին, զի յար՝ որ է «միշտ»
այնպէս լինի:

[ԲԱՆ]

«Պարոյկ անուն է՝ որ յանգին ունի զպարոյկն, որպէս՝ Երակղէ՛ս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Արդ՝ ասէ յաղագս *պարուկին*, թէ ամենայն անուն, որ ի վերջին հեզին ունի *զէ* կամ
զաւ, ամենեքեան նորա յանգապարոյկք ասին:

[ԲԱՆ]

«Յարապարոյկ անուն է՝ որ նախ հեզով յանգէն ունի զպարոյկն, որպիսի՝ Պա՛ւղոս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այսինքն՝ ամենայն անուն, որ միով հեզով յառաջ քան զվերջին հեզն ունի զէ կամ զաւ, կամ զմի որ յերկրարբառացն, ամենեքեան նոքա յարապարոյկք ասին: Իսկ որ մի անգամ յառաջ քան զվերջին երկու հեզաւք ասին, որզոն՝ Յո՛ւսէպոս եւ կամ Կղա՛ւղէոս, ամենեքեան սոքա յարապարոյկք ասին: Իսկ չորքհեզեան կամ հինգհեզեան անուանք, որ յառաջին հեզին ունի զէ կամ զաւ կամ զմի որ յերկրարբառացն, ամենեքեան սոքա նախապարոյկք ասին: Իսկ յաղագս բուրձ ոլորակին վասն այնորիկ ոչ եղ զաւրինակն, զի դիւրին է գիտութիւն նորա ի սոցանէ, վասն զի ամենայն անուանք յորս ոչ են շէշտ եւ պարոյկ ձայնաւորք եւ կամ երկրարբառքն, այլ եթիւ, ոյիւ են շինեալ՝ ամենեքեան նոքա բուրձք են: - Այսոքիկ են խրատք վերծանութեան:

[Ի]

[ԲԱՆ]

«Ոտք են պարզք երկոտասանք. եւ ի սոցանէ են երկշարավանգք չորս, եւ եռավանգք՝ ութ»:

Եւ երկ[շար]ավանգքն են այս՝

ա) համ-բոյր՝ ներկուց ներկայնաց, քառամանակ, որզոն՝ մ<->աշ-դ<->ոց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ի վերջոյ դնէ զհանգամանս ոտից, զի ոտք վերջին մասն է ամենայն կենդանոյ: Եւ հարկաւոր է ոտք այսմ արուեստի, զի որպէս առանց ոտից ոչ կարէ ի հաստատութեան կեալ կենդանին յայլոց մասանցն. զի թէ այլ մասունս պակաս ունիցի՝ կարէ հայթա[յ]թել զկեանս իւր, քայց առանց ոտից յոյժ տառապի, այսպէ՛ս եւ քերթութեան արուեստ ի սա հաստատեալ ունի զկատարելութիւնն. եւ երկոտասան թիւ բովանդակէ զծանրութիւնն մարմնոյ արուեստիս: Եւ պարզք վասն այնր ասին, զի թէ խառնես եւ շարադրես եւ թանձրացնես՝ չլինի առատ եւ պարզ եւ առողջ ոտք, այլ թանձրացեալ՝ անբանի ոտք լինի կամ ցաւածի: Եւ ասէ «երկշարավանգք չորս», զի այս չորս ոտքս յերկուց վանգից կազմին, երկու վանգ ի մի շարեալ՝ մաշդոց, - յերկուց երկայնաց ասաց զմաշդոցն, եւ քառամանակ՝ այբն եւ ոն են յերկար. եւ ամանակ զձայնն է յասելն, զի մաշդոցն չորս գիր ձայն են ի հանել՝ մենն եւ շայն եւ դայն եւ ցոն - դու տես աղէկ: Եւ համբոյր ասէ, զի հաւասար են վանգերն եւ ամանակքն:

[ԲԱՆ]

<բ> «Մեծասարն՝ ներկայնէ եւ նաղաւտէ, եռամանակ, որզոն՝ Դ<->աւ<(>իթ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Մեծասարն մեծասկիզբն ասի, որ սկիզբն երկայն է, որպէս՝ Դ<->աւ<(>իթ, եւ երկայն ին է, եւ աղաւտ՝ *ւիւնն*. *հիւն* չէ պատեհ ասել, այլ *ւիւն*. եռամանակ, երեք գիր են յագդել զձայնն՝ Դ', *ւ'*, թ':

[ԲԱՆ]

<գ> «*Մեծավերջն՝ նաղաւտէ եւ ներկայնէ, եռամանակ, որպէս՝ Կ<(>որ<->իւն*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Մեծավերջն, որ վերջին հեզն ունի գոյժն, երկայն ին էւ աղաւտ *ւիւնն*՝ Կո~րիւ~ն, եռամանակ՝ Կ', *ր'*, *ն'*: Այս երեքս են յառնել զամանակն:

[ԲԱՆ]

<դ> «*Անգայտ[ն]*՝ ներկուց նաղաւտաց, երկամանակ, հիպէս՝ Ե<(>ն<(>ոք»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Անգայտն «թոյլ» ասի եւ «կակուղ», յերկուց աղաւտաց՝ Ե<(>ն<(>ոք - «*n*. այս երկուսս աղաւտք են եւ երկամանակք՝ *ն*, *ք* - այսք են յաճել զսուղ ամանակն:

[ԲԱՆ]

<2> «*Եւ եռավանգք՝ ութ, որզոն՝ <ա> ստեղն ներկայնէ եւ յերկուց աղաւտաց, քառամանակ, որբար՝ <->Աբր<(>ահ<(>ամ*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Եռավանգ ասէ զանունն, որ յերեք վանգէ լինի շինած, որպէս <->Աբր<(>ահ<(>ամ, եւ չորս ամանակ ունի՝ ք', *ր'*, *հ'*, *մ'*. իւր չափաւքն ամանակ ծախեն յասելն. առաջին *այբն* աղաւտ հանէ ձայն, եւ վերջինն՝ երկայն:

[ԲԱՆ]

<բ> «*Վերջատանջ՝ ներկուց աղաւտաց եւ նեզէ երկարէ, քառամանակ, որզոն՝ Ս<(>աղ<(>ում<->ովն*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Վերջատանջ է՝ որ վերջն երկայն է, որպէս՝ Ս<(>աղ<(>ում<->ովն, որ տանջէ զշունչն՝ ձգելով զձայնդ եւ չորս ամանակ առնէ՝ Ս', *ղ'*, *մ'*, *ն'*. *այբն* եւ մէկ *ոն* աղաւտ է, եւ միւս *ոն*՝ երկայն՝ Ս<(>աղ<(>ում<->ովն:

[ԲԱՆ]

<գ> «*Քողարորբ՝ ներկարէ եւ նաղաւտէ եւ ներկայնէ, հինգամանակ, որպիսի՝ <->Ամբ<(>ակ<->ում*»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Քողարորբ է՝ որ առաջին հաստ է, որպէս՝ <->Ամբ<(>ակ<->ում,- հինգամանակ՝ *ւ', ք', կ', ս'.* *նն* յերկար է, եւ *ւինն*՝ աղաւտ:

[ԲԱՆ]

<դ> «*Քողաղաւտ*՝ նաղաւտէ եւ ներկարէ եւ նաղաւտէ, քառամանակ, որզան՝ *Փ*<(>իլի<->պպ<(>նս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Քողաղաւտն՝ որ առաջն սակաւ է՝ *Փ*<(>իլի<->պպ<(>նս, քառամանակ, *Փ', լ', պ', ս'.* առաջին *ինին* աղաւտ է, եւ միջին *ինին*՝ երկար, եւ վերջին *նն*՝ աղաւտ:

[ԲԱՆ]

<ե> «*Հաւեղն*՝ երկուց երկարաց եւ նաղաւտէ, հինգամանակ, որզան՝ *Յ*<->ով<->սէպ<(>նս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Հաւեղն, որ առաջն երկայն է՝ *Յ*<->ովս<->էպ<(>նս, հինգամանակ՝ *Յ', վ', ս', պ', ս'.*

[ԲԱՆ]

<զ> «*Աւարտեղն*՝ նաղաւտէ եւ ներկուց երկարաց, հինգամանակ, որպիսի՝ *Ստ*<(>եփ<->ան<->նս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Աւարտեղն, որ վերջն, այսինքն՝ *աւարտն* երկայն է, որպէս՝ *Ստ*<(>եփ<->ան<->նս, հինգամանակ՝ *Ս', տ', փ', ն', ս'.*

[ԲԱՆ]

<է> «*Ներզեւն*՝ երից աղաւտից, եռամանակ, որպիսի՝ <(>Իս<(>ահ<(>ակ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ներզեւն «միաչափ» ասի, որպէս՝ <(>Իս<(>ահ<(>ակ, եռամանակ՝ *Ս, հ, կ.* յիրաւի ասաց միաչափ, զի յերից աղաւտից ասաց, որք են այսք՝ *Ի, ա, ա:*

[ԲԱՆ]

<ը> «*Սոնքն*՝ ներից երկարաց, վեցամանակ, որպիսի՝ *Յ*<->ովհ<->անն<->էս»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Մոնքն ստուարն է եւ թանձրն, *Յ* <-> *աւհ* <-> *անն* <-> *էս*՝ *աւ* է եւ *է* յերկարք են. յերից երկարաց ասաց եւ վեցամանակ՝ *Յ՛, վ՛, հ՛, ն՛, ն՛, ս՛*, վեցամանակ ծախեն: Ոտանաւորին ոճն այս է, որ գիտես, թէ քանի՛ եւ յորո՛ց ոտից կամիս հաստատել զեութիւն քանին:

[ԻԱ]

[ԲԱՆ]

«Բայ սահմանական, ներգործական, պարզ լծորդութեամբ, առաջնոյ շեշտոլոր բայից, ամանակի յայտական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Բազմիմաստ եւ շատախել արուեստաւորս եւ այլ իմն շահաւոր եւ արդիւնարար նիւթ դնէ առաջի մեր, որ է խոնարհմունք բայի: Թէպէտ անդ ի վեր ասաց յաղագս սորա, բայց յաճախագոյնս կրթէ. թագաւոր հեզ եւ խոնարհամիտ առ ամենայն ոք խոնարհի եւ սահմանէ զմեծամեծս եւ զփոքունս՝ ըստ իւրաքանչիւր պատշաճից, որպէս եւ արքայաշուք եւ հեզահայեացս բայ յամենայն ինչ խոնարհի եւ սահմանէ. որպէս եւ ասէ՝ «բայ է սահմանական»: Ի վեր անդ ասաց, թէ խոնարհմունք բայի հինգ են՝ սահմանական, աներեւոյթ, հրամանեան, ըղձական, ստորադասական: Ի տեղուջն ասացաւ եւ լուծմունքն. բայց աստ դարձեալ ի հնգէն զմէկն՝ զսահմանականն ի մէջ առնու եւ ասէ՝ «բայ է սահմանական», որ զինչ որ պիտի սահմանէ. *ներգործական*՝ որ զգործն յայտնէ. *պարզ*՝ որ մեկնակ մեկնակ դնէ զքանն. *լծորդութեան*՝ որ լծէ զձայնաւոր եւ զանձայն գիր եւ հերկ առնէ քանի արաւրով:

Առաջնոյ շեշտոլոր բայից ի բազում տեղիս ոլորի շեշտն, այլ առաջին եւ պարզ շեշտ աստ յայտնի ի խոնարհմանց բայիս. ամանակի յայտական, այսինքն՝ զամանակն ցուցանէ:

[ԲԱՆ]

«Ներկայի, ապառնոյ, անցելոյ»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Զի խաւսքն յայս երեք հատածի ժամանակս փորձուի:

[ԲԱՆ]

«Դիմաց եւ թուոց»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ոչ միայն զմասունս ժամանակի ցուցանէ, այլ եւ զդէմս, այսինքն՝ յումմէ՛ խաւսքն է ասացած, այլ եւ զթիւս, զքանի՛ս գործողացն կամ խաւսողացն:

[ԲԱՆ]

«Եզական, երկական, յոքնական»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Յայս երեք ոճս բովանդակի ամենայն բանական արուեստք, որ եւ ասէ ի կարգիս:

[ԲԱՆ]

*«Ներկայիս եզական՝ կոփիմ, կոփես, կոփէ.
երկուորական՝ կոփում, կոփոս, կոփոյ.*

յոքնական՝ կոփեմք, կոփէք, կոփեն»:

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Գիտացեալ արուեստաւորս, զի ամենայն բանական հանճարս ի վերայ երից ժամանակաց երթայ եւ երեք ոճով՝ կա'մ միոյ, կա'մ յերկուց եւ կա'մ ի բազմաց՝ թէ՛ գործք, թէ՛ կիրք, թէ՛ բան: Եւ զայս ուսմանց կարգս կարճեալ եւ չափաւոր բանիւ համառատեալ դիւրընկալ եւ հեշտուսոյց արարեալ: Բայ է զիւտ չափածու չափաւոր, որ յամենայն իրք խոնարհիլ կարէ՝ կակղանալով եւ կարճելով համառատէ, որ է կոփելիս, եւ այսու փորձէ եւ վարի կարգաւ: Թէ կամիս, դու ասա՝ *ազդեմ, ազդես, ազդէ* կամ *առնեմ, կամ գործեմ, կամ հրամայեմ, կամ պատուիրեմ*: Ապա *կոփելիս* խոշոր եւ չոր է՝ խարխափելով գնայ եւ կակղի եւ հեշտ հասկանուի եւ դիւրաւ պահի. թէ դու եւ կամ երկու մարդ այլ զժամանակիս գներկայս, որ ի ներքս կանք, զբանն եւ զհոգքն հոգալ կամիք՝ ա'յս է կերպն, որ միաւոր խաւսիս վասն երեք անհատի յատկի՝ *խաւսիմ, խաւսիս, խաւսի* դա, *կոփեմ, կոփես, կոփէ*. եւ թէ վեց մարդ էք՝ ջուխտ-ջուխտ, դու այն կերպովն ասա, եւ թէ շատ էք՝ իբր զբազմաց ասես, ըստ ասացելոյդ:

[ԲԱՆ]

*«Ապառնւոյն եզական՝ կոփեցից, կոփեսցես, կոփեսցէ.
երկուորական՝ կոփոնք, կոփուք, կոփոյք.
յոքնական՝ կոփեսցուք, կոփե[ւ]ցէք, կոփեսցեն»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Թէ զապառնւոյ հատածէն կամիս ասել զո'ր ինչ գործելոցն եւ, կամ էք երկուք կամ բազումք՝ զաւարտն բանին այնպէս արժան է ասել. այլ զիտեա՛, զի երկուորականս բան բռնադատած է իմաստնոցն աթենացոց եւ շինած, թէ չէ ի սովորական խաւսքս չկարուի ասիլ եւ առ մեզ չկայ:

[ԲԱՆ]

*«Անցելոյն եզական՝ կոփեցի, կոփեցեր, կոփեաց.
երկուորական՝ կոփու, կոփոցեր, կոփիցար.
յոքնական՝ կոփեցաք, կոփեցիք, կոփեցին»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս է սահմանականին արինակն, որ սահմանէ զժամանակին հատածն եւ զեղեալ քանն եւ զգործն՝ յորժամ զգործով սահմանեալ իրքն քանի սահմանես զայս ոճս պահելով:

[ԲԱՆ]

*«Յարաձգականի եզական՝ էկոփէի, էկոփէիր, էկոփիր.
երկուորական՝ էկոփուիր, էկոփուր, էկոփոյ.
յոքնական՝ էկոփեաք, էկոփեիք, էկոփին»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Այս զերեք ժամանակին զիրք առնու թէ՛ քան, թէ՛ գործ, որպէս ասես՝ *դէռ առնէի, դէռ վարդապետէի, գնայի ի գործ պատերազմի*, որպէս վասն անվճար գործոյ եւ հատ ժամանակի խաւսք պահանջեն:

[ԲԱՆ]

*«Ներգործական՝ կոփեցի, կրաւորական՝ կոփեցայ, ըղձական՝ կոփիցեմ արդէք,
հրամայական՝ կոփեա՛»:*

[ՄԵԿՆՈՒԹԻԻՆ]

Ներգործական է, որ յայլս գործես քարի կամ ցաւ եւ վերք: Եւ *կրաւորական* է, որ յայլոց առնուս: *Ըղձական* է, որ ցանկաս իրաց եւ ասես, թէ հասանիցե՞մ այս իրացս: *Հրամանական* է, որ հրամայես՝ «Արա՛ զայս ինչ», «Գնա՛ յայս անուն տեղ»: Քան զայս առաւել կոփք գտանես, քայց աւելի շահ ոչինչ,- զի բովանդակեաց զհարկաւորն ասացեալ քանքս:

Պատմութիւն

[յԱռաջաբան]

Թախանձեալք ՚ի բազմաց յառտնին եւ յօտարագգի քանասիրաց՝ չարայարել տպագրութեամբ զկարգ պատմագրաց մերոց, անտես առնելով առ վայր մի զընտրութեամբ ոճոյ եւ քանակարգութեան հայերէն խօսիցն, ուշ ունել ծանօթութեան անցից եւ դիպաց, մանաւանդ միջին անուանեալ դարուց ժամանակաց, յոր առաւել իմն սերտիւ պնդութեամբ դեզերին այժմուս պատմաբանք եւ հնախօսք, ձեռն արկաք նախ յ'առ ՚ի բազմաց ըղձացեալն եւ ՚ի չեւ եւս տպագրեալ, ՚ի Վարդան պատմիչ, որոյ

համբաւ մեծ հռչակի յազգիս, որպէս գերազանցելոյ առ ժամանակակցօքն եւ անհաւասար մնացելոյ առ ՚ի յետնոցն: Յոր սակս, միանգամայն եւ յորոշումն յայլոց համանուանցն մերձաւորաց ժամանակաւ, Մեծ կոչի Վարդանս այս վարդապետ, եւ ամենապատիւ մակադրական անուամբք մեծարի յամենայն յիշատակագրաց որպէս, Ամենագով, արդիւնական, պանծապայծառ, հոգիապայծառ, մեծիմաստ, իմաստախոհ, եռամեծ, գիտնական, տրամաբան, աստուածաբան, մեծ սովեստոս, աշխարհալուր, աշխարհաքարոզ, տիեզերալոյս, սուրբ, եւ այլն: Բայց այս ամենայն կոչումնք պատուականք չեղեն բաւական առ անխառն պահել զգործս եւ զգրուածս նորին ընդ այլոցն. եւ յոլովից յարանուանց վաստակք պիտանի եւ անպէտ՝ միոյս այսմ վերընծայեցան: Եւ ոչ միայն յիրս եւ ՚ի գիրս, այլ ինձ թուի եւ ՚ի հայրենեացն կոչումն սխալեալ, որոց Բարձրբերդցի զսա ասեն. քանզի ոչ ոք ՚ի նախնեաց անտի կոչէ զնա այսպէս, այլ մանաւանդ բանք նոցին ցուցանեն յարեւելից Մեծաց Հայոց լինել զնա, եւ ամս ինչ պանդխտութեամբ կեցեալ ՚ի Հռոմկլայ եւ ոչ ՚ի Բարձրբերդ. զայլ ոմն Վարդան Բարձրբերդցի ցուցանելով ժամանակակից նորին կրսեր, որպէս յիշէ մատենագիծ ոմն յամի 1286, որ է իբր վեշտասան ամաւ յետոյ քան զմահ մեծիս այսորիկ Վարդանայ: Իսկ զմիւսն զայն զկրսեր՝ Երկրորդ Վարդան կոչէ Ղազար Ջահկեցի կաթողիկոս, եւ նմա ընծայէ զՀամառօտ մեկնութիւն չորից աւետարանաց, զԱռակսն, զՀամառօտ աշխարհագրութիւնն, զՄեկնութիւն քերականի. որոց յետինքդ կարծին երրորդի ուրումն կրսերագունի Վարդանայ գործք:

Արդ մերս այս պատմագիր թուի հայրենեօք յարեւելեայ Հայոց ՚ի սահմանակցութենէ Ադուանից տան, ուր եւ աշակերտեցան Վանականայ վարդապետի, եւ նախապատիւ ծանուցաւ քան ղերեսին եւս աշակերտակիցս իւր ձեռասունս հռչակելոյ վարժապետին, (յորոց մի պատմիչն Կիրակոս, եւ միւս՝ Յովսէփ արքեպիսկոպոս առաջնորդ Թադէի վանաց), եւ առ կենդանեաւ իսկ նորուն համբաւեցաւ զգօնութեամբն եւ հմտութեամբ. որպէս զի յերթն յԵրուսաղէմ ուխտագնացութեան աղագաւ հանդիպելով ՚ի Կիւլիկիա, բազում մեծարանօք ոչ միայն ընկալեալ եղել ՚ի Հեթմոյ թագաւորէ եւ ՚ի Կոստանդեայ կաթողիկոսէ, այլ եւ զամս հինգ եւ աւելի բռնադատեալ ասպնջականեցաւ ՚ի յետնոյս, յօժանդակութիւն կարեւոր գործոց հայրապետանոցին. որպէս եւ խոստովանի գովութեամբ կաթողիկոսն ՚ի շրջաբերականի թղթին՝ զոր առաքեացն առ արեւելեայս ՚ի ձեռն նորին ինքեան Վարդանայ. «Առաքեցի առ ձեզ զարդիւնական վարդապետն զՎարդան՝ փոխանակ անձին իմոյ, զոր ետ նախախնամութիւնն Աստուծոյ ձգելով առ իս ՚ի կողմանց ձերոց, ՚ի հինգ ամաց հետէ. զոր իբրեւ տեսի՝ ճանաչելով ըստ կարի՝ կապեցի զդա միջնորդութեամբ Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք եւ մահուամբ, մեծաւ հարկիւ եւ սիրով բեւեռեալ ընդ իս յաւիտեան... որ ունի զիմ սիրտ եւ զբան յամենայն իրսէ: Ընդ թղթոյն տարաւ յարեւելս եւ զկանոնս ժողովոյն Սսոյ՝ գումարելոյ յամի 1243, յորում բազմեր եւ ինքն ընդ եպիսկոպոսունս եւ ընդ վանահարս Կիւլիկիոյ. եւ թուի ՚ի նշանակեալ թուականէդ յետս երթալով հասանել ՚ի սկիզբն հնգամեայ բնակութեանն յարեւմտեան Հայս, ՚ի թագաւորութեան Հեթմոյ. յորոյ խնդրոյ արար մենութիւնս եւ լուծմունս, որպէս եւ գրէն առ նա ինքն. «Յիշեա զոր ՚ի» ձեռն Թորոսի հրամայեցիք, վասն Եղաբերիցն կանանցն» գրել ձեզ, եւ ՚ի խորհուրդ պատարագին. եւ ապա երեսօք» յանդուլն հրամայեցիք, որ գրեաք ձեզ ժղլանք ՚ի մեկնութենէն քերականին. եւ ես այլ աւելի սիրով՝ գրել» ձեզ ձեռամբ լուծմունս յաւետարանէն եւ յարարածոցն». այսպիսի պարզ եւ ռամկական ռճով գրեալ են լուծմունքդ եւ ժղլանքդ (զրոյցք) իբր վաթսուն եւ վեց թուով. եւ մեծավ համարձակութեամբ իբրեւ ընտանի առ ընտանի, կամ

դաստիարակ առ արքայ մանուկ, որում ասէ, «Աստու–եծով տղայահասակ եւ մտօք եւ աջօք զօրաւոր էք», առ 'ի կարող լինել ընթեռնուլ զիւր իսկագիր անսերեւեր գրածն. զոր եւ աղերսէ մնալ առ դշխոյին Զապելայ յիւր յիշատակ. «Թող թագուհի պահէ, եւ 'ի պիտոյ ժամս առնոյք 'ի նմանէէ:

Զգիր կաթուղիկոսին եւ զկանոնս ժողովոյն բերեալ յարեւելս յամի 1246, եւ ընկալեալ զձեռնագիր հաւանութեան առաջնորդաց տեղոյն՝ դարձաւ երբեք առ հոգեւոր տէրն, եւ այլ եւս ժամանակս ինչ յամեալ առ նմա, յայսմ նուագի յամի 1248 թարգմանեաց կամ յերիւրեաց 'ի հայ զփոխեալն յասորոյն զընդհանուր Պատմութիւն Միխայելի պատրիարքի, 'ի ձեռն Իշոխայ ուրումն երիցուի Ասորոյ: Յետ երկրորդ անգամ դարձին 'ի Կիւլիկիոյ՝ եկեալ յարեւելս դադարեաց յԱնդրէի վանս 'ի Չորն Կայենոյ. եւ անդ, կամ այնուհետեւ յօրինեաց զգլխաւորս 'ի մատենագրութեանցն զոր արդ 'ի ձեռնն ունիմք. եւ զի յառաջ քան զայն հոչակեալ էր անուն նորա, հարկ է թէ եւ յառաջագոյն հրատարակեալ էր այլ գիրս եւ ճառս, որք կամ չհասին առ մեզ կամ ոչ անուամբ նորին: Կարեւոր վաստակք Վարդանայ են մեկնութիւնք սուրբ գրոց, հաւաքեալք յառաջնոց մեկնչաց, յորս ժամանակի երիցութեամբ, թուի Ա. Դանիելի մեկնութիւնն համառօտ, 'ի խնդրոյ եղբարց միաբանից. Բ. Սաղմոսաց մեկնութիւն, համառօտ քան զԼամբրոնացոյն, 'ի խնդրոյ առաջնորդին Հաղբատայ՝ տեառն Յովհաննու, որ ոմանց նախորդն Համագասպայ կարծի, եւ ինձ յաջորդ նորուն, որ նոյնպէս Յովհաննէս կոչիւր. Գ. Մեկնութիւն Հնգամատենին Մովսիսի, 'ի խնդրոյ տեառն Համագասպայ, աւարտեալ յամի 1261. Դ. Մեկնութիւն Երգոց երգոյն, 'ի խնդրոյ աշակերտակցին իւրոյ Կիրակոսի վարդապետի պատմչի, գրեալ յամի 1265, եօթն ամալ յառաջ քան զմահ իւրեանց, յորոյ վերջաբանին մտերիմ խանդաղատանօք խօսի ընդ ուսմնակցին եւ ծերակցին. «Իսկ դու մշակդ մորենեաց եւ աղտաղտ անբուսաբեր վայրաց, անոյշ մեզ ճաշակ յարածամ եւ յոյս յԱստուած, վարդապետ Կիրակոս, որ հարկեցուցիչ հրամանաւ եւ գուժին մահու քեզ՝ ասել զմերն մերձակայ, մուծեր զմեզ 'ի տուն գինոյ եւ իւղոյ, խնձորոյ եւ նոնենեաց, շղթայից արժանաւոր ոտիւք, հայել լսել եւ խօսել, հոտոտել եւ շօշափել զկեանս եւ զանմահութիւնէ: Առ այսոսիկ որք ծանօթք են մեզ եւ բազմաց, յաւելոյր ոմն եւ զմեկնութիւնս Դատաւորաց եւ Յեսուայ. եւ զմարգարէիցն Եսայեայ եւ Երեմիայ, զոր այլուստ չէ մեր լուեալ յանուն Վարդանայ: Կրկնակի պատուական են մեզ գրուածքդ. մի, զհարց նախնեաց, զորոց զոմանց չունիմք արդ լիովին զգործս, 'ի սմա գտանելով զէթ զհատուկտիրս բանից, յորս սիրելագոյն մեզ Եղիշեայ բանքն 'ի մեկնութեան գրոց Մովսիսի. եւ միւս՝ չափ եւ կուռ համառօտութիւն իմաստից եւ լուծմանց յորում ոչ սակաւ զգօնութիւն եւ ճարտարութիւն երեւի հաւաքողին. եւ յառաջաբանք եւ վերջաբանք գրոցն, որպէս եւ պատմագրութեանն, խոհականք են եւ գորովականք, եւ ախորժագոյնք յընթերցումն. յորոց եւ քաջիկ մարթ է 'ի վերայ կալ հանճարոյ եւ ոճոյ արձակ գրութեան հեղինակին, քան 'ի սեղմ եւ 'ի համառօտ մեկնողական բանիցն, որպիսիք են վերոյիշեալքդ, եւ Մեկնութիւն տերունական աղօթիցն, Հաւաքածոյ 'ի Հարանց վարուց, եւ այլն: Իսկ ճառիցն եւ իւրատական բանից՝ յորոց մարթ էր լիովին դատել զնա, ընդ երկբայութեամբ է հարագատութիւնն. վասն որոյ եւ զանց առնեմք զնոքօք առ տեղեաւս. բայց 'ի Ներբողէ Լուսաւորչին, զոր գրեալ է 'ի խնդրոյ նախանշանակեալ տեառն Համագասպայ, որ եւ չափաւոր ճաշակօքն 'ի գովութիւն կրթի նորա: Չնոյն առաւելութեամբ հաստատեն եւ շարականք նորին, Որ նախիմացն. Ի յանսահմանն առաքելոցն, Թարգմանչացն եւ Ս. Սարգսին. չորեքին եւս յառաջին կողմանէ ձայնի (ԱԿ), դանդաղագնացք յերգ եւ յ'եղանակ, թերեւս հանդարտ բարուց երգողին ցոյցք.

նմա ընծայեն ոմանք եւ զԱնթառամ ծաղիկ երեք տուն շարական պերճաբան, իսկ այլք զմեկնութիւն նորին: Վասն սոցին Առաքել Սիւնեցի՝ ի չափաբանեալ անուանակարգութեան յօրինողաց շարականի՝ կոչէ,

Սուրբն Վարդան յուսոյ տեղին:

Այսոքիկ հաւաստի երկասիրութիւնք Վարդանայ. իսկ գործք եւ անցք կենաց նորին յետ դարձին՝ ի Կիւլիկիոյ, չեն նշանակեալք ըստ բաւականին. յիշատակի գովութեամբ յամի 1255 մեծ վարդապետ եւ աստուածագգեաց այրն Վարդան, նախ ի Վիրապին վանս նստեալ ուսուցչապետ, ապա ի Սաղմոսավանս եւ ի Թեղենիս, այլ ոչ ունիմք հաստատատել՝ թէ սոյն իսկ մերս իցէ: Նոյնպէս եւ Վարդանն վարդապետ որ ընդ տեառն Գրիգորիսի Դաղիվանից առաջնորդի գնաց ի հերքումն եւ ի յանդիմանութիւն Դաւթի դիւապատիր մոլորեցուցչի, ոչ է մերս այս, որպէս համարի նոր պատմահայրս Չամչեան, զի Կիրակոս պատմիչ իրացն՝ զՎարդանոյ զայդ եւ զԳրիգորիս զոյդ՝ Յօժարորդիս ասէ մականունեալ: Քաջանշան եւ սիրալի դէպք կենացն այն է՝ զոր ինքնին պատմէ մերձ յաւարտ գրոցն, որ եւ վկայ է մեծի համբաւոյ նորա առ իւրսն եւ առ օտարս, մինչեւ ի դուռն աշխարհակալին արեւմտից Ասիոյ՝ Հուլադու դանի, յորմէ եւ կոչեցաւ ընդ թագաւորս եւ ընդ աւագ իշխանս. եւ համարձակագոյն քան զամենայն որք, ըստ շնորհաց իմաստութեանն եւ ալեւոր հասակին՝ իսօսեցաւ ընդ ահեղին այնմիկ, լուաւ զգաղտնիս նորա եւ թելադիր եղեւ խորհրդակցութեամբ: Բազում ինչ կարեւոր եւ հետաքննելի իրք են յայս դէպս, որ եւ քան զամենայն մասունս պատմութեանն հաճոյագոյն գտանի դեգերելոցն ի քննութիւն արեւելեան անցից այնր ժամանակի: Ի դարձի անդ իւրում ի դրանէ դանին՝ թուի հանդիպել աւագակաց Հարամեաց, եւ անկանել գրենոյն ի ձեռս նոցա եւ յաջողութեամբ թափել զնոսին: Զյետին ամս կենացն՝ հաւանօրէն՝ եկեաց ի Հաղբատ, ուր եւ գրեացն ի խնդրոյ Կիրակոսի զմեկնութիւն Երզնգերգոյն, յամի մահուան Հուլադուի. յետ երկուց ամաց վախճան արար պատմագրութեանն, եւ յետ չորից ամաց, այն է յամի Տեառն 1271, յորում ամի եւ ամուլակիցն իւր Կիրակոս, վախճանեալ թաղեցաւ ի Հաղբատ. եւ զգերեզման սորա համարիմ իբրեւ ուխտատեղի կամ պատուելի յիշել Թումայի Վանանդեցոյ ընդ այլոց հոյակապ արանց անդ թաղելոց,

Վարդան մեկնիչըն քաջաբան.

քանզի անդէն թաղեալ է եւ այլ ոմն Վարդան վարդապետ նշանաւոր՝ երիցագոյն ժամանակաւ, այն՝ յորոյ խնդրոյ Ներսէս Շնորհալի գրեաց զմեկնութիւն բարձրացուցեաց ճառի:

Պատմագրութիւնս այս Վարդանայ, յետին գրաւոր վաստակ նորա, եւ գլուխ գործոց հեղինակին համարեալ ի յոլովից, թերեւս ի նախահոչակ համբաւոյն ստացեալ է զայդ վարկ, քան յիւր ուրոյն արժանեաց. զի ոչ գեղեցկաբան ինչ շարամանութեամբ լեզուին եւ ոչ մանրապատում ծանօթութեամբք կամ նկարագրութեամբք ախորժական ընծայի. զի թէպէտ եւ ի հասարակի չափաւոր, այլ եւ ուրեք ռամկօրէն վարի ոճով, որպէս ի պատմութեան անդ տեսաւորութեան ընդ Հուլադուի, թերեւս ի հասկացումն ծանօթից իւրոց աշխարհիկ իշխանաց գրեալ: Դարձեալ եւ ըստ քանակի գրոցն, զվեցիազար ամաց պատմութիւն ամփոփել կամելով յերկվեցեակ թերթս, հարկաւորէր իմն կարգել ցամաք բանս եւ ուրեք լոկ շարս անուանց եւ թուոց. եւ զի այս ոճ

պահանջէ աշխուրջ քննութիւն եւ ճշդութիւն ժամանակագիր թուոցն եւ կարգաց
յաջորդութեան աթոռոց եւ գաւազանաց, ոչ անվրէպ եւ յայսմ գտանի հեղինակս, կամ
առ ծերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել 'ի ստոյգ պատմչաց, կամ առաջնոց
ընդօրինակողաց գրոցն գնոյն սխալեալ. որով բազում ուրեք պակասաւորք են կարգք
օտար եւ հեռաւոր թագաւորաց եւ սխալ ամք իշխանութեան նոցին. գոր եւ ուրեք ուրեք
ագդ առնելով ծանօթութեամբք՝ զտյլովքն զանց արարաք. զի ոչ համարիմք 'ի
հեղինակէ աստի ուսանել զայնոցիկ կարգս, մինչդեռ առձեռն պատրաստ գտանին
խնդրողաց՝ այժմու ստուգաքնին ժամանակագիրք: Բայց ստուգագոյն է 'ի յիշատակս
ագգայնոց իրաց եւ դրացեաց մերոց, յորս են են արդարեւ եւ 'ի համառօտութեան անդ
ոչ սակավ կարելոր գիտելիք, եւ դէպք աննշանակք առ 'ի յայլոց, արգասիք մեծի
մատենայած հմտութեան հեղինակին եւ ծանօթութեան գիտնոց արանց ժամանակին,
առ որս ընտանութիւն եւ մուտ եւ ել ունէր. եւ դարանք հոչակեալ դիւանաց Հաղբատայ
եւ Սանահնի եւ այլոց վանորէից Ձորոյգետոյ եւ Աղուանից եւ տան
կաթուղիկոսարանին՝ օժանդակք աննախանձք կային նմա. եւ ըստ այսմ
երախտապարտ գտանիմք Վարդանայ, որ տայ մեզ ծանօթս եւ զոմանց կորուսելոց
արդ պատմագրաց մերոց՝ յանուանէ կամ անանուն. յակն արկեալ իւր գրեթէ
զամենայն երիցագոյն պատմիչս մեր, զերկուց նախ քան զիւրն դարուց դէպս առնու
յովովակի 'ի Սամուէլէ եւ 'ի Մխիթարայ Անեցեաց, յՈւռհայեցւոյն Մատթէէ, յԱսորւոյն
Միխայէլէ, եւ 'ի Վրաց պատմութենէ եւ այլուստ. իսկ զիւրոյ՝ զ' ԺԳ դարու դէպքն՝ 'ի
լրոյ եւ 'ի տեսութենէ: Այդքան բազումս ունելով օրինակագիրս եւ առաջնորդս, մեծարէ
յաճախ անխտրապէս եւ զկարծիս նոցին. մանաւանդ ուր ազգին եւ նշանաւոր կամ
սրբազան անձանց շքոյ եւ պատուոյ եւ կրօնից վարդապետութեան իրք կայցեն,
դիւրահաւան գտանի առ հաճոյն եւ պանծալին եւ առ հրաշանշան երեւոյթս. գնոյն եւ
յայլ գիրս նորին է տեսանել. իսկ 'ի պատմագրութեանս յայդպիսեաց սակի են
պատմեալքն ինչ զԼուսաւորչէն եւ զդաշնակցութեանց կամ թղթակցութեանց ընդ
զերագոյն գահու Հռովմայ, եւ տեսիլք վարդապետաց ոմանց. առ որովք հարկ
համարեցաք ազդ ինչ առնել կամ ծանօթաբանել: Ձնոյն յայտ արարաք եւ երբեմն
լոկով. նշանակաւս(!), ուր դժողովոյն կամ զհաւատոց Քաղկեդոնի բանք էին, եւ
սպրդեալ ինչ էր անճահ 'ի լուր՝ ոչ միայն մերումս ողջմտութեան, այլ եւ ոչ ինքեան՝
յայլսն ըզգուշաւոր եւ բարեպաշտ հեղինակին, եթէ յետնոցս հառեալ էր ժամանակաց,
յորս պարզագոյն եւս բացատրի եւ ճանաչի դաւանութիւն սրբոյ ժողովոցն, համաձայն
նախագումար երիցն ժողովոց եւ մերոց երիցագոյն Հարց եկեղեցւոյ. եւ եթէ կամեցեալ
էր կամ կարող լեալ՝ առաւել անաչառապէս քան կանխակալ մեծարանօք զյառաջ քան
զինքն կացեալ վարդապետսն քննել, յորոց ոչ սակաւք նովին թերուղիղ այլ անչար
մտօք խաբեալք կամ անհասք նրբութեան խնդրոյն՝ խորշէին 'ի քաղկեդոնականաց,
քստմնելով 'ի կարծեցեալ նեստորական բաժանմանց՝ որ յանձն եւ 'ի բնութիւնս
աստուածայրականին Քրիստոսի: Բայց եւ զայս արժան է ազդել զբարեսէր
հեղինակէս, զի թէպէտ եւ իւր հարազատ բանս համարեսցուք զգրեալսն
զքաղկեդոնականաց, տակաւին հեզագոյն եւ հանդարտ գտանի քան զյովովս
յայլախոհիցն, եւ ոչ թերանայ 'ի մեծարելոյ զհարս ժողովոյն եւ զայլս նոցին հետեւողս
արժանաւոր անձինս: Գրելով զայսմ խնդրոյ առ Հեթում արքայ, յառաջաբերեալ զբանս
Աթանասի եւ Կիւրղի եւ զԳրիգորի Աստուածաբանի, որք երկուս ասեն բնութիւնս, եւ
ընդունելով գնոյնս՝ ասէ. «Ամէն բան տեղի եւ պատճառ ունի. զի որպէս լսողին եւ
կարեացն պէտք եղեալ՝ խօսեցեալ են. զի ա՛յլ է կուոյ բանն, եւ այլ է ճշմարիտ
խոստովանութիւնն 'ի խաղաղ ժամու. զի Աթանասս ասացեալ է ընդդէմ Արիոսի երկու
բնութիւն... Իսկ Աստուածաբանին՝ որ ասէ 'ի ճառին որ առ Կղաւղոնիոս, Բնութիւնք

երկու, քանզի Աստուած եւ մարդ, բայց որդիք ոչ երկու. եւ այս վեճ է ընդդէմ Ապողինարի, որ մի բնութիւն ասէր զՔրիստոս...: Իսկ Կիւրեղ ընդդէմ Եւտիքի դիւաբերանի, որ առաջօք ասէր եւ կերպարանօք զտեառն երեւումն եւ մի բնութիւն, այսինքն ոչինչ առեալ 'ի մէնջ, ասաց, Երկուք եւ ոչ մի: Արդ որպէս Կիւրդիդ՝ նոյնպէս եւ ժողովակցացն 'ի Քաղկեդոնի՝ են բանքն, ո՛վ վարդապետ. եւ թէ նոքին իսկ Հարքն որք յառաջ եւ որք յետոյ ժողովոյդ՝ զանազանելով մի կամ երկուս ասեն բնութիւնս, ըստ քո իսկ վկայելոյ՝ «Ամէն բան տեղի եւ պատճառ ունի». եւ որ կամի ոք քննել՝ իբրեւ զհաւատոյ սրբազան իրս, որպէս եւ էնն իսկ ամենայն իրօք, պարտի քննել, յստակ եւ անկիր մտօք, եւ մի, ընդ եկեղեցոյ վարդապետութեան խառնել զազգային խտիրս եւ խնդիրս, կամ ընդ Հոգւոյ Աստուծոյ՝ զհոգի մարդոյս, հակառակողի ընդ մարդոյ, որով եւ աստուածամարտ գտանի բազում անգամ:

Զայսոսիկ առ յուշ ինչ արժան համարեցաք ազդել աստանօր, որպէս զի եթէ եւ յետ այսորիկ առ պատմական եւ ուսումնական օգտի հրատարակիցեմք եւ զայլս 'ի պատմչաց կամ 'ի գրչաց, առ որս շատ կամ սակաւ խճբիծք գտանիցին զայսմ աստուածաբանական խնդրոյ, ծանիցեն քաջ հանդիպողք մատենիցն՝ զմերս տեսութիւն. որոց՝ սիրելի է նախնեացս մատենագրութիւն եւ մատենագիրք՝ բարեկամք, այլ բուն սէր եւ բարի՝ ճշմարիտն միայն, որ է ուղիղ վարդապետութիւն. զոր եւ ցանկամք եւ խնդրեմք ուխտիք նոյնպէս լինել ամենեցուն, եւս առաւել մերոցս համազգեաց, որպէս եւ զիարդ ընկալցին զմեր իղձ:- Եւ զի վերագոյնդ իբր երկբայութեամբ իմն ասէաք թէ արդարեւ հարազատ բանք հեղինակիդ իցեն ասացեալքն, եւ մի իբրու այլայլեալք յիրահամարձակ եւ 'ի կողմնասէր գրչաց, ոչ եթէ իսպառ օտար 'ի կարծեաց նորին համարիմք զայնս, մանաւանդ զի եւ օրինակք գրոցն հնագոյնք են, այլ զի եւ 'ի հինս անդ օրինակս մատենից հեղինակին՝ զոն խարդախեալ բանք: Օրինակի աղագաւ, յԱրարածոց մեկնութեանն, ուր զՀոգւոյն սրբոյ ելումն եւ բղխումն յիշէ ըստ Եղիշեայ բանից ուղղափառ դաւանութեան, որում եւ ինքն հաւանի յիրումն պատմութեան, եւ մատենագիր ոմն 'ի յաջորդ դարու սաստիկ նախանձայոյզ հռոմէական՝ բերէ գովութեամբ զնոյն վկայութիւն յըմբերանումն ոմանց հակառակողաց յիրումն ժամանակի, զնոյն վկայութիւն գտանեմք ակներեւ եւ անհեղեղ այլայլեալ յօրինակս ինչ գրոցն, որք սակաւ ամօք զկնի մահուան հեղինակին են գրեալք: Զայսր կողմնատար եւ թիւրեալ հոգւոյ առհաւատչեայ ընծայելին ուրեք եւ օրինակք պատմագրութեանս, ըստ իւրաքանչիւր կրից ընդարձակելով կամ սաստկացուցանելով զբանս հեղինակին. զոր արդարեւ ոչ է դիրին ընտրել եւ ջոկել՝ որոյ այլուստ չիցեն հաւաստի վարք եւ միտք հեղինակացն. եւ յայսմանէ խաբին ոմանք թանձրապէս (ընդ Գալանոսի), մինչեւ մերոյս Վարդանայ վերագրել զանալի եւ զլուտական թուղթ հոմանուանն Սեալեոնցոյ, որ եւ յաւէտ Վահրամ կոչի, զգրեալն առ Հէթում, պարսաւանս Լատինաց, իբրեւ 'ի պատասխանի թղթոյ քահանայապետին Հռովմայ, զոր եբեր առ արքայն Հայոց՝ սպանիացի նուիրակն Տիմանջ, յամի 1247:

Արդ այսոքիկ բաւ, թէ շատ եւ թէ սակաւ՝ առ տեղեաւս. դարձցուք անդրէն առ պատմագիր մեր. եւ յաւելցուք ընդ թերութեանցն՝ 'ի գովութիւն, զնոյն ինքն իսկ զհամառօտութիւնն. այսինքն զճարտարութիւն՝ զայնքան հարուստ ամաց եւ զզանազան ազգաց եւ յեղանակաց դէպս գլխաւորս՝ յետուլ եւ 'ի շար արկանել. որով յիրաւի յայս ոճ վիպասանից մերոց նախամեծար գտանի. զի եւ ոչ մի ոք 'ի սոցանէ յետ Ժ դարու՝ այսքան ճոխ եւ 'ի համառօտութեանն՝ հաւաքեաց զընդհանուր պատմութիւն. եւ քաջ 'ի ճահ գործոյն յարմարի վերնագիրն, զոր ընտիր Բ օրինակս

մեր ունէր. Հաւաքումն պատմութեան մեկնողորէն համառօտ եւ բովանդակ, դիրահաս ընթերցողաց. յԱդամայ հետէ թուելով ըզժամանակսն. պատմելով զկիրս նոցին որ 'ի նմա. նա եւ զ'ի բազմաց տարակոյսն 'ի բազում տեղիս լուծեալ խորահայեաց խորհրդով եւ քննիմաց իմաստութեամբ, որոց պատահիս յանձնիրսն: Ոչ է յայտ երբ սկսեալ իցէ հաւաքել զհամառօտս զայս, այլ աւարտեալ է յամի 1265, որպէս եւ ասէն իսկ, յետոյ քան զերթն առ Հուլաղու դան եւ զառաջնոց քան զայն երեսնից ամաց դէպս (1235եւ1265) համառօտիւ յոյժ նշանակեալ կամ 'ի բաց թողեալ, վասն ոճով գրելոյ զայնս Վանականայ եւ Կիրակոսի յիրեանց պատմագիրսն. սակայն յետ դարձին 'ի ճամբարէ Թաթարաց, վերստին ձեռն արկեալ է՝ զնշանաւորն զայն տեսութիւն եւ գրուցատրութիւն ընդ աշխարհակալին՝ յերիւրել 'ի կարգս բանիցն առաջնոցն, շաղկապ ընդ երկուսն արկանելով եւ զայլ հանդիպեալսն 'ի միջոց ժամանակին: Յետ այնորիկ դարձեալ յիշատակէ զմահ դանին, եւ զհարուածս Կիւլիկիոյ յԵգիպտացոց, եւ զմահ ասպնջականին իւրոյ մեծարողի՝ զԿոստանդեայ կաթողիկոսի, եւ սրտառուչ ողբովք 'ի նոյն՝ կնքէ զգիրսն. ոչ ժամանեալ նշանակել, թերեւս եւ ոչ իսկ լսել՝ եւ զմահ մտերիմ մեկենասի իւրոյ՝ թագաւորին Հեթմոյ, որ մեռաւ յելս հոկտեմբերի 1270 ամին, իսկ պատմիչս 'ի յետագայ տարւոց՝ յառաջ քան զհասարակել նորին, որպէս մեզ թուի:

Սուղ ինչ եւ զգրչագիր օրինակաց մատենի պատմագրութեանս ասասցուք, յորոց զտպագիրս ընծայեմք. զանց արարեալ զնորագիծ գաղափարօք՝ յերկուց հնագրաց եւեթ արարաք զընտրութիւն ընթերցուածոցն. յորոց մին՝ Ա. կամ Հ. եւ յոլովակի Հին Օ. (օրինակ) նշանակեալ 'ի ծանօթութիւնս, է արդարեւ հնագիր եւ հնատառ, եւ հնացեալ յստեպ կիրառութենէ, որպէս երեւի, այլոյ նշանաւոր պատմչի, Ստեփաննոսի Ուռպելեան, վասն որոյ իսկ գրեալ է, իբր քսան ամօք աւելի կամ պակաս՝ յետ մահուան հեղինակին. որ եւ անթերի եւ բովանդակ ունի զպատմութիւնն. բայց յուղղագրութեանն եւ 'ի հարազատութեան ստորեւ գտանի քան զ' Բ Օ. այսինքն Բնագիր օրինակն կամ Երկրորդ. զի զսա յաւէտ կալաք մեզ առաջնորդ, վասն ճարտար եւ անսխալ գրչութեան եւ ուղղութեան թւոց, եւ զլիտովին իսկ շարաբանութեանն. եւ սա իսկ հին է, գրեալ յամի 1307, որ է երեսուն եւ վեց ամ յետ մահու հեղինակին. եւ զի դադարէ սա, ուր նախ աւարտեալ էր Վարդանայ զպատմութիւնն, թուի թէ յիսկագրէ անտի յօրինողին կամ յայլմէ կանուիս ուրեմն գաղափարելոյ՝ առեալ է հաւասար: Իսկ ՕՕ. նշանակէ զի երկոքին եւս կամ ամենայն օրինակք այնպէս ունեին զընթերցուածն:

ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱԻԱՔՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Նախ քան զամենայն խնդիրս Հայցեսցուք եղեալքս զէն, եւ սկսեալքս զանսկիզբնն, եւ ստորնայինքս զվերնայինն. ոչ զորքանն զամէնն, որ ինքեան միայնոյն է, այլ յանհասական փառացն փայլակն ինչ երեւման՝ որով ուղղեսցուք զբաղձանս մեր, եւ այն միջնորդի եւ ոչ անձամբ իշխեցեալ. եւ է նա բարեկամն Աստուծոյ մեծն Մովսէս: Եւ զի հեզ է քան զամենայն մարդիկ, մի զարշեսցի 'ի մէնջ տալ մեզ զձեռն, եւ զգաւազանն որ Աստուծոյ, յորմէ բուռն հարեալ իմաստնասցուք: Որպէս նա 'ի հարցանել զանուն Տեառն լուաւ եթէ նա է Որ էնն, յորմէ բացան խորք իմաստից նորա, եւ անտի վստահացեալ կոչեաց զնա Աստուած եւ տէր, արարիչ եւ ստեղծող ամենայնի. զի թէպէտ եւ լուաւ 'ի նմանէ զիրաքանչիւրն, այլ էին հասկացեալ հաւատաց զի Աստուած է նա, որով է՝ է, զի աստ ածող է. եւ անուն նորա տէր է, զի

յիւրմէ եղելոցն իշխան եւ դատաւոր է: Եւ զի միշտ է՝ եւ ոչ է եղեալ. քանզի զգոյութիւնն յայտնէ Էն, եւ Աստուածն՝ զարարչութիւնն. որպէս եւ զանուն գրոյն առաջին՝ Արարածք եւ Ծնունդք կոչեաց, զի առինչք են սոքա, որպէս յայտնիչք եւ քարոզք, արարածք՝ արարչին, եւ ծնունդք՝ ծնողին: Եւ զհտաց թէ մի եւ միակ է Էն, քանզի եղեալքս բազում են, եւ ոչ է բազմութիւն առանց միոյն, բայց միին է առանց բազմութեան. եւ ոչ թաքեալ՝ ի նմանէ իմաստք Երրորդութեանն, քանզի ծանեալ էթէ Էն երեք է, որպէս եւ յառնելն զմարդն եւ ի բաժանել լեզուացն եւ յայլսն՝ խոստովանի զերեքն: Եւ այլ եղեալքս կամ ի վեր են քան զմիին եւ կամ աւելի են քան զերեքն, զի անկատարք են: Իսկ Էն երեք է, սկիզբն ունելով եւ միջոց եւ կատարումն. քանզի նա է Աստուած՝ առաջին, միջին, եւ վերջին. եւ թէ այլ ինչ գտանին այսպիսիք՝ նմանութիւնք են, եւ ոչ իւրիք հաւաստիք: Իմացաւ իսկ զԷն սկիզբն ամենայնի. քանզի ամենայն ինչ որ եղեալ է եւ լինի, նախ էութիւնն է սկիզբն եւ յԷն էանայ: Այլ եւ զհտաց եթէ պարզ է Էն. որովհետեւ զեղեալքս պատմեաց, թանձր եւ մարմնականս ծանեալ: Իսկ եթէ բարի է Էն, եւ անփոփոխ եւ անվախճան, եւ անորակ եւ անքանակ, եւ անորպիսութիւն. քանզի Էն բարի ոչ կամեցաւ միայն ունել զբարին, այլ արար բարի արարածս, վայելել յանձախելի բարիս արարչին: Չոր սկսանի այսպէս:

[Ա]

Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: Ոչ պատմելով սոցա նիւթ, զի անկարօտ է արուեստաւորն, սակայն արար չորս սկզբունս. ջերմ եւ թեթեւ, զհուր եւ զօդ. ցուրտ եւ ծանր, զջուր եւ զերկիր, ունելով ցամաքութիւն եւ գիջութիւն: Եւ իսկզբանէ ասաց, զի անժամանակ ցուցցէ զառնելն. քանզի երեք իրօք պատկերացոյց ինքեան զեղեալն, անժամանակութեամբն եւ անբաւութեամբն եւ անտեղութեամբն: Չի իսկզբանէն ոչ ունի ժամանակ, ոչ տարի եւ ոչ օր եւ ոչ ժամ եւ ոչ մասն հատածի, եւ ոչ ոք է բաւական զիտել զեղեալքս ամենայն. եւ ոչ է ի տեղուջ վերայ. որպէս ինքն Աստուած է: Իսկ փոփոխմամբ եւ շարժմամբ եւ քանակաւ եւ որակութեամբ եւ եղելութեամբն, զատչին ի բնութենէ արարչին: Արդ իմաստութիւնն Աստուծոյ՝ արուեստ, եւ զօրութիւնն՝ առնօղ, եւ բարութիւնն՝ նիւթ անմարմին, զոր նիւթացոյց եւ տեսակացոյց կամքն առատ եւ հնարաւոր, եւ յոչէից ընչացոյց զձեւ երկնի եւ երկրի յանպատրաստ հիման վերայ եղեալ: Քանզի երեք կամարք են մի քան զմի վերագոյն, հրեղէն, եւ ջրեղէն ի վայր քան զնա, եւ օդեղէն՝ որ է հաստատութիւնը: Որք երեքեան հողմով խառնեալ շուրջ զան բոլորեալ զերկրաւս, եւ երկիր ի վերայ ինքեան ունի զջուր՝ հաստատունն, հողմով անդուստ ի վեր փչեցեալ. զոր իւր բնական ծանրութիւնն ի վեր չթողու թոչել, եւ յանդնդոց ի վեր փչումն ի վայր չթողու անկանել, եւ Բանն Աստուծոյ բարձեալ կրէ թեթեւութեամբ զբոլորն: Եւ ընդ լինել երկնի, կենդանածնեցաւ հրեշտակօք հրեղինօք, որպէս եւ զաւառն է նոցա հրեղէն. տասնեակ դասուք զետեղեալք. տեղեալ եւ փառօք եւ զօրութեամբ զանազանեալք, արտաքոյ չորիցս տարերց, ըստ որում անայլայլականք են, եւ անմահք. եւ է երկինն վերին վարագոյր ընդ մէջ նոցա եւ Աստուծոյ, որ է անասելի օրինակն:

Եւ ասէն իմաստունք՝ եթէ յառաջին շուրջն երկնից գոյացաւ Բնութիւնն, որ է արուեստն Աստուծոյ, արարօղ զօրութիւն յետ Աստուծոյ. թերեւս ներգործութիւն տարերացս չորից:

Եւ երկրորդն շուրջ՝ կառոյց զհաստատութիւնն, եւ վերացոյց զկէս ջրոյն առ երկու իրս պիտանացու, զի բարձցէ զծանրութիւն երկրի գառաւելն, եւ զի արգելցէ զկիզողութիւն հրեղէն երկնիցն՝ ի մարմնաւորացս:

Եւ երրորդ շուրջն՝ ակնարկելով կամացն Աստուծոյ՝ շարժեաց զբոյսս եւ զբանջարս, որոյ սկիզբն բորբոս հողոյն, եւ կատարումն սերմն որ ՚ի նմա, եւ զծառս՝ որոյ սկիզբն մամուռն մօտ ՚ի բոյսս, եւ կատարումն արմաւենին մերձ ՚ի կենդանիս՝ յորս արու եւ էգ է:

Եւ ՚ի չորրորդ շրջմանն եղև հրաման Տեառն ՚ի վերայ լուսոյն, որ խզածն է յարփուոյն. եւ եհատ զնա յերիս մասունս, եւ յամանս բագումս, յարեգակն, եւ ՚ի լուսին, եւ ՚ի բազմութիւն աստեղաց. եւ երկոտասան կենդանատեսակք եղեն ճանապարհ արեգական եւ լուսնի, եւ եօթն այլ եւս աստեղաց. երիւքն առնէ արեգակն գարուն, եւ յայլ եւս յերիսն բարձրացեալ՝ առնէ ամառն, եւ ՚ի կշիռն ելեալ ցածնու. եւ երիւքն գործէ աշուն. եւ եւս ցածեալ ընդ հարաւ կազմէ ձմեռն: Եւ յաղագս կարի բարձրութեան եւ ցածութեան աշխարհաց՝ աճէ տիւն մինչեւ ՚ի քսաներորդ ժամն, եւ պակասի մինչեւ ՚ի չորրորդն: Եւ որպէս ասեն իմաստունքն չորեքտասան կլիմ է աշխարհս, այսինքն բաժինս. եւ եօթն կլիմն անբնակ է մարդկան. զի վասն յոյժ ցածութեան երկրին՝ ցուրտ է եւ խաւար. զի միշտ վեց ամիսն տիւ է ՚ի խոյէն մինչեւ ՚ի կշիռն, եւ վեց ամիսն գիշեր ՚ի կշռէն մինչ ՚ի ձուկն: Իսկ խորին շնդիկք միշտ հասարակ է, ոչ աճեն ժամքն, եւ ոչ պակասեն, այլ մնան երկոտասանք:

Իսկ ՚ի հինգ շուրջն եւ ՚ի վեցն, եւ հրաման ՚ի ջուր եւ յերկիր վասն կենդանեաց, սկսեալ ՚ի կառաբոյսս եւ ՚ի սպունգս, եւ կատարեալ ՚ի մարդն ՚ի կատարեալ կենդանին բանաւորութեամբ, ՚ի հազար ազգս, զլիաւորօքն իւրեանց լեւիաթանաւ որ ՚ի ջուրս, եւ բեհմովթան որ ՚ի ցամաքային անապատս. եւ այս է ըստ Արիստոտելի հոգի ընդհանուր տուող գոյութեան ամենայնի:

Եւ արդ բնութիւնն շարժէ զգունդն երկնից, եւ նա զժամանակն, եւ նա զտարրն, եւ նա զտունկս եւ զկենդանիս. եւ զհալական նիւթս, զոսկի եւ զարծաթ, եւ զակն, եւ զայլսն զոր գործէ բնութիւնն ծծմբով, եւ ժիպակաւ՝ որպէս ասեն գիտողք:

Իսկ ՚ի գլուխն հասուցեալ զանդամոցն յօրինուած, որպէս քաջ պատկերագիրքն՝ զի յոտիցն սկսանին, հրաշագործէ իմն նոր յօրինելով բնութիւնս յերկնէ եւ յերկրէ, եւ որ ՚ի մէջս են, վեցից ձեռաց խոնարհելոց ՚ի միոյ պատկերի շինուած, զի մինն նման իցէ երիցն, որովք մի հաւատասցի ստեղծողին բնութիւն եւ էութիւն եւ աստուածութիւն. զիտելով որ ինչ լինելոցն էր զմեղանսն, այլ ոչ կարէր արգելուլ նախագիտութիւնն զշարժումն յորդառատ բարերարութեանն. այլ եւ ՚ի նոյն իսկ բարերարութենէն ոչ հրաժարէր ոտիւք գալ հիւանդատես այնմ զոր ձեռօքն ստեղծ, եւ տուեալ զնա երկրի, մատնէ դահճին մահու կարճել զմեղսն, եւ հանել զչարութիւնն ՚ի նմանէ, եւ ցուցանել նմա զվնաս օձին եւ զնենգութիւն չարին, զի այլ մի լուիցէ նմա, զիտելով զոր ինչ առնելոց էր՝ զվերստին նորոգումն. այլ եւ ոչ ետ նմա գութն իւր կատարել զվճիռ մահուն՝ զոր եհատ նմա, զի ահա ոչ մեռաւ հոգին, այլ հողն հող եղև, եւ բնակիչն մնաց: Եւ արուեստաւորն կարող է եւ զթած, եւ նիւթն ՚ի ձեռին նորա, եւ ժամանակ յարութեանն անմոռաց ՚ի նմա:

[Բ]

Արդ սրտբեհիք բոցապատ արարեալ Աստուծոյ գորախտն՝ որ կայ ընդ արեւելս, յերկրի արմատացեալ՝ ի կատարս լերինն բարձու, որ հաւասար է գնդին լուսնի, անծորելի պտղով եւ անթառամ սաղարթիք, ուր ոչ ներգործէ արեգակն տիւ եւ գիշեր, այլ յարփւոյն պայծառանայ, եւ կամ նշողիք փառացն Աստուծոյ, որպէս զմեծ գործ նորա, եւ հրաշալի տեղի. որում ոչ համարեցաւ արժանի զանցաւորն տեսլեան անգամ, այլ յամենայն կողմանց վառեաց զնա հրով՝ ի կողմանց եւ ի վերուստ, որպէս զշանթական հուրդ, որ յորժամ անկանի՝ զինքն եւ զտեղին ծածկէ յաչաց, զի մի՛ ժպրհեսցի ոք խնդրել զնա առանց կամացն Աստուծոց: Ուստի զամս երեսուն ողբացեալ Ադամայ Եւայի զանխորհրդութիւնս իւրեանց կուսութեամբ, ապա զիտացին զմիմեանս յանասնոցն անկեալ յանարգանս, եւ ծնան զԿայէն հիւանդ ծնողացն ցաւած ծնունդ, որպէս ասեն բժիշկք, քերք միով Կլիմաս կոչեցեալ. եւ զկնի երեսուն ամաց ծնան զԱբել, եւ զԱբելուհի քոյր նորա: Եւ զկնի այլ եւս երեսուն ամի սպան Կայէն զԱբել. քանզի ուսեալ ի ծնողացն պատուել զԱստուած պատարագօք պատուականաց եւ առաջնովք, եւ վասն սիրելոյն զմիմեանս՝ ընդ անձին եւ ընդ եղբօրն մատուցանել: Իսկ Աբելի ածեալ յանդրանկաց գառանց եւ ի պարարտաց զիւր եւ զեղբօրն, վասն որոյ հայեցաւ Աստուած նախ ի Հաբել եւ ի պատարագս նորա, եւ ի Կայէն ոչ նայեցաւ, զի զյոռին եբեր, ընդ անձին միայն, եւ ոչ զմասն եղբօրն. եւ ոչ եղև ընկալեալ ի վերուստ հրով, որպէս զՀաբելին. վասն որոյ ի կարծիս եղեալ Կայէն վասն Աբելի, թէ առնու զնա ի դրախտն Աստուած վասն ընդունելի պատարագին, եւ նախանձու վառեալ՝ սպան զնա: Եւ իմացեալ Ադամայ եւ Եւայի, սգացին զնա ամս հարիւր եւ քառասուն: Եւ ի կոչելն Աստուծոյ զԿային ողորմութեամբ յապաշաւանս, ստեաց եւ յաւել մեղս ի վերայ մեղաց, եւ առեալ պիսակ ի ճակատն, որպէս ասեն, եւ դողդոջումն յամենայն անդամսն, եւ ծնեալ որդիս եւ թոռունս, յերկարակեաց եղեալ տանջանօք եւ նախատանօք մեռանի: Եւ զի որդիք նորա Ենովք եւ Գայերիդադ եւ Մայաէլ եւ Մաթուսաղա եւ Ղամէք նման հօրն չարք էին. որպէս Ղամէք խոստովանի կանանցն, այր եւ երիտասարդ սպանեալ, զոր ասեն եղբարք արդարոյն Ենովքայ, զոր սպան եւ առ զկանայս նոցա, եւ ոչ թէ զԿային եւ զորդի նորա, որ նման հօրն ասեն, զոր Աստուած ասաց ոչ ումէք սպանանել զնա: Այս Ղամէքայ որդիք, Թովբել եւ Յուբադ, եւ քոյր նոցա Նոյմի, արարին քնարս եւ երգս, եւ սնգոյրս, եւ գտաւ ի նոցանէ դարբնութիւն պղնձոյ եւ երկաթոյ:

[Գ]

Իոկ զկնի երկերիւր եւ երեսուն ամաց ելիցն ի դրախտէն, եղև որդի միսիթարութեան Ադամայ Սէթ, որ յետ երկերիւր եւ հինգ ամին՝ ծնանի զԵնովս, որ եւ վարս ուղիղս ցուցեալ յուսացաւ յԱստուած հատուցանել նմա, եւ կոչեաց զանուն տեառն Աստուծոյ յօգնութիւն. եւ արար զիւր, եւ գրեաց յերկուս տախտակս պղնձիս եւ խեցիս, եւ մարգարեացաւ եթէ երկու անգամ անցանի աշխարհ, ջրով եւ հրով, եւ գրեաց զայս, եւ զանուանս ամենայն իրաց, զորս եղեալ էր Ադամ զի պահեսցին ի պնակիտսն, ի ջրոյն՝ ի պղինձն մնայցէ ասէ, եւ ի հրոյն թրծեալ աղիւսն խեցեալ. եւ վասն այսորիկ աստուած կոչեցաւ, եւ որդիք նորա՝ որդիք աստուծոյ: Այլք ասեն՝ յորդոց նորա երկերիւր անձինք յիշեցին զկեանս դրախտին, եւ ելին ի լերինս պահել կուսութիւն, եւ աստի կոչեցան որդիք Աստուծոյ. եւ ապա ձանձրացեալք իջին ի լեռնէն Ահերմոնի. եւ հալածեցին զնոսա եղբարք իւրեանց: Եւ որդիքն Կայէնի եւ դստերքն ի քնարս եւ ի

սնգոյրս պատրեալ գնոսա՝ առ ինքեանս դարձուցին, առնուլ կանայս գորս ընտրեսցեն. եւ արարին այնպէս, անցեալք զուխտին Աստուծայ, որ եղեալ էր նոցա մի՝ առնել ինամութիւն ընդ նոսա:

[Դ]

Եւ ասեն զկնի հազար ամին ելիցն ՚ի դրախտէն, որդիքն Կայենի եղին իւրեանց թագաւոր, Սամիրոս անուն, նոյնպէս եւ որդիքն Սեթայ՝ Ադորոս անուն, որ եգիտ զթիւ կենդանակերպիցդ եւ զմոլորակացդ, եւ ՚ի նմանէ անուանեցաւ քաղղէութիւնն, որ է հմայութիւն աստեղաց. եւ անտի թուեն տասն թագաւոր, եւ ժամանակ նոցա հազար հարիւր եւ ութսուն ամ: Ենովս հարիւր եւ իննսուն ամաց ծնանի զԿայնան. Կայնան հարիւր եւ եօթանասուն ամաց ծնանի զՄաղաղիէլ. Մաղաղիէլ հարիւր վաթսուն եւ հինգ ամաց՝ ցնանի զՅարեդ. Յարեդ հարիւր վաթսուն եւ երկու ամաց՝ ծնանի զԵնովք: Ենովք հարիւր վաթսուն եւ հինգ ամաց՝ ծնաւ զՄաթուսաղա. Մաթուսաղա հարիւր վաթսուն եւ հինգ ամաց՝ ծնաւ զՂամէք. Ղամէք հարիւր ութսուն եւ ութ ամաց՝ ծնաւ զՆոյ. եւ լեալ եօթն հարիւր եօթանասուն եւ երեք ամաց՝ մեռաւ նախ քան զհայրն քսանեւինն ամօք: Ի հազար վեցհարիւր վաթսուն եւ վեց ամի ելիցն Ադամայ ծնաւ Նոյ. յորում ժամանակի բազմացան չարիք, եւ յաճախեաց անիրաւութիւնն:

Զի նախ եգիտ սատանայ իւր զէն զորկորամոլութիւնն, ապա զկնասիրութիւնն, ապա զսպանութիւնն. եւ արար զայս սատանայ, զի ՚ի շատ խառնիցն լինին կանայք անծնունդք եւ կենդանիքն սպանանեն զմիմեանս, եւ բառնայ մարդկութիւն: Քանզի քառասուն այր մեռանէր վասն միոյ կնոջ, եւ ընդ կանայսն միայն ունէին խաղաղութիւն, ասէ սուրբ հայրն Եփրեմ: Իսկ ինամք Տեառն ընդդէմ չարին՝ զբազում խառնսն առնէր պատճառս ծնանելոյ հսկայիցն անճոռնեաց. եւ զի ՚ի կանանցն եղև կամաց ախտն, ՚ի ծնանել զյաղթանդամ կորիւնսն՝ մեռանէին մարքն, եւ ապրէին ծնեալքն. որ եւ աճեցեալք, եւ ՚ի կոյտս իւրեանց հասակին հայեցեալք, հպարտացեալք՝ յաւիտենից արք անուանէին զինքեանս: Վասն որոյ զի Աստուած բազմակեաց արար զնոսա, զի փոխանակ գրոյ լինիցին զաւակացն, եւ շատս ծնանիցին, նոքա վիսացեալք բնաւ ակն ոչ ունէին մահու. զոր կարճեալ արարչին, եւ առեալ յաղտեղեալ անձանց՝ նոցա զհոգւոյն շնորհն, ասաց՝ եղիցին տարիք ողոցա հարիւր եւ քսան, եւ հոգի իմ մի՝ մնասցէ ՚ի դոսա. եւ հարիւր եւ քսան ամ՝ ոչ հասարակաց մարդկան յայնմհետէ, այլ արանց ժամանակին ներումն ապաշաւանաց: Եւ եղեալ Նոյի հինգ հարիւր ամաց անբամբաս կենօք յանապատի բնակելով կուսութեամբ, հրամայէ Աստուած կին առնուլ, եւ որդիս ծնանել, եւ արկդ շինել՝ որ վերաբերի ջուրց: Եւ եղեն իրքն. զհարիւր ամն ապաշխարութեան տուեալ ժամանակին. եւ զի ոչ ապաշաւեցին՝ կարճեաց զքսան ամն. զոր ասեն յիննհարիւր վաթսուն եւ երկու ամացն Մաթուսաղայի յաւելեալ եւ անցեալ ՚ի ներքոյ ջրոյն. վասն որոյ ՚ի վեցհարիւրերորդի ամին Նոյի եղև ջրհեղեղն, եւ կորոյս զամենայն կենդանիս, բայց յայնմանէ՝ որ ընդ Նոյի կային ՚ի տապանին, ընդ ութ բանականսն:

[Ե]

Այլ զթիւ յամելոյն Ադամայ ՚ի դրախտին ոչ ոք կարէ ասել. մի՝ զի ժամանակագործ արեգակնս այս ոչ սպասաւորէ դրախտին, եւ երկրորդ՝ զի որքան անմեղ էր Ադամ՝ ընդ անմահսն էր նորա վիճակն, որք չեն ընդ տարեօք: Իսկ զկնի յանցմանն՝ ոչ յամեաց

‘ի դրախտին. զի ընդ մահու Վճռու եմուտ, եւ Աստուծոյ մեռու, եւ գերեզմանի պէտք էին, եւ դրախտն անմահից էր տեղի, վասն որոյ յերկիր հանեալ՝ մտանէ ընդ ժամանակաւ: Եւ անտի համարէ Հոգին գտարիսն ‘ի ձեռն Մովսիսի. որ լինի ըստ եօթանասնիցն թարգմանութեանն յելիցն՝ ‘ի դրախտէն մինչեւ ցօրհեղեղն՝ երկու հազար երկու հարիւր քառասուն եւ երկու ամբ. եւ ըստ երբայեցոցն՝ հազար վեց հարիւր յիսուն եւ վեց ամբ, պակաս հինգ հարիւր ութսուն եւ վեց ամօք. եւ զպատճառն ասեն թէ կնասէրք էին Հրեայքն, կարճեցին գտարիս ամուսնանալոյ առաջնոցն, զի մի՛ ոք արգելցէ զնոսա ‘ի տղայութեանն առնուլ կանայս. քանզի անմիաբանութիւն նոցա նախ քան զամուսնանալն է: Զի զԱդամ հարիւր եւ երեսուն ամաց ասեն ծնանել զՍէթ, եւ Սէթայ հարիւր եւ հինգ ամաց ծնանել զԵնովս. իսկ զյետ ամուսնութեան ժամանակն զոյգ բերեն եօթանասնիցն. եւ ‘ի Յարեղին եւ ‘ի Մաթուսաղային եւ ‘ի Ղամբայն միաբանին դարձեալ. որ առաւել յանդիմանէ զնոցա ստութիւնն, զի թէ կրտսերքն շատ պահեցին զողջախոհութիւնն, քանի՛ առաւել աւագքն եւ լաւքն: Արդ՝ Նոյ լեալ ամաց հինգ հարիւր՝ ծնաւ զՍեմ, զՔամ եւ զՅաբեթ, որովք ապրեցաւ ‘ի ջրոյն, որ եղել ‘ի վեցհարիւրերորդի ամին իւոյ, եւ զկնի էլիցն՝ ‘ի տապանէն եկաց այլ եւս երեքհարիւր եւ յիսուն ամ. եւ ծնաւ ասեն որդի մի այլ Մանիտոն անուն, եւ դուստր մի Աստղիկ անուն, որոց եւ բաժանեաց զամենայն աշխարհս. նախ յերիս հատեալ բաժինս՝ ըստ երից որդւոցն որք էլին՝ ‘ի տապանէն, յԵւրոպիա, ‘ի Լիբիա, յԱսիա: Եւրոպիա՝ մասնեալ ասի, քանզի մասնեաց Նոյ զարեւմուտս կցելով՝ ‘ի նա յարեւելից յԵմաուն լեռնէ, եւ ետ զնա Յաբեթի, որ ձգեցան եւս մինչեւ ցլերինս Կասբից եւ Կովկասու եւ լցին զկողիս. եւ մասն ինչ յարեւմտից հատեալ՝ ետ Մանիտոնի, որ ասեն խնդրեաց յոսկերացն Ադամայ, զոր ունէր Նոյ՝ ‘ի տապանն. եւ ետ նմա զլստունս ծնգացն, եւ զնաց. որ եւ եգիտ զհաւահմայութիւնն. եւ նա է հայր բնակչաց Բիւրիտոնացոց: Եւ Լիբիա լիաբաժին ասի, որ է մեծասահման կողմն հարաւոյ, Եգիպտոս, եւ ամենայն Հնդկաստան եւ Եթէովպիա, զոր ետ Քամայ. եւ զերկիրն ինկաբեր, որ կոչեցաւ Երջանիկ Արաբիա, ետ Աստղկայ դստեր իւրոյ, ուստի եկն տիկինն Սաբայ, զի յայնմիտէ կանայք ժառանգեն զնա: Իսկ Ասիա աստուածային ասի, որ է արեւելք. տայ զնա Սեմայ, ‘ի Կարմիր ծովէն եւ յԵւրոպայ եւ ‘ի Պաղեստինայ եւ յԱսորեաց մինչեւ ցՊարթեւս եւ ցՎրկան, եւ ցելսն արեւու: Տայ նմա եւ զոսկերս նախաստեղծիցն արկեղբ, զոր ‘ի բռնանալն Քամայ՝ ‘ի վերայ նորա, թաղէ ‘ի Գողգոթա եւ ‘ի Բերթեհէմ. եւ եղ նգովս զի մի յափշտակեցցեն զմիմեանց:

Յետ աշխարհաւեր ջրոյն յերկրորդում ամին ծնաւ Սեմ զԱրփաքսադ՝ ‘ի հարիւրերորդի երկրորդի ամին իւրոյ. Արփաքսադ՝ ‘ի հարիւրերորդի երեսներորդի եւ հինգերորդի ամին ծնաւ զԿայնան. սա բազմացոյց զքաղղէութիւն եւ եգիտ զկախարդելն աստեղօք, վասն որոյ որդիք իւր աստուած համարեցան զնա, եւ արարին նմա պատկեր ‘ի կենդանութեանն եւ պաշտեցին զնա: Կայնան հարիւր եւ քսան ամաց ծնաւ զՄաղա. Մաղա հարիւր եւ երեսուն ամաց ծնաւ զԵբեր. Եբեր հարիւր երեսուն եւ չորս ամաց ծնաւ զՓաղէկ, որ է բաժանումն, քանզի անհաւան լեալ վիճակացն տուելոցն՝ ‘ի Նոյէ, վիճէին մինչեւ դարձեալ բաժանեցին, ըստ բազմին եւ ըստ սակաւին աճման ազգի մարդկան. եւ ապա միաբանեալք ընդ միմեանս սիրով խորհեցան զնալ յարեւելս, տեսանել զդրախտն՝ զոր լուեալ էին եթէ անտի էլին նախաստեղծքն: Եւ իբրեւ չոգան զշատ աւուրս, եւ ահա ծով լայնանիստ անջրպետեալ էր զնա յերկրէ. եւ դարձան անտի խորհելով՝ ‘ի սնոտիս, եթէ վասն մեղաց ջուր աւերեաց զերկիր, եւ անց ծով ընդ մեջ դրախտին, եւ մեղքն այն գտանի այսօր առ մեզ եւ ոչ պակասի յաշխարհէ. եւ արդ եկայք շինեցուք մեզ աշտարակ պահել զմեզ՝ ‘ի գալ պատուհասի մեղաց ջրոյ: Եւ էր

Փաղէկ ամաց հարիւր երեսուն եւ երից եւ ծնաւ նմա Ռագաւ. եւ եկեալ իշխանաց աշխարհի յերկիրն Սենայար, 'ի դաշտն Քաղանէ, արկին հիմն քաղաքի, եւ շինեցին զնա վաղվաղակի, եւ սկսան ապա զաշտարակն յառաջին ամին Ռագաւու. ասեն ոսկեղէն եւ արծաթեղէն սարսխօք շուրջ դնելով աղիւս, խորովեալ հրով, զանգեալ բռով, կրով եւ կպերբ, արձակահիմն, խորամէջ, լայնափողոց, բացեալ պատուհանօք լուսաբերօք. ասեն եւ ակունս լուսարձակս դնել առ պատուհանօքն: Անխոնջ վաստակօք զամառն եւ զձմեռն գործէին, եւ հող տեղոյն ձեռն տայր. շար իմն մրջմանց յամենայն կողմանց ելողաց եւ իջողաց, այր զայր գրգռէր, եւ կին զընկեր իւր: Եւ ոչ ոք ասէր եթէ եւ շատ գործեցի քան զքեզ, այլ եթէ դու շատ գործեցեր քան զիս. զի դեռ անախտ եւ անցաւ ունէին բնութիւնս. եւ մինչեւ ցքառասներորդ ամն Ռագաւու՝ ոչ առին պարապ գործոյն, մինչեւ հասուցին յօղն անտես, յործուտն եւ 'ի մղկուտն եւ 'ի սատակողն, յոր թռչուն ոչ վերանայ, եւ թէ ձկտի՝ թեւակիզեալ անկանի. եւ ասեն թէ զոսկին յատակացն սկսեալ տարան ընդ մէջն մինչ 'ի վեր, եւ հալէր 'ի ջերմութենէն, եւ մարդիկն ջանային եւս հնարիւք անկէզ մնալ, եւ ոչ կասել 'ի գործոյն, մինչ ինքն Տէր ողորմեալ դադար տայր առնուլ յանօգուտ ջանիցն. եւ գտանին զրոյցք 'ի տանն Նեբբովթայ, եթէ նախ հրեշտակ եկն առ Նեբբովթ, որ իշխան էր, եւ որսայր շինողացն կերակուր, եւ ասէ ցնա. Ես եմ հրեշտակ Աստուծոյ, կողմնապետ արեւելից. այսպէս ասէ տէր Աստուած երկնի եւ երկրի, լռեցէք դադարեցէք 'ի գալոյդ առ իս, զի ոչ կարէք. այլ եւ եկից առ ձեզ 'ի ժամանակի, եւ տաց ձեզ սանդուխտ որով կարէք եւ դուք գալ առ իս: Եւ ոչ լուան հրեշտակին. ապա ինքն ասաց ցեակիցսն իւր. Եկայք մեք իջցուք եւ բաժանեսցուք զլեզուս նոցա. եւ զի ստեղծուածք ձեռաց նորա 'ի ցասմանէ զարհուրեալք փախչէին առ նա, ոչ պատժեաց զնոսա, այլ հոտով դրախտին արբեցոյց զնոսա. զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն: Եւ այսպէս միխթարեալք զմայլմամբ յանձառելի բուրմանէ հոգւոյն, մոռացան զառաջին լեզուն. եւ չարար զնոսա վաստակ միւսանգամ քակելով, այլ հողմոյ հրամայեաց գործ, եւ ոչ զոք սպան 'ի նոցանէ. զի ոչ շրջեաց՝ այլ հոսեաց: Եւ շատ ինչ բարի եղեւ. մի զի ծանեան մարդիկ զիրեանց տկարութիւնն. եւ դարձեալ պատճառք իմաստից եւ գեղեցկաբանութեան, 'ի խոշոր լեզուէն առաջնոյ եւ 'ի կոպտաձեւ. փափկագոյնն Ելլենացւոց, եւ սաստկագինն Հռովմայեցւոց, Հոնն սպառնական, եւ Ասորին աղաչական, Պարսիկն պերճական, եւ Ալլանն գեղեցկաձեւ, Գուդն ծաղրական, Եգիպտացին խարափաձայն, եւ Հնդկն ճճուող, Հայն համեղ եւ ամենազարդ եւ համենական. եւ որպէս աղդի ազգի գոյնք գեղեցկութիւն առնեն, եւ զանազանութիւնք հասակաց, այսպէս եւ լեզուաց զանազանութիւնք: Եւ առաջին լեզուն մնաց առ Եբբրայ, որ ոչ միաբանեաց ընդ այլսն, եւ որպէս մեղքն բաժանեաց յերկու տուն զմարդիկ, 'ի Կայենին եւ 'ի Սեթայն, նոյնպէս եւ աստ, յերկու եղեն ազգ մարդկան, յԵբբր, եւ յեթթանաստուն եւ երկու տանուտէրսն. որպէս մի Աստուած միագոր, համակ քաղցրն 'ի մէնջ հարկեալ եւ տանջէ եւս, եւ կոչի Աստուած եւ տէր: Եւ եթէ 'ի յարութեանն հասարակի յԵբբրայն խօսին, բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ եւ բազմակարօտ մեր բնութիւնս եւ յոքնանուն, երբ մաքրի եւ պարզի՝ անկարօտ լինի. զլեզուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Եղիշէ, որով ընդ Աստուած եւ ընդ միմեանս խօսին: Այլ Տէրն ելից զկարօտութիւն մարդկան, զխաչն տուեալ աշտարակ յերկինս ելից, եւ զաստիճանս առաքինութեան զօրինակն Յակոբայ ցուցեալ, եւ անդ իսկ կոչեաց Հոգին որ փոխեաց զլեզուս նոցա, հրեշտակս Աստուծոյ փոխանակ մարդկան, զի յօժարեսցին առ հրեշտակս ելանել: Կացոյց ասէ զսահմանս ազգաց ըստ թնոյ հրեշտակաց Աստուծոյ, թուեաց 'ի հրեշտակս եւ յայլ ամենայն լեզուաց կացոյց վերակացուս 'ի հրեշտակաց Աստուծոյ, զի մի՛ օտարացին ամենեւին յԱստուծոյ հեթանոսք:

[Զ]

Բայց Բէլ հպարտացեալ յանճոռնի հասակն վաթսուն կանգուն, հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխանսն որպէս աստուծոյ, եւ ապա արձակեաց, բաց 'ի Հայկայ՝ որ էր որդի Թորգոմայ, որդոյ Թիրասայ, որդոյ Գամիրայ, որդոյ Յաբեթի, որդոյ Նոյի, որ ոչ պաշտեաց զնա աստուած, այլ եւ շուն կոչեաց զնա. եւ զի եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիւ, եսպան զնա Հայկն նետիւ հարեալ զսիրտն՝ պղնձեօք տախտակեալ:

Իսկ որդիքն Քամայ 'ի գնալն յերկիրն կալուածոց իւրեանց, տեսին զՊաղեստինեայ եւ զկողմանսն Յորդանանու զի պարարտ եւ յուռթի էր. բնակեցան անդ ուժովն Բելայ ազգականին իւրեանց եւ զրկեցին զորդիսն Սեմայ, եւ եղև պատերազմ սաստիկ: Այլ եւ որդիքն Յեկտանայ, Սաբա եւ Եւիլա եւ Ուփիր, իմացան զկազմած զինուց, եւ ինդրէին իւրեանց տեղի ընդարձակ, զի աճեցին 'ի բազմութիւն: Եւ յերեսաց նոցա զաղթէին մարդիկ յամրոցս ինքնագործս, եւ ապա սկսան շինել բերդս, եւ պատերազմողքն գտին զմեքենայս առման ամրոցացն, մինչ ձանձրացեալ ազգացն յընտիր առնեն նոցա զերկիր գոր եւ կամեցին. եւ առ Սաբայն զխնկաբեր երկիրն, գոր Սաբա կոչեաց, եւ Ուփիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Հնդիկք. եւ Եւիլա՝ զերկիրն պատուական ականց եւ անուամբն իւր կոչեաց Եւիլատ:

Այլ Ռաբաւ հարիւր երեսուն եւ երկու ամաց ծնաւ զՍերուք. Սերուք հարիւր եւ երեսուն ամաց ծնաւ զՆաքովր, եւ շինեաց Սերուք զՍրուճ. Նաքովր ամաց եօթանասուն եւ ինունց ծնաւ զԹարա. Թարա եօթանասուն ամաց ծնաւ զԱբրահամ: Յայնմ ժամանակի ասեն լեալ զԱմագոնս, որ է կանանց զինուորութիւն. քանզի զկին ոմն ասեն յազգէն Թորգոմայ ժառանգ մնացեալ թագաւորութեանն ազգին, հատեալ զարու զաւակացն, եւ էր քաջասիրտ եւ արի, եւ աներէր զազգս բազումս, եւ եղև զժողովին 'ի զօրացն, եւ կոտորեաց զնոսա, եւ ստացաւ զօրս 'ի կանանց, եւ նոյնպէս առնէր եղեալ զաթոռ թագաւորութեան իւր յԱլիօն քաղաքի:

[Է]

Յիշեցոյք համառօտիւք եւ զմերն նախնին Յաբեթ, որ զկնի ջրոյն ծնաւ զԳամիր, ուստի Գամիրք, եւ զՄագոգ, յորմէ Կեղտք եւ Գաղատացիք, եւ զՍեդա, որ զՄարս շինեաց, եւ զԹոբէլ, յորմէ Թետալք, եւ զՄոսոք որ ա՛ն զԼիւրիկիլա. եւ զԹիրաս՝ յորմէ մերն Ասքանազ եւ Թորգոմ. եւ Յաւանայ՝ Յոյնք, եւ 'ի Թարշշայ՝ Վիրք եւ Տիւրենացիք. եւ 'ի Կիտիմայ շոովմայեցիք եւ Լատինացիք: Եւ Թորգոմ ծնաւ զՀայկն, եւ զեօթն եղբարս նորա, զՔարթլոս, զԿովկաս եւ զայլսն, որք ժառանգեցին զհիւսիսի: Եւ 'ի Հայկայ Արամանեակ, յորմէ կոչեցաւ լեառն Արագած, եւ յԱրմանեկայ Արմայիս, որ շինեաց զԱրմաւիր: Եւ Արմայիս ծնաւ զԱմասիա, յորմէ կոչեցաւ Մասիս լեառն. եւ Ամասիա ծնաւ զԳեղամ, որ շինեաց զԳեղարքունի. Գեղամ ծնաւ զՍիսակ, յորմէ Սիւնիք, եւ զՀարամ, որ ծնաւ զԱրամ, յորմէ ամենայն ազգ կոչէ զմեզ Արմէն: Զի սա ընդարձակեաց զսահմանս Հայոց, որ զԿապադովկացիս եւ զՊոտոտն եւ զկլիմայն ընդ իւրեւ նուաճեալ, Արամանեակ կոչէր: Եւ յԱրամանեկայ եւ 'ի Պոնտոս՝ Առաջին Հայք. եւ 'ի Պոնտոսէ 'ի քաղաքն Մելտենի՝ Երկրորդ Հայք. եւ անտի 'ի Տոփաց զաւանձ՝ Երրորդ Հայք. եւ անտի 'ի քաղաքն Մարտիրոսաց եւ յԱղձնիս՝ Չորրորդ Հայք. եւ

զսեփական աշխարհին իւր կոչէ Մեծ Հայք: Սա ծնաւ զԱրայն գեղեցիկ, որ մեռաւ 'ի Շամիրամայ, թողլով որդի զԱնուշաւան. որոց կարգի ազգն այսպէս:

Պարէտ, Արբակ, Զաւան, Փառան, Սուր յաւուրս Յետուայ, Յոնակ, Համբակ, Առնակ, Նորայր, Վստամ, Կար, Գռակ, Հուան, Ընձակ, Գռակ, Հաւան, Զարմայր, որ յԻլիական պատերազմին ընդ Եթովպացւոց զօրուն մեռանի: Պերճ յաւուրս Դաւթի արքային. Արբուն, Հոյն, Յուսակ, Կայպակ, զոր պսակէ Վարբակէս Մար, որ հանեալ զթագ 'ի Սարդանապալլեայ, տիրէ Ասորեստանի եւ Նինուէի: Առ սա եկին որդիքն Մենէքերիմայ եւ պատուեցան եւս 'ի Պարոյրայ: Զոր յաջորդէ Հրաչէ՝ որդի իւր, որ էր ընդ Նաբուգոդոնոսորայ յԵրուսաղէմ, եւ ած զՇամբատ ընդ իւր 'ի Հայս, յորմէ ազգ Բագրետունեաց: Եւ յետ Հրաչէի Փառնաւագ, Պաճոյճ, Կայինակ, Փովա, Հայկակ, Երուանդ, որ ծնաւ զմեծն Տիգրան, որ սպան զԱժդահակ, եւ զԿրիստս ըմբոնեաց եւ արձակեաց. Բաբ, Տիրան, Վահագն, Առաւան, յորմէ Առաւելեանք, Ներսէս, Զարեհ, Արմոզ, Պայգամ, Վան, Վահէ, զոր սպան Աղէքսանդր Սակեդոնացին:

Իսկ 'ի Քամայ որ մնաց մեզ ասել, Քուշ, Մեստրիմ, Նեբրովթ, որ է Բէլ, Բաբ Անեբիս, Արբէլ, Քայադ միւս Արբէլ, Նինոս այրն Շամիրամայ:

[Ը]

Ասասցուք եւ զկարգ թագաւորացն: Առաջին թագաւորեաց Նեբրովթ 'ի Բաբելոն հիւսածոյ թագաւ պսակեալ եւ ոչ կռածու, 'ի յիսուն եւ վեց ամին Սերուքայ. սա շինեաց զՇօշ քաղաք, որ ասեն Ասպահան, եւ սա սպանաւ 'ի Հայկայ, որդւոյ Թորգոմայ: Եւ թագաւորեաց Թիրոս քաղդէացի. յաւուրս սորա գտաւ արուեստ ոսկեհանութեան եւ արծաթագործութեան: Եւ յետ նորա թագաւորեաց Սամիրոս յազգէն Մեմայ ամս եօթանասուն եւ երկու. սա սկսաւ դահեկան եւ դրամ գործել անուամբ գրոյ, եւ առ սովաւ գտաւ քանդուած նկարու, եւ կազագործութիւն եւ չափ եւ կշիռ, եւ ամենայն բարեկարգութիւն: Զամանէ ասէ Մենադրոս մոզ էթէ երիս այս ունէր: Ի քսան եւ հինգ ամին Նաբովրայ էր ճգնութիւնն Յոբայ որդւոյ Զարեհի, որդւոյ Ռագուելի, որդւոյ Եսաւայ, որ զամս երեսուն եւ ութ պատերազմեալ ընդ սաստանայի, յաղթեաց համբերութեամբ եւ փառաւորեցաւ: Յեօթներորդ ամին Թարայի թագաւորեաց Արփիագատ ամս ութելտասն. եւ զկնի նորա Վիլոս Աթուրացի ամս վաթսուն եւ երկու, հանեալ զպատիւն 'ի Բաբելոնէ յԱթուրիայ, որ է Նինուէ. բայց Քսարոս ոմն թագաւորեաց 'ի Բաբելոն: Եւ Սահերոն եղբայր Թարայի սպան գնա, վասն հանելոյ 'ի նմանէ զԿայնան կուռքն, զի էր քրմապետ: Աստ շինեցաւ Դամասկոս յԱրամայ Հիթացոյն: Աբրահամու մօրն Մալքաթու էր անունն. եւ յետ տասն ամի ծնանելոյն Աբրահամու, ծնաւ Թարա զՍառա 'ի Զմրութայ կնոջէ իւրմէ, եւ ոչ 'ի մօրէն Աբրահամու, որպէս ինքն ասաց ցԱբիմելէք. Քոյր իմ է, ասէ, 'ի հօրէ եւ ոչ 'ի մօրէ: Եւ լեալ Աբրահամ հնգետասան ամաց, սկսաւ խնդրել զԱստուած, մինչեւ ցեօթանասուն ամն. քանզի պարարտ եւ բազմաշահ երկիրն Քաղդէացւոց գրգռեաց զնոսս յամենայն չարիս, յորում այց արար Աստուած, եւ արածել հրամայեաց ճայից բազմաց զանդս եւ զայգիս նոցա բազում ժամանակս, եւ իւրաքանչիւր ոք սակաւ ինչ վաստակէր եւ պահէր իբրեւ զտարածոցս, եւ անկան յաղքատութիւն: Եւ Աբրահամ էր պահապան 'ի հայրենիս իւր եւ ուսանէր 'ի գիշերի զաստեղագիտութիւն, եւ զտիւն վաստակէր 'ի պահել զանդս. եւ զամենայն զոհս եւ զուխտս եւ զաղօթս կատարելով պաշտեցեալ դիցն իւրեանց, եւ ոչ լինէր դիւրութիւն. գնոյն եւ Աբրահամ առնէր, եւ մտախոհ լինէր

ապա յինքեան թէ չէ պատուհասս 'ի մերոցս պաշտելեաց, վասն զի ոչ կարեն բառնալ այլ եւ յարուեստէ աստի յաստեղացս պարտ է ճանաչել՝ զի 'ի շարժման կան միշտ, եւ 'ի ներքոյ հարկի, եւ յայտ է թէ գոյ ոմն կառավար սոցա մեզ անձանօթ: Եւ ապա սկսաւ պաղատանօք ասել. Անձանօթ Աստուած ամենայնի արարիչ, եւ այս թոչնոցս, դու հալածեա՛ զոսա. եւ նոյն ժամայն անյայտ եղեն: Եւ ասաց Աբրամ. Ահա գտաք զԱստուած. օրհնեալ է տէրութիւն քո եւ փառք քո լցցէ զամենայն երկիր. եւ պատմեաց 'ի տան հօր իւրոյ, եւ անփոյթ եղէ նոցա զիրացն: Յայնմ ժամանակի մեռաւ Վիլյու թագաւոր եւ ա՛ռ զբազն Նինոս որդի նորա, որ շինեաց զկուռս հօր իւրոյ ոսկեղէն, եւ ընդարձակեաց զԱթուր քաղաք, եւ յանուն իւր կոչեաց Նինուէ:

Ի սորա ժամանակս շինեաց Մելքիսեղեկ զԵրուսաղէմ, եւ Աբրամ ոչ դադարէր 'ի խնդրելոյ զերելումն Աստուծոյ. եւ լուաւ նմա, եւ ըստ տանելոյ նորա յայտնեցաւ նմա, եւ ասէ. Ե՛լ յերկրէ քումմէ եւ յազգէ եւ տարայց զքեզ 'ի զրկեալ վիճակն ձեր, եւ քեզ եւ զաւակի քում տաց զնա. եւ ասաց զբանն հօր իւրում: Եւ ել ընդ նմա, եւ եկին մինչեւ ցԽառան, եւ ստացան անդ տուն. եւ շինեաց անդ Թարա մեհեան կոոց, եւ այրեաց զնա Աբրամ, եւ Առան եղբայր նորա կամեցաւ շիջուցանել, եւ այրեցաւ անդէն. ոմանք ասեն թէ զիշակէսն նա հնարեցաւ, եւ մեռաւ 'ի Տեառնէ:

Եւ դարձեալ լինի առ Աբրամ ձայն Աստուծոյ ելանել 'ի Խառանէ, եւ ել ըստ բանի Տեառն. ասեն ա յլ կին ունել Աբրամ, եւ որդի Ովրեստէս անուն, զորս թողեալ զամենեսեան գնաց 'ի Պաղեստինեայ եօթանասուն եւ հինգ ամաց, եւ ութսուն եւ եօթնամեայ էջ յԵգիպտոս. եւ ել անտի անմոռաց 'ի Տեառնէ. եւ հարիւր եօթնուտասն ամաց լեալ՝ աճ գորդին 'ի զենումն. եւ հարիւր քառասուն եւ ութ ամաց առ զԿենտուր, եւ վեց որդիս ստացաւ 'ի նմանէ. 'ի հարիւր եօթանասուն եւ հինգերորդին վախճանեցաւ, յերեսներորդի եօթներորդի ամին Յակոբայ: Ի քառասուն ամին առ Իսահակ զՌեբեկա, եւ 'ի վաթսուն ամին յղացաւ եւ զնաց հարցանել 'ի Մելքիսեղեկայ, եւ նա ասէ. Երկու ազգ է յարգանդի քում, եւ երկու ժողովուրդք: Յեօթանասներորդի երկրորդի ամին Սահակայ՝ հնգետասներորդ հարստութիւն իշխանացաւ յԵգիպտոս Ապիս, եւ աստուած կարծեցաւ. զնա Սարայիս ոմանք ասացին: Ի հարիւր երեսուն եւ եօթն ամին Սահակայ զնաց Յակոբ 'ի Խառան առ Լաբան, եւ ութսուն ամաց ա՛ռ զԼիա դուստրն Լաբանայ: Յաւուրս Յակոբայ Փորոն թագաւոր Եգիպտոսի օրէնս եւ դատաւորս եղ, եւ Ովգեգիս շինեաց զԵլէւսինեա յԱտտիկէ: Յակոբ 'ի հարիւր ամին ել առ Իսահակ հայր իւր, եւ մետասան ամաց էր Ղեւի. զի յութսուն եւ իններորդի ամին ծնաւ զնա: Յեօթնուտասներորդի ամին վաճառեցաւ Յովսէփ, յերեսներորդի ամին եկաց առաջի Փարաւոնի: Ի հարիւրերորդի երեսներորդի ամին էջ Յակոբ յԵգիպտոս. հարիւր քառասուն եւ եօթն ամաց մեռաւ: Ղեւի քառասուն եւ վեց ամաց ծնաւ զԿահաթ: Ոմանք զփորձանքն Յոբայ աստ ասեն: Կահաթ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ: Ամրամ եօթանասուն ամաց ծնաւ զՄովսէս: Յովսէփ հարիւր տասն ամաց վճարեցաւ 'ի վեցերորդի ամին Ամրամայ, եւ աւետեացն Աստուծոյ երկուհարիւր վաթսուն եւ վեց. յորում ամի թագաւորեաց յԵգիպտոս Քեբրոն ամս երեքտասան, եւ յետ նորա Մենափթիս ամս քառասուն եւ երեք. սա առնէր զետասոյզ զողայսն Իսրայելի. յորմէ ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Թերմոթեայ դստեր նորին թագաւորին, որ եղէ կին Քանդարայ թագաւորին Մեմփիս քաղաքի. եւ երեքհարիւրերորդ յիսներորդ ամ էր աւետեացն Աստուծոյ. եւ տասնամեայ լեալ Մովսէս՝ տուաւ յուսումն Յանէսն եւ Յամրէս: Ի քսաներորդի երկրորդի ամին Մովսէսի սկսան զկաւակոխութիւնն որդիքն Իսրայելի. 'ի քսաներորդի ութերորդի ամին՝

Մովսէս իշխան եղեւ, եւ շինեաց զքաղաքն Թերմուպօլիս, անուամբն Թերմոթեայ, զոր եւ Մառիս կոչէին:

[Թ]

Իսկ Եթէովպատոցն՝ որ էին հարկատուք Եգիպտացոցն՝ ապստամբեալ ասպատակեցին եւ գերեցին զԵգիպտոս, եւ զմայրագիրն Մովսէսի. եւ գնացեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ. եւ ա՛ռ զթագուհի նոցա զԹեւքաս, եւ զմայր իւր, եւ դարձաւ յԵգիպտոս. եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ, որ է Թերմոթիս. եւ ՚ի մեռանելն Մառեայ, թաղեաց զնա Մովսէս: Եւ առաքեաց այր նորա զՔսանթիս չարչարիչն Իսրայելի սպանանել զՄովսէս. եւ սպան զնա Մովսէս եւ փախեաւ ՚ի Մադիամ. եւ Յանէսն եւ Յամրէս առին զորդիսն Իսրայելի եւ տարան զնոսա հնգետասան աւուր ճանապարհ ընդ անապատն, եւ շինեցին զդրախտն իւրեանց, զհնգետասան տարի. եւ ՚ի կատարման շինուածին՝ յորդոցն Իսրայելի առին տղայս իննհարիւր եւ ութսուն, եւ զոհեցին դիւաց. եւ հաւաքեցան առ նոսա, եւ եղին պահապանս դրախտին. եւ յայնմհետէ առաւել հնազանդեցան դէք կախարդաց. եւ չորեքհարիւր դէք, ասէն, ոչ հնազանդեցան, մինչեւ կրկին զոհեցին յանուն նոցա, եւ ապա եկեալ առին հաւանութիւն. բայց զշօտ ամիսն անհնազանդեալ գործեն զկամս իւրեանց տանելով զոմանս ՚ի մարդկանէ:

Իսկ Մովսէս ա՛ռ ՚ի կնութիւն զՍեփովրա դուստր Ռագուելի, որդույ Դադանայ, որդույ Յեկսանայ, յորդոց անտի Կենդուրայ, եւ ծնաւ ՚ի նմանէ երկու որդիս: Եւ աստ ասէն լեալ առ Դեւկալիոնի ջրհեղեղ ՚ի Թեսաղիա, եւ առ Փայթթոնի յԵթէովպիա հրայրեայցք, եւ այլ բազում ապականութիւնք ՚ի տեղիս տեղիս, որպէս պատմէ Պղատոն: Իսկ Դեւկալիոն Պառնասացոց կողմանցն թագաւորէր: Մովսէս լեալ եօթանասուն ամաց՝ արժանի եղեւ երեւմանն Աստուծոյ, եւ հրամայէր զնալ յԵգիպտոս եւ հանել զԻսրայել. եւ նա յապաղէր զտասն ամ. եւ եղեալ ութսնամեայ, զնաց յԵգիպտոս, ՚ի չորեքհարիւրերորդի երեսներորդի ամի աւետեացն Աստուծոյ: Յեօթանասներորդէ հինգերորդէ ամէն Աբրահամու՝ երկերիւր եւ հինգ ամ մինչ ՚ի մտանելն Յակոբայ յԵգիպտոս, եւ երկերիւր քսան եւ եօթն ամ կացին յԵգիպտոս. եւ տասն հարուածովք հարեալ Եգիպտացիքն, ստիպով հանին զորդիսն Իսրայելի յերէք հազար ութհարիւր քառասուն եւ երկու ամի ելիցն ՚ի դրախտէն. եւ ելին ՚ի հինգշաբաթոջ, եւ ՚ի կիրակէի անցին ընդ ծովն Կարմիր, եւ աստի կոչեցան Եբրայեցիք. զի Եբրայն անցիկ թարգմանի. եւ առին նոր լեզու պարզեօք, եւ այնու երգէին զօր հնեցութն, եւ էր նման հայրենի լեզուին: Եւ եօթն ամիս շարժեցաւ Եգիպտոս, եւ տապալեցան յոլով շինուածք եւ ելին արտաքս ՚ի շինուածոցն բնակիչքն: Ի նմին ամի պարտեցաւ Ամադէկ ՚ի Յետուայ, եւ ՚ի նոյն ամի՝ յամսեանն երրորդի՝ ել ՚ի լեառն Սինա Մովսէս: Ապովիմոս իմաստասէրն եբրայեցի ասէ, եթէ նախ Մովսէս յԱստուծոյ իմաստնացեալ գիր արար քսան եւ երկու, եւ այնու գրեաց Աստուած զտասն պատգամն, եւ ետ ցՄովսէս, եւ նովիմք գրեաց Մովսէս նախ զԵլից գիրսն, եւ ապա զքսան եւ երկու արարածսն ՚ի Ծննդոց գիրսն եւ զայլ երիս գիրսն. եւ զօրինակ արարածոցս զգալի խորանան էցոյց, որ գործեցաւ եօթն ամիս ընդ եօթնօրեայ արարածոցս: Եւ ունին հինգ գիրք Մովսէսի զրոյցս երէք հազարաց եւ եօթն հարիւր եւ երեսուն ամաց ըստ Եւսեբեայ:

[Ժ]

Աստուածաճանօթն Մովսէս կատարեցաւ հարիւր եւ քսան ամաց, եւ առ զգաւազան նորա Յեսու Նաւեայ ամս քսան եւ եօթն: Ի վեցերորդի ամին Յեսուայ Դանաւոս եղբայր Եզիպտոսի թագաւորի Եզիպտացոց յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց, եւ Լինգոս զերծեալ թագաւորեաց, զոր ասեն ամենայն ուստեք աչացեալ, զի իմաստուն էր: Յուրթուտասն ամին Յեսուայ Փինիկս եւ Կադմոս ՚ի Թեբացոց յԱսորիս եկեալ թագաւորեցին, եւ աշխարհն կոչեցաւ Փինիկէ, եւ տուն Կադմեայ: Եւ սոքա բերին անդ զիմաստութիւն, որպէս Կիկրոփս էած ՚ի Մեմփիս քաղաքէ բնակիչս Աթենայ եւ եղեւ տուն իմաստից, եւ Կեկրոփս արար զիր Յունաց, զոր այլք զԿադմոս ասեն: Կատարեցաւ Յեսու հարիւր եօթն ամաց, եւ դատաւոր եղեւ Գոթոնիէլ ամս քառասուն: Ափրիկանոս երեսուն ամ դնէ ՚ի մէջ Յեսուայ եւ Գոթոնիէլի, եւ Յոյնք յիսուն ամ ասեն Գոթոնիէլի. զի ուր ամ ծառայեցին Քուսայ, զոր սմա հաշուին: Աստ թագաւորեաց Արգիացոցն Պելապոս, ուստի Փիլսոսն էր, բարոյախօսն ամենայն կենդանեաց: Չկնի Գոթոնիէլի ծառայեցին Իսրայելացիքն Եգիպտայ արքային Մովսէս ամս ուրթուտասն, զոր կցեն յամսն Աւոդայ, որ դատեաց զԻսրայել ամս ութսուն: Աստ լցաւ չորեքհազար ամս յԱդամայ:

Յետ Աւոդայ ծառայեցին այլազգեացն ամս քսան. եւ զօրացաւ Սամեգար, եւ սպան ՚ի Փղշտացոց վեցհարիւր այր մաճով արօրոյն: Եւ դատեաց զԻսրայել Բարակ Դեբորայի ամս քառասուն, յարելով զծառայութիւն այլազգեացն: Յաւուրս սորա Յովն կացեալ սպարապետ Աթենացոցն, Յոյնք անուանեցան եւ նոքա: Յաւուրս սորա հարիւր իմաստասէրք տեսին զմի տեսիլ ՚ի միում զիշերի, եօթն արեգակն. զոր Սաբիլէ կին մեկնեաց ՚ի վերայ եօթն դարուց, եւ զվեցերորդն ՚ի Քրիստոս մեկնեաց, որոյ ճառագայթն թագուցանէր զայլսն: Չկնի Բարակայ իշխեցին Մադիանացիքն ամս եօթն, եւ դատեաց զԻսրայել Գեդէոն ամս քառասուն յարելով զայլազգեացն: Դեդադոս հիւսն եւ նկարիչ աստ երեւեցաւ, որ ասեն թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցուցեալ: ԶԳեդէոնի զեօթանասուն որդիսն կոտորեաց Աբիմելէք եւ դատեաց զԻսրայել ամս երեք. եւ զկնի նորա Թովղա ամս քսան եւ երկու: Եւ Հերակլէս ասեն զԲիլոն աւար հարկանէր, սպանանելով զԱնտէոս, զոր երկրածին համարէին: Յայիր Գաղադացի, ամս քսան եւ երկու. յետ սորա ծառայեցին այլազգեացն ամս ութ, ոմանք ուրթուտասն ասեն, եւ յայլս յարեն: Յեփթայի, ամս վեց: Աղեքսանդրոս զԵլենէ առեւանկեաց, եւ տասն ամ պատերազմ վասն այնր, եւ առնուլն զԲիլոն. եւ Հերակլէս խոցեալ ընկեաց զինքն ՚ի հուր: Եսեբոն ամս եօթն: Եւ յետ նորա Ելոն տասն ամս, որ չկայ յեօթանասնիցն, այլ յեփրայեցին. Լաբդոն, ամս ութ: Եւ թագաւորեցին Հոմայեցիքն. առաջին թագաւոր Անիաս անուն: Չկնի Լաբդոնի ծառայեցին Փղշտացոցն ամ քառասուն. եւ ապա յարեաւ Սամփսոն փրկեալ զնոսա, ամս քսան: Ի հինգերորդի ամին սորա եղեն իրքն Հոմայ: Յաւուրս սորա մեռաւ Զեւս եւ թաղեցաւ ՚ի Կրետէ, զոր ասեն կեցեալ ամս ութհարիւր եւ յիսուն, զի յաղագս բազմակեցութեանն Զեւս կոչեցաւ, որ ՚ի ծննդենէ Դիա ասիւր: Եւ Եփրայեցիքն քառասուն ամ ասեն զՍամփսոնի դատաւորութեանն: Յոհանէս յետ Սամփսոնի կարգէ զոմն դատաւոր Եմագոր անուն քառասուն ամաւ: Բայց Ափրիկանոս ասէ թէ զքառասուն ամ ոչ զոյր դատաւոր. եւ էր իսաղաղութիւն: Հեղի ամս քսան ըստ եօթանասնիցն, եւ ըստ Ասորոց՝ քառասուն: Բայց զիտասցես, զի սուրբ առաքեալն չորեքհարիւր եւ յիսուն ամ կարգէ մինչեւ ՚ի Սամուէլ, եւ այն լինի յորժամ զՅեսուայ ամքն եւ զՍամուէլին ոչ առնուս ՚ի համարս. քանզի դատեաց զԻսրայել Սամուէլ ամս քառասուն ըստ եփրայեցոցն, եւ ըստ եօթանասնիցն քսան. զի ՚ի քսաներորդի ամին նորա ինդրեցին թագաւոր. եւ յայնմհետէ կարգին ժամանակք թագաւորացն: Բայց Սաւուդայն՝ որչափ կենդանի էր

Սամուէլ՝ նմա է համարեալ ՚ի կենացն Սաւուդայ, որ չէր հաճոյ Աստուծոյ, բայց յերկու ամացն: Սաւուդ թագաւորեաց ամս քառասուն: Ի տասներորդ ամի թագաւորութեան Սաւուդի ծնաւ Դաւիթ. եւ ՚ի քսաներորդ երրորդն՝ օծաւ, եւ քսանելութ ամաց էր ՚ի սպանանելն զԳողիաթ: Յերեսներորդ ամի ծննդեանն Դաւթի մեռաւ Սամուէլ. եւ զկնի հինգ ամի մահուանն Սամուէլի սպանաւ Սաւուդ, եւ Յովնաթան. եւ թագաւորեաց Դաւիթ ամս քառասուն: Ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ՝ եհան զտապանակն ՚ի տանէն Աբեղդարայ, եւ էր քահանայապետ Աբիաթար, եւ մարգարէք՝ Գաղ եւ Ասափ եւ Նաթան, որ յանդիմանէր զԴաւիթ: Յերեսներորդի ութերորդի ամի թագաւորութեանն իւրոյ՝ ընտրեաց Դաւիթ հարիւր ութսուն եւ ութ անձինս ՚ի Ղեւտացւոց անտի, եւ արար քսան եւ չորս դաս, երկոտասան այր ՚ի դաս մի սաղմոս ասացս, եւ սպասաւորս տապանակին Տեառն:

Եւ կեցեալ ամս եօթանասուն վախճանի, տուեալ զթագն Սողոմոնի, ամս քառասուն. եւ էր երկոտասան ամաց, եւ յառաջին ամին եղև նմա Ռոբոլամ, ՚ի Նամայէ կնոջէ յամանացոյն: Ի չորրորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ շինել զտաճարն, ՚ի չորեքհարիւրերորդի ութսներորդի ամի ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացւոց, ըստ թագաւորութեան գրոց եօթանասնիցն ասացեալ, զոր Եբրայեցին չորեքհարիւր քառասուն ասէ. բայց անսխալ այսպէս է. քառասուն ամ Մովսեսին, քսան եւ եօթն ամ Յեսուայն, որ է վաթսուն եւ եօթն ամ. եւ չորեքարիւր եւ յիսուն ամ դատաւորացն, ծառայութեամբ այլազգեաց՝ որ է հինգհարիւր եւ եօթնետասան. յետ որոյ Շմուէլ եւ Շաւուդ քառասուն ամ, եւ քառասուն ամ Դաւթի, լինի իննսուն եւ եօթն, եւ չորս ամ Սողոմոնին, եւ լինին միանգամայն ամք վեց հարիւր եւ մի: Եւ չափ տաճարին վաթսուն կանգուն, եւ քսան լայն, եւ հարիւր եւ քսան բարձր: Եւ շինեաց քաղաքս եօթն. եւ առ սա եկն դշխոյն հարաւոյ, եւ զովեաց զպաշտօնեայս տաճարին. զքսան եւ չորս դասն զԴաւթի կարգեալն, զոր Սողոմոն երկոտասան դաս յօրինեաց, քսան եւ չորս հազար այր ՚ի դաս մի, եւ զվեց հազար դատաւորսն, եւ չորս հազար քնարերգակսն, եւ զչորս հազար դռնապանսն, եւ զայլ ամենայն յօրինուածսն. եւ զնաց ՚ի նմանէ տիկինն: Եւ մեղաւ Սողոմոն յերեսուն եւ եօթն ամի թագաւորութեանն իւրոյ, եւ մեռաւ յիսուն եւ երկու ամաց: Եւ էին մարգարէք Սաղովկ, եւ Աքիաս եւ Սամեա: Եւ իմաստասէրք՝ Հոմերոս, եւ Սիդոս. եւ քահանայապետ՝ Սաղովկ ՚ի ցեղէն Եղիազարու, կէսք ՚ի Թամարայ ասէն, որպէս կայ ՚ի գիրս թագաւորութեանցն: Կայ ՚ի գիրս Փիւնիկեցւոցն, եթէ տաճարն յԵրուսաղէմ շինեցաւ հարիւր քառասուն եւ երեք ամօք յառաջ քան զշինելն Տիրացւոցն զԿարթէդոն. եւ գրեն առակս ինչ առ միմեանս Սողոմոն եւ Քիրամ, եւ ոչ կարէր Քիրամ լուծանել զՍողոմոնին. բայց գտաւ այր ոմն, Աբգամանոս անուն ՚ի Տիրոս՝ որ կարողանայր առեղծուլ, այլ եւ գրէր առ Սողոմոն, եւ տարակուսէր Սողոմոն:

[ԺԱ]

Ռոբոլամ որդի Սողոմոնի թագաւորեաց զկնի հօրն ամս եօթնետասան ՚ի վերայ Յուդայ եւ Բենիամենի, եւ այլ տասն ցեղքն թագաւորեցուցին յինքեանց զՌոբոլամ՝ որդի Նաբատայ՝ յազգէն Եփրեմի: Յաւուրս սորա՝ ել Սաւսակիմ արքայ Եգիպտացւոց եւ կողոպտեաց զտաճարն Տեառն եւ զնաց: Չկնի Ռոբոլամայ թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երեք. եւ յետ նորա Ասա որդի նորա ամս քառասուն եւ մի: Իսկ զկնի Ռոբոլամու, թագաւորեաց Իսրայելի Նաբատ որդի նորա ամս երկու. եւ յետ նորա Բաաս ամս քսան եւ չորս. յաւուրս սոցա մարգարէք՝ Աքիա, Սամեա, Յովէլ, Ազարիա,

որ եւ Ադդով, եւ Անանիա. Յովան, զոր այլք Չաքարիա ասեն, եւ Եպիփան Իուդ ասէ, զայն զոր սպան առիւծն: Ի քսան եւ իններորդ ամին Ասայ թագաւորեաց ՚ի վերայ Իսրայելի Ելաս ամս երկու. եւ Չամբրի ծառայ նորա սպան զնա, եւ թագաւորեաց աւուրս եօթն. եւ ա՛ն զթագն Ամրի, ամս երկուտասան. որ շինեաց զՍամարիա, որ կոչեցաւ նա Սեբաստիա, եւ արդ ասի Մամուզ. իսկ զկնի Ասայ թագաւորեաց Յովսափատ, ամս քսան եւ ինն. եւ զկնի երկու ամաց թագաւորեաց Իսրայելի Աքաաբ որդի Ամրեայ ամս քսան եւ երեք, որ էառ կին զԵզաբէլ, դուստր Իքթիլ թագաւորի Սիդոնի: Ի քսան եւ ութերորդ ամին Յովսափատու թագաւորեաց Իսրայելի Ոքոզիա ամ մի, եւ զկնի նորա եղբայր նորա Յովրամ ամս երկուտասան, եւ զկնի նորա Յէու ամս քսան եւ ութ, եւ յետ նորա Յովաքազամս եօթն եւ տասն: Եւ թագաւորեաց ՚ի վերայ Յուդայ Յովրամ ամս ութ. եւ զկնի նորա Ոքոզիա ամ մի. յեօթներորդ ամին Յովրամայ վերացաւ Եղիա: Ջկնի Ոքոզիայ՝ մայր նորա Գողոզիա, որ էր դուստր Եզաբէլի, եւ ապա թագաւորեցոյց Յովիդեա քահանայապետ զՅովաս որդի Ոքոզիայ եօթնամեայ ՚ի վերայ Յուդայ, եւ եկեաց Յովիդեա միայն զկնի Մովսեսի, ամս հարիւր եւ երեսուն. որոյ որդին Ազարիա մարգարեանայր, եւ եղեւ քահանայապետ զկնի հօրն, եւ սպան զնա Յովաս յերեսներորդ ամի թագաւորութեան իւրոյ. եւ յերեսուն եւ եօթներորդ ամին մեռաւ Եղիսէ. եւ ՚ի քառասներորդ ամի թագաւորութեան իւրում, սպանաւ Յովաս ՚ի ծառայից իւրոց, եւ թագաւորեաց ՚ի վերայ Յուդայ Ամասիա քսան եւ ինն ամ: Ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Իսրայելի Յովաս ամս վեշտասան. եւ զկնի նորա Րոբովամ՝ ամս քառասուն. ոմանք ասեն թէ սպան զԱմասիա, եւ քակեաց ՚ի պարսպէն Երուսաղէմի չորեքհարիւր գիրկ. եւ թագաւորեաց ՚ի վերայ Յուդայ Ոզիա ամս յիսուն եւ երկու: Ի քսան եւ իններորդ ամին նորա թագաւորէ Իսրայելի Չաքարիա ամս վեց. եւ զկնի նորա Սելլոմ ամս մի, եւ զկնի նորա Մանասեմ ամս տասն: Ի քսաներորդ չորրորդ ամին բորոտեցաւ Ոզիա, եւ լռեաց Եսայի մինչեւ ցմահ նորա քսան եւ ութ ամ, եւ վերստին մարգարեացաւ Եսայի վաթսուն եւ մի ամ. եւ նախ քան զլռութիւնն քսան եւ չորս ամ: Յերեսներորդ չորրորդ ամին Ոզիայ եկն Փուա, եւ ա՛ն ՚ի Մանասեմայ հազար քանքար ոսկւոյ. եւ ՚ի քառասներորդ ամին Ոզիայ, թագաւորէ Իսրայելի Փակէէ միւս ամս տասն: Ի քառասուն եւ ութերորդ ամին Ոզիայ ել Թակղաթփաղսար, եւ գերեաց զմեծ մասն տասն ցեղիցն: Ջկնի Ոզիայ թագաւորէ Յովնաթան որդի նորա ամս տասն: Պորփիրոս պուտեւէ ճանաչիւր, եւ մարգարէք՝ Եսայի, Յունան, Ամովս, Ովսէէ. եւ Կուկր Եգիպտացոց օրէնս դնէր. առ որով զամն խօսեցաւ: Եւ յետ Յովնաթանու թագաւորէ Աքազ ամս վեշտասան. յաւուրս սորա Փակէէ եւ Հռասոն արքայ Դամասկոսի կոտորեցին յԵրուսաղէմ երկուտասան բիւր. եւ Աքազ վարձեաց զԹակղաթփաղսար, եւ եկեալ ա՛ն զԴամասկոս, եւ սպան զՀռասոն արքայ Դամասկոսի, եւ գերեաց զԵդոմ: Յերկրորդ ամին Աքազու Ովսէէ սպան զՓակէէ, եւ թագաւորեաց ամս ինն: Յութերորդ ամին Աքազու ել Սաղմանասար, եւ հարկ եղ Իսրայելի եւ զնաց:

[ԺԲ]

Յետ Աքազու թագաւորէ Եզեկիա. յերրորդ ամին սորա՝ եկն Սաղմանասար, եւ ա՛ն զՍամարիա, եւ գերեաց զտասն ցեղսն, եւ տարաւ ՚ի Բաբելոն, եւ բարձաւ թագաւորութիւնն Իսրայելի, տեւեալ ամս երկերիւր եւ յիսուն. լինին յԱդամայ չորեք հազար երեք հարիւր եւ երեսուն ամք: Րոբովամ, Նաբատ, Բայաս, Ելա, Չամբրի, Ամրի, Աքաաբ, Ոքոզիա, Յովրամ: Յէու՝ որ սպան զՈվրամ եւ զԵզաբէլ մայր իւր, Յովաքազ, Յովազ, Րոբովամ, Չաքարիա, Սելլոմ, Մանասեմ, Փակէէ, Փակէէ, Ովսէէ վերջին: Ի

վեցերորդ ամին Եզեկիայ գերեցաւ Իսրայէլ. որ թագաւորեաց ՚ի վերայ Յուդայ ամս քսան եւ ինն: Յիններորդ ամին սորա Հռովելոս շինեաց զՀռով: Մանասէ ամս յիսուն եւ հինգ, Ամոն՝ ամս եօթն եւ տասն. Ովսիա՝ ամս երեսուն եւ մի. Յովաքագ՝ ամիսս երեք. Եղիակիմ եղբայր նորա ամս մետասան. Յեքոնիա՝ ամիսս երեք. Սեդեկիա՝ ամս մետասան, որ գերեցաւ, եւ աւերեցաւ տաճարն: Ամենայն ժամանակ թագաւորացն Յուդայ են չորեքհարիւր երեսուն եւ երկու ամ. եւ տեսեաց տաճարին շէն չորեքհարիւր քառասուն եւ երկու ամք:

Յութերորդ ամի թագաւորութեան իւրոյ Նաբուգոդոնոսոր տարաւ զՅեքոնիա եւ եղ ՚ի բանտի, երեսուն եւ հինգ ամ. քանզի Նաբուգոդոնոսոր որդի Նաբուպալսարայ՝ թագաւորեաց ամս քառասուն եւ երկու. յութերորդ ամին գերեաց զՅեքոնիա, եւ եղ ՚ի բանտի զամենայն ժամանակս իւր, որ է երեսուն եւ չորս ամ մնացեալն, զոր փոխեալ Իլմարովդակ զաթոռ հօր իւրոյ ամս երեք, եւ յառաջին ամին իւրոյ թագաւորութեանն եհան զՅեքոնիաս ՚ի բանտէ, եւ ուտէր ՚ի սեղան արքայի: Յետ որոյ եղբայր նորա Բաղտասար ամ մի, առ որով Դանիէլ զգիր բառնալոյ թագաւորութեանն Քաղդէացոց ընթերցաւ, զոր էառ Դարեհ արքայն Մարաց, որ թուի թէ Աժդահակն է զի երկանուն ասեմք զնա, որ յերեսներորդ վեցերորդ ամի թագաւորութեանն իւրում ՚ի վերայ Մարաց, ա՛ռ եւ զՔաղդէացոցն ամս երկու. եւ Կիրոս պարսիկ սպան զնա, եւ տիրեաց Մարաց եւ Պարսից եւ Քաղդէացոց եւ Ասորոց ամս երեսուն: Չոր ասեն թէ յառաջին ամին չարչարեաց զՀրեայսն եւ սպան զԱնանիանսն, եւ չարչարեաց զնա Տէր ՚ի տեսլեանն, եւ սպանացաւ նմա. յորմէ զարհուրեալ՝ էտ հրաման արձակել զգերին Հրէից, տալով զսպասս տաճարին ցՄամանասար հանդերձապետ Յուդայ արծաթի եւ ոսկի ամանս հազար չորեքհարիւր քառասուն եւ երեք. բայց ոչ բերաւ յԵրուսաղէմ, մինչեւ ցԶօրաբարելի գալն: Եւ աստ լցաւ եօթանասուն ամացն վճիռն, յԵրեմիայէ ասացեալն, որ հաշուեալ լինի յութետասներորդ ամէն Ովսիայ արքայի, որպէս Եզեկիէլ երեսուն ամ ասէ ՚ի հինգերորդ ամի գերութեանն Յեքոնիայ, յորում սկսաւ մարգարէանալ. քանզի Յովսիա երեսուն եւ մի ամ թագաւորեաց, եւ յութետասներորդ ամին վճիռն հատաւ եօթանասուն ամին, չորեքտասան Ովսիայն, եւ մետասան Յովակիմայն՝ լինի քսան եւ հինգ, եւ հինգ գերութեանն՝ լինի երեսուն. եւ երեսուն եւ չորս ամ Նաբուգոդոնոսորայն, մնացեալն լինի վաթսուն եւ չորս. երեք՝ Իլմարովայն. մի՝ Բաղդասարայն, եւ երկու Դարեհին, լինի եօթանասուն. եւ զի լցեալ էր եօթանասունն, եւ Կիրոս յապաղէր, բարկացաւ նմա Տէր. եւ Դանիէլի ասէր հրեշտակն թէ իշխանն Պարսից կռուի ընդ իս, չտալով թոյլ արձակել զգերին ըստ աղօթից քոց: Եւ յառաջին գալն էին Հրեայքն հինգ բիւրք, որք կանգնեցին սեղան, եւ արկին հիմն տաճարին, եւ նեղեալ ՚ի շրջակայ ազգացն, մնաց անկատար մինչեւ ցԴարեհ արքայ: Յետ Կիրոսի Կամբիսոս որդի նորա ամս ութ. Հրեայք Նաբուգոդոնոսոր զսա կոչեն. Մոզքն երկու եղբարք, ամիսս եօթն. Դարեհ Վշտասպ ամս երեսուն եւ վեց. Քսերքսէս Դարեհի որդի, ամս քսան եւ մի. ՚ի սորա հօրն յերկրորդ ամն Զօրաբարել էլ յԵրուսաղէմ, եւ շինեաց զտաճարն. առ որով լցաւ երկրորդ անգամ եօթանասունն յաւերմանէ տաճարին, երկու ամ աւելի. Նաբուգոդոնոսորի եւ որդւոցն՝ երեսուն եւ երկու, եւ երկու Դարեհ մարին, եւ երեսուն եւ ութ Կիրոսին եւ որդւոյն, լինի եօթանասուն եւ երկու. եւ զԴարեհին երկրորդն եղեալ՝ լինի եօթանասուն եւ չորս. որ լինի աւելիքն չարութեանն եւ ծուլութեանն Հրէից, եւ ոչ Աստուծոյ քաղցրութեանն:

Արտաշէս երկայնաբազուկ քառասուն եւ մի ամ. առ սովաւ Եզրաս եւ Նոյեմի տակառապետ եկին յԵրուսաղէմ եւ շինեցին զպարիսպն: Դարեհ հարճորդի ամս իննետասն. Արտաշէս, ամս քառասուն, առ սովաւ Իսթեր: Արտաշէս Ոքոս, ամս չորս. Դարեհ Արշամայ, ամս վեց. զոր սպան Աղէքսանդր, եւ եկեաց ինքն այլ եւս ամս վեց. յերկրորդ ամէն Դարեհի Վշտասպեայ մինչ ՚ի մահն Աղէքսանդրի՝ լինին ամբ հարիւր եօթանասուն եւ մի: Զկնի որոյ թագաւորեաց Պտղոմէոս յԵգիպտոս, որ Լագոսեանն կոչի, ամս քառասուն. Պտղոմէոս Փիլադելփոս, ամս երեսուն եւ ութ. առ որով թարգմանեցան Հրէից գրեանն: Պտղոմէոս Եւերգետէս, ամս քսան եւ չորս. Պտղոմէոս Փիլուպատոր, ամս քսան եւ մի. Պտղոմէոս Եպիփանէս, ամս քսան եւ երկու. Պտղոմէոս Փիլոպատովր, ամս երեսուն եւ երեք. առ որով Անտիոքոս Եպիփանէս նեղէր զՀրեայսն, որ թագաւորեաց ամս մետասան: Անտիոքոս Եւպատոր ամս երկու. ՚ի սոյն ամի եւ ՚ի Փիլոպատոր Պտղոմէայ եօթնետասներորդն, ամբարձաւ Յուդա Մակաբեայ ամս երեք. եւ լինի ՚ի թագաւորութենէն Զօրաբաբելի մինչեւ ցՅուդա Մակաբեայ՝ ամբ երեքհարիւր երեսուն եւ երկու: Յուդա Մակաբեայ, ամս երեք. Յովնաթանէս, ամս տասն. Շմաւոն, ամս ինն: Հիրկիանոս՝ որ եւ Յոհաննէս, ամս քսան եւ վեց. Արիստաբուլոս, ամ մի. Յաննէոս, որ եւ Աղէքսանդրոս, ամս քսան եւ եօթն. Աղէքսանդրիա կինն, ամս ինն. Հիրկիանոս, ամս երեսուն եւ չորս. Հերովդէս այլազգի, ամս երեսուն եւ եօթն: Յերեսներորդ երկրորդ ամի սորա ծնանի Քրիստոս Աստուած: Լինի ՚ի Յուդայէ Մակաբեայ մինչեւ ՚ի ծնունդն Քրիստոսի հարիւր յիսուն եւ մի ամբ. եւ ՚ի Զօրաբաբելէ մինչեւ ցՀերովդէի յերեսներորդ երկրորդ ամն, յորում Տէրն ծնաւ, չորեքհարիւր ութսուն եւ երեք ամբ: Իսկ ըստ Դանիէլի եօթներորդացն, որ ասէ եօթներորդք եօթն եւ եօթներորդք վաթսուն եւ երկու, որ լինի վաթսուն եւ ինն. եւ եօթներորդ մի, եւ կէս եօթներորդի. զմի եօթներորդն ՚ի վերայ հաշուեալ, եօթանասուն եօթներորդք է, որ լինի չորեքհարիւր իննսուն. եւ զի յայս թուոյս, որ չորեքհարիւր ութսուն եւ երեք է, մոզքն եօթն ամիս կացին թագաւորք, այն մի եօթներորդն եօթն ժամանակ է, այն չէ հաշուած, զայն ՚ի վերայ չորեքհարիւր ութսուն եւ երեքդ դիր, եւ լինի չորեքհարիւր իննսուն. զի այս միաւոր եօթնս՝ ամսօք է, իսկ կէս եօթներորդի՝ երեսուն եւ երեք տարի եւ կէսն է, յորում սպանաւ Օծեալն: Զի այլ եօթներորդքն քառասուն եւ ինն, քառասուն եւ ինն է հաշուած, եւ այս կէս է, զի դեռ չէ ՚ի լիմն. քառասուն եւ ինն այլ կէս է, այսինքն պակաս է. զի սովոր ենք կէս ասել թերոյն: Թէ կամիս ընկալ, թէ ոչ՝ թողութիւն շնորհեա:

[ԺԴ]

Հայրն բազմորդի մեծն Աբրահամ եղև ազգիս մերոյ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ հայր պարծանաց, քանզի վեց որդիս ստացաւ ՚ի Կենդուրայ, զԵմբան, եւ զԵկսան, զՄադան, զՄադիման, զԵսբոկ եւ զՄովիէ: Իսկ երեց որդին Եմբան՝ սպան զԵկսան եւ զՄադան. եւ վասն այսորիկ արձակեաց զնա հայր իւր յարեւելս, յԻսահակայ որդւոյն իւրմէ. յորմէ սերեցան ազգն Պարթեւաց, ուստի քաջն Արշակ. որ զկնի վաթսուն ամաց մահուանն Աղէքսանդրի, ապստամբեալ ՚ի Մակեդոնացւոցն՝ թագաւորեաց յերկրին Քուշանաց, ՚ի Բաւիլ շահաստանի ամս քսան եւ վեց, տիրեալ ամենայն արեւելից եւ Ասորեստանեայց, սպանանելով զԱնտիոքոս, հալածէ ՚ի Բաբելոնէ եւ ՚ի Քաղդէացւոց երկրէն զՄակեդոնացիս: Ասեն թէ սա էր որդի Արշաւրայ, որ էր Մարաց արքայ: Մա էառ կին յազգէ որդւոցն Մովսիսի՝ որ բնակեալ էին ՚ի Տափնաս, եւ խնամացեալ ցեղին Տաճկաց, եւ եկեալ բնակեցաւ ՚ի մէջ Մարաց եւ Պարսից, Հայոց եւ Քուշանաց: Եւ զի ՚ի դիմաց եւ ՚ի թիկանց, յաջմէ եւ ՚ի ձախմէ թելեալ էին չորք ազգք, Պարթեւք կոչեցան,

պարունակեալք 'ի չորից ազգաց, եւ վասն Բահլ քաղաքին արքունական՝ Պահլաւք կոչեցան:

Զսա փոխէ Արշան որդի իւր, որ եւ Արտաշէս ասի, չքնաղ այր եւ անձնեայ եւ գոռ պատերազմող. սմա լինի որդի Արշակ, որ կոչեցան Մեծ. գորմէ ասէն տիրել երրորդ մասին աշխարհիս, Ասիոյ, Լիբիոյ եւ մեծ բաժնի եւրոպայ: Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ Հայոց, եւ սահման հատանէ նմա զՊաղեստին, եւ զԱսորեստան եւ զՄէջերկրեայս, եւ զԹետալիա 'ի ծովէն Պոնտոսի մինչեւ ցուրանօր Կովկաս յարեւմտական ծովն իսառնի, եւ այլ եւս, ասէ, որչափ իմաստութիւն քո եւ զէն հատանէ: Սորա սպանեալ զՄարնեւփիլիկա, որ բռնացեալ ունէր զկողմն Պոնտոս եւ հաստատեալ կազմէ զթագաւորութիւնն տանուտերական ցեղապետութեամբ՝ զորս կոչէ յաստիճանս նոցա անուն պերճանաց. Բագրատունիս զթագադիրսն՝ յանուանէն Բագարատայ, որ 'ի յազգէն Սմպատայ հրէէ, 'ի ցեղէն Յուդայ. եւ Քնթունիս զգեստողն իւր, յազգէն Քանանու. եւ Խորիստոունիս, զթիկնապահն իւր 'ի ցեղէն Հայկայ. եւ Վարաժունիս եւ Արծրունիս եւ Գնունիս եւ Գարեղեանս եւ Ջինականս եւ Հաւունիս, եւ Սիսակեանս՝ զտեարսն Սիւնեաց, եւ Մուրացանս՝ զոր երկրորդ իւր կարգէ, յարենէն Աժդահակայ Մարաց արքայի. եւ Մուրցանն Տէր ասի. եւ Աղուանիս, եւ Առանիս՝ 'ի թոռանցն Հայկայ: ԶԱռան ոմն կողմնապետ արեւելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտիացոց եւ Գարդմանացոց եւ Գարգարացոց եւ Ծօդացոց. եւ Գուշարացիս՝ յորդոցն Շարայի մնացելոց, որոց տայ զլեառն Մթին, զԿանկարս, եւ զկէս մասինն Ջաւախաց: Եւ զկողմնակալն հիւսիսոյ Կովկասու բղեաշի կոչէ Գուգարացոց, եւ կարգէ զնա 'ի վերայ գերոցն Վիրացոց, զոր ած Նաբուգոդոնոսոր 'ի Վիրիոյ յարեւմտից Լիբիացոց, յորոց մասն ինչ առ ծովուն Պոնտոսի բնակեցուցանէ: Եւ Դունին կոչէ զմեծ նահապետն Բասենոյ 'ի զաւակէն Հայկայ. եւ Անգեայս կոչէ զկողմնակալն արեւմտից զՏուրքն հայկացի, զոր հարիւր քսան փղի ոյժ ասէն ունել, եւ զորձաքարս ձեռամբն ձեւել ըստ կամաց, եւ բլրաձեւ վիմաւ կորուսանել բազում նաւս յեզր ծովուն Պոնտոսի: Եւ կուսակալին արեւելից հարաւոյ Շարշանայ, Սասանական կոչէ, զոր կացուցանէ 'ի վերայ Տիգրիս գետոյ. եւ զՄոկացին 'ի նմին զաւառէ, եւ զԿորդուացին, եւ զԱնձեւացին, եւ զԱկայեցին, եւ զՏրպատունին, եւ զԱնձտայն. եւ այլ այսպիսիս. կորովին այն եւ խոհեամամիտ արքայն, դպիրս եւ դռնապանս, եւ բարեյիշեցուցիչս արքայի 'ի բարկութեան ժամո:

[ԺԵ]

Բայց լուաք եւ տեսաք գրով, եթէ որդի էր սա Արշակայ մեծի, եւ ոչ եղբայր: Եւ էր բանն այսպիսի, եթէ թագաւորն Պարսից ինդրեաց զսիւնն կճեայ՝ որ 'ի Մծբին յապարանս արքայութեանն Հայոց. եւ 'ի յառնուլն գտաւ զիր յունարէն, եթէ Ես գրեցի Ազաթանգեղոս. զի մեծն Արշակ ունէր չորս որդիս. զառաջինն թագաւորեցոյց Թետալացոց, եւ զերկրորդն Լիւրիկեցոց, եւ զերրորդն Պարթեւաց. զչորրորդն Հայոց, տալով նմա զսահմանն՝ զոր Հայկն ստացաւ զաւակօքն իւրովք, եւ որդւովք եօթն դստերաց իւրոց:

Արդ կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ, պահէ առ ինքն զԱրշակ զորդի իւր, եւ զԱրտաշէս որդի նորա, եւ զայլ արքայազունսն առաքէ 'ի Հաշտեան զաւառն: Եւ եղև այս 'ի կրօնս ամենայն թագաւորաց, զմի ոք ունել ընդ ինքեանս ժառանգ եւ զայլսն 'ի Հաշտեանս առաքել, զի կայցեն յազատութեան: Թագաւորեալ Վաղարշակայ ամս քսան

եւ երկու, մեռանի՝ ի Մծբին. եւ թագաւորեաց Արշակ որդի նորա ամս քսան եւ երեք: Մա կառոյց գնիզակն յորձաքարի յեզերս ծովուն Պոնտոսի, միւսալ արեամբ թիւնաւոր սողնոց, զոր պաշտեցին Պոնտացիք իբրեւ զգործ աստուծոյ: Ջկնի նորա թագաւորեաց Արտաշէս որդի նորա ամս քսան եւ չորս, յերրորդ ամի Արշականայ Պարսից արքայի. զոր իւր երկրորդ կացոյց եւ տիրեաց բոլոր ցամաքի, եւ անց յայնկոյս ովկիանու, եւ եհաս մինչեւ ի Սպանիա, եւ դարձաւ ձերբակալ արարեալ զԿրիստոս Լիդայ թագաւորն. առանց թուոյ ունելով զօրս. եւ ի յերկրորդ անգամ գնալն յարեւմուտս, մեռանի ի ծովուն: Եւ առնու զթագն Տիգրան որդի նորա, ի քսաներորդ եւ եօթներորդ ամի թագաւորութեանն Արշականայ. սա գերեաց զԵրուսաղէմ, եւ սատակեաց զԿրաստս զօրավարն Հռովմայեցոց, եւ կացուցանէ զՄիրդատ ի Մաժաք. որոյ որդին ապստամբեալ երթայ առ Հռովմայեցիս, առեալ զՊերգեա քաղաք, եւ զՄաժակ ընդարձակեալ կոչէ յանուն Կայսեր. եւ զկնի Բարգափրան վերստին գերէ զԵրուսաղէմ, ածեալ գերի զՀիւրկանոս քահանայապետ՝ բնակեցուցանէ ի Վան: Այլ Տիգրան թագաւորեալ ամս երեսուն եւ երեք, մեռանի. եւ առնու զթագն Արտաւազդ որդի նորա, եւ բնակեցուցանէ զեղբարս եւ զքորս իւր յԱդիովիտ եւ յԱռբերանի, որպէս զայլ Արշակունիս՝ ի Հաշտէնս. ինքն խաղայ ի Միջագետս, եւ Անտոնինոսի լուեալ զայ կոտորէ զօրս նորա, եւ գնա գերեալ տանի յԵգիպտոս՝ պարգեւ Կղէոպատրայ դշխոյի: Եւ առնու զթագն Արշամ որդի Արտաշիսի, եղբայր Տիգրանայ, եւ տայ հարկս ի Միջագետաց Հռովմայեցոցն, յաւուրս Հերովդի, զոր կացոյց Անտոնինոս արքայ Հրէից, եւ յաւուրս Արշաւրայ Պարսից թագաւորի յոյժ տղայոյ, որ չկարէր օգնել Արշամայ. վասն որոյ հնագանդեցաւ կայսեր, եւ գործաւորս տայր Հերովդի, սալակապ առնել զփողոցն Անտիոքայ: Մա թագաւորեալ ամս քսան՝ մեռանի, եւ առնու զթագն որդի նորա Աւագայրն, զոր Ասորիք Աբգար կոչեն: Ի սորա երկրորդ ամին ծնաւ Տէրն, եւ ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագրութեան, եւ բերաւ պատկեր նորա ի Հայս, եւ ամենայն Հայք մտին ընդ հարկաւ. սայապէս եւ Ասորեստան եւ Եգիպտոս եւ ամենայն Մէջերկրայք: Եւ եր յելիցն Ադամայ, ըստ Հրէիցն՝ չորեք հազար, եւ ըստ եօթանասնիցն՝ հինգ հազար հարիւր իննսուն եւ ութ. ըստ Ենանոսի՝ հինգ հազար իննսուն եւ մի. ըստ Ասորւոց՝ հինգ հազար քսան եւ վեց. եւ տարին երկոտասանալուսնեայ:

[ԺԶ]

Եւ Օգոստոս երկրորդ ինքնակալ զկնի Յուլիոսի զոր ասէն Փորահան, որ եւ Կայսր կոչեցաւ, եւ թագաւորեաց զկնի չորս հարիւր վաթսուն եւ երկու ամի խափանելոյ արքայութեանն Հռոմայ. եւ Օգոստոս եւս մեծացաւ ի ծնանել մեծին Աստուծոյ եւ ամենակալ արքային. յորում աւուրս եկին մոզքն երկոտասան հազար հեծելովք, եւ լուեալ եթէ սով է ի Պաղեստին, թողին զօրսն առ Աբգար, եւ ինքեանք որ մեծք էին գնացին երկոտասան իշխանօք, եւ հազար հեծելօք. Մելքոն Պարսիկ, Գասպար Հնդիկ, Բաղտասար Արար. ոսկի, կնդրուկ, զմուռ ընդ ինքեանս ունելով: Չայս գրեաց Լուկիանոս ոմն Փռանկ, որ կայր յԱսորիս, առ կայսրն Օգոստոս. Գիտասցէ ինքնակալութիւնդ քո, զի եկին ի հարաւոյ արեւելից արք մեծաշուքք եւ երկրպագեցին տղայոյ միոյ ծնելոյ ի Պաղեստին, հրաման առեալ ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա: Իսկ ի գնալ մոզուցն ընդ այլ ճանապարհս, յաշխարհն իւրեանց, կոտորեաց Հերովդէս հազար չորեք հարիւր վաթսուն եւ երկու մանկունս յերթալն Տեառն յԵգիպտոս: Եւ Օգոստոս երթայ յԵգիպտոս, եւ սատակէ զԱնտոնինոս զօրավարն իւր, որ ապստամբեալ ի նմանէ թագաւորեաց: Եւ Աբգար շինեաց զՈւռհա,

եւ անդ փոխեաց զաթոռն իւր եւ զղիւանն ՚ի Մծբնայ, որպէս Տիգրան շինեաց զՏիգրանակերտ, որ ասի Ամիր: Յերեսներորդ երրորդ ամի Տեառն մերոյ ծննդեանն, մեռաւ Արշաւիր թագաւորն Պարսից, թողեալ երեք որդի եւ դուստր մի, որք վիճէին ՚ի վերայ թագաւորութեանն, զորս խաղաղացոյց հաշտութեամբ Աբգար անդ գնալով. զաւագ որդին Արտաշէս թագաւորեցուցանէ, եւ զՍուրէն եւ զԿարէն եւ զԿոշմ քոյր նոցա՝ պատուէ Պալիաւ անուամբ, եւ ՚ի դառնալն պատահէ նմա ցաւ ուրկութեան: Եւ եկեալ յԵդեսիա՝ առաքէ առ Մառինոս զօրավարն Հռովմայ զՄարիահա բղէշխն Աղձնեաց, եւ զՇամշագրամ նահապետն Ապահունեաց, եւ զԱնանէ հաւատարիմ իւր, զի մի՛ խորհուրդ նենգութեան կարծեսցեն զերթն նորա յարեւելս: Եւ պատահեալ Մառինեայ յԵլէթրապօլիս, լուան բանս բարիս եւ ելին յԵրուսաղէմ. եւ տեսին զՏէրն զի առնէր նշանս մեծամեծս, եւ հաւատացին ՚ի նա, եւ բերին զտեսեալ նշանսն Աբգարու, եւ դարձան մեծարել զնա եւ բերին զպատկերն, եւ եկաց յՈռհա, մինչ ՚ի Նիկիփոռ թագաւորն Յունաց, որ տարաւ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի ձեռն Աբրահամու մետրապօլտի:

[ԺԷ]

Առ սա եկն Թադէոս առաքեալ եւ մկրտեաց զսա եւ զամենայն քաղաքն, եւ գնացեալ առ Սանատրուկ կատարի ՚ի նմանէ յԱրտագ: Ի նոյն վիճակեալ եւ Բարդողիմէի, վճարի ՚ի նոյն թագաւորէ յԱրաբիոն քաղաքի: Իսկ Աբգարու թագաւորեալ ամս երեսուն եւ ութ կատարի ՚ի Տէր. եւ Սանատրուկ տիրէ Միջագետաց. եւ շինէ զՄծբին, որ ՚ի շարժմանէ փլեալ էր, եւ մեռանի յորսի թագաւորեալ ամս քսան, եւ առնու զթագն Երուանդ որդի կնոջ արշակունւոյ, եւ կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ, զերծեալ մանուկ մի Արտաշէս անուն, զոր առեալ Սմբատայ՝ անկանի ՚ի Պարսս, առ Դարեհ արքայ վերջին: Եւ Երուանդ թողու զՄիջագետս ՚ի Տիտոս, եւ առնէ զնա յ'ոյժ. եւ շինեալ զԵրուանդաքար, անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ, եւ ՚ի նմանէ հեռագոյն շինէ զԲագարան տուն կոոց ՚ի վերայ Ախուրանայ գետոյ, եւ քուրմն դնէ զԵրուագ եղբայր իւր. մինչեւ ՚ի յամն քսան եւ մի, յորում դառնայ Արտաշէս թագաւորեալ. եւ տուեալ ճակատ ՚ի ՄարացեւՄարգ յԱխուրեան գետ, փախչի Երուանդ ՚ի քարն եւ սատակի չարակնն այն: Եւ առնու զթագն Արտաշէս. սա շինէ զԱրտաշատ ՚ի տեղուոջ ուր խառնի Մեծամօր յԵրասիս: Սա գերի ածեալ յամենայն կողմանց՝ չեթող տեղի անգործ ՚ի Հայս. եւ չորեքանկիւնի քարիւ նշանակէ զկոպարսն. եւ կարգէ աւուրս շաբաթուց եւ ամսոց եւ բոլորման տարեաց, եւ կազմուած նաւագնացութեան, եւ արուեստ ձկնորսաց: Թագաւորեալ սորա ամս քառասուն եւ մի մեռանի. որում մահակից լինին ոչ սակաւ ծառայք: Եւ առնու զթագն Արտաւագ որդի նորա, որ զկնի աւուրց ինչ ՚ի յորսս գետամոյն լինի, առ կամրջովն Մեծամօրի, լլկեալ յայսոց: Եւ առնու զթագն եղբայր նորա Տիրան, յերրորդ ամի առաջնոյ Պերոզի, ամս քսան եւ մի. որում ձիք ասեն երկու երագունս զոր թելաւորս կոչէին: Սա մեռանի ՚ի ճանապարհին Եկեղեաց, պատահեալ ձեան սաստկագունի. եւ առնու զթագն Տիգրան վերջին եղբայր նորա ամս քառասուն եւ երկու: Զնա փոխէ Վաղարշ որդի նորա, յամի երեսներորդի երկրորդի հոմանուանն իւրոյ Պարսից արքայի: Սա շինէ զՎաղարշաւան ՚ի գաւառին Բասենոյ, ուր ծնաւ զնա մայրն իւր, եւ պատեաց զՎարդգէս աւանն ՚ի վերայ Քասաղ գետոյ. եւ Վարդգէս քեռայրն Երուանդայ հայկազնոյ սակաւակեացն շինեալ էր զնա. զոր սա պատեալ պարսպով Վաղարշապատ կոչեաց, որ եւ Նոր-քաղաք:

Յաւուրս սորա միաբանեալ ազգն Բուդարաց եւ Խազրաց, թագաւոր ունելով զՎնասեպոմն Սուրհապ գան առ Կուր գետով անհուն բանակօք, զոր տարեալ Վաղարշու կոտորմամբ անցուցանէ ընդ դուռն Չորայ. սակայն ՚ի նետէ հարեալ յանկարծս մեռանի, թագաւորեալ ամս քսան: Եւ առնու զթագն Խոսրով որդի նորա, յերկրորդում ամի Արտեւանայ Պարսից արքայի. եւ նոյնժամայն անցանէ ընդ լեառն Կովկաս յառնուլ զվրէժ հօրն, եւ մաշէ սրով զերկոսին ազգսն. եւ ՚ի լաւացն պատանդս առեալ մի ՚ի հարիւրոցն, դառնայ այսբէն, զիւրոյ տէրութեանն նշան արձան հաստատեալ հելլենացի գրով: Յորում ժամանակի սպան զԱրտաւան Արտաշիր Ստահրացի. եւ լուեալ Խոսրովու ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր, եւ առեալ զգօրս Եգիպտոսի, եւ առ անապատօք մինչեւ ցծովեզրն Պոնտոսի, աւերէ զաշխարհն Պարսից ամս տասն, փախուցեալ զԱրտաշիր ՚ի Հնդիկս. մինչեւ եկն Անակ, եւ նենգութեամբ սպան զքաջն, եւ մեռաւ ինքն եւ իւրքն: Եւ զորդին Անակայ զԳրիգոր առեալ Բունդարայ պարսկի որ եկեալ էր զկնի Անակայ, եւ գնացեալ ՚ի Կեսարիա. եւ առեալ կին զքոյրն Եւթաղեայ զՍոփի. եւ զկնի ամի միոյ դարձաւ գնալ ՚ի Պարսս, եւ հասեալ աներոյն արգելու ՚ի Վաղարշապատ քաղաքի. ուր մտանէ Սոփի ստնտու մանկանն Գրիգորի, ցնա տուեալ այր իւր, ՚ի գրկացն Ոգոհեայ առեալ ՚ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ: Եւ տարեալ ՚ի Կեսարիա ընծայեն Քրիստոսի. եւ վարժեալ անդ յոյն եւ ասորի գրով, եւ եղեալ երկոտասան ամաց, Դաւիթ ոմն ամուսնացուցանէ զնա ՚ի դուստր իւր Մարիամ. եւ եղեալ երկուց որդուց, մեկնին ՚ի միմեանց. Մարիամ ՚ի կանանց վասն գնաց երէց որդուվն, եւ կրտսերն գնաց զկնի ճգնաւորի ումեմն Նիկոմաքեայ. եւ դարձոյց մայրն զՎրթանէս առ դայեակն իւր, որ եւ սնուցեալ ամուսնացոյց եւ զնա եւ ս: Իսկ զկնի մահուանն Խոսրովու՝ կոտորէ Արտաշիր զյիշատակս նորա. բայց զմանուկ մի փոքրիկ Տրդատ անուն, Արտաւազդ անուն ոմն նախարար յազգէ Մանդակունի, փախուցանէ ՚ի Յոյսս, որ եւ սնաւ առ Լիկիանեայ իշխանի:

Եւ լուեալ Գրիգորի զամենայն պատահումն ինքեանց, գնաց առ Տրդատ, եւ ծառայէր զնա: Իսկ միւս եղբայր Գրիգորի Սուրէն անուն, տարեալ եղեւ առ Արտաշիր, եւ սնաւ առ հօրաքեռն որ էր կին որդւոյն Ջուանշիրի, արքային Հեփթաղաց. որ եւ զարգացեալ չոգաւ յերկիրն Ճենաց եւ Դարբանդայ, եւ թագաւորեաց ՚ի վերայ նոցա: Բայց ոմանք ասեն Ջգօն ոմն անուն կոչեցեալ Յակոբ, թէ նա է եղբայր Գրիգորի. բայց Յակոբ որդի է քեռն Անակայ Խոսրովուհեայ, որ էր կին Տիրանայ արքայի, զոր սպան թագաւորն Լիւնաց Առիդէս. եւ Յակոբայ առեալ զքոյր իւր զՍակդէն որդուվն իւրով Հրաչէի, զկնի մահուան ծնողացն՝ գնաց յերկիրն Գթաց. ուր եւ թագաւորեաց Հրաչէն ՚ի բարի պատահմանէ. եւ նա է որ եկն ՚ի վերայ արքային Յունաց, եւ խնդրէր ախոյեան իւր զկայսրն Դիոկղետիանոս. եւ յերկնչելն նորա ՚ի Հրաչէէ՝ խնդրեցաւ այլ ոք զօրաւոր. եւ գտեալ եղեւ Տրդատ, եւ կազմեալ կայսերակերպ՝ ըմբոնէր զՀրաչէ եւ ածէր առ կայսր: Վասն որոյ եւ թագաւորեալ գայ ՚ի Հայս, Գրիգորի. որ եւ յառաջին ամին իւրոյ չարչարէ՝ զտուրքն Աստուծոյ, եւ արկանէ ՚ի վիրապն: Եւ ՚ի հնգետասաներորդ ամին Տրդատայ գան սուրբ տիկնայքն ՚ի Հայս եւ մարտիրոսանան. եւ պատահարքն հասին ՚ի վերայ թագաւորին. եւ ելեալ սուրբն Գրիգոր զհինգ օր անսուաղ պահելով, եւ այլ եւ ս վաթսուն օր վարդապետելով, ազատէ զաշխարհս ՚ի դիւապաշտութենէ. եւ յեօթնէ տասներորդ ամին Տրդատայ քահանայանայ ՚ի Տէր:

Յուլիոս կայսր թագաւորեալ ամս չորս եւ ամիսս եօթն, սպանանէ զնա ներքինի մի ծածուկ, եւ այրեաց հրով. 'ի սմանէ կոչեցան Կայսերք՝ Հռոմայ թագաւորքն, վասն յաջողելոյն սմա: Աւգոստոս՝ ամս յիսուն եւ վեց. սա 'ի սպանանելն զԱնտոնինոս եւ յառնովն զԵգիպտոս եւ զԱտրիս, Սեբաստոս կոչեցաւ, եւ Հոկտաւիոս՝ որ է յաղթող եւ բախտամեծ: Ի սորա քառասներորդ ամին ծնաւ Տէրն: Տիբերիոս, ամս քսան եւ երկու: Ի սորա հնգետասաներորդ ամին տէրն մեր Աստուածն Յիսուս մկրտեցաւ: Գայիոս ամս չորս. սա աստուած ետ անուանել զինքն, եւ սպան զնա Աստուած: Կոզդիոս, ամս երեքտասան եւ ամիսս ինն: Սորա կինն եւ որդիքն հաւատացին 'ի Քրիստոս, եւ գտին զհաչն Տեառն: Ներոն, ամս երեքտասան. սա կոտորեաց գտորք առաքեալսն: Վեսպիանոս, ամս տասն: Տիտոս որդի նորա, ամս երկու. որ առ զԵրուսաղէմ: Դոմետիանոս, եղբայր Տիտոսի, ամս հնգետասան. սա առաքեաց զՅովհաննէս 'ի Պատմոս: Ներուաս, ամ մի. սա դարձոյց զՅովհաննէս յԱսիա: Տրայիանոս, ամս իննեւ տասն, որ սպան զԻզնատիոս: Ադրիանոս, ամս քսան եւ մի. սա շինեաց զԵրուսաղէմ 'ի ձեռն Ակիւղասայ աներոյ իւրոյ: Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւն Բարեպաշտ՝ որդուովքն, ամս քսան եւ երկու: Աւրելիոս, ամս իննեւտասն. Կոմիդոս, ամս երեքտասան. Պերտինաքս, ամս վեց. Սեւերոս, ամս ութեւտասն. Անտոնինոս որդի Սեւերեայ, ամս չորս. Աղեքսանդրոս Մամէի, ամս երեքտասան. Մաքսիմոս, ամս երեք. Գորդիանոս՝ ամս վեց. զսմանէ ասէն հաւատացեալ 'ի Տէր: Փիլիպպոս ամս վեց. սա աջակցեաց մերում Խոսրովու. Դեկոս, ամ մի. Գալլոս, ամս երիս. Վազերիոս, ամս եօթնեւտասն. Կոզդէոս, ամ մի: Աւրելիոս, ամս եօթն: Տակիտոս, ամիսս վեց. սա վրէժխնդիր եղեւ մահուանն Խոսրովու եւ սպանաւ: Պոռֆաս, ամս վեց. ոմանք ասէն թէ սա պսակեաց զՏրդատ: Կարոս հանդերձ որդուովքն, ամս երկու: Դիոկղետիանոս, եւ Մաքսիմիանոս, ամս իննեւտասն:

Յերրորդ ամին սորա պսակեալ Տրդատայ գայ 'ի Հայս, եւ գտանէ զիշխանն Օտա զի պահեալ էր զգանձն արքունի, եւ զքոյր նորա Խոսրովիդուխտ յամուրն յԱնի. եւ յովովք 'ի նախարարացն Հայոց ընդ առաջ գային նմա: Ի հնգետասաներորդ ամին Տրդատայ՝ սուրբն Գրիգոր նստի յաթոռ սրբոյն Թաղէոսի առաքելոյն, 'ի Ղեւոնդէ 'ի Կեսարիոյ պատրիարզէն ձեռնադրեալ. բերելով ընդ իւր զնշխարս սուրբ Կարապետին Յովաննու, զոր Յովհաննէս 'ի դառնալն 'ի Պատմայ եւ 'ի զնալ յԵրուսաղէմ՝ ած յԵփեսոս, եւ յաւուրս Դեկոսի Փերմելիանոս եբեր 'ի Կեսարիա. եւ հայցեաց սուրբն Գրիգոր, եւ ոչ կամէր տալ, մինչեւ ա՛ռ հրաման 'ի հրեշտակէն սրբոյ սուրբն Ղեւոնդ, որ եւ ետ ապա երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա հայրապետն Հռոմայ, եւ զնշխարս սրբոյն Աթանազիւնեայ, զոր ասէն թէ եղբայր էր Մարիամու ամուսնոյ սրբոյն Գրիգորի: Զոր բերեալ սերմանէր յերկիրս Հայոց, զհասարակն յԱշտիշատ պահելով, 'ի տեղիս Դեմետրեայ եւ Գիսանեայ, երկուց եղբարց Հնդկաց իշխանաց, որք եկին առ Վաղարշակ արքայ, եւ զկնի հնգետասան ամի սպանան 'ի տեղուջն, որոց որդիքն ժառանգեցին զՏարօն. եւ էին զիսաւորք եւ դեռ եւս կերպարանին ոմանք՝ ծամս պահելով. զոր մի՛ որ տացէ թոյլ: Յորում ատուրս հաւատաց 'ի Տէր մեծն Կոստանդիանոս սպանիացի, որ թագաւորեաց ամս երեսուն եւ չորս, կալեալ զամենայն Եւրոպիա եւ զՄիջերկրայս, եւ զՄիջագետս. զոր լուեալ մերն Տրդատ եւ սուրբն Գրիգոր, չոգան առ նա եօթանասուն հազար հեծելօք, եւ եղեն դաշնագիրք միմեանց. եւ լուաւ սուրբն Կոստանդիանոս 'ի բերանոյն Գրիգորի զսնօրէնութիւնն Քրիստոսի ոճով. եւ հրաման եհան ընդ ամենայն Իտալիա՝ նաւակատիս առնել զալստեան նոցա զենւեօք, ասելով՝ եթէ լիցուք ինդակից երկնային զօրացն: Եւ հրմայեաց սուրբն Գրիգոր աղ մատուցանել, օրինեաց եւ առաքեաց յաշխարհն

ամենայն, զի առանց այնր մի՛ զենցեն անասուն. զի յինչ որ ոչ խառնի, ասէ, քահանայական օրհնութիւնն՝ ՚ի կռապաշտութիւն հասանէ. զոր Հրեայքն լուանային եւ ապա ուտէին. եւ ասէ սուրբն Գրիգոր, եթէ որդիք են նոցա՝ որ զթլփատութիւնն յանթլփատութիւն դարձուցանէին: Եղին երկու արքայքն եւ երկու պապքն՝ Գրիգոր եւ Սեդրեստրոս, դաշն ուխտի կեալ եւ մեռանել ՚ի միմեանց վերայ. զգիրս ուխտին, ասեն, ՚ի գրելն թացին յահաւոր խորհուրդն: Եւ ՚ի դառնալն յարեւմտից մեծացն այնոցիկ, լցեալ էին հիւսիսականքն զկողմն Ադուանից, ՚ի բանս Շապիոյ Պարսից արքայի. եւ նահապետ ազգին Սղկունեաց ապստամբեալ՝ մտեալ էր յամուրն Ուղկան, զոր երթեալ Մամգունայ ճենացոյ՝ կտրեալ զգլուխն առաքէր առ Տրդատ, եւ նա տայր նմա զգաւառն, եւ յանուն իւր կոչէր տուն Մամիկոնեան: Եւ հսկայն Տրդատես հարկանէր զհիւսիսականսն ՚ի Գարգարացոց գաւառին, ուր եւ սպան իսկ զԲասլացն արքայ զճոպանաճիգ հսկայն:

Յերեսներորդ ամի լուսաւորչութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ ՚ի Կեսարիա ձեռնագրել, վասն գառաջին ձեռնագրութիւնն անդ առնելոյ Թադէոսի առաքելոյն եւ արկանելոյն հիմունս եկեղեցոյ. եւ անուն եպիսկոպոսապետին՝ զոր արար անդ սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչիւր:

Եւ յորժամ եղեւ Նիկիոյ սինհոդոսն, եւ Արիստակէս դառնայր կանոնական սահմանաւ, սուրբ պատրիարզն Գրիգոր երթեալ ՚ի Տարօն, առնէր չորս ամիս առ Անտոն եւ Կրօնիդէս: Որք եւ ասացին ցնա, եթէ ծածկեա զքեզ յառաւել փառացոյ՝ մօտ ՚ի ձերութիւնդ, որպէս զմեծն Մովսէս, զի մի՛ պաշտեսցեն զոսկերս քո նորադարձ ժողովուրդդ, եւ կամ գայթակղեսցին ՚ի մեռանելն քո տկարամիտ կարծեօք: Չոր եւ արար իսկ. զի գնաց անտի յայրն Մանեայ. եւ կատարեցաւ ՚ի լեռնն, յեցեալ ՚ի գաւազանն. զոր գտեալ հովուաց թաղեցին, ոչ գիտելով զովն. զոր յետոյ իմացեալ մեծարեցաւ տեղին: Ասեն թէ յորժամ թագաւորն Ջենոն խնդրէր զնշխարն, ՚ի տեպեան յայտնեցաւ ճգնաւորի ումեմն, զի տարցէ զնա գաղտ եւ ծածկեսցէ ՚ի ներքոյ հիման եկեղեցոյն Թորդանայ, զոր ես, ասէ, շինեցի. եւ կայ անդէն անյայտ. եւ զոր ետուն կայսերն՝ ասեն, Արշարունեաց եպիսկոպոս էր Գրիգորիս անուն, եւ յանուն նորա մեծարեցաւ, ուր եւ գտանի մասն ինչ. այլ եւ նա այր առաքինի էր յոյժ եւ բարի:

[ԺԹ]

Իսկ սուրբն Կոստանդիանոս երարձ զՄաքսիմիանոս ամպարիշտն եւ զՄաքսիմոս, եւ զՄաքսիմոս, եւ զԼիկիանոս անօրէն. որ եհան հարիւրապետ զոմն իւրով զնդան ՚ի գաւառն Կապոտակէք, եւ ՚ի թեմն Թելլախունէք եւ Անատոլիկեայք, եւ Խարսանէք եւ Արամենակք եւ Դազիմոն, չարչարել զորս գտցէ քրիստոնեայս: Յորմէ խրտուցեալք փախեան ՚ի կողմանս Մերաստիոյ, ոմանք ՚ի Մելեսիտն, որ է ամրոց ՚ի լեռնակողմն, եւ այլք ՚ի Տախալասոն լեռնն. որք բռնութեամբ արտաքս ածեալ կոտորեցան յԵկեղեցաձորն կոչեցեալ, որ եւ պատուի մինչեւ ցայսօր: Իսկ սուրբ քառասունքն երթեալ թաքեան յայրին՝ որ կայ ՚ի վերայ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քաջ Վահանայ. ուր կառուցին իսաչ, եւ գրեցին զիրաքանչիւր անուանս ՚ի քարին. զոր գիտացեալ պատմեցին Լիկիանեայ. եւ հրամանաւ նորա եկեալ հանին յայրէ անտի, ՚ի հնգետասան արեգ ամսոյ. զոր Ուխթանէս տօն կարգեաց՝ որ է սկիզբն հանդիսի նոցա. եւ կատարումն ՚ի մարտի ինն:

Յետ այսորիկ խաղաղութիւն խնդրեաց Շապուհ արքայ Պարսից 'ի Կոստանդեայ, նեղեալ 'ի Տրդատայ արքայէն. եւ նորա հաւանեալ խնդրեաց 'ի նմանէ զթագն Դաւթի մարգարէին, զոր ա՛ռ Յովաբ յորդուցն Ամմոնայ, 'ի տանէ Մեղքոմայ, եւ եղ 'ի գլուխն թագաւորին Դաւթի. որ անկաւ 'ի Քաղդէացիսն, եւ ապա 'ի Կիւրոս, եւ 'ի Դարեհէ յԱղեքսանդրոս, որով պսակեցան Մակեդոնացիք մինչեւ ցԱնտիոքոս՝ զոր սպան պարթեւն Արշակ եւ էառ 'ի նմանէ. եւ եկն մինչեւ ցՇապուհ. յորմէ խնդրեաց կայսրն, զի օրինակաւն արասցէ իւր թագ, եւ զնորայն առ նա դարձուցէ: Եւ յորժամ ետ կազմել, եղ զերկոսին 'ի վերայ սեղանոյ, եւ ասաց ծառայիցն Շապուհոյ առնուլ զիւրեանցն. եւ նոցա աչք կալեալ՝ առին զնորն եւ գնացին, քանզի խնդրեաց յԱստուծոյ Կոստանդիանոս զի առ նա մնասցէ սրբոյն Դաւթի յիշատակն:

[Ի]

Իսկ սուրբն Տրդատ կոչեցեալն յաւագանէն Յովհաննէս, յաղագս պարկեշտ կենացն եւ չարատեաց բարուցն՝ դեղակուր եղեալ մեռանի յանաստուածից ոմանց, թագաւորեալ ամս յիսուն եւ վեց: Իսկ զսուրբն Ըորստակէս սպան Արքեղայոս իշխանն չորրորդ Հայոց 'ի ճանապարհին Ծովագ, յաղագս միշտ յանդիմանելոյն զնա՝ 'ի գործս իւր չարս: Եւ յաջորդէ զաթոռն Վրթանէս եղբայր նորա, մինչ կենդանին էր Տրդատ 'ի յիսներորդ չորրորդ ամի արքայութեան նորա. եւ զԸրստակէս տարեալ եղին 'ի Թորդան առ հօրն:

Իսկ զկնի մահուանն Տրդատայ՝ երկրորդ Մանատրուկ արշակունին, զոր կացուցեալ էր 'ի Փայտակարան, թագ եղեալ՝ խորհէր տիրել բոլոր Հայոց. որ եւ սպանանել ետ զմանուկն Գրիգորիս բարբարոս ազգին 'ի Վատնեան դաշտին, զորոյ զմարմինն բերեալ յԱմարաս հանգուցին: Լուեալ զայս մեծ իշխանն Աղձնեաց Բակուր, ձեռն ետ յՈրմիզդ Պարսից արքայ, եւ խորհէր զՄանատրկոյն. զոր իմացեալ նախարարքն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս, եւ առաքեցին երկուս 'ի գլխաւորացն առ Կոստանդին որդի մեծին Կոստանդիանոսի, որ զկնի մահուանն հօրն թագաւորեաց ամս քսան եւ չորս, զի օգնեցէ Հայոց, եւ թագ դիցեն Խոսրովու որդւոյն Տրդատայ: Զոր ընկալեալ զխնդիրն առաքէ զԱնտիոքոս զօրագլուխն. եւ թագ եղեալ Խոսրովու, խաղան 'ի վերայ Մանատրկոյ. որ իբրեւ լուաւ, փախեաւ 'ի Պարսս. եւ յաւարի առեալ զաշխարհն զօրացն մերոց՝ դարձան: Եւ Մանաճիր Ռշտունի գնացեալ 'ի վերայ Բակուրայ՝ սատակէ զնա, եւ առեալ զերի բագում 'ի կողմանցն Մծբնայ՝ դառնայ. ընդ որս եւ զեօթն սարկաւագունս սրբոյն Յակոբայ. եւ զհետ եկեալ սրբոյն եւ խնդրեալ. ոչ տայր, եւ նորա կամեցեալ զնալ առ արքայ, զետընկէց առնէր. եւ սրբոյն իմացեալ դառնայր 'ի տեղի իւր՝ անիծանելով զՄանաճիր, եւ զաշխարհն իւր. յորմէ չարաչար մահուամբ սատակի, եւ զաւառն անպտուղ լինի՝ մինչեւ որդի Մանաճիրի արժանաւոր ապաշխարութիւն ցուցեալ, եւ բերեալ հող զկնի մահուանն 'ի գերեզմանէ սրբոյն, օրհնի երկիրն հաշտութեամբն Աստուծոյ, բարեխօսութեամբ սրբոյն Յակոբայ:

[ԻԱ]

Իսկ մեծն Կոստանդիանոս ունէր եւ եղբայր մի Դադմատիոս կոչեցեալ, որոյ էին երկու որդիք, Գադոս եւ Յուլիանոս. եւ երեք որդիս, աւագն Կոստանդ՝ անուամբ իւրոյ հօրն, որում ետ զԿոստանդնուպօլիս 'ի կտակն՝ զոր գրեաց. եւ միջինն իւր անուամբն, որում ետ զԱնտիոք արթոռ, եւ կրտսերոյն զՀռոմ. եւ խաբեաց միջնեկն զկտակապահն, եւ առ զԿոստանդնուպօլիս, խոստովանելով պահել զաղանդն նորա, զի արիոսեան էր. եւ

կալաւ աւագն զԱնտիոք, եւ չոգաւ 'ի վերայ կրտսերոյն վասն Հռոմայ. եւ ել ընդդէմ նորա հօրեղբայրն Դաղմատիոս, եւ սպան զնա: Եւ կրտսերն Կոստաս սպան զնա վասն եղբօրն, եւ որդիքն փախեան առ միջինն. եւ 'ի վեցերորդ ամին Կոստասայ բռնացաւ Մագնիտիս, յափշտակեաց զԻտալիա եւ զԱփրիկէ, եւ թագ եղ 'ի Սերմի. եւ յայն ապաստան չարք ոմանք, սպանին զԿոստաս եւ զեղբօրորդի նորա: Եւ լուեալ միջին եղբայրն գայ սպանանէ զՄագնիտ եւ լինի ինքնակալ, եւ կարգէ զԳաղոս կեսար յԱնտաք, եւ զՅուլիանոս յուսումն առաքէ յԱթէնս. եւ զկնի այնորիկ ապաստամբէ Գաղոս եւ մեռանի, եւ Յուլիանոս ապրի աղաչանօք թագուիւոյն. զոր կեսար կարգէ յարեւմտեայ կողմանն, տալով նմա զքոյր իւր զԱլինէ 'ի կնութիւն, եւ ինքն չոգաւ յԱնտիոք: Իսկ Յուլիանոս յաղթեալ բարբարոսացն, եւ թագ եղեալ գայ 'ի Կոստանդնուպօլիս. եւ ելանէ ընդդէմ նորա Կոստանդիոս, առեալ մկրտութիւն 'ի Զոյիոսէ, եւ մեռանի 'ի մէջ Կիլիկիոյ եւ Սորիայ. ասէն զղջացաւ մօտ 'ի վախճանն, եւ ուղղափառ հաւատով կատարեցաւ 'ի տէր: Զկնի նորա Յուլիանոս, ամս երկու եւ ամիսս ութ. եւ յետ նորա Յուրիանոս, ամ մի. զոր գովէ Սոկրատ, բայց ոմանք ասէն զնա աղանդովն Արիոսի, եւ վրիժառու ուղղափառաց. վասն որոյ եւ խեղդեցան ասէն: Յետ որոյ Վաղէս, ամս չորեքտասան, որ էր արիանոս: Եւ զկնի քառասուն աւուր, եղբայր նորա Վաղէնտիանոս կցորդէ նմա ամս երկոտասան, եւ մեռանի վասն ուժգին բարբառելոյն խրոխտանք 'ի վերայ բարբարոսացն: Իսկ Վաղէս՝ որ աքսորեաց զմերն Ներսէս, շանթահար եղեալ սատակի յԱդրիանուպօլիս հրաւիրանաւ զեհենոյն:

[ԻԲ]

Իսկ մերն Խոսրով յերկրորդ ամի Որմզդի Պարսից արքային, եւ յուրերորդ ամին Կոստանդեայ թագաւորեալ 'ի վերայ հայրենեանցն ամս ինն, շինէ զԴուրին, որ ասի բլուր. անդ ածելով զբնակիչսն Արտաշատու, իւրեանց իսկ կամօք, վասն հրախառն օդոյն. դնէ զարքունիսն իւր անդ: Յաւուրս սորա միաբանեալ կողմն ծմակային, բիրք երեք, ասպատակեցին յԱյրարտ. ուր եւ առաքինացաւ Վահան ամատունի, սատակելով զգօրագլուխն նոցա, զվառեալն կճաակուտ թաղեաւ, եւ յաղթահարեալ զօրքն դարձան 'ի փախուստ: Բայց զօրավարն Վաչէ անկեալ 'ի պատերազմին, յիշել հրամայեաց զանուն նորա 'ի պատարագին սուրբն Վրթանէս: Կատարեալ զկեանս Խոսրովու, թաղի առ հօր իւրում 'ի Կամախ: Եւ ինքնակալն Կոստանդիոս յեօթնէտասաներորդ ամին իւրում դնէ թագ Տիրանայ որդւոյ նորա, եւ առաքէ 'ի Հայս. որ ոչ զնայր ընդ շաւիղս հարց իւրոց բարեգործաց: Ի յերրորդ ամին սորա փոխի յաշխարհէս սուրբ պատրիարկն Վրթանէս, եւ դնի 'ի Թորդան. եւ առնու զաթոռն սուրբն Յուսիկ որդի նորա, ամս վեց. որ եւ սաստիկ յանդիմանէր զթագաւորն վասն զազիր գործոց նորա: Յորում աւուր բերաւ պատկերն Յուլիանոսի առ Տիրան. եւ նա դնել կամեցաւ յեկեղեցւոջն 'ի գաւառին Ծոփաց. եւ սուրբն Յուսիկ կոխեաց եւ մանրեաց զնա առ սեմօքն: Եւ սրտառեալ թագաւորն, հրամայեաց հարկանել զնա ջալոտեօք մինչեւ յաւանդումն հոգւոյն. զոր տարեալ եղին առ հօր իւրում: Եւ եկեալ սուրբն Դանիէլ ծերունի քորեպիսկոպոս, որ լեալ էր աշակերտ սրբոյն Գրիգորի, անէծ զՏիրան. ընդ որ զչարեալ թագաւորն, խեղդամահ ետ առնել զնա, որ թաղեցաւ յիւր մենարանին, որ ասի Հացեաց դրախտ. եւ առնու զաթոռն Փառնէրսէս յԱշտիշատու, այր լաւ, ամս չորս: Յորում ժամանակի եկն զօրավարն Պարսից մեծ ամբոխիւ, եւ խաբկանօք առ ինքն կոչեաց զՏիրան, եւ խաւարեցոյց զաչս նորա 'ի գաւառին Ապահունեաց 'ի գեօղն՝ որ Արծուղն կոչեցաւ 'ի պատահմանէ գործոյն: Եւ ետ

իրաւունս Տիրան Աստուծոյ, ասելով. Ձի գերկու լուսաւորս խաւարեցուցի, վասն այնորիկ խաւարեցան երկու աչքս իմ:

Զսուրբն Յուսիկ միանգամ ասեն զիտացեալ զկին իւր, եւ յայնմանէ ծնեալ նորա երկու որդիս երկուորեակս, այսինքն ՚ի միում յարգանդի, Պապ եւ Աթանագինէս. որք ՚ի սարկաւագութիւն կոչեցեալք, եւ նոցա աղտեղութեան տուեալ զանձինս, շանթակեզք եղեն ՚ի միում աւուր. մնացեալ որդի մի Աթանագինէի Ներսէս անուն, ետուն յուսումն ՚ի Կեսարիա: Իսկ ՚ի թագաւորելն Արշակայ, որդւոյն Տիրանայ, եկն առ նա, եւ կայր նմա ՚ի հպատակութեան, կրելով զունսերն պողովատիկ առաջի նորա. զոր յով թախանձանօք ածեալ ՚ի հաւանութիւն, եւ առաքեն ՚ի Կեսարիա՝ առնուլ զաթոռ սրբոյն Թադէի եւ Գրիգորի. զոր սուրբ Հոգին հրաշագործեաց իջմամբ աղանակերպ ՚ի վերայ նորա ՚ի զարմացումն տեսողացն: Եւ եկեալ բարիոք կարգաւորէր զաշխարհս մեր, շինելով վանորեայս եւ օտարանոցս եւ հիւրանոցս եւ հիւանդանոցս եւ տունս ուրկաց. բառնալով զխակութիւն եւ զանողորմութիւն, եւ զկոծս ՚ի վերայ մեռելոց, եւ զազգակցացն ինամութիւնս. եւ էր տեսանել այնուհետեւ զաշխարհս մեր իբրեւ զվերինն Երուսաղէմ, լի ամենայն բարեձեւութեամբ: Զոր տեսեալ թագաւորին եւ նախարարացն, եւ իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ, անուանեն զնա պատրիարք. զի առ մեզ կան, ասեն, սիւնքն անշարժելիք՝ Բարդուղիմէոս եւ Թադէոս, եւ սուրբ Լուսաւորիչն՝ որ պապն կոչեցաւ ՚ի Հռոմ, հաւասար այնմ՝ որ նստի յաթոռն Պետրոսի առաքելոյն: Ձի զառաջինն չորս միայն էին, յԱնտիոք՝ Մատթէոսին, ՚ի Հռոմ՝ Ղուկայն, յԵփեսոս՝ Յովհաննուն, յԱղեքսանդր՝ Մարկոսին. եւ յաւուրս որդւոցն մեծին Կոստանդիանոսի, Կոստանդնուպօլսացիք եւ Երուսաղէմացիք համարձակեալ՝ պատրիարգունք կոչեցին զառաջնորդս իւրեանց, զԿոստանդնուպօլիս վասն զՅոհաննուն անդ փոխելոյն, եւ զԵրուսաղէմ վասն տնօրինականացն. եւ մեք, ասեն, վատահասցուք ՚ի մեծ պարծանս մեր: Իսկ զՄեքաստիայ, եւ զՄելտենոյ, եւ զՄարտիրոսաց քաղաքի զեպիսկոպոսն՝ մետրապօլիտս կոչեցին. եւ յօրինեցին զինն դասուցն երկնից զխորհուրդն ՚ի Հայս. այսինքն պատրիարք, մետրապօլիտ, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէս սարկաւագ, դպրապետ, կրօնաւոր, ժողովուրդք:

[ԻԳ]

Յորում աւուրս նշկահեալ Արշակայ զՎաղենտիանոս կայսր, եւ նորա բարկացեալ սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր ՚ի պատանդի: Եւ գնացեալ մեծին Ներսէսի, պատուի ՚ի կայսերէ, շնորհաւորեալ նմա զանուն պատրիարգութեանն, եւ տուեալ ցնա զորդի սպանելոյն, եւ պարգեւս բազումս՝ դարձուցանէ ՚ի Հայս: Իսկ զկնի մահուանն Վաղենտիանոս, չարափառն Վաղէս լուծեալ զխաղաղութիւնն ընդ Հայս՝ ինդրէ զանձն Արշակայ ՚ի ձեռն զօրավարին Թէոդոսի: Եւ սուրբ պատրիարքն առեալ զՊապ որդի Արշակայ գնաց առ Թէոդոս, եւ նովաւ ՚ի դուռն կայսեր. եւ տեսեալ զթագաւորն, քարոզէ նմա ուղղափառութիւն, եւ ՚ի չհաւանելն՝ մեռանէր որդի նորա: Եւ բարկացեալ աքսորէ զնա ՚ի կղզի անբնակ եօթանասուն ոգով զինն ամիս. որք շնորհօքն Աստուծոյ կերակրեալ լինէին ՚ի շաբաթն եւ ՚ի կիրակէսն ձկամբք, զորս ընկենոյր ալիք ջուրցն հանդերձ փայտիւ եւ հրով: Եւ որպէս ասեն՝ սպանեալ զՎաղէս Գէորգիոս վկայն, եւ հրկէզ լեալ մարմինն. եւ առնու զթագն մեծն Թէոդոս. եւ նա դարձուցանէ զսուրբն ՚ի կղզւոյն. եւ առնէ նովաւ ժողով ընդդէմ հոգեմարտին հարիւր եւ յիսուն եպիսկոպոսաց՝ նգովելով զՄակեդոն, եւ զամենայն իմորեալս ՚ի նմանէ. եւս

հաստատեալ պատրիարզն Ներսէս վկայութեամբ հարիւր եւ յիսուն եպիսկոպոսացն, դառնայ 'ի Հայս: Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբօրորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա 'ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, եւ ինքն զնայ 'ի Յոյնս, փոխանորդ իւր թողեալ զԽաղ եպիսկոպոս Բագրեւանդայ, որոյ շտեմարանքն աղբերացան, որպէս Եղիայիւ կնոջն այրոյ:

[ԻԴ]

Ընդ այն ժամանակս Շապուհ արքայն Պարսից գայ յԱտրպատական, եւ առ ինքն կոչէ զԱրշակ, կապէ զնա եւ տայ տանել յԱնուշն կոչեցեալ դղեակ, ուր եւ մեռաւ իսկ անձին արարեալ սրով: Իսկ սուրբն Ներսէս լուեալ զայս ինդրէ 'ի կայսերէ թագաւորեցուցանել զՊապ որդի Արշակայ, զոր եւ արար իսկ. առաքէ զօրու ծանու 'ի Հայս պատրիարզան Ներսիսիւ. որք եկեալ գտին զաշխարհս միապետեալ Մեհրուժանայ արծրունոյ ուրացողին զՔրիստոս, պարսկական զօրօք լցեալ. ընդ որս մարտուցեալ սպառեն զՊարսիկսն աղօթիւք սրբոյն, եւ զՄեհրուժան կալեալ Սմբատայ բագրատունոյ, հրացեալ շանթիւք պսակէ զնա, նախատանօք սատակեալ. եւ հաստատեցաւ երկիրս ընդ ձեռամբ Պապայ ամս եօթն: Յորում ժամանակի շինեաց Անատոլիս զօրագլուխն Յունաց յանուն կայսերն զԹէոդուպօլիս: Բայց Պապ յանդիմանեալ 'ի Ներսիսէ յաղագս զազիր գործոցն, տայ նմա դեղմահու 'ի գեօղն Խախ յԵկեղեաց գաւառին զանխլաբար, եւ թաղեցաւ 'ի Թիլն, որ կալաւ զաթոռն ամս երեսուն եւ չորս: Եւ կացոյց Պապ 'ի տեղի նորա զՉունակ ոմն սակաւ աւուրս, եւ ապա զՇահակ 'ի գաւառէն Ապահունեաց, առանց մետրապօլտին Կեսարու, ըստ օրինի պատրիարզաց, որ պաշտեաց զաթոռն ամս չորս:

Իսկ զօրավարին Անատոլեայ կալեալ զՊապ խաբանօք եւ կապեալ զնա յերկաթս, առաքէ առ Թէոդոս, որ չարար զնա արժանի տեսանելոյ, այլ հրամայեաց զնա ընկենուլ 'ի ծովն: Եւ թագաւորեցուցանէ Հայոց զՎարազդատ ոմն արշակունի ամս չորս: Յերկրորդ ամին սորա ննջէ Շահակ, եւ յաջորդէ զնա Զաւէն եղբայր նորա, լաւ իբրեւ զնա, զամս չորս: Իսկ Վարազդատ որսացեալ վասն սպանանելոյն զքաջն Մուշեղ, հալածի յազգէն Մամիկոնէից, եւ Թէոդոս արքորէ զնա 'ի Թուլիս կղզի: Եւ թագաւորեցուցանէ Հայոց զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ եւ զՎաղարշակ: Ի յերրորդ ամին Արշակայ ննջէ Զաւէն. եւ առնու զաթոռն Ասպուրակէս եղբայր նոցունց եւ առաքինակեաց, ամս հինգ:

Եւ բաժանեն զաշխարհս Շապուհ Պարսից եւ Արկադէոս որդին Թէոդոսի, սէր արարեալ ընդ միմեանս. Արշակ առնու յանձն զկողմն Յունաց վասն հաւատակցութեանն. իսկ Վաղարշակ՝ որ ունէր զմասն Պարսից զարեւելակողմն՝ մեռանի. եւ դնէ 'ի տեղի նորա Շապուհ զԽոսրով ոմն արշակունի, որ զկնի երից ամաց մերժի 'ի տերութենէն 'ի քսութենէ գործակալաց աշխարհիս. այն որ նստոյց յաթոռ պատրիարզութեան զսուրբն Սահակ, որդի մեծին Ներսիսի, որ պաշտեաց զսուրբ աթոռն ամս յիսուն: Իսկ թագաւորն Պարսից կացոյց 'ի տեղին Խոսրովու զՎռամշապուհ եղբայր նորին, ամս հնգետասան:

[ԻԵ]

Ի հինգերորդ ամին սորա եւ յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապիոյ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան եւ երկու գիր առ Դանիէլի Ասորւոյ գտեալ՝ ՚ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղեւ յառաջնոցն, յոյն եւ ասորի եւ պարսիկ գրով շատացեալք. եւ ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս ՚ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն զործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զինդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով դրոշմեալ առաջի նորա որպէս մեծին Մովսէսի՝ ՚ի լեառն Սինայ, եւ սմա ՚ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին եւ նկարք գրերոյն, եւ պատուի տեղին խնկօք եւ ջահիւք միշտ ՚ի (Տաճկաց եւ քրիստոնէից) բնակչաց տեղոյն: Եւ զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ ՚ի ժամանակս Լեւոնի արքայի, զի գտաւ դրամ ՚ի Կիլիկիա, հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն Հայկազանց. զորոյ զթերութիւնն ելից նորս մեր Եզրաս, աստուածախառն շնորհօք լցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի եւ կարգաւորիչ: Որ եւ ՚ի ձեռն աստուածատուր պարզեացն զճառագայթս սրբոյ Երրորդութեանն առեալ, մարգարէիւք եւ առաքելովք եւ ատարարանչօք եւ երկնային դասուք եւ ամենայն արդարոցն իմբիւք, գայր մտանէր ՚ի Հայաստան աշխարհս, եւ զանձէր յեկեղեցիս մեր զանասելի գեղեցկութիւնս ՚ի զարդ հոգւոց եւ մարմնոց, եւ ՚ի պարծանս յաւիտենից, զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից: Քանզի ոչ ճարտարօք եւ ոչ միջնորդովք իմաստնացաք, եւ առաջնորդեցաք առ նա, այլ ՚ի յերկնապարզ եւ յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման. եւ տեառն մերոյ եւ Աստուծոյ յիշատակն կենդանի է ՚ի մատեանս մեր, զօրութիւն տալով եւ շնորհս, որք հաւատովն մատչին եւ բանականապէս: Վասն որոյ փառք պատիւ եւ գոհութիւն տուողին եւ օրհնութիւն ՚ի Տեառնէ ածողին առ մեզ, եւ պայծառութիւն յիշատակի անուան նորա ՚ի գիրն կենաց, (Մեսրոպայ, որ է կանաչացեալ, այսինքն յարագուարձ եւ բերկրեալ, հօր մերում տեղի եւ յիշատակ ընդ առաւել սուրբսն, եւ մեզ աղօթիւք նորա ողորմութիւն եւ գթութիւն յԱստուծոյ՝ ՚ի համար աշակերտաց նորա, եւ հոգեւոր որդւոց):

Զուարճացեալ ապա սուրբ պատրիարքն Սահակ երկնառաք պարզելօքն, ընտրէ մանկունս առաքինազարդս, եւ առաքէ յազգս, բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից. զՅովսէփ եւ զՂեւոնդ, զՅովհանէս, զԱբրահամ, զԱրձան, զՄուշէ, զԵզնիկ, զԿորիւն, եւ զայլս. ապա եւ զկնի սակաւուց զՄովսէս եւ զԴաւիթ եւ զԵղիշէ եւ զՄամբրէ՝ զեղբայր Մովսիսի: Զկնի սոցա եւ զԱրձան արծրունի եւ զԽոսրով եւ զՂազար պատմագիր. սոքօք թարգմանեցին զամենայն մատեանս ՚ի ստոյգ օրինակաց սրբոյն Ղեւոնդի: Նորոգեաց սուրբն Սահակ եւ զտաճար սրբոց Հոփսիմեանցն, զաւերեալն ՚ի Շապիոյ, եւ անյայտ եղեալ նշխարացն՝ ինդրեալ յԱստուծոյ՝ յայտնեցաւ նմա: Սա ետես զբառնալ թագաւորութեանն եւ զքահանայապետութեան յազգէն Պահլաւունեաց, եւ վերստին անդրէն նորոգել ՚ի լրման ատուրց: Սորա էր դուստր միամօր, զոր տայ յամուսնութիւն Համազասպայ մամիկոնենոյ, յորմէ ծնաւ սուրբն Վարդան: Այլ սքանչելի այրն Աստուծոյ Մեսրոպ անցեալ ՚ի Վիրս, առնէ եւ նոցա գիրս, ՚ի ձեռն Զադելի ումեմն, որ աշակերտեցաւ նմա. եւ գնացեալ յԱդուանս, ստեղծու եւ նոցա գիր ըստ նոցա լեզուին, ձեռօք Բենիամինի՝ որ անտի աշակերտեցաւ նմա:

[ԻԶ]

Իսկ Վռամշապուհ բարիոք կատարեալ զկեանս իւր. եւ գնացեալ սուրբն Սահակ առ Յազկերտ, խնդրէ զԽոսրով՝ որ կայր՝ ի բանտի, եւ վերստին թագաւորեցուցանէ զնա, որ ոչ աւելի կացեալ քան զտարի մի՝ վախճանի: Եւ ի մեռանելն Յազկերտի, նստի յաթոռն Վռամ երկրորդն. որ եւ բազում չարիս խորհէր ածել ի վերայ Հայոց: Չոր իմացեալ սուրբն Սահակ՝ զնաց առ Յունօք, եւ առաքէ զսուրբն Մեսրոպ եւ զՎարդան թոռն իւր առ Թէոդոս որդի Արկադեայ. զոր խնդութեամբ ընկալեալ, կոչեն զՎարդան ստրատելատ, եւ զՄեսրովք վարդապետաց վարդապետ, եւ դպրոցս հրամայեն կարգել Թէոդոս եւ պատրիարքն Ատտիկոս, եւ ռոճիկս յարքունի տանէ կարգեն: Եւ դարձան եկին առ սուրբն Սահակ, եւ կատարեն զհրամանն:

Յետ այսորիկ առաքէ զՎարդան առ Վռամ խնդրել զհաշտութիւն, եւ թագաւորեցուցանել զԱրտաշիր, որդի Վռամշապուհոյ, զոր եւ արարն իսկ: Իսկ Մովսէս ասէ թէ զկնի Խոսրովու թագաւորեցոյց Յազկերտ զՇապուհ զորդին իւր, ամս երեք. որ եւ ի համբաւ մահու հօրն գնացեալ, մեռաւ ի զօրացն. եւ ասեն, մնաց երկիրս անիշխան եւ շփոթ ամս մետասան. եւ ապա թագաւորեաց Արտաշիր, որ եւ ասեցեալ եղեւ ի նախարարացն վասն զազիր զործոցն. վասն որոյ աղաչեն զմեծն Սահակ ընկենուլ զնա. եւ ի չհաւանել նոցա՝ ինքեանք երթան ի դուռն Վռամայ, կոչել տան զԱրտաշիր եւ յղել ի Խուժաստան: Եւ ընկեցեալ զսուրբն Սահակ, կարդեն ի տեղի նորա զՍուրմակ չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՝ հալածի. եւ դնեն զԲրքիշու ասորի, ամ մի. եւ ապա զՇմուել ի նոյն ցեղէ, ախցիփեխցք եւ վատավարք, յորոց տաղտկացեալ նախարարացն Հայոց՝ հալածեն, եւ աղաչեն զսուրբն Սահակ առնուլ զաթոռն. որոց ոչ հաւանէր, բայց ի վարդապետութենէ ոչ բնաւ դադարէր, այլ դիեցուցանէր հոգեւոր գառանցն զերկնաւոր աղբիւրն ի տուէ եւ ի գիշերի: Ոմանք զկնի Բրքիշոյ եւ Շմուելի ասեն առեալ Սուրմակայ զաթոռն ամս եօթն: Այլ սրբոյն Սահակայ արարեալ դոյզն ժամանակս ի գաւառին Բագրեւանդայ, ի գեղն Բլուր, կատարի առ Քրիստոս, եւ ամփոփի յԱշտիշատ, զկնի սատակմանն Վռամայ եւ տիրելոյն Յազկերտի որդոյ նորա: Չկնի ապա վեցից ամսոց կատարի սուրբն Մեսրոպ ի Վաղարշապատ, եւ դնի ի յՕշական գեղն, իսաչանման լոյս երկնաւոր կալով ի վերայ դագաղացն, մինչեւ եղաւ ի գերեզմանի: Բայց զաթոռն տեղապահութեամբ ինամէր Յովսէփ աշակերտ Մեսրոբայ, ի Վայոյ ձորոյ, ի գեղջէն Հողոցմանց. եւ ասեն Սուրմակն կատարէր զձեռնադրութիւն, մինչ կենդանին էր, զամս եօթն:

[ԻԷ]

Իսկ նախարարացն ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վարդան: Չայսու ժամանակօք դարձան ի թարգմանութենէ Ղեւոնդ, Կորիւն եւ Արձան, որ դիպեցան ի ժողովն Եփեսոսի, զոր արար Թէոդոս ի մետասաներորդ ամի թագաւորութեանն իւրում վասն Նեստորի չարի, եւ բերին անտի կանոնս զլուխս վեց:

Բայց գունդն Հայոց՝ էր զի հնազանդէին Պարսից, եւ էր զի դիմանային պատերազմաւ, յորժամ վասն հաւատոց ոյժ հասանէր: Քանզի Շաւասպ արծրունի եւ Վնդոյ աւագ նախարարք ուրացեալք զհաւատս՝ շինեն ի Դուին մեհեան Որմզդի եւ տուն կրակի, եւ քրմապետ դնեն զՇերոյ զորդին Վնդոյի. զոր լուեալ սուրբն Վարդան, գայր իւրով զնդան, եւ սատակէր զՇաւասպ եւ զմարգպանն Մշկան փախստական առնէր, եւ զպիղծն Վնդոյ յատրուշանն հրոյ արկեալ այրէր, եւ զՇերոյ ի վերայ բաղնին կախէր

զփայտէ, եւ գտեղին շինէր եկեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի: Եւ գտուրբն Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն 'ի Շահապիվանս, ուր գտուգանաց կանոնն կարգեցին: Որ զկնի երկու ամաց եկեալ գունդ 'ի Պարսից, եւ ըմբռնեալ զնա եւ զՍահակ եւ զՂեւոնդ եւ զայլսն, եղին 'ի բանտի, որպէս զխրատտուս Վարդանայ, հեռագոյն որսացեալ 'ի յըմբռնել գտուրբսն. զոր եւ ինդութեամբ ընկալան զկապանսն վասն Քրիստոսի, եւ ոչ յօժարեցին հանել զնոսա մինչ ցժամանակն: Վասն որոյ 'ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց, դնեն զԳիւտ պատրիարք, եւ 'ի Դուին փոխեն զաթոռն, հրամանաւ նորին Յովսէփայ. յորմէ մանաւանդ հնագանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց, որովք տայր պատերազմն ընդ Պարսս զամս իննետասն, յաղթեալ քառասուն եւ երկու պատերազմաց, մինչեւ ցկատարումն իւր մարտիրոսութեամբ, օրհնութեամբ սրբոյն Սահակայ. որ 'ի ժամ վախճանի իւրոյ յամսեանն նաւասարդի յերեսունն, յաւուր ծննդեանն իւրոյ, օրհնեաց զնա եւ զեղբարս իւր զՀմայեակ եւ զՀամագասպեան. նոյնպէս եւ սուրբն Մեսրոպ յիւրում կատարմանն յերեքտասան մեհեկի ամսոյ. որոց աղօթիւք եւ օրհնութեամբ պարսպեցան եւ պսակեցան:

Քանզի ընդ այն ժամանակս եկաց 'ի գործ հազարապետութեան Յազկերտի չարամիտն Ներսէհ, եւ չոգաւ առ նա սեպուհն Վարազվադան, որ էր փեսայ Վասակայ Սինեաց իշխանի, 'ի նոյն ազգէ, ատեցեալ եւ հալածեալ յաներոյն իւրոյ. որ եւ ուրացեալ զՔրիստոս, գրգռեաց զնա 'ի յանցսն զոր անցոյց ընդ Հայս. որ եւ 'ի նոյն խորխորատն սատանայի անկանէր աներ նորին Վասակ. եւ եղեն պատճառք այնքան աղետից, որ էանց ընդ Հայս, զոր յընդարձակ պատմութիւնսն է ուսանել: Եւ վկայեցին Վարդանանքն, հազար երկերիւր երեսուն եւ երկու 'ի հրոտից երեսունն, 'ի վեշտասանն Յազկերտի. եւ զկնի երկուց ամաց սուրբ երէցն Սամուէլ եւ սուրբ սարկաւազն Աբրահամ, 'ի հրոտից եօթն. եւ սուրբ եպիսկոպոսն Բասենոյ Թաթիկ, որ յառաջագոյն տարեալ էր 'ի Խուժաստան, դառն տանջանօք 'ի տասն հրոտից. եւ սուրբ կաթողիկոսն Յովսէփ եւ տէրն Սահակ եւ սուրբ քահանայքն Ղեւոնդ եւ Մուշէ եւ Արշէն, եւ սուրբ սարկաւազն Քաջաջ, վեցեքեան սոքա կատարեցան 'ի քսան եւ հինգն հրոտից, յԱպար աշխարհի 'ի փառս Աստուծոյ: Եւ երանելի մոզպետն 'ի մարգաց տասն: Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք զվեշտասաներորդն Յազկերտի՝ երրորդ ամ Մարկիանոսի:

[ԻԸ]

Յորում աւուր սուրբն Մովսէս եւ Մամբրէ եւ Դաւիթ եկեալ յուսմանէ, հոգային զտուն կաթողիկոսարանին: Եւ թուի թէ 'ի լինել ժողովոյն Քաղկեդոնի, վախճանեալ էր Գիւտ, եւ չեւ էր նստեալ Յոհան Մանդակունի. եւ բերեալ առ սոսա թուղթ դաւանութեան, ոչ ընկալան, զի արտաքոյ էր սուրբ հարցն աւանդից: Այլ չոգան Մովսէս եւ Դաւիթ, թէ հնար իցէ օգնել ուղղափառութեանն (!). վասն զի գտանին այսպիսի բանք առ մեզ, թէ Դաւիթ խօսեցաւ յերկար ընդ Յուրնադայ, եւ ընդ դրան երէցն Պողքերայ (եւ ընդ Մամբրէի արքեպիսկոպոսն Կորնթացոց), եւ կարկեցան եւ յամօթ եղեն: Եւ ապա յոտն եկաց Մելիտոս մետրապօլիտն Մակեդոնացոց, եւ ասէ ցՄովսէս. Գիտեմ զքեզ եւ զաշակերտդ քո 'ի մանկութենէ կրթեալ, եւ թեքեալ 'ի ճոռոմ բանս կոկոզաբանիցն եւ կկգայօնից փիլիսոփայից, եւ ոչ ոք կարէ յաղթել ձեզ. այլ եւ նախանձու վառեալ էք զի ոչ կոչեցաք զձեզ, զի չէր կենդանի պատրիարզն ձեր: Եւ ասէ Մովսէս. Ապաքէն ճանաչես զմեզ, զի անդրանիկ էաք եկեղեցւոյն, եւ դատաւորք

հայրապետանոցին, եւ ընդէ՞ր ոչ կոչեցիք զմեզ, եւ զբազմահմտութիւնս մեր նախատինս ասես: Բայց պատճառ ժողովոյն ձեր՝ չէ ծածկեալ յումեքէ, այլ մեք զճշմարտութիւնն ոչ թողումք, մի բնութիւն ասել մարմնացելոյ բանին Աստուծոյ: Ասէ Մելիտոս. Ո՞րպէս ասես զմինն, յատկացեալ ասես զՈրդի ՚ի Հօրէ, եւ միացեալ ՚ի մարմնի: Մովսէս ասէ. Ոչ բաժանեալ ՚ի Հօրէ, եւ միացեալ ՚ի մարմնի: Եւ այլ այսպիսի բազում բանս խօսեցան: Ուստի կարծեցաք այսպիսի գոյ զժամանակն, զի գտասն ամ կալեալ Գիւտայ զաթոռն՝ կատարի, եւ յաջորդէ զնա Յոհան Մանդակունի, իմաստասէր եւ լի հոգով Աստուծոյ, որ բարիոք յօրինեաց զկարգս ձեռնադրութեան եւ ժամակարգութեան, եւ զճառս իւրատուց: Եւ սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացոց թուղթն, զՅոհանն, եւ այլ բազում օգուտս գործեաց ՚ի կեանս իւր: Կէսք ՚ի կողմն Յունաց ասեն զԳիւտ կաթողիկոս, եւ զՅովհան ՚ի Պարսից ՚ի միում ժամանակի: Առ սոքօք էր ճգնաւորն Անտոն, որ եւ Թաթուլ, թողեալ զամենայն ինչ վասն Քրիստոսի Վարոսի հարազատան երթեալ կրօնաւորէր ՚ի տեղուջն՝ որ այժմ ասի սուրբ Թաթուլ:

[ԻԹ]

Իսկ զկնի վճարման սուրբ նահատակացն մեր, չարն Վասակ՝ զկին եւ զերեսին որդիս Հմայեկայ ՚ի դուռն տանէր որպէս գորդիս մահապարտաց. գոր ինդրեալ Աշուշայի Վրաց բղէշխին ՚ի Յազկերտէ, տայ նմա զանակնունելի պարգէն. որ եւ աւագն ՚ի նոցանէ Վահան՝ սպարապետ եղեւ Հայոց. քանզի սատակեալ Յազկերտի, Պերոզ որդի նորա սպանեալ զեղբայր իւր՝ թագաւորէ, եւ հաշտութիւն առնէ աշխարհիս, եւ զՎահան կացուցանէ հարկահան արքունի, եւ ՚ի քսու արանց նեղեալ՝ տկարանայր ՚ի հաւատոցն. եւ զկնի հարեալ զնա սիրտն իւր զղջանայ, եւ ապստամբեալ յարքայէ հարկանէ զգօրսն Պարսից յոլով անգամ: Եւ Վարազվադան տիրեալ Միւնեաց վասն ուրացութեանն, ՚ի բազում աւուրս նեղեալ ՚ի դիւաց՝ իւտղի անգեղջ: Յորում աւուրս սպանաւ ուրացողն Վազգէն, եւ այլ բազում ուրացողք ընկալան աստէն զառհաւատչեալ գեհեւնոյն:

Յետ այսորիկ զօրավարն Պարսից Միհրամ գայ բազում զօրօք ՚ի վերայ Վախտանգայ Վրաց արքայի. եւ յղէ աղաչանս առ Վահան օգնել նմա, եւ գնաց յօժարութեամբ. եւ ՚ի իմբել պատերազմին՝ վատ զօրն Վրաց փախեան թագաւորան հանդերձ, այլ եւ վատօք ՚ի Հայոց, եւ նահատակեցաւ սուրբն Վասակ եղբայրն Վահանայ, որոյ երեսքն փառաւորեալ փայլէին որպէս զՄովսիսին՝ ՚ի ժամ կազմելոյն, յորս ոչ կարէին հայել տեսողքն, եւ իմացան թէ մեռանելոց է յայնմ աւուր. պսակեցաւ եւ սուրբ սեպուհն Միւնեաց Յազգ, յամսեանն հոռի ՚ի վեշտասանն, ՚ի գեօղն Բագուան. գոր ըմբռնեալ Միհրան հարկէր ուրանալ զհաւատն եւ կեալ մեծութեամբ. եւ տուեալ ընդդէմ պատասխանի, մեռանի վասն Քրիստոսի, եւ պսակի: Նոյնպէս եւ քաջ ասպետն Սահակ կատարի ՚ի ժամ պատերազմին ՚ի վերայ սուրբ ուխտին օրինաց: Չկնի այսորիկ սպանաւ Պերոզ ՚ի Հեփթաղաց եօթն որդուլք. եւ թագաւորեցուցին զՎաղարշ եղբայր նորա. եւ կոչեաց զՎահան, եւ ետ նմա զզօրավարութիւնն Հայոց, եւ յետ այնորիկ եթող ՚ի նա եւ զմարզպանութիւնն: Չկնի Վաղարշու՝ նստի Կաւատ որդի նորա. եւ յետ նորա Խոսրով ամս քառասուն եւ ութ: Իսկ Վահան շինեաց զեկեղեցիսն Արտաշատու՝ զաւերեալսն ՚ի Պարսից:

Յորում ժամանակս երանելին Տեառնթագ յԱրշարունեաց պսակեցաւ ՚ի Զառնաւուխտայ զօրագլխէն Պարսից, եւ այլ եւս բազումք ընդ նմա:

[Լ]

Իսկ սուրբն Տրդատ կոչեցեալն յաւագանէն Յովհաննէս, յաղագս պարկեշտ կենացն եւ չարատեաց բարուցն՝ դեղակուր եղեալ մեռանի յանաստուածից ոմանց, թագաւորեալ ամս յիսուն եւ վեց: Իսկ գտուրբն Ըռըստակէս սպան Արքեղայոս իշխանն չորրորդ Հայոց՝ ի ճանապարհին Ծովագ, յաղագս միշտ յանդիմանելոյն զնա՝ ի գործս իւր չարս: Եւ յաջորդէ զաթոռն Վրթանէս եղբայր նորա, մինչ կենդանին էր Տրդատ ի յիսներորդ չորրորդ ամի արքայութեան նորա. եւ զԸռըստակէս տարեալ եղին ի Թորդան առ հորն:

Իսկ զկնի մահուանն Տրդատայ՝ երկրորդ Սանատրուկ արշակունին, զոր կացուցեալ էր ի Փայտակարան, թագ եղեալ խորհէր տիրել բոլոր Հայոց. որ եւ սպանանել ետ զմանուկն Գրիգորիս բարբարոս ազգին՝ ի Վատնեան դաշտին, զորոյ զմարմինն բերեալ յԱմարաս հանգուցին: Լուեալ զայս մեծ իշխանն Աղծնեաց Բակուր, ձեռն ետ յՈրմիզդ Պարսից արքայ, եւ խորհէր զՍանատրկոյն. զոր իմացեալ նախարարքն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս, եւ առաքեցին երկուս ի գլխաւորացն առ Կոստանդին որդի մեծին Կոստանդիանոսի, որ զկնի մահուան հորն թագաւորեաց ամս քսան եւ չորս, զի օգնեցէ Հայոց, եւ թագ դիցեն Խոսրովու որդոյն Տրդատայ: Զոր ընկալեալ զինդիրն առաքէ զԱնտիոքոս զօրագլուխն. եւ թագ եղեալ Խոսրովու, իսաղան ի վերայ Սանատրկոյ. որ իբրեւ լուաւ, փախեաւ ի Պարսս. եւ յաւարի առեալ զաշխարհն զօրացն մերոց՝ դարձան: Եւ Մանաճիր Ռշտունի զնացեալ ի վերայ Բակուրայ՝ սատակէ զնա, եւ առեալ զերի բազում ի կողմանցն Մծբնայ՝ դառնայ. ընդ որս եւ զեթն սարկաւագունս սրբոյն Յակոբայ. եւ զհետ եկեալ սրբոյն եւ խնդրեալ. ոչ տայր, եւ նորա կամեցեալ զնալ առ արքայ, զետընկէց առնէր. եւ սրբոյն իմացեալ դառնայր ի տեղի իւր՝ անիծանելով զՄանաճիր, եւ զաշխարհն իւր. յորմէ չարաչար մահուամբ սատակի, եւ գաւառն անպտուղ լինի՝ մինչեւ որդի Մանաճրի արժանաւոր ապաշխարութիւն ցուցեալ, եւ բերեալ հող զկնի մահուանն ի գերեզմանէ սրբոյն, օրինի երկիրն հաշտութեամբն Աստուծոյ, բարեխօսութեամբ սրբոյն Յակոբայ:

[ԼԱ]

Իսկ Խոսրով թագաւոր Պարսից մօտ ի վախճանն հաւատայ ի Քրիստոս, եւ կոչեցեալ առ ինքն զԵրան կաթողիկոսն՝ զոր տէր Գիւտ էր ձեռնադրեալ հանդերձ այլօք եպիսկոպոսօք, ի զնալն իւրում առ Պերոզ արքայ՝ ուր յանդիմանեաց զմոլորութիւնն Պարսից, ցանկալով մահու, մկրտեցաւ յԵրանայ եւ հաղորդեցաւ. եւ զկնի սակաւուց կատարեցաւ, եւ թաղեցին զնա քրիստոնեայքն յարքունական գերեզմանս: Եւ առ զթագ նորա որդի նորա Որմիզդ. որոյ նենգ գործեալ սպանին զնա յիւրում դահլճի, եւ առնու զթագն որդի նորա Խոսրով. յորոյ վերայ յառնէ Վահրամ զլուխ զօրացն, եւ առնէ զնա փախստական: Եւ նա զնայ առ Մօրիկ կայսր, եւ գտեալ ի նմանէ օգնութիւն դառնայ եւ տիրէ հայրենեացն, եւ լինի երախտահատոյց, թողլով ի Մօրիկ զՄիջագետս, եւ ի Հայոց զաշխարհն՝ որ Տանուտերական գունդն կոչի. բաց յոստանէն Դնայ, եւ յերկուց գաւառացն՝ որ է Ոտն Մասեաց եւ կողմն Արագածու, թողու ի Մօրիկ ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար, մինչեւ ցԱռեստն աւան եւ ցՀացիւնս: Որ յանդգնեալ զեղեալ անուանսն յԱրայէն՝ փոխէ. զԱրմինի կոչեցեալ ի նմանէ՝ որ է Առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Մեւաստ. եւ զԿապոտկիա, յորում մայրաքաղաքն Կեսարիա՝ Երրորդ կոչէ Հայք, եւ առնէ զնա եպարքի. եւ զՄելտենի՝ որ ունի զհոմանուն գաւառն իւր, կոչէ զնա Առաջին Հայք. եւ զՊոնտոս, յորում մայրաքաղաքն

Տրապիզոն, Մեծ մասն Հայոց կոչէ զնա. եւ զՉորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Նփրկերտ որ ասեն Մուփարկին, Յուստիանունիստ գրէ զնա 'ի դիւան արքունի. եւ զաշխարհն Կարնայ՝ յորում քաղաքն Թէոդուպոլիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. եւ որ 'ի Մեծ Հայոց մասն էր առ նոսա, 'ի կողմանց Բասենոյ մինչեւ ցասիմանս Ասորեստանի, Մեծ Հայք անուանէ. եւ զկողմանս Տայոց սահմանօքն իւրովք՝ Խորագոյն Հայք կոչէ. եւ զկողմն Դնայ՝ Ներքսագոյն Հայք կոչէ: Ջայս անուանս գրէ 'ի դիւանի:

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն թշնամիս նորա. եւ նորա պատուասիրեալ նմա տայ զմարզպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ, եւ բնակեալ 'ի Թուրքաստան անապատին մեծի՝ որ Սադաստանն կոչի, մոռացեալ զլեզու եւ զդպրութիւն. որք տեսեալ զՍմբատ խրախ լինէին, եւ նորոգէին զլեզու եւ զգիր. եւ զերէց մի նոցա Հաբէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի հայրապետին Մովսիսի. հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, եւ առեալ հրաման յարքայէ՝ գայ տեսանէլ զերկիր իւր: Եւ եկեալ 'ի Դուին՝ սկսաւ շինել զփայտաշէն սուրբ Գրիգորն 'ի Վարդանայ սրբոյ. եւ պահնակ բերդին բողոքէ 'ի դուռն, թէ վնասակար է բերդիս. եւ ելանէ հրաման քակել զբերդն, եւ հեռագոյն շինել. եւ ինդացեալ Սմբատ 'ի փառս Քրիստոսի, շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, եւ տայ ձառնադրել պատրիարզ գտեր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց, որ շատ ջանացեալ թղթով 'ի ձեռն Պետրոսի՝ ոչ կարաց դարձուցանել զԿիւրիոն յուղղափառութիւն (!). վասն որոյ արարեալ ժողով 'ի Դուին, անիծին զԿիւրիոն հերեսիտտեայ (!): Եւ Սօրիկ կացոյց յիւր կողմանն կաթողիկոս զՅոհան որ նստէր 'ի գեօղն Աւան, շինեալ անդ եկեղեցի, այր սուրբ, եւ ընտրեալ յամենեցունց:

[ԼԲ]

Յայնմ ժամանակի նախարարքն Մօրկայ սպանին զնա, եւ եղին թագաւոր զՓովկաս, որ եւ եկեալ 'ի Բասեն՝ ջանայր նուաճել զՀայս. եւ ընդ առաջ երթեալ Աշոտ, հարկանէ անչափ կոտորմամբ հրամանաւ Խոսրովու, եւ առնու զԿարնոյ քաղաք, եւ փոխէ զբնակիչսն յԱհմատան, տարեալ զՅոհան կաթողիկոս զկնի, որ կայր 'ի գաղթի անդ. որ եւ անդէն վախճանեալ, բերաւ դին 'ի գեօղն Աւան, որ կալաւ զկաթողիկոսութիւնն ամս քսան եւ վեց. եւ սուրբ պատրիարզն Աբրահամ փոխի զկնի քսան եւ երեք ամի արթողակալութեանն. եւ յաջորդէ զնա տէր Կումիտաս, 'ի գեղջէ Աղցից:

Իսկ յիշխանաց կարգի զկնի Մեծեժայ պարսիկք կացին. նախ Դենշապուհ, որ զշնամութիւնսն շատացոյց, եւ յետ նորա Վարագդատ ոմն, եւ ապա Մուրէն ազգական Խոսրովու, որ շնայր ընդ կանայս իշխանացն. ընդ որ զայրացեալ Վարդանայ՝ որդւոյ Վասակայ մամիկոնենոյ՝ սպան զնա, եւ առեալ զընտանիս իւր զնաց 'ի Կոստանդնուպօլիս: Բայց Հերակլ սպանեալ զՓովկաս, թագաւորեցուցանէ զորդի իւր, եւ ինքն խաղայ յարեւելս. եւ Խոռեմ աւերէ զՅոյնս հրամանաւ Խոսրովու, քինախնդիր մահուանն Մօրկայ, եւ գերէ զԵրուսաղէմ եւ զփայտն փրկական, եւ զԶաքարիա պատրիարզն Երուսաղէմի: Յայնմ ժամանակի պատրիարզն Կումիտաս ընդարձակէ զվկայարան սրբոց Հոփսիմեանցն, եւ պատահէ սուրբ նշխարաց նոցա. եւ լինի ոչ սակաւ մխիթարութիւն քրիստոնէից, եւ էր կնքեալ մատանեալ սրբոյն Գրիգորի, եւ սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեաց բանալ, այլ եւ զիւրն եղ 'ի վերայ. եւ չափ հասակին

Հոփսիսիմեայ՝ տասն թիգ եւ չորս մատն, եւ գտուրքն Գրիգոր ասեն ինն թիգ, եւ զՏրդատ՝ մետասան թիգ:

[ԼԳ]

Առաքեաց Հերակլ դեսպանս պատարագօք առ Խոսրով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի. եւ բարկացեալ Հերակլի, առնու ընդ իւր զեղբայր իւր զԹէոդոս, երկիցս հարկանէ զգօրսն Պարսից առ Անտիոքաւ, եւ երթայ ընդ Հայս ՚ի վերայ Խոսրովու. եւ զնա ոյժառեալ Կաւատայ որդոյ առաջնոյ Խոսրովու, սպանանէ զԽոսրով, եւ խնդրեալ սէր ՚ի Հերակլէ՝ թողու ՚ի նա զՄիջագետս. եւ դառնայ Հերակլ եւ գայ ՚ի Կարնոյ քաղաք: Յորում յաւուրս յաջորդեալ էր գտուրք աթոռն Կոմիտասայ տէր Քրիստափոր, եւ հանեալ զնա զի առնէր խռովութիւն ՚ի մէջ իշխանացն, դնեն զԵզր Նիգացի, զոր կոչեաց թագաւորն ՚ի Կարնոյ քաղաք, որ վասն տգիտութեանն իւրոյ քաղկեդոնիկ եղէ, առեալ զԱղցք, եւ զերրորդ մասն Կողբայ գին հաւատոյն: Եւ ՚ի դառնալ նորա կշտամբեաց զնա Յոհան վարդապետ կաթուղիկոսարանին, ասելով. Յիրաւի Եզր կոչեցար, զի յեզր էլէր յուղղափառութենէ. եւ ինքն չոգաւ յԱղուանս, ՚ի զլուխ Գարդման գաւառի, եւ ճգնեցաւ խիստ վարիւք: Սա գրեաց երիս զիրս, զանուն իւր չդնելով ՚ի նոսա. զմինն կոչեաց Խրատավարք, զմինն Հաւատարմատ, եւ զմինն Նոյեմակ: Էր սորա աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍաբելին ախտանայր. զոր հալածեալ մերժեաց յինքենէ: Յաւուրս յայտոսիկ մեռանի Կաւատ արքայ, եւ թագաւորէ տղայ որդի նորա Արտաշիր. եւ լուեալ Հերակլ, յորդորէ զԽոռեմ՝ առնուլ զթագն, սպանանելով զտղայն: Զոր եւ արար իսկ. եւ ետ զխաչն սուրբ ՚ի Հերակլ: Եւ սպանեալ զօրացն զԽոռեմ՝ տան զթագն ՚ի Բորն դուստր Խոսրովու, եւ զկնի նորա ՚ի Զամրիկ քոյր նորա. եւ յետ նորա, զՈրմիգդ թոռն Խոսրովու, զոր խեղդամահ արարին, եւ եղին զՅազկերտ թոռն Խոսրովու:

Իսկ Հերակլ զխաչն տարեալ յԵրուսաղէմ, կանգնէ ՚ի տեղուջ իւրում. յորում ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄեծեծ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի, ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի, զամս երեք, որ շինեաց զեկեղեցին Սրենոյ. եւ ապա անարգեալ յիշխանացն հալածեցաւ. եւ անկաւ շփոթ մեծ ՚ի Հայս, զմիմեամբք էլանելով. յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ. եւ տէր Քրիստափոր շինեաց միայնարան ՚ի յՈտն Մասեաց, եւ առաքինանայր բազում ջանացող աղօթիւք, երեքհարիւր խարագնազգեստ արամբք: Յորում աւուր ժողովեալ յԵղեսիա երկոտասան հազար Հրեայ՝ ապստամբեցին ՚ի Հերակլեայ, եւ նա երթեալ պաշարեաց զՈւռհա, եւ առ զնա եւ արձակեաց զՀրեայսն կենդանի, յո՛ւ եւ կամիցին երթիցեն, ոչ լսելով Թէոդորոսի եղբօրն՝ որ կամեցաւ սատակել զնոսա: Եւ զնացեալ անտի ընդ անապատ չոգան ՚ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի, որպէս առ ազգայինս, եւ կոչէին յօգնութիւն. եւ կէսք ախորժէին, եւ ոմանք ոչ, վասն այլ եւ այլ աղանդոյ նոցա, որպէս երբեմն Եգիպտացւոցն, ըստ զանազան պաշտամանց նոցա:

[ԼԴ]

Յայնժամ ապա այր մի յորդուցն Իսմայելի, որում անուն էր Մահամթ թանգար, որ էր ծնեալ ՚ի քաղաքին Մադինա, մերձ ՚ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ, որդի Աբդլայ, որ մեռաւ որք թողեալ զնա. որ եւ յարեցաւ ՚ի վաճառական մի, եւ եղէ ՚ի տան նորա յառաջադէմ. մեռաւ վաճառականն եւ տիրացաւ տան տեառն իւրոյ,

առեալ զկին նորա. եւ երթայր ուղիօք յԵգիպտոս, եւ պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն յաղանդոյն Արիոսի եւ Կերինթոսի, որ եւ ուսոյց նմա 'ի հին մատենիցն զԱստուած, եւ զգիրս տղայութեան Տեառն մերոյ. եւ ի դառնալն 'ի տուն քարոզեաց զոր լուան. եւ հալածեցին զնա ազգն իւր. եւ եկն յանապատն Փառանու. եւ յորժամ եկին երկոտասան հազար Հրեայքն, առեալ պատճառս 'ի նոցանէ, քարոզեաց որդւոցն Իսմայելի զԱստուածն Աբրահամու, եւ եղեւ երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու:

Եւ լուան նմա, եւ ժողովեցան յԵւիլայ մինչեւ ցՄուր, որ է հանդէպ Եգիպտոսի, եւ զերկոտասան հազարսն ըստ ցեղիցն Իսրայելի երկոտասանից նահապետացն, հազար հազար արկին յինքեանս, եւ եղեն երկոտասան բաժին, ազգապետ դնելով ինքեանց, յորոց անուն կոչեցան իսկ՝ Նաբեովթ, Կեդար, Աբդլա, Մարսամ, Մասմա, Իդումա, Մասէ, Քողդադ, Թեման, Յետուր, Նաբէս, Կեդմա: Եւ զնացին բանակս բանակս յանապատն Փառանու ցՌաբովթ Մովաբու, եւ անցին յայնկոյս Յորդանանու 'ի վիճակն Ռուբինի: Եւ զօրն Յունաց էր յԱրաբիա. հարին զնոսս, եւ փախեալ Թեղորոս եղբայր կայսերն մագապուրծ: Եւ դարձան ինքեանք յԱրաբիա, բնակեցան ըստ ցեղից ցեղից, եւ ժողովեցան առ նոսս ամենայն մնացեալքն յորդոցն Իսրայելի, եւ եղեն զօր մեծ: Եւ յղեն բանս առ կայսր, թողուլ զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու. եւ արար նոցա ընդդէմ պատասխանի, եւ գումարեաց զօրս եօթանասուն հազար 'ի ձեռն ներքինւոյ մի հաւատարմի, եւ պատուիրեաց երթալ յԱրաբիա 'ի վերայ Իսմայելի, ուր եւ սատակեցան իսկ. եւ լցան մեծութեամբ բանակքն Մահմեդի:

Եւ էր թիւս մեր վաթսուն եւ եօթն. եւ զի յաջողեաց նոցա իրատն Մահմեդի, խնդրեն 'ի նմանէ օրէնս, եւ նա գտեղի մեհենից օձիցն՝ զոր պաշտէին, կոչեաց Ալ-քայուբա, որ է դուռն Աստուծոյ. եւ կոչեաց զբանակութիւն քաղաքին իւրոյ՝ տուն Աբրահամու: Եւ քանզի 'ի զօրանալ քրիստոնէութեանն, զկուռս Դամասկոսի, զՌեմանա, որ նա ինքն է Հեփեստոս կադ, տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ Տաճիկք տարան 'ի մեհեանս օձիցն, եւ քուրմք օձիցն ոչ կամեցան անդ դնել, այլ հանեալ արտաքոյ արարին տեղի միոյ ոտից 'ի վերայ վիմի, եւ անդ եղին. զոր գողացան եթեովպացի վաճառականք վասն ոսկւոյն, զոր ձուլեցին Իսմայելացիքն. եւ եղեւ պատերազմ սաստիկ 'ի մէջ երկուց ազգացն, մինչեւ մոռացան: Չայնմանէ ասաց, թէ Աբրահամու ոտնահետն է, յորժամ եկն տեսանել զԻսմայել զորդի իւր. եւ քանզի յորս էր Իսմայել, հարցանէ ցկին նորա թէ Ո՞ւր է այր քո. եւ նա ասէ. Գնա՛, աղճատեալ ալեւոր. եւ ասէ Աբրահամ. Յորժամ գայ 'ի տուն, ասա ցայրն քո, փոխեա՛ զդուռն տան քո: Իսկ յորժամ եկն Իսմայել եւ էառ զհոտ հօրն, եհարց ցկինն. եւ նա ասաց զոր լուան. եւ իմացեալ Իսմայելի՝ եհան զկինն, եւ այլ էառ մինչեւ ցեօթներորդ կինն, որ մաղթեաց զԱբրահամ իջանել յիշէն, եւ օճցէ զոտսն. եւ իջոյց ասէ զմի ոտն, եւ եդ 'ի վերայ վիմին, եւ տեղի ետ վէմն ոտիցն. եւ զմի ոտնն ոչ իջոյց 'ի գրաստէն. զի երդումն տուեալ էր Սառայի՝ թէ մի՛ իջաներ, երկուցեալ թէ լինի ընդ Հազարու: Չայս առաս...եաց Մահմեդ: Եւ հրամայեաց յամենայն կողմանց անդ առնել զերկրպագութիւնն, եւ զվիմովն ասաց շուրջ գալ միոտանի, եւ ասել Լբա՛ յք, լբա՛ յք. եւ որպէս թէ պատասխանի ումէք առնել, Ա՛-յ ա՛-յ, աւա՛ւ աւա՛ւ. եւ անցեալ 'ի ձորն անասուն սպանանեն, եւ ելեալ 'ի գրաստ փախչին մինչեւ 'ի բլուրն Մաքայ, եւ թէ 'ի փախչելն հանդերձ անկանի կամ զուլամբի, ոչ ոք իշխէ յետս հայել. եւ 'ի մէջ երկուց վիմացն ընթանալով, զոր կոչեն Սաֆա եւ Եմրա, վիմէ 'ի վէմ երթան եօթն անգամ անհանգիստ եւ քարինս ձգեն. եւ Մահմեդ ասեն այսպէս արար եւ ուսոյց: Այլ միոտանի վագելն՝ վասն ոտնահետին է, եւ ի ձորն

անասուն կոտորելն եւ փախչելն, ասեն թէ զոհ արար Մահմէտ., զի տեսիլս ցուցցեն նմա, եւ երեւեալ նմա՝ փախեալ: Եւ յերկու վիմամիջին շրջելն եւ քար ձգելն, լեալ են վեմք նոցա պաշտելիք, նախ քան զկուռնս, եւ ՚ի պաշտելն Մահմէտի ըստ սովորութեանն, շուն կատաղի ել ընդդէմ նորա, եւ նա ձգեաց նմա քարինս. եւ գնոյն հրամայեաց առնել: Եւ օձք եւ սողունք՝ զի ոչ սպանանին, զի պաշտելիք լեալ են նոցա, եւ շուն կոտորելն այն է, որ ասեն թէ ՚ի մեռանելն Մահմէտի չկամեցան թաղել, ակն ունելով թէ յառնէ երեքօրեայ, եւ յորժամ իմացան՝ կոտորեցին զշունսն, եւ ՚ի նոյն ամսեան հրամայեցին զնոյն առնել: Նա ուսոյց ասել մի է Աստուած, եւ ոչ որ է նմա ընկեր, եւ Մահմէտ ծառայ նորա: Եւ որ ասեն հրէի միոյ բանիւ, թէ մարգարէքն իսուեցան որպէս վասն Քրիստոսի՝ եւ վասն Մահմէտայ, զայն ասեն որ Եսայի տեսանէր երկու հեծեալս իշոյ եւ ուղտու: Եւ յաւուր միում յանկարծակի. անյայտ եղև Մահմէտ. եւ յետ սակաւու երեւեալ, ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ եւ ողորմութիւն Աստուծոյ եւ շնորհք: Եւ նոցա զարմացեալ ասեն. Ուստի՞ զաս, եւ զինչ է նոր ողջոյնդ, եւ զո՞ր Աստուծոյ շնորհք բերեր մեզ: Եւ նա ասէ. Էառ զիս Աստուած ՚ի Մաքա, ՚ի տուն հօր մերում Աբրահամու, եւ պատմեաց զկամս իւր, եւ ՚ի վաղիւն առաքելոց է մեզ օրէնս: Եւ առեալ երինջ մի ծնեալ, եւ ՚ի տեղի ժողովոյն մեկնեաց յորթոյն. եւ ՚ի վաղիւն հրամայեաց արձակել, եւ ինքն հաւաքեալ զամբոխն՝ մնայր. եւ եկն կովն բջելով եւ քրտալով, եւ հերձեալ զամբոխն խնդրէր զորթն. եւ հրամայեաց ունել զնա, եւ առեալ զթուղթն համբուրեաց եւ ասաց յԱստուծոյ եկեալ. վասն որոյ ցայսօր գրեալ են ՚ի սկիզբն դուրանին՝ Մուրաթ Ալ-բակարա, որ է կովու օրէնք: Եւ հրմայէ հինգ անգամ կատարել աղօթս լուսցմամբ, եւ փոխանակ փողոցն Իսրայելի՝ ՚ի բարձուէ կանչել, վկայ առեալ թէ Ել ՚ի վերայ լերինդ Սիոնի, աւետարանիչդ. եւ Մոզին կոչեն զձայնողն, որ է հաւատագիր, եւ զմատն յականջն ածել, ասեն. թէ որ կամաւ եւ որ ակամայ՝ լսէ ականջովն: Եւ զՔրիստոս բան Աստուծոյ, եւ հոգի կոչեաց: Եւ սքանչելիք զոր ասեն թէ առնէր, զլուսինն բերեալ ՚ի վայր, ասեն, չորս կտոր առնէր, եւ դարձեալ բոլորեալ յերկինս առաքէր:

Բայց նախ Քաղրթ էր իշխան Իսմայելի, եւ ապա գտեալ զՄահմէտ՝ հաւանի նմա յամենայն բանս:

[ԼԵ]

Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ Երուսաղէմացոցն, զիսաչն տէրունի եւ զամենայն սպասս եկեղեցեացն հանեալ ՚ի նաւ, տարան Կոստանդնուպօլիս, եւ ինքեանք հնազանդեցան Իսմայելի, զի կայսրն այլ ոչ կարաց զօր գումարել ՚ի վերայ նոցա: Եւ նոքա բաժանեալ յերիս մասունս, մին յԵգիպտոս, եւ մին ՚ի Յոյնս, եւ միւսն ՚ի Հայս, եւ եղև ամենեցուն յաղթել. եւ որք ելին ՚ի Հայս ընդ Ասորեստան, եւ հասեալ ՚ի Դուին առին զնա, եւ սպանին անթիւ. եւ գերեցին երեսուն եւ հինգ հազար անձինս ՚ի ժամանակս իշխանութեան Թէոդորոսի ոչտունւոյ, որ զկնի Դաւթի. եւ բիւր մի ՚ի նոցանէ հարին զՊոռկոպոս զօրագլուխն Յունաց, որ նստէր ՚ի սահմանս Հայոց վեց բիւրու:

Յորում յաւուրս մեռաւ Եգր, եւ յաջորդեաց զաթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց, զկնի տասն ամին Եգրի. բայց յափշտակութիւն եղեալ վասն անհնարին կոտորելոցն, խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին: Եւ աղաչեցեալ ՚ի բազմաց դադարէ. եւ հաւաքեալ զբազմութիւն դիականցն թաղէր, եւ ՚ի նմին տեղուջ շինէր

զիրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի: Շինէ տաճար սրբութեան եւ ՚ի վերայ վիրապին, եւ արկանէ հիմն տաճարին մեծի յառապարի յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, եւ դնէ ՚ի ներքոյ չորից սեանցն զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի, եւ զգլուխն ՚ի զգրոցի եղեալ՝ պահէ ՚ի պէտս բժշկութեան ախտաժետաց. անդ դնեն եւ զնշխարս սրբոյն Յիզուրուգտեայ, եւ զԴաւթի վկային: Եւ զսուրբ Գրիգորի նշխարն ասեն ՚ի Հայս բերել Գրիգորոյ մամիկոնոյ, ՚ի գնալ նորա դեսպան ՚ի Կոստանդնուպօլիս, տուեալ ցնա կին ոմն յաւագաց՝ որ ունէր առ իւր. եւ նորա զաղտ հանեալ ՚ի ծով եւ անցեալ գայ բերէ անգիտելի քաղաքին՝ զգանձն անանց մեծութեան. եւ զծնօտն տայ Աղուանից ՚ի խնդրոյ Ջուանշիրի եւ քեռ իւրոյ՝ որ էր կին Գրիգորի:

[ԼԶ]

Յայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դաւեալ ՚ի մօրուէն Մարտինեայ սպանանի, կացուցեալ զորդի իւր Հերակլակ. եւ Վաղենտին զօրավարն սպանեալ զՄարտին եւ զՀերակլակ, թագաւորեցուցանէ զԿոստանդ՝ որդի Կոստանդեայ. եւ զի ապստամբեալ էր Վարազտիրոց, աղաչէ վասն նորա հայրապետն Ներսէս, եւ դնէ զնա կիրապաղատ Հայոց. որ եւ յառնուլ զիշխանութիւնն մեռաւ, եւ թաղեցաւ ՚ի Դարօնս առ հօր իւրում քաջին Սմբատայ: Եւ դնեն զՍմբատ ՚ի պատիւ հօրն. եւ Թէոդորոս ոչտունի էր զօրավար: Բայց Մահմէտ քսան ամ կալեալ զիշխանութիւնն. . . . եւ զկնի նորա առին զիշխանութիւնն Օմար եւ Ամր եւ Բուբաքր, եւ սպանին զՅազկերտ թոռն Խոսրովու, եւ բարձին զթագաւորութիւնն Պարսից, որ տեւեաց ամս չորեքհարիւր ութսուն եւ մի. եւ զկնի նոցա առ զիշխանութիւնն Մաւի: Այլ Կոստանդինոս թոռն Հերակլայ, ընկենու զԹէոդորոս յիշխանութենէ, եւ հրամայէ զօրավարին Կիլիկիոյ ելանել ընդդէմ Մաւեայ. եւ Վարդ որդի Թէոդորոսի նենգ գործեաց զօրացն Յունաց՝ կտրելով զխելս կամրջացն ՚ի վերայ Եփրատու ՚ի փախչելն Յունաց: Եւ կացոյց Մաւի իշխան Հայոց զԳրիգոր Մամիկոնեան, եւ եղ հարկս Հայոց հինգ հարիւր դահեկան: Ոմանք ասեն ՚ի Թորդանայ բերեալ Գրիգորի զբովանդակ նշխարս Լուսաւորչին. եւ եկեալ Իսրայէլ հրամանաւ Վարազտրդատայ Աղուանից իշխանի, եւ խնդրեալ զծնօտ Լուսաւորչին, տարեալ եղ ՚ի Գլխոյ վասն կոչեցեալ տեղուջ:

Այլ զի ՚ի հարկէ հնազանդեցան Հայք Հագարացոց, ելանէ բարկութեամբ կայսրն ՚ի Հայս, եւ Ներսէս կաթողիկոս աղերսելով տանի իջուցանէ ՚ի Դուին ՚ի կաթողիկոսարանին, եւ հաղորդին ՚ի միասին կայսրն եւ կաթողիկոսն, եւ կան ութ օր ՚ի խորհրդեանն ըստ Յունաց սովորութեան, եւ քարոզեցին զժողովն Քաղկեդոնի. եւ ոմն եպիսկոպոս ՚ի վայր իջեալ ՚ի բեմէն՝ եմուտ ՚ի մէջ ամբոխին. եւ զկնի հարցեալ կայսերն ցեպիսկոպոսն, թէ Ընդէ՞ր ոչ հաղորդեցար ընդ քում պատրիարզին, նա ասէ. Դա իսկ եղեւ պատճառ զի յառաջ քան զերկուս ամս ժողով արար, եւ նզովեաց զամենայն հերձուածողս, եւ առաւել եւս զժողովն Քաղկեդոնի: Եւ մեղադրեաց յոյժ թագաւորն վասն նենգութեան նորա, եւ ապա հաղորդեցաւ եւ եպիսկոպոսն, եւ օրհնեաց զթագաւորն եւ թագաւորն զնա: Եւ ՚ի գնալ թագաւորին երկուցեալ Ներսէս յԵւջտունեաց տեառնէն, դնայ ՚ի Տայս. եւ զկնի վեց ամի դարձաւ լուեալ զմահն Թէոդորոսի. եւ շինէ իւր կայս առնթեր մեծ եկեղեցոյն, եւ կացուցանէ ամբոխութիւնս երդումարդոց, ըստ օրինի քաղաքականութեան, եւ ածէ ջուր ՚ի Քասախ գետոյ, եւ տնկէ անտառս եւ այգիս: Սա մեծ ժողովով առնէր զտօն վարդավառին, եւ ութ հարց փոխեցին, եւ ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա հրամայեաց ընտրել զարժանն եւ զայն միայն ուսանել, զոր եւ արար ՚ի ձեռն սրբոյն Բարսղի, մականուն ճոն կոչեցելոյ.

որ էր առաջնորդ սուրբ ուխտին՝ որ Դպրավանքն կոչի, 'ի գաւառին Անոյ. որում ասեն թէ եօթն անգամ ետես զՔրիստոս սքանչելի համարձակութեամբ. վասն որոյ ճոնրնտիր կոչի շարականս՝ որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր:

Եւ մինչ էր Ներսէս 'ի Տայս, Թեոդորոս ոշտունի շինեաց զկղզին Աղթամարու: Ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ կոչի, յայնժամ ճոնեանց կոչիր. եւ տարաւ զնա Սարգիս ճոնեանց 'ի գաղութ՝ յերեսաց այլազգեաց, ուր արար սքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետի, զկինն Դեմետրեայ արքայի Վրաց՝ յուրկութենէ բժշկեալ, վասն որոյ եւ առին 'ի Հայոց. եւ է սրբոյն Մեսրոբայ օրհնեալ, եւ կամ Բարսղի սրբոյ ճոնին, եւ ունի գիր հայերէն յաջ թէն:

Վախճանեալ Ներսիսի մեծի պատրիարգի, թաղի յիրում ձեռակերտին, եւ առնու զաթոռն Անաստաս, սենեկապետն Ներսիսի որ էր յԱկոռոյ, որ նորին հրամանաւ շինէր զսուրբ Գրիգորն, մինչ էր նա 'ի Տայս: Յաւուրս սորա շինեաց գրիգոր Մամիկոնեան զկաթուղիկէն Արձոյ, եւ զվանքն Եղիվարդայ. եւ Անաստաս շինէ զեկեղեցին Ակոռոյ, եղբայրանոց յօրինեալ եւ հիւրանոց: Առ Գրիգոր իշխանն եկն Սուրհանն պարսիկ յազգէ թագաւորաց, եւ ինդրեաց զՔրիստոս, եւ ետ զինքն մկրտել Անաստասայ, եղեալ ինքն նմա կնքահայր. եւ կոչեաց զնա յաւաղանէն Դաւիթ յանուն հօր իւրոյ, եւ ետ նմա զՁագ 'ի Կոտայս:

Յայնմ ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրաման յԱնաստասայ՝ յօրինէ տոմար հանապազորդ. որ մինչ խորհէր պատրիարգն ժողովով հաստատել՝ կատարի, եւ յաջորդէ զնա Իսրայէլ՝ զկնի վեց ամ պաշտելոյն Անաստասայ: Յաւուրս սորա զԲառաբա ոմն զօրագլուխ Տաճկաց՝ որ 'ի Հայս, վանեալ հալածէ Ներսէս իշխանն Վրաց: Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն վախճանի, եւ առնու զքօղն սուրբն Սահակ, որ 'ի Ձորովոր յԱրքունեացն: Ի յեօթն ամին սորա՝ արշաւեցին Խազիրք 'ի Հայս, եւ սպանին զԳրիգոր իշխանն. եւ գերեցին զհնարաւորն իւրեանց: Եւ առնու զիշխանութիւնն Աշոտ Բագրատունի՝ որդի Սմբատայ:

[ԼԷ]

Իսկ Մաւի իշխանն Իսմայելի խորհեցաւ բառնալ զթագաւորութիւնն Յունաց, որպէս եւ զՊարսիցն, եւ կազմեաց երեք հարիւր նաւ մեծ, եւ յամէն նաւ հազար այր. եւ հազար նաւ փոքր, եւ յամէն նաւ հարիւր այր. եւ արձակեաց զնոսա ընդ ծովն. եւ ինքն ընդ ցամաքն հասանէ 'ի Քազկեղոն. եւ կորեան ամենայն նաւքն, եւ ինքն փախեալ 'ի գիշերի եւ գերծաւ, եւ մեռաւ յԱսորիս: Եւ ա՛ռ զիշխանութիւնն Մրուան որդի իւր, եւ առաքեաց ոստիկան 'ի Հայս զՄահմէտ ոմն, որ աւերեաց զՍեւան կղզի, եւ գերեաց զորս 'ի նմա. եւ խաբէութեամբ կողոպտեաց զսուրբ Գրիգոր, ծառայ մի սպանեալ եւ ընկեցեալ 'ի խորափիտ մի. եւ ապա ինդրեալ եւ գտեալ՝ վրէժխնդիրք լինէին, ծայրակոտոր արարեալ զկրօնաւորսն, եւ քառասուն այր զփայտէ կախեալ: Եւ զնացեալ Մահմէտի, այլ ոստիկան առաքէ 'ի Հայս՝ Աբդլա անուն, որ կամեցաւ բառնալ զագատագունդն Հայոց, եւ զՍահակ կաթուղիկոս կապեալ առաքէ 'ի Դամասկոս, եւ զիշխանն Հայոց զՍմբատ. եւ զսուրբն Դաւիթ իսաչէ 'ի փայտի. եւ մնացեալ իշխանքն Հայոց, Սմբատ եւ Աշոտ եւ Վարդ, կամեցան փախչել 'ի Յոյնս. որոց հետամուտ եղեալ Իսմայելացիք հինգ հազար, հասին 'ի Վարդանակերտ եւ կռուեցան եւ սրախողխող եղեն առ հասարակ յիշխանացն մերոց, օգնութեամբն Աստուծոյ,

գորոց զունչսն հատեալ առաքէ առ կայսր, եւ առնու զկիրապաղատութիւնն զկնի Աշոտոյ, որ շինեաց զԴարօնից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, գոր երբ որդի նորա յարեւմտից, մասամբ. եւ 'ի նաւակատիսն երգեաց Ջորս ըստ պատկերին: Եւ զնա փոխէ Սմբատ Բագրատունի, եւ զնացեալ 'ի Տայս ամրանայ 'ի Թուխարս: Եւ լուեալ զայս Աբղլմէլիք, հրամայէ Մահմետի ելանել 'ի Հայս, որ էր զօրավար նորա. գոր լուեալ Մահակայ 'ի կապանսն՝ գրէ աղաչանս, զի հրամայեսցէ նմա Մահմետ առ ինքն զնալ. որ եւ հասեալ 'ի Խառան եւ հիւանդացեալ, գրէ առ նա աղաչանօք թողուլ գոր արարին ընդ նոսա Հայք. գոր ընթերցեալ Մահմետ զգիրն Մահակայ, շիջոյց զբարկութիւնն իւր, եւ ոչ եկն չարութեամբ յաշխարհս: Զկնի քսան եւ եօթն ամի պատրիարգութեան նորա յաջորդէ Եղիա զաթոռն: Մեռաւ Աբղլմէլիք, եւ առ զտեղին Վլիթ որդի նորա, որ հրամայէ Մահմետի բառնալ զազատսն Հայոց, 'ի Կասմայ ումեմնէ, որ էր հրամատար Նախճաւանի, որ խաբէութեամբ հաւաքեալ զնոսա, զմանս յեկեղեցին Խրամայ, եւ զկէսսն յեկեղեցին Նախճաւանի, այրէ զնոսա 'ի ՃԾԳ թուականին. եւ զգլխաւոր նախարարսն զփայտէ կախեալ չարչարէին. եւ զկանայս եւ զորդիս նոցա՝ 'ի գերութիւն վարեցին, ընդ որս եւ զՎահան՝ որդի Գողթան տեառն, որ եւ մարտիրոսացաւ:

ԶՎլիթ փոխէ Սլիման եղբայր նորա, եւ զնա Ումար՝ որ զտուրբն Վահան նահատակեաց: Իսկ զկնի այսորիկ Սմբատ կիրապաղատն եւ ընդ նմա նախարարքն զնացեալ յԵգեր, առին 'ի կայսերէն զքաղաքն Փոյթ եւ բնակեցան անդ. եւ զկնի յաւարի առեալ զնա, եւ զսպաս եկեղեցեացն, եւ եկին 'ի Հայս. եւ բարկացեալ Յունաց նզովս կարգեցին նոցա գրով, եւ 'ի զատկի տօնին կարդան:

[ԼԸ]

Բայց մեծն Եղիա երթեալ յԱղուանս, զՆերսէս Բակուր, զդաւանողն ժողովոյն Քաղկեդոնի, եւ զտիկինն որ համախոհ էր նմա, 'ի ձեռն Ումարայ քսորէ անարգանօք, եւ ձեռնադրէ այլ ուղղափառ (!) 'ի տեղի նորա. եւ ինքն դառնայ 'ի Հայս, եւ կատարի զկնի չորեքտասան ամի աստիճանին:

Եւ յաջորդէ զնա Յոհաննէս իմաստասէրն մեծ, որ 'ի ներքոյ ազանէր այծեայս ցփսիս եւ 'ի վերոյ պճնազարդեալ պաճուճէր զանձն, եւ ոսկի մանր աղացեալ փչէր ընդ ծաղկեալ ալեօք մօրուսն. գոր լուեալ Ումարայ կոչէ առ ինքն, եւ եօթն անգամ արքունական զգեստիք խիլայէ զնա, եւ առաքէ 'ի Հայս. որոյ եկեալ ճգնէր 'ի պահս եւ յաղօթս, եւ 'ի լուսաւոր վարդապետութիւնս: Որ եւ արար ժողով 'ի Մանազկերտ Հայօք եւ Ասորիօք, եւ սրբեաց զհաւատս 'ի մարդադաւան աղանդոյն՝ յԵգրի խոտորմանէն:

Յայնմ ժամանակի գրեաց Ումար առ Լեւոն կայսր շատ ինչ բանս, եւ զայն եւս, թէ լուեալ է մեր թէ եօթանասուն եւ երկու բաժին են քրիստոնէայք: Նա գրեաց պատասխանի թէ երկոտասան են. Յոյնք, Հռոմք, Բաբելացիք, Եգիպտացիք, Եթովպացիք, Հնդիկք, Ասորիք, Հայք, Սարակինոսք, Պարսք, Աղուանք, Վիրք: Իսկ դուք, ասէ, ընդէ՞ր կոչիք Քուզի, Սաբրի, Թուռաբի, Կնտրի, Մուրջի, Բասլի, անաստուած Ջեղի, որ ուրանան զեութիւնն Աստուծոյ եւ զյարութիւնն, եւ զասացեալ քո մարգարէն Հարիբի. եւ այն երկու. ոմն աստէ զձեզ, եւ ոմն ոչ է խռովասէր. եւ զձեր գրեանն գրեցին Ումար եւ Աբութուրաբ եւ Մուլիման պարսիկ, գոր Հաջաջ ազգապետն Պարսից շրջել ջանաց: Բայց մերս նոյն է, զի 'ի սուրբ Հոգւոյն է. եւ 'ի գերութեանն

ամենայն գրեանն ոչ կորեան, այլ մնացին առ ցրուեալսն, եւ յորժամ Եզր գրեաց զբովանդակն, միաբան գտան հնոյն, եւ է ըստ ալփավիտացն համարոյ, թէպէտ հինգն կրկնի, ոչ առանց մեծի խորհրդոյ:

Իսկ սուրբ պատրիարզն Յոհանէս՝ եհան յաշխարհէս Հայոց գտարածեալ Յոյնն յամենայն տեղիս, հրամանաւ Ումարայ, եւ զիշխանն դեսպան արձակեալ ՚ի Լեւոնէ Վասիդ անուն առ Յոհան, ասելով, թէ ընդէ՞ր առնես զչար բանդ զայդ. եւ հիւանդացաւ իշխանն եւ ածեալ յոլով բժիշկս՝ չկարացին օգնել եւ մերձեցաւ ՚ի մահ. եւ ձեռն եղեալ սուրբն Յոհան՝ առժամայն ողջացաւ. եւ տեսեալ զսքանչելիսն հաւատաց ՚ի մեր ուղղափառութիւնն, եւ ոչ եւս դարձաւ ՚ի Յոյնս (!). եղեւ կրօնաւոր եւ ճգնեցաւ ամս հնգետասան յայրին, որ Հոռոմ-այրն կոչեցաւ անուամբ նորա. եւ զիսչն որ կայ ՚իշխանն առ ինքն ունէր ՚ի գալն ՚ի Հոռոմոց, եւ անդ մնաց: Յոհան զկնի մետասան ամաց կատարի, եւ յաջորդէ զաթոռն Դաւիթ Կոտայեցի յԱրամօսից գեղջէ, որ լեալ էր միշտ ՚ի տան կաթողիկոսարանին յաւուրց անտի Տրդատայ. ուր շինեաց եկեղեցի, անդ առնելով զաւուրս կենաց իւրոց զամս երեքտասան, նեղեալ ՚ի... Տաճկաց որ ՚ի Դուին: Եւ զսա յաջորդէ Տրդատ՝ յՕթմուս գեղջէն, այր լաւ եւ առաքինի. որ եղեւ ՚ի սաղրելոյ աղօթից նորա խաղաղութիւն, զամս քսան եւ երկու:

[ԼԹ]

Իսկ զՈւմար փոխէ Իզիտ..., որ զիսչ եւ զպատկեր եբարձ յերկրէ. եւ զխողն սպանանէր, մինչ իւեղդեցաւ. եւ եկաց յետ նորա Հէշմ, որ առաքեաց զեղբայր իւր զՄսլիմ մինչեւ ցԲիւթանիա եօթն բիւր հեծելով, եւ միւսանգամ դարձեալ գնայ եւ ծովասոյց լինի ՚ի զօրութենէ Քրիստոսի խաչին. բայց միայն յիսուն այր մնաց. եւ կայսր արձակեաց զՄսլիմ, պատմել զփառս Աստուծոյ:

Արձակէ Հէշմ զՄրուան որդի Մահմետի ՚ի Հայս, որ եկեալ կացոյց զԱշոտ Բագրատունի կիւրապաղատ, եւ կամ պատրիկ ասել. եւ մախային նմա Սմբատ եւ Դաւիթ եւ Գրիգոր մամիկոնեանք: Եւ գնացեալ Մրուանայ ՚ի Վարաչան քաղաքն Հոնաց, եւ դարձաւ յաղթութեամբ: Զկնի Հէշմայ նստաւ Վլիթ զագրագործ, որ եւ հրամանաւ կուռայիցն սպանաւ, եւ եղաւ Մուլիման, եւ սպան զնա Մրուան, եւ ինքն տիրեաց. եւ տային Հայոց զօրուն ամի ամի հարիւր հազար դահեկան խաճիթայս: Եւ էառ Մրուան զԴամասկոս. եւ իսայտառակեաց զնոսա, զի կապէր զմարդ ՚ի չորս ցիցս եւ զերեսին կաշին հանել տայր. ՚ի վերայ ամբարշտութեան նոցա եւ սպանութեան եւ ցանկութեան անառակութեան. յԱստուծոյ ակն ոչ ունէին պատուհասի:

Զայսու ժամանակաւ ապստամբութիւն խորհեցան իշխանքն Հայոց. եւ ոչ կամեցաւ պատրիկն Աշոտ. եւ կալեալ կուրացուցին զնա մամիկոնեանքն Գրիգոր եւ Դաւիթ. սա է նախնի թագաւորացն Հայոց եւ Վրաց՝ Աշոտն: Ելանեն ապա երկու Աբղլայքն, որդիք Հէշմայ, եւ երկու ամ պատերազմին ընդ Մրուանայ կոտորմամբ սրոյ յոյժ յոյժ. որ ՚ի միում նուագի անկան ՚ի զօրուէն երեք հարիւր հազար, եւ սպանաւ Մրուան, եւ տիրեցին Աբղլայքն, որ եւ ՚ի մեռելոցն պահանջէին հարկս. եւ առաքեցին ՚ի Հայս զԲղիտ դառն նեղիչ, եւ ապա զԲաքր, եւ ապա զՀասան կատաղի. ընդ որ դառնացեալ Մուշեղ Մամիկոնեան՝ ապստամբեալ սպան յԻսմայելէ երկերիւր այր, եւ ապա չորեք հազար. եւ ապա իսաբեալք ՚ի մոնոզոնէ միոջէ, որ տեսիլս եւ երագս սուտս պատմէր, եւ ասէր թէ կատարեալ են ժամանակքն Իսմայելի, ժողովեցան հինգ հազարք, որոց

զլխաւորքն՝ Մուշեղ եւ Սմբատ, որք մարտեան ընդ երեսուն հազարաց, եւ մեռան երեք հազարքն եւ Մուշեղ եւ Սմբատ:

[Խ]

Իսկ զկնի Տրդատայ միւս այլ Տրդատ յաջորդէ զսուրբ աթոռն՝ ամս երիս. ապա Սիոն եպիսկոպոս Աղձնեաց, այր սուրբ եւ սքանչելի, որ զյորդառատ աղբիւրն ցամաքեալ առ ստորոտով Սիմն կոչեցեալ լերինն գաւազանաւ հարեալ բխեցոյց. որ եւ զկնի ութ ամի կատարի, եւ առնու զաթոռն տէր Եսայի յԵղիպատրուշոյ. զոր ասեն թէ մայրն աղքատութեամբ էր սնուցեալ, բացօթեայ, մուրով, ցրտահար՝ ի ձմերանի եւ արեւակեզ յամարանի. զոր ասեն թէ՝ ի սաստելն ոմանց՝ ի դրան հայրապետանոցին, ասաց մայրն. Ո՛չ գիտէք թէ պատրիարգ սնուցանեմ զտղայս իմ. որպէս եւ եղեն իսկ, նախ եպիսկոպոս եւ ապա պատրիարգ, ի շնորհացն Աստուծոյ. որ զկնի երեքտասան ամի կատարի. եւ յաջորդէ զաթոռն Ստեփանոս ամս երկու: Եւ ապա Յոբ ամիսս վեց. յորում աւուրս ի գեղն Բագրեւանդ վասն ոսկեղէն զարդուց եկեղեցոյն զրպարտեալ յոստիկանէն սպանան քառասուն այր. եւ առին յոլով գանձ: Իսկ զկնի Յոբայ Սողոմոն յաջորդէ զաթոռն, որ էր ի Գառնոյ, առաջնորդ սուրբ ուխտին Մաքենոցաց. որոյ երթեալ ի գաւառն Շիրակայ ի գեղն Զրեակ, մտեալ ի խուց ճգնի յոյժ, ուստի հանեալ տանէին յաթոռն. զոր տեսեալ յոյժ ներգեւեալ ի ճգնութեանցն՝ ասեն. Յո՞ երթաս. ասէ. Սեւել զերեսս դեղով ընդ այլ հայրապետսն. որպէս եւ եղեն. զկնի ամի միոյ վախճանեալ՝ նկարի ընդ այլսն: Եւ յաջորդէ զնա Գեորգ յԱրագածայ ոտանէ:

Իսկ յետ Աբդլայի Մահմէտ որդի նորա. եւ առաքէ առ Լեւոն երկու գրիւ մանանէիս, եւ զոր զկնի, եւ չկարաց վնասել:

[ԽԱ]

Բայց անկելոցն ի մեծ պատերազմին մնացորդք՝ էին այսոքիկ. երկու որդիք Սմբատայ որդոյ Աշոտի, որոց անուանքն՝ Աշոտ եւ Շապուհ. եւ Սամուելի եղբայր մի Շապուհ անուն. իսկ Մուշեղայ՝ երկու որդիք եւ չորս դստերք. անդրանկին Շապուհ անուն: Որք անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թէ ի պատճառս հօրն նոցա եղեւ աղէտն մեծ. եւ մի ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն իսմայելացոյ՝ թիկունս առնելով զնա: Իսկ որդիքն Սմբատայ Աշոտ եւ Շապուհ, հասարակ բաժանեցին զհայրենիս իւրեանց. եւ զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, եւ խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին յինքեանս Աշոտ եւ Շապուհ. եւ ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զգօրսն Իսմայելի՝ որ անդ, եւ գրաւեցին յինքեանս զՇիրակ եւ զԱշոցք, եւ զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ շինէ զԿամախ, եւ բնակեցուցանէ ի նմա զընտանիս իւր. եւ ինքն նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդոյ Բիւրատայ իշխանի Սմբատաւանայ, որ է Բերբերդ ի Սպեր գաւառի: Քանզի յաւուր միում պաշարեցին զնա թշնամիքն՝ մինչ կայր յաղօթս, եւ տեսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչեւ ցկատարումն, եւ ապա ելեալ ընդդէմ նոցա, կտրէր յերկուս զզլխաւորն, որում անուն էր Լիպառոն Աբդլա, եւ հարկանէր իբրեւ արս հինգ հարիւր: Առ սա բողոք կալեալ ազգին Գնունեաց՝ թափել զնոսս յԻսմայելացոցն, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, եւ առ ինքն զումարեալ զամենայն ազգն ախիւն իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս:

Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, եւ սկսան զօրանալ իշխանքն մեր յիրաքանչիւր իւր տեղիս: Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդոյ Ատրնէրսեհի որդոյ Վասակայ, որդոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիրապադատութեան: Իսկ Ջահապն ապստամբեալ յիրմէ իշխանէն, գալ նստի ՚ի Դուին բռնութեամբ, որդուով իւրով Աբղլայի: Եւ իբրեւ ետես զայն կիրապադատն Աշոտ, առաքէր առ կայսրն Լեւոն օգնել նմա, եւ նա չէր պարապ. զի Միքայէլ ոմն ջանացեալ սպանանել զնա, եւ ոչ յաջողեալ գործոյն, այլ իմացեալ կայսերն՝ կամեցաւ սպանանել զնա, եւ աղաչեցեալ ՚ի թագուհոյն՝ մինչեւ անցցէ զատկին օր, վասն որոյ եղաւ ՚ի բանտի. եւ էր բանտապահն բարեկամ Միքայելի, որ կաշառեաց զմանկլաւիկքն, որք են սենեկապանք արքայի եւ մօտակայք. եւ սոքա յանկարծակի սրովք դիմեցին ՚ի վերայ կայսերն յեկեղեցին ՚ի ժամ պատարագին, եւ նորա փախուցեալ առ սեղանն բուռն էհար զմանէ. իսկ նոքա անողորմ զազանաբար սպանին զնա ՚ի տեղուջն: Եւ թագաւորեաց Միքայէլն. ելանէր ՚ի խնդիր մեծ զօրավարին Մանուէլի մամիկոնենոյ. եւ նորա աճապարեալ հարիւր եւ յիսուն արամբք անկանի ՚ի Կամախ, եւ անտի առ Մամուն իշխանն Իսմայելի, որ սպանեալ զեղբայրն Մահմէտ ինքն տիրէր Տաճկաց. եւ նորա յոյժ պատուեալ զնա, կտրեաց ռոճիկս աւուրն հազար երեքհարիւր եւ վեց կշիռ արծաթոյ, եւ զայլ օր ըստ օրէ պարգեւս անչափ եւ անկշիռ: Բայց կիրապադատն Աշոտ տիրեաց ՚ի Կաղրջաց մինչեւ ՚ի Տփլիս, լեռնակողմամբն հանդերձ: Բայց տունն Ջահապայ զօրացեալ ՚ի Դուին, իբրեւ հինգ հազարաւ կամեցան զնալ ՚ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն եւ քաջն հաւատացեալ՝ երկերիւր հեծելօք եւ երեքհարիւր հետեւակօք ել ընդդէմ նոցա չնացեալ հաւաքման զօրացն, եւ կոտորեաց ՚ի նոցանէ զերեք հազարսն, եւ հասեալ ՚ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա, եւ դարձան խնդութեամբ փառաւորելով զՔրիստոս: Եւ Շապուհ եղբայր նորա ասպատակեալ ՚ի կողմանս Դնայ, եւ առեալ աւար բազում դառնայր. եւ թափեցաւ զօրն ՚ի քաղաքէն զհետ նորա, եւ քաղաքացիքն դիմեալք ՚ի վերայ Աբղլմէլքի, սպանին զնա, եւ ածին զդուռն քաղաքին. եւ դարձեալ զօրացն եւ իմացեալ զեղեալն, չքոտեցան եւ կորեան ՚ի միջոյ:

[ԽԲ]

Յաւուրսն յայնոսիկ գայր եպիսկոպոս մի Եպիկուռա անուն առ Աշոտ, եւ ջանայր դարձուցանել զնա... Քաղկեդոնի. զոր լուեալ Բուրետ ոմն վարդապետ ՚ի Միջագետս, առաքէ զսարկաւազն Նանա, որոյ եկեալ մարտնչի ընդ Ապիկուռայ, եւ յաղթէ նմա զօրութեամբ... եւ հալածէ զնա իշխանն, եւ հաստատի եւս առաւել ՚ի հաւատս սրբոյն Գրիգորի: Յետ այսորիկ վախճանի Աշոտ ՚ի մահիճս, եւ առնու զիշխանութիւնն Սմբատ որդի նորա ամ մի. եւ ապա մարտուցեալ ընդ չորից հազարաց, հինգ հարիւր արամբ պսակի ՚ի Քրիստոս յիսմայելականացն: Եւ եղբարք նորա Դաւիթ եւ Սահակ եւ Մուշեղ եւ Բագարատ, առեալ զմայրն իւրեանց չոզան ՚ի Նփրկերտ, առ Խալաֆն ամիրայ, սիրով ընկալեալք ՚ի նմանէ: Իսկ Սեւադա ոմն ՚ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կոուեալ ընդ Աշոտոյ եւ ընդ եղբօր իւրում Շապիոյ, մեռաւ Շապուհ ՚ի պատերազմին. եւ զկնի երկու ամաց մեռաւ Աշոտ ՚ի տան իւրում եւ ա՛ռ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա, եւ խնամէր զմնացեալ որբսն, զորդիսն Շապիոյ, բնակեցուցեալ զնոսա յԱնի յապահովս. իսաղաղութիւն արարեալ ընդ Սեւադայի, առնու ՚ի նմանէ զպատիւն հայրենի ասպարապետութեան. եւ ամուսնացեալ ընդ քեռն

Դաւիթի՝ ծնանի երկու որդիս, զԱշոտ եւ զՇապուհ, որոց քոյրն տուաւ յամուսնութիւն Բագարատայ որդույ Աշոտի կիւրապաղաստի. եւ Դաւիթ եղբայրն Սմբատայ շինէ զՕձ բերդ:

Յաւուրսն յայնոսիկ այր մի յազգէն Պարսից Բաբ անուն ելեալ ՚ի Բաղտատայ, արկանէր զբազումս ՚ի սուր սուսերի յազգէն Իսմայելի, զբազումս գերելով. եւ ասէր զինքն անմահ. եւ ՚ի միում նուագի սատակէր երեսուն հազար ՚ի պատերազմելն իւրում ընդ Իսմայելի: Եւ եկն մինչեւ ցԳեղարքունի, եւ մաշէր սրով զմեծ եւ զփոքր. եւ Մամուն էր ՚ի կողմանս Յունաց զամս եօթն, եւ առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ, եւ դառնայ ՚ի Միջագետս. եւ Մանուիլ երթայր դարձեալ ՚ի Յոյնս: Մեռաւ Մամուն. եւ առ զիշխանութիւնն Աբուսահակ եղբայր նորա. եւ նա առաքէ զԱփշինն ամենայն ուժով իւրով ՚ի վերայ Բաբանայ: Եւ Ափշինն առաքէ ՚ի Հայս, եւ ինքն կոտորէ զգօրսն Բաբանայ: Եւ Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան, եւ առնու յԱփշինն պարզես հազարիցս հազար կշիռ արծաթոյ, եւ այլ եւս հարիւր հազար առնու ՚ի նմանէ, եւ զԲաբանայ կտրեալ զձեռս եւ զոտս՝ հանեն զնա ՚ի փայտ: Եւ երթայ Ափշինն յերկիրն Յունաց, եւ յաղթէ կայսերն. եւ առնու զԱմուրիա քաղաք, եւ գերեալ զնա դառնայ իսաղաղութեամբ: Յաւուրսն յայնոսիկ Աբլիերթ ոմն ՚ի տանէն Ջահապայ, ել չորիւք հազարօք յերկիրն Սիւնեաց, եւ ել Բաբգէն ընդդէմ նորա երկերիւրօք, եւ ջնջեաց զնա իսպառ:

[ԽԳ]

Իսկ ՚ի կարգի պատրիարգացն, յաջորդէ զԳեորգ՝ Յովսէփ, ամս մետասան. եւ փոխէ զնա Դաւիթ, ամս երեքտասան: Յորում ատուրս ոստիկան ոմն ել ՚ի հայս՝ Հաւլ անուն, որում ընդդէմ դարձան եւ մեռան Սմբատ եւ Սահակ Սիւնեաց տէրն: Իսկ զՅովսէփ յաջորդէ Յովհանէս, այր սուրբ եւ պարկեշտ, որ զկնի ութ ամի չարախօսեալ զնա առ Բագարատ իշխան Տօրոս լերինն, խորհի ընկենուլ զնա, եւ պատուհասին ՚ի Տեառնէ չարախօսքն: Եւ ոստիկան ոմն եկեալ Աբուսէթ անուն, կապեալ առաքէ զԲագարատ առ ամիրայն. իսկ ամբոխն Տօրոսի շարժեալք ՚ի բարկութիւն սպանին զԱբուսէթ. զոր լուեալ ամիրայն՝ գումարէ զօր բազում ՚ի ձեռն ընդդէմ իւրոյ Բուղայի, տուեալ պատուէր զնախարարս աշխարհիս կապանօք առ նա հասուցանել. որոյ եկեալ կատարէր զիրամայեալն: Քանզի մտեալ ՚ի Տարօն ըմբռնէր զորդիսն Բագարատայ գերելոյ՝ զԴաւիթ եւ զԱշոտ, եւ զմեծ իշխանն տանն Արծրունեաց զԱշոտ. եւ զգեղեցկադիտակն Ատոմ հարիւր յիսուն արամբ՝ բռնադատէր ուրանալ զՔրիստոս. որում ոչ հաւանեալք, դառն տանջանօք սրոյ եւ հրոյ եւ իսաչի պսակեցան ՚ի Քրիստոսէ, որ օր քսան եւ հինգ էր մեհեկի ամսոյ, զոր տօն կարգեաց սուրբ պատրիարգն Յովհանէս: Եւ ինքն վախճանեցաւ զկնի քսան եւ երկու ամի հայրապետութեանն իւրոյ. եւ առնու զաթոռն Ջաքարիաս ՚ի գեղջէ Ջագայ: Եւ Բուղայի կալեալ զիշխանն Միսական զՎասակ եւ զեղբայր նորա զԱշոտ, եւ զմեծ իշխանն Ատրնէրսէն ՚ի գաւառին Խաչենոյ, եւ զիշխանն Գարդմանայ զԿտրիճն, եւ յՈւտի երթեալ ըմբռնէ զՍտեփանոս Կոնն, որ ՚ի նախնոյն իւրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգն անուանին, եւ զիշխանն Ադուանից զԵսայի. զամենեսեան իսաղացուցեալ տանի առ ամիրապետն. կոչելով զկնի եւ զսպարապետն Սմբատ իսաբէութեամբ, զոր իբրեւ չոգաւ ընդ կապեալսն իսառնէին, եւ պահանջէին ուրացութիւն. զոր ոչ կալաւ յանձին քաջ իսոստովանողն Սմբատ, այլ անդէն ՚ի բանտին կատարի ՚ի Քրիստոս, եւ թաղի ՚ի գերեզմանի Դանիէլի մարգարէի. եւ զպատիւ նորա առնու Աշոտ որդի նորա: Վկայեաց

եւ Ստեփանոս բազում տանջանօք ՚ի նմին տեղուց, Կոնն կոչեցեալ: Եւ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն ելանէ ՚ի բանտէն, եւ գայ մտանէ ՚ի գաւառն իւր Բագրեւանդ, եւ կամէր ամբանալ ՚ի գաւառն Գաբէղինից ՚ի Գազանաձակսն. որ եւ զկնի եօթն աւուրց մեռանի: Եւ իմացեալ ոստիկանին Մահմետի որ ՚ի Հայս, առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր եւ իցէ ըմբոնեալ առ նա տարցի, եւ նորա հատեալ զգլուխ մեռելոյն առաքէ առ նա, ասելով թէ Կամեցաւ անցանել առ Յոյնս, եւ իմ զկնի առաքեալ սպանի, եւ ահա գլուխ նորա: Եւ ինդաց Մահմետ, եւ զգացուցանէ Ջափրի, եւ նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ, եւ արծաթ բիրս հինգ. եւ յայնմհետէ բարձաւ ՚ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից:

[ԽԴ]

Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց եւ Վրաց, որք ՚ի Բագրատունեաց անտի սերեցան: Քանզի որպէս ասացան զկնի քաջին Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ, մինչեւ ՚ի Սմբատ Բագրատունի, եւ զկնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք, Սմբատ նախնի թագաւորացն Հայոց, եւ Վասակ սկիզբն թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրնէրսեհ, սորա Աշոտ, սորա Բագարատ, որոյ եղբայրն Գորամ, հետ սմա Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ՚ի Գորամայ հօրեղօրէ իւրմէ, որոյ որդին Ատրնէրսեհ, սորա որդի Դաւիթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ ա՛ռ իւր կին զդուստր Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն: Իսկ Հայոց նախնոյն Սմբատայ որդի Աշոտ Մսակեր, որոյ որդին Սմբատ խոստովանողն, որոյ որդին այս Աշոտ բարեպաշտ, որ անուանեցաւ իշխանաց իշխան ՚ի յԱլեայ որդույ Վահէի հրամանաւ ամիրապետին Ջափրայ: Առ սա առաքեաց Փոտ պատրիարգն Կոստանդնուպօլսի յերեքհարիւր ութելտասն թուականին զՅոհան մետրապօլիտն Նիկիոյ, որ ունէր թուղթ առ Ջաքարիա պատասխանի հարցմանն, թէ վասն է ր եղեւ չորրորդ ժողովն: Եւ արարին ժողով ՚ի Շիրակաւանն. էր անդ եւ սարկաւազն Ասորուց Նանա, որ ՚ի մահ մերձեցաւ ՚ի Ջափրայ վասն հաւատոյ, եւ տեսլեամբ արհաւրաց արձակեցաւ: Եւ էր գրեալ, թէ զկնի յարութեանն Քրիստոսի՝ երեքհարիւր հնգետասան ամի եղեւ ժողովն Նիկիոյ երեքհարիւր ութելտասնից. եւ պատրիարգունք էին, Սեդրեստրոս՝ Հռոմայ, Աղեքսանդր՝ Կոստանդնուպօլսի, Աղեքսանդր՝ Աղեքսանդրի, Եւստաթէ՝ Անտիոքու, Արիստակէս՝ Հայոց: Եւ յետ եօթանասուն եւ չորս ամի երկրորդ ժողով եղեւ ՚ի հինգերորդ ամի Թէոդոսի. եւ պատրիարգունք, Դամասոս՝ Հռոմայ, Նեքտառիոս՝ Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Ներսէս՝ Հայոց: Ջկնի քառասուն եւ եօթն ամի յերկրորդ ամի Թէոդոսի փոքրո՛ւ եղեւ ժողովն երրորդ, եւ պատրիարգքն այս էին. Կեղեստիանոս՝ Հռոմայ, Կիւրղոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Յոբնաղ՝ Երուսաղէմի. եւ թուղթ Մահակայ Հայոց: Ջհետ որոյ երեւեցաւ Եւտիքէս շամանդրիտ՝ Կոստանդնուպօլսի, որ շփոթմամբ մի բնութիւն ասէր Քրիստոսի. զոր հալածեաց Փլաքիանոս պատրիարգն, եւ նա աղաչեաց զներքինապետ ոմն Ոսկեւան կոչեցեալ գրել առ Դիոսկորոս, տալ հրաման ընդունել զնա, զոր եւ արար. բայց յետոյ զղջացաւ եւ արար կրկին ժողով յԵփեսոս, քսան եւ երկու ամօք զկնի Կիւրղին, եւ անդ արքորեաց զՓլաքիանոս, եւ խոտեաց զթուղթն Լեւոնի, եւ ելոյծ զԴոմնաս Անտիոքու. վասն որոյ գայ զհր մեղադրանաց առ Թէոդոս, եւ հրաման զի ժողով արարեալ վերստին տեսցեն. եւ նա կատարեալ ՚ի Տէր, արար Մարկիանոս յետ չորեքհարիւր վաթսուն եւ երկու ամաց յարութեանն Քրիստոսի,

զկնի հնգետասան ամի ննջմանն Սահակայ սրբոյ. յորում ամի կատարեցան սուրբ Վարդանանքն, ՚ի պատրիարգութեանն Յոհաննու Մանդակունւոյ, որ չէր պարապ գալ ՚ի ժողովն: Եւ արքայեաց զԴիոսկորոս ՚ի ժողովն. եւ զՊետրոս յԱնտիոքայ եւ զԱնատոլիս եղբայր Դիոսկորեայ, նախ ՚ի Կիզիկոն, ապա յԵրակլիա, եւ ապա ՚ի Պամփլագոնիա: Մարկիանոս մեռեալ զկնի վեց ամի, առնու Լեւոն զթագն ամս ինն եւ տասն, յորմէ արքայեաց Տիմոթէոս ՚ի Քերսոն: Լեւոն փոքր ամս հինգ. Չենոն ամս վեշտասան. սա եքարձ զաղմուկ ժողովոյն Քաղկեդոնի, բայց Հռոմ պահեաց...: Անաստաս, ամս քսան եւ եօթն, որ եկաց ՚ի նմին բարեպաշտութեան, եւ դարձոյց զՏիմոթէոս յԱղեքսանդր: Յուստիանոս ամս ինն. սա դարձեալ նորոգեաց զաղանդ ժողովոյն (!). Յուստիանոս ամս երեսուն եւ երեք. Յուստինոս ամս ինն: Մա կամեցաւ հաստատել զուղղափառութիւնն, եւ դաւով խեղդեցաւ: Տիմոթէոս ամս եօթն. առ սովաւ եղեւ ժողով ՚ի Կոստանդնուպոլիս, եւ Հայք ոչ ընկալան: Մօրիկ ամս քսան եւ երեք. Փոկաս ամս ութ. Հերակլ ամս երեսուն եւ հինգ. Կոստանդին ամս երեք. Կոստանդին թոռն Հերակլի ամս քսան եւ ինն. առ որով Մարտինոս արարեալ ժողով ՚ի Հռոմ, եւ երկու կամս եւ երկու ներգործութիւնս ասաց Քրիստոսի: Կոստանդին ամս երեքտասան. առ սովաւ Ագաթոն արար ժողով եւ զՄարտիանոսին հաստատեաց: Յուստիանոս ամս երկու. Լեւոն ամս երեք. Ապտիմարոս ամս եօթն. Յուստիանոս ամս եօթն. Փիլիպպոս Վարդան ամս երկու. Արտեմիս ամս երկու. Թէոդոս ամս երկու. Լեւոն ամս եօթն. Կոստանդին ամս հնգետասան. Ղեւոնդ ամս հինգ. Նիկիիփոր ամս վեց. Ստռակոս ամ մի. Միքայել ամ մի. Լեւոն Հայ ամ տասն. Միքայել ամ մի. Թէոփիլոս ամ մի. Միքայել ամս երկու. Վասիլ, առ որով Փոս որ զթուղթն գրեաց, եւ ասաց թէ չկայր հակառակութիւն մինչ ՚ի վերջին Ներսէս, առ որով եղաւ թուականն Հայոց, զամս հարիւր եւ չորս. որ նա ապա արար ժողով ՚ի Դուին ՚ի ձեռն Բարդիսոյ Ասորոյ, որ եկեալ էր ՚ի Սասնոյ. եւ զՓիլաքսիոսի եպիսկոպոսի Նաբուկ քաղաքի եւ զՏիմոթէի Կզուն գրեանն թարգմանեցին. եւ ՚ի վեշտասան թուին սպան հեռն Վարդան զՍուրէն մարգպան Պարսից, եւ ինքն ընտանեօք եկն առ Յուստիանոս յերեսներորդ ամի թագաւորութեան նորա, եւ ՚ի տօնի խաչավերացին չհաղորդեցաւ ընդ մեզ, ասելով թէ մեր վարդապետքն չհրամայեն մեզ: Վասն որոյ արար ժողով թագաւորն հարիւր եւ յիսուն եպիսկոպոսաց, որ ասի հինգերորդ ժողով: Եւ յորժամ Մուշեղ Հայոց եւ Յունաց զօրօքն նուաճեաց զԽոսրովու թագաւորութիւնն, եւ դարձաւ պարգեւօք, բան անկաւ վասն հաւատոց, եւ արար Մօրիկ ժողով հարիւր եւ վաթսուն եպիսկոպոսաց. քսան եւ հինգ եպիսկոպոսքն ՚ի Հայոց էր: Արար եւ Հերակլ եօթներորդ ժողով. իսկ Մայրովանեցին Յոհան ոչ ընկալաւ. զոր Թէոդոս Ռըշտունի եւ Ներսէս հալածեցին ՚ի Կովկաս, եւ յետոյ եկն ՚ի Հայս եւ արար զոր ինչ կամեցան. եւ ՚ի Յունաց ՚ի բաց կացին Հայք նզովիւք չափ, եւ առաւել յորժամ թարգմանեցին զգրեանն Յուլիանեայ Աղիկառնեցոյն ՚ի ձեռն Մարգսի ՚ի ժողովն Մանձկերտոյ:

Այսոքիկ ՚ի թղթոյն Փոսայ սակաւ ինչ գրեցաւ. որոյ գրեաց պատասխանի Սահակ Մռուսոն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ՚ի յԱշունքն, եւ հալածեալ անտի վասն հաւատոց, եկն ՚ի Հայս առ Աշոտ:

[ԽԵ]

Դարձեալ ՚ի նոյն կայսերէ Վասիլ եկն ներքինի մի Նիկիտ կոչեցեալ յերեքհարիւր քսան եւ հինգ թուին, ինդրել ՚ի յԱշոտոյ թագ, բերեալ շատ պարգեւս. քանզի Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա թէ արշակունի իցէ. զի մայրն հայ էր, եւ կատարիլ

թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր արշակունի. եւ կամէր պսակիլ ՚ի քագրատունւոյն: Ջոր կատարէ Աշոտ, ընդ նմին առաքէ եւ տասն հազար արծաթ ընծայ նորաշէն եկեղեցւոյն, որպէս Մամիկոնեանքն՝ հինգ գրիւ արծաթոյ, ասէն գնել զդուռն արեւմտեան սրբոյն Սովիայ ՚ի Յուստիանոսէ, յիշատակ Հայոց: Եւ պատմեաց Նիկիտն թէ գտաք նշխար սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ՚ի յադուհացսն ՚ի հինգերորդ շաբաթուն շաբաթ օրն, զոր տօն կարգեցին:

Յաւուրս յայտոսիկ տէր Ջաքարիա երթայ տեսանել զՅիսէ որդի Շեխայ, եւ յոյժ մեծարի ՚ի նմանէ, տուեալ նմա շատ ինչ պարգեւս, եւ դրօշս՝ բառնալ խաչ ՚ի վերայ նորա, եւ մտանել առաջի նորա միշտ: Ջսա յաջորդէ Գէորգ ՚ի տանէ պատրիարքարանին: Յորում աւուրս ընդարձակեալ մեծին Աշոտի ՚ի Վիրս եւ Ադուանս, եւ զԿաւկասայիսնսն հնազանդեալ, եւ չէր ինչ պակաս՝ բայց ՚ի թագէ. զոր խորհին իշխանքն Հայոց, եւ ՚ի ձեռն Յիսէի ազդ առնեն ամիրապետին, եւ նորա զուարթ սրտիւ առաքէ թագս եւ հանդերձս եւ երիվարս: Ջնոյն եւ կայսրն Վասիլ առաքէ. եւ օրինէ զթագն տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն եւ վեց թուին, եւ յերկոտասաներորդ ամի հայրապետութեան իւրում, եւ յուրօրիւր ուրօսուն եւ ուրօ ամի ծննդեան Տեառն: Որ բարիոք կարգաւորեաց զյօրինուածս թագաւորութեանն ամս հինգ:

Յաւուրս սորա էր Համամ, որ գրեաց մեկնութիւն Առակացն եւ Քերականին, եւ ՚ի Յորայ զՈ՞վ է զայն թարգմանեաց, եւ զօրհնութիւնս որ ՚ի զլուխս Սաղմոսացն ասացեալ գիրս մի, եւ զԱնբիծսն գիրս մի:

Այլ Աշոտ արքայ դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր, եւ ինքն կատարի ՚ի Քրիստոս եօթանասուն եւ մի ամաց. եւ առնու զթագն Սմբատ որդի նորա յերեքհարիւր քառասուն եւ չորս թուականին, ամս քսան եւ չորս, կամակցութեամբ Լեւոնի որդւոյ Վասիլի, որ թագաւորեաց յետ հօր իւրոյ ամս քսան եւ վեց, այր առատ ՚ի տուրս եւ ոչ նման Հռոմի, զի նա որդի Հայի էր եւ յոյժ սիրէր զՀայս: Իսկ Սմբատ առեալ զպատինն, շինէ զսուրբ Փրկիչն յԵրազգաւորն, որ է Շիրակաւանն. ուր եւ օծան իսկ. զի նա էր նախագահ թագաւորացն Բագրատունեաց, մինչդէռ չէր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի Խնամք, թէպէտ ներքին բերդն ընդ այս անուամբ էր, եւ հին ժամանակաւ շինեալ. ուր Օտա նախարարն ամրացեալ պահէր զքոյրն Տրդատայ, եւ զկուռս եւ զգանձս թագաւորացն Արշակունեաց զկնի մահուանն Խոսրովու. եւ ՚ի դառնալ Տրդատայ ՚ի Յունաց աշխարհէն, ընդ առաջ նորա ելանեն յԵկեղեցաց գաւառն Օտայն եւ Տաճատ աներ իւր, Աշոցաց տէր. եւ այս Տաճատս էր որ տեղեկացոյց զթագաւորն վասն Գրիգորի թէ որդի է սա Անակայ: Ասէն թէ իշխան մի լուծեալ ոտիւք՝ ՚ի ներքին բերդն ամրացեալ ոչ հաւանէր զալ ՚ի մկրտութիւն, ՚ի դառնալն Հայոց ՚ի հաւատս. մինչ հնարս իմացեալ սրբոյն Գրիգորի, այլափոխէ զինքն եւ երթայ հանդէպ բերդին, եւ ընդ գառ ՚ի վայրն թաւալզլոր գնայ անկանի ՚ի ջուրն, եւ վաղվաղակի կանգնեալ յոտիցն փառաւորէ ՚ի ձայն բարձր զԱստուած. որպէս թէ զօս զոլով ոտիցն առողջացաւ ՚ի ջրոյն զօրութենէ. զոր տեսեալ եւ լուեալ իշխանին՝ առ ինքն կոչէ, եւ տեղեկացեալ մկրտի եւ ողջանայ ոտիւք ՚ի նշան հոգեւոր բժշկութեանն:

[ԽԶ]

Իսկ պատուական թագաւորն Սմբատ ՚ի Յուսիփայ ոստիկանէն Տաճկաց իւեղղամահ լեալ ՚ի Դուին վասն Քրիստոսի, նշաւակի ՚ի փայտի. յորմէ եւ որդի նորա Մուշեղ

դեղակուր եղեալ կատարի 'ի Տէր վկայութեամբ, եւ թաղի 'ի Բագարան ընդ հարս իւր: Եւ զամս եօթն անիշխան լեալ երկիրս, սպառեցաւ սրով եւ գերութեամբ:

Իսկ Աշոտ որդի Սմբատայ, որ եւ Երկաթն կոչեցեալ վասն արիական քաջութեանն, անկանի առ Լեւոն կայսրն Յունաց, կոչեցեալն Կոստանդին: Յորում աւուրս կատարեցան 'ի Քրիստոս փառաւոր եւ մեծ իշխանքն Դաւիթ եւ Գուրգէն 'ի տանէն Գնունեաց 'ի Դուին քաղաքի, յանօրինէն Յուսփայ, վկայական արեամբ պսակեալ. որոց պատուի օր կատարմանն 'ի մարերի ամսեան քսան. եւ սուրբն Սահակ եպիսկոպոս երկերիւր ոգով եւ եօթն եկեղեցականօք կատարեցաւ 'ի Բիւրական, յահկի 'ի տասն. եւ երկու Կիրակոսքն 'ի նոյն ամսեան յեօթնէւտասն. որոց տօն գերապայծառ կարգեաց սուրբ պատրիարզն Յոհաննէս, որ ետես աչօք զխաւարաբեր ժամանակն, եւ գրեաց 'ի յիշատակ ապագայից դարուց. եւ տօն սուրբ թագաւորին Սմբատայ: Իսկ Աշոտ պսակեալ 'ի Լեւոնէ դառնայ 'ի Հայս յերեքհարիւր եօթնասուն թուին. եւ գտանէ թագաւորեալ զհոմանունն իւր Աշոտ որդի հօրեղբօր իւրոյ. զոր հնագանդեաց 'ի ներքոյ իւր. որպէս եւ զԳագիկ թագաւոր տանն Արծրունեաց, եւ զՄովսէս բոնացեալն յԱդուանս, զորոյ իսաւրեցոյց զաչսն. եւ մեծագօր գտեալ քան զնոսա, եւ քան զթագաւորն Վրաց Ներսէհ, կոչեցաւ 'ի վերայ նոցա Շահնշահ, զամս ութ. կատարի, եւ առնու զթագն Աբաս եղբայր նորա: Որ զկնի մահուան հօրն զնացեալ 'ի Վիրս, եւ փեսայացեալ նոցին՝ դառնայ այսրէն եւ տիրէ ամենայն հայրենեաց իւրոց ամս քսան եւ ինն, յերեքհարիւր եօթանասուն եւ մի թուին: Ի սորա աւուրս յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք 'ի Հոռոմոց աշխարհէն սակս ուղղափառութեան (!), եկեալ յաշխարհս մեր շինեցին յովով վանորայս: Նախ զԿամրջաձոր, եւ ապա զՀոռոմոսին կոչեցեալ վանք, որպէս թէ 'ի Հոռոմոց կողմանցն եկին, եւ զԴպրավանքն. 'ի նոցանէ ասէն շինեալ զՍանահնին սուրբ Աստուածածինն: Շինեաց եւ թագաւորն Աբաս զկաթուղիկէն 'ի Կարս գեղեցիկ յօրինուածով: Յորում աւուրս ել իշխանն Սարմատացոց, որ յայնկոյս Կովկասայ, Բեր անուն, բազում զօրօք առ Կուր գետով. եւ լուեալ եթէ թագաւորն Հայոց պարապով շինէ եկեղեցի, յղեաց առ նա եւ ասէ. Գիտեա դու կանխագոյն, զի եկեալ եմ յօրինել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Քաղկեդոնի ժողովոյն սահմանադրութեամբ. իսկ նորա ընդդէմ նորա ելեալ Հայաստանեայցս զօրօք, սրոյ ճարակ տայ առ հասարակ զգօրսն, եւ զԲերն 'ի բուն անեալ բերէ զնա կենդանի 'ի Կարս, եւ միանգամ տայ տեսանել զեկեղեցին, եւ ապա բրեալ զտեսանելիսն, վաճառէ զնա ազգին իւրում, զիր երդման առեալ, զի յաւիտեան այլ ոչ եւս ելցեն 'ի Հայս:

[ԽԷ]

Իսկ զկնի կայսերն Յունաց Լեւոնի առնու զթագն Աղեքսանդր ամ մի. եւ յետ նորա Ռամանոս՝ ամս քսան եւ ինն: ՅԱբասայ եւ 'ի սորա աւուրս առաւ Մելլտենի 'ի Տաճկաց յերեքհարիւր ութսուն եւ երեք թուին, եւ յերեքհարիւր ութսուն եւ ութ՝ Համդուն 'ի Կողոնիա եմուտ զօրօք եւ անդրէն դարձաւ: Եւ ապա թագաւորեաց Կոստանդին որդի Լեւոնի յերեքհարիւր իննսուն եւ երկու թուին, ամս վեշտասան. որ եւ 'ի վեցերորդ ամին էառ զՄարաշ 'ի Տաճկաց, յերեքհարիւր իննսուն եւ ութ թուին: Չամանէ ասէն 'ի միում աւուր հինգ առիժ սպանեալ: Սա ետ արկանել 'ի յԱլիս գետ յովով բեռինս Թրքաց, եւ փախոյց զգօրսն Իսմայելի, եւ կոչեցաւ Թրքաժողով:

Իսկ 'ի սուրբ աթոռն զկնի տէր Յոհաննիսի եկաց տէր Ստեփանոս ամ մի: Տէր Թեոդորոս ամս մետասան. եւ յետ նորա տէր Եղիսէ եղբայր նորին՝ ամս հինգ. եւ զկնի նորա տէր Անանիա Մոկացի՝ ամս քսան եւ երկու: Սա բազում աշխատութեամբ հնազանդեաց զՄիւնիք, որ Աղուանիք թեւակոխէին, եւ ձեռնադրեաց արքեպիսկոպոս զկնի Յակոբայ ապստամբի, (գտեր Վահան 'ի Բաղաց, որդի Ջուանշերի իշխանին, որ շինեաց զամենապայծառ ուխտն Յոհաննու վասն, առ ստորոտս անմատոյց դղեկին Բաղաց). այլ եւ զԱղուանս ածեալ 'ի հաւան չձեռնադրել իւրեանց կաթուղիկոս առանց աթոռոյ սրբոյն Գրիգորի: Ջկնի սորա էառ զաթոռն Վահան 'ի Բաղաց, ամ մի. որ եւ ապա կարծիս առեալ, եթէ դաշնագիր է Վրաց, եւ պատկերս ետ ածել, վասն որոյ փոխեն զնա, եւ դնեն յաթոռն գտեր Ստեփանոս ազգական սրբոյն Մաշտոցի, որ 'ի Սեւան, ամս երկու:

[ԽԸ]

Իսկ 'ի չորեքհարիւր թուին փոխի սուրբ թագաւորն Աբաս. եւ առնու զթագն Աշոտ որդի նորա, Ողորմածն կոչեցեալ. որ բազում ուրկանցս շինեաց, եւ առատ ռոճկօք դարմանէր զնոսս, յոլով անգամ եւ անձամբ սպասաւորելով նոցա, եւ զթարախածոր մնացորդս բաժակին ախորժանօք ըմպէր, կոչելով անուանս գողեացն իշխանս եւ կիրապաղատս, ըստ Յակոբայ՝ եթէ մեծատունք են հաւատովք: Սա զփոքր պարիսպ քաղաքին Անույ շինեաց. եւ զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց, 'ի չորեքհարիւր երեքտասան թիւն. եւ բարեպարիշտ կողն իւր, Խոսրովանոյշ, շինէ զփառագարդ սուրբ ուխտսն զՍանահին եւ զՀաղբատ: Հանգեան 'ի Քրիստոս 'ի չորեքհարիւր քսան եւ հինգ թուին, թողով երիս որդիս, զՍմբատ, զԳագիկ եւ զԳուրգեն. որ եւ 'ի նմին աւուր առնու զթագն երեց որդին Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անույ շինեաց, եւ զկաթուղիկէն հիմնարկէ. եւ կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդուվքն Չորոյգետին. եւ զԿայեն եւ զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ 'ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի եւ Խոռակերտ, եւ զԲազունիք՝ որ է Բազկերտ 'ի գաւառն Տաշրայ. եւ այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Մոմխէթ կոչեն: Եւ 'ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ, Աբաս եւ Կիրիկէ. յորոց կանայքն կրօնաւորք՝ Մամբան, եւ Ռուզուքան: Եւ Գագիկ սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն, հալածական լինի վասն կարծեաց ինչ դրժանաց: Իսկ Սմբատ հասեալ 'ի չորեքհարիւր քսան եւ ութ թիւն՝ կատարի. եւ նոյնժամայն կոչեն զհալածեալն Գագիկ, եւ տան նմա զթագն եւ ածեն նմա 'ի կնութիւն զԿատրամիտէ, դուստր Սահակայ Միւնեաց թագաւորի, որ վճարեաց աւարտամբ զկաթուղիկէն, 'ի հրեշտակէ Աստուծոյ յորդորեալ, որ խոստանայր նմա կալ 'ի ձեռնտուութիւն գործոյն, եւ մնալ 'ի նմին տաճարի, մինչեւ զՔրիստոս եկեալ տեսցեն արարածք:

Իսկ զսուրբ աթոռն յաջորդէ տէր Խաչիկ ազգային տեառն Անանիայի, ամս իննետասան. եւ զնա փոխէ տէր Սարգիս՝ ամս քսան եւ չորս: Սա շինեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Անույ, եւ անդ փոխեաց զնշխարս նոցա բերեալ մեծաւ հանդիսիւ, եւ կարգեաց զօրն տօն մեծ:

[ԽԹ]

Այլ զկնի Կոստանդեայ կայսեր, առնու զթագն Լեւոն, եւ ապա Կոստանդին եւ Եոննեա մայր իւր, որ խաւարեցոյց գորդին, եւ ինքն տիրեաց ամս հինգ մեծի աթոռոյն: Յորում

աւուրս կատարեցան 'ի Քրիստոս Սահակ եւ Յովսէփ, տաճիկք ազգաւ, յարացի հնգետասան: Եւ զկնի Միքայելն, եւ ապա Լեւոն, եւ յետ նորա Միքայել, ապա Թեոփիլոս. եւ զկնի Միքայել, ապա Վասիլ, եւ զկնի Լեւոն, ապա Ալէքս. եւ զկնի Ռոմանոս, որ հալածեաց զուղղափառ (!) վանորայսն յարեւելից աշխարհս. կամեցաւ ձեռնարկել եւ 'ի վանորեայս Սեւ լերինն, յերթալն իւրում ծանր զօրո 'ի կողմանս Հալպայ, որ եւ 'ի բարկութենէն Տեառն հետիոտս փախեաւ միայն մազապուր: Յետ նորա Կոստանդին որդի Լեւոնի. ապա Ռոմանոս, եւ ապա Նիկիփոռ, ապա Կիւր-Ժան, եւ ապա Վասիլն, ամս յիսուն եւ երկու:

[Ծ]

Իսկ յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ 'ի գիրս նոցա, եթէ Թորգոմ ուր որդուլք եկն յԱյրարատ գաւառ զկնի ջրոյն մեծի. եւ երեք յորդոց նորա նախագահք եղեն՝ Հայոս եւ Քարթլոս եւ Կոկասոսն, եւ տիրեցին աշխարհաց, եւ իւրեանց անուամբն կոչեցին Հայս եւ Քարթլ եւ Կովկաս. եւ տիրեցին 'ի ծովէն Պոնտոսի մինչեւ ցծովն Կասբից՝ մինչեւ ցՄիհրան, եւ ցԱրբակ թոռն իւր, որ էառ կին 'ի Պարթեւաց՝ Սահակղուխտ անուն 'ի Պարտաւայ. որ եւ ամուլ գոլով հաւատաց 'ի Քրիստոս, եւ ետ նմա զաւակ՝ զՎախտանգ, որ եւ Գուրգասարն կոչեցաւ, որ է Գայլագլուխ 'ի Պարսից բառն. զի ունէր 'ի վերայ սաղաւարտին պատկեր գայլոյ յառաջի կոյսն, եւ յետի կոյսն՝ առիւծու: Սա էառ իւր 'ի կնութիւն զդուստր Լեւոնի կայսեր. եւ 'ի սմանէ սերեցան թագաւորք մինչեւ ցԹեւոսա, զոր կուրացոյց Աբաս. յետ որոյ թագաւորեաց Բագարատ, որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, 'ի վերայ Ափխագաց. այս ըստ Մխիթարայ երիցու ասիցն:

[ԾԱ]

Իսկ Վասպուրականի թագաւորքն՝ յազգէն Սենեքերիմայ, Գագիկ որդի Դերենկանն, սա շինեաց զԱխթամար. ապա Դերենիկ որդի նորա, եւ զկնի եղբայր նորա Աբուսահիլ, եւ յետ նորա Շահնշահ՝ որդի նորա, եւ զկնի եղբայր իւր Գուրգէն. եւ ապա եղբայր իւր Սենեքերիմ, որ նեղեալ 'ի Պարսից՝ ետ զերկիր իւր 'ի Վասիլն, եւ չոգաւ առ նա չորս որդուլք, որոց անուանքն՝ Դաւիթ եւ Աբուսահիլ, Ատոմ եւ Կոստանդին, եւ եղբորորդիքն՝ Դերենիկ, Գագիկ եւ Աշոտ. եւ առնու փոխան զՍեւաստ եւ զԼառիս, եւ յոլով պոռաստինս: Որ զկնի սպան Դաւիթ զՓոկաս ապստամբ, եւ ա՛ռ գրով զԽաւատանէն:

[ԾԲ]

Ի չորեքհարիւր քառասուն եւ չորս թուին մեռաւ Գագիկ, տուեալ զթագաւորութիւնն երից որդոց իւրոց, Յովանիսի, Աբասայ եւ Աշոտոյ: Զթագն տայ Յովանիսի, եւ զԱնի եւ զՇիրակ, զսուրբ Գրիգոր Ձորովն Աշոցաց, զԱնբերդ եւ զդաշտն այրարատեան, զԿայեան եւ զԿայծոն եւ զՏաւուշ գաւառն Սեւորդեաց. եւ զայլ մնացեալսն՝ Աշոտի եւ Աբասայ բաժանէ: Եւ 'ի վիճել նոցա զկնի այնորիկ, զայ թագաւորն Ափխաղաց Գորգի, որդի Բագարատայ, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, եւ առնէ իրաւունս 'ի մեջ նոցա եւ գնայ: Եւ զի ոմանք յիշխանացն անհնազանդ լինէին, գնայ կրտսերն Աշոտ առ կայսրն Վասիլ, եւ առեալ 'ի նմանէ զօր, զայ եւ հնազանդէ զամենեսեան, եւ նստի թագաւոր Դրուց աշխարհին. եւ Աբաս 'ի Կարս:

Յայնմ ժամանակի վախճանեցաւ կիրապաղատն Դաւիթ, անժառանգ գոլով. եւ տայ անդարձագրով զհայրենիսն իւր 'ի Վասիլն, զՈւխթիսն եւ զՆամրուան, եւ զքաղաքն Ապահունեաց զՄանձկերտ, եւ զամենայն ինչս: Ջոր լուեալ Վասլի կայսեր, գայ քանակի 'ի դաշտն Կարնոյ. գայս իմացեալ Յովանիսի երկեաւ, եւ առաքէ առ նա զՊետրոս պատրիարզն պատարագօք, զոր տէր Սարգիս 'ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք 'ի յԱնի, մեծ հանդիսի: Այլ եւ նեղէր զՅովանէս՝ արքայն Վրաց. վասն որոյ պատրիարզին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ 'ի Հռոմս, որպէս եւ կիրապաղատն, եթէ պահէ զնա 'ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն: Եւ կոչէ առ ինքն զԳորգի թագաւորն Վրաց, եւ ոչ եկն 'ի կոչ նորա. վասն որոյ երթայ գայրացմամբ, եւ աւերէ զնորա գաւառս երկոտասան, եւ դառնայ յերկիրն Խաղտեաց, անդ անցուցեալ զձմեռն: Կոչէ առ ինքն զտէր Պետրոս օրհնել ընդ նմա ջուր 'ի տօնի Աստուածայայտութեանն. որ եղեւ հրաշալի նշան, լոյս փայլատակեալ 'ի յաջոյ հայրապետին եւ յօժմանէ սուրբ իւղոյն 'ի հիացումն տեսողացն. եւ յոյժ գովեցաւ հաւատն Հայոց: Եւ դառնայ Վասիլն 'ի Կոստանդնուպօլիս եւ վախճանի 'ի չորեքհարիւր եօթանասուն եւ երեք թուին. եւ առնու զթագն Կոստանդին ամս երեք. եւ զկնի Ռոմանոս փեսայ նորին, ամս հինգ. զոր հրամանաւ կնոջն խեղդեցին 'ի բաղանիսն, եւ եղին զՄիքայէլ ամս եօթն:

[ԾԳ]

Իսկ որ զԱմիրաւամումնեացն կարգն բերեալ հասուցաք 'ի Ջափր եւ թողաք. քանզի սկսաւ իշխանութիւն նոցա 'ի վաթսուն թուին, եւ դադարեալ շփոթեցան յերեքհարիւր յիսուն թուին. եւ աստ եւ անդ բռնակալեալ տկարացան 'ի զօրութենէ, եւ զօրացան ազգն Թուրքաց այսպիսի պատճառաւ: Էր 'ի Խորասան ոմն յԻսմայելացւոցն Մահմուտ անուն, որ անցեալ ընդ Ջահան գետ յերկիրն Թետալացւոց, ածէ բազում գերիս 'ի Խորասան՝ որ ասի արեւելք, բնակեցուցանէ առանձինն, եւ աճեալ նոցա եւ բազմացեալ՝ դնեն զոմն ամիրա, եւ ապա տան նմա թագ՝ 'ի մեռանելն Մահմուտին. նա յաջողակ եղեալ տիրեաց Պարսից եւ նստաւ սուլտան, որում անուն էր Դօղլա-բաք: Այս ըստ Վահրամայ, որդւոյ Տիգրանայ, վիպագրի. իսկ պատուական երեցն Միսիթար Անեցին, որոյ յիշատակն 'ի գիրն կենաց, այսպէս ասէ. Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն՝ որ 'ի Թուրքաց, եւ գտի շնորհօքն Աստուծոյ այսպէս. Մահմուտն՝ զոր ասացաք, Մքթթանայ որդի, յաննշանից մեծացեալ՝ որպէս Արտաշիրն Մասանեան, եւ երարձ զիշխանութիւնն Մահմետի ազգին 'ի Մահմատ Մուխթադէ, երեսներորդ երրորդ 'ի Մահմետայ, յերկերիւր քառասուն եւ վեցերորդ ամի իշխանութեան նոցա. եւ զօրացաւ նա 'ի Բահլ քաղաքի 'ի յերկրին Քուշանաց, եւ ել համբաւ զնմանէ ուժգին, մինչեւ խալիֆայն երկուցեալ՝ առաքէ նմա ընծայս եւ ալամ, եւ լաղապ՝ Ամինադլ, եւ սուլտան կոչէ զնա: Եւ առեալ նորա զպատիւն եւս մեծանայ. եւ ելանէ 'ի Հնդիկս՝ 'ի համբաւ կոռցն Մաթանայ, զոր կործանէ, եւ առեալ աւար դառնայ, զՄահմատ որդի իւր թողով անդէն, եւ գայ 'ի Գուրգան. եւ առնու 'ի տեառնէն Գուրգանայ չորեքհարիւր հազար դահեկան, եւ պէս տամբ միով, 'ի չորեքհարիւր եւ քսան թուին իւրեանց. եւ անցանէ գայ յԸռէ. եւ տէրն Ռէոյ Մաջա-դաւլա Ռստոմ, երեք ատուրբ յառաջ առեալ զԴելմիկսն՝ ել ընդ առաջ նորա, եւ գայ 'ի Սրաւ անհնարին ուժով, եւ ընդ նմա երկերիւր եւ յիսուն փիղ: Եւ տեսեալ զնա, ասէ. Շահ, նամագ կարդացեալ էս. եւ նա ասէ. Այո. եւ դարձեալ ասաց. Ճատրկուց խաղացեալ էս.- Այո: Ապա ասէ. Թագաւոր 'ի թագաւորի տուն մտէ՞ թէ ոչ. եւ նա լռեաց: Եւ առժամայն կապեալ զնա յղարկէ 'ի Խորասան, եւ զամենայն ինչս նորա առեալ՝ տիրեալ Ռէոյ, եւ

գայ 'ի Տապարաստան եւ 'ի Տառաբի, եւ 'ի Սարի. տայ 'ի ձեռս Մասխուտի որդոյ իւրոյ զՌէ, եւ զՂազուին եւ զՔոհաստան բովանդակ. թողլով զնա յՌէ, գայ 'ի Սրաւ եւ առնու հարիւր հազար դէնարի, եւ անցանէ 'ի Նաշաւուրն 'ի չորեքհարիւր քսան եւ մի թուին իւրեանց: Իսկ Մասխուտն առնու զՀամիան եւ զԱսպահան, եւ դառնայ յՌէ. եւ իսկոյն լսէ թէ սպանին զՀահնայսն քո յԱսպահան: Եւ դարձեալ անդրէն սատակէ չորս հազար այր եւ դառնայ յՌէ. եւ նոյնժամայն բերեն նմա զգոյժ մահու հօրն, եւ թէ սուլտանացաւ Մահմատ եղբայր քո. եւ յարուցեալ զնայ, եւ կալեալ զեղբայրն կուրացուցանէ, եւ առնու զիշխանութիւնն եւ զաթոռն: Եւ քանզի հայր նորա 'ի գնալն յօգնականութիւն ազգին՝ որոց զիւսաւորն կոչիւր Խտրդան-Պօղրդան, 'ի ճանապարհին պատահէ բանակաց ինչ բազմութեան Թուրքաց, եւ 'ի դառնալն նոյն ճանապարհաւ՝ մեծաւ յաղթութեամբ առեալ զամիրայն նոցա զԱփաղու բերէ 'ի Խորասան եւ դնէ 'ի կապանս. եւ ազգ նորա եկեալ խնդրեցին 'ի հօրէն, եւ ապա յորդոյն, եւ ոչ ետուն: Իսկ նոցա բարկացեալ անցին ընդ Ջահան ամենայն բանակօքն իւրեանց, եւ զանձինս 'ի մահ եղեալ կռուեցան, եւ յաղթեցին եւ առին զՆաշաւուրն եւ կոտորեցին զգօրս սուլտանին 'ի Դաղանդանն մօտ 'ի Սրմն. եւ փախստական եղեալ սուլտանն՝ զնայ 'ի Ղազինն եւ անտի 'ի Հնդիկս: Եւ 'ի ճանապարհին սպանաւ սուլտանն, եւ զկոյր եղբայր նորա թագաւորեցուցին 'ի Ղազուին, որոյ յերկարեալ 'ի նմին ծնանի որդիս. եւ մի 'ի միոջէ առեալ ունին զՂազուին մինչեւ ցայսօր:

Իսկ յառաջադէմն 'ի Թուրքացն՝ որում անուն էր Մուսեափաղոյ Սարչուքեայ որդի, ունէր հինգ եղբորորդիս. որոց անուանքն՝ Աբուսալիմ, Դաւութ, Չաղրբեկ, Աբուտալիփ, Տօղրիլեւէկն, որ էառ զիշխանութիւն սուլտանութեանն, եւ հնգետասան ամ ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն Խորասանայ. եւ եկեալ յՌէ գտանէ երկուս շտեմարանս զանձուց լի ոսկով. եւ առնու ընդ ձեռամբ, եւ յղէ առ խալիփայն եւ ինդրէ օրհնութիւն. եւ նա մեծարէ զնա արամբք պատուականօք, եւ տայ նմա ալամ եւ ընծայք, եւ կարդայ զանուն նորա 'ի մամբարն, եւ դնէ նմա մականուն Ռուքնաղօվլա. եւ յայնմ օրէ քարոզեցաւ աշխարհակալ: Եւ փոխէ զնա Արփասալան հօրեղբորորդի Տուղրիլին, որ ելից զամենայն աշխարհ արեամբ. եւ ունէր որդիս ութ, որ եւ հասանէր յաթոռ թագաւորութեանն Մէլիք շահն, բարի եւ խաղաղարար. եւ զկնի Մահմուտ սուլտանն: Եւ յետ նորա աւագ եղբայրն Բաքարուխն՝ որ կոտորեաց զնա, եւ առ զաթոռն ամս հինգ: Եւ յառնէ 'ի վերայ նորա Դուդուշն որդի Ալփասալանին, զոր վկանդեալ Բակիարուխն եհար զգօրս նորա, եւ սպան զԴուդուշն: Եւ Մահմուտ սուլտանն Մահմուդի որդին եհար զԲակիարուխն տղայ հասակաւ, եւ առ զսուլտանութիւնն ամս երեքտասան, եւ զկնի նորա Մահմուդն որդի նորին. ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտանն կոտորէ զնա, եւ առնու զԱրաղայ իշխանութիւնն, եւ դնէ զնա 'ի Բարաղայ. եւ զկնի նորա Դաւութ որդի նորա եկաց սուլտան՝ զոր սպանին Մլիետքն: Եւ ապա եկաց Տօղրիլն, եւ զկնի Մասխուտն, եւ ապա որդին՝ Ասլան, եւ զկնի ուժովն Տուղրիլ, որ կայր մինչ 'ի պատմագիրս. որում պատիւ 'ի տեառնէ Աստուծոյ:

[ԾԴ]

Նոյն այր ասէ եւ յաղագս թագաւորին Յովանիսի, եթէ եղբայր նորա Աշոտ՝ 'ի յոտս Թալնայ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ 'ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով 'ի սնարիցն կուսէ որոգայթս. եւ այնու ըմբռնեալ՝ տայ 'ի ձեռս մեծ իշխանին Ապիրատն կոչեցելոյ սպանանել զնա. եւ նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ

յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօճեալ Տեառն, եւ խելագար մի եղից ՚ի տեղոջ սորա: Զամանէ ասէն յաննշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն՝ մինչ լինէր տէր երկոտասան հազար հեծելոց. որ եւ շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վարհամ իշխանն զՄարմաշէն:

Ի չորեքհարիւր եօթանասուն թուին ել Տուրքիլեւհէկն եւ պատահեաց նմա ՚ի Նախճաւանի Լիպարիտն հինգ հազար հեծելօք, եւ փախեաւ յահագին բազմութենէն, եւ ՚ի գալ Թուրքին ՚ի Դուին եւ սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, եւ ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ ՚ի Սերկելի, եւ ՚ի հանգչելն անդ սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի:

Զայսու ժամանակաւ պատրիարզն Պետրոս քինով ինչ Յովաննու թագաւորի գնաց ՚ի Վասպուրական, եւ աղաչանօք ոչ դարձաւ. ապա ՚ի ձեռն տուկի կողմանցն ածաւ բռնութեամբ, եւ արգելաւ ՚ի Բջնի: Զոր լուեալ տէր Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, զայ եւ հանէ գնա ՚ի բանտէն, եւ տանի դնէ յաթոռն իւր, հանելով զԴիոսկորոս առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին՝ զոր եղեալ էին կաթողիկոս փոխանակ Պետրոսի ամ մի. եւ նա դարձաւ ՚ի վանս իւր, այր սուրբ եւ առաքինի:

Յայնմ ժամանակի փոխէ զԳէորգ Վրաց թագաւոր որդի իւր Բագարատ, եւ իշխանն Վրաց Լիպարիտ ապստամբեալ փախուցանէ գնա ՚ի խորին Ափխազք, եւ շէն ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ, ձեռն տուեալ ՚ի Միքայել կայսրն: Որ ՚ի մեռանելն իւրում տայ զթագն Կալափատայ որդոյ քեռ իւրոյ, որ զկնի սակաւ աւուրց կուրացաւ հրամանաւ Զոյի թագուհոյն կնոջն Միքայելի. յորում տեղոջ երեւեցաւ քար մի ունելով գիր, թէ աստ թագաւոր իսաւարի: Եւ Զոյի առնու այր իւր զՄոնամախն եւ դնէ նմա թագ:

[ՄԵ]

Առ սա գնայ տէր Պետրոս եւ դառնայ ՚ի Սեւաստ, եւ որդիքն Մենեքերիմայ տան նմա զվանքն, զոր յանուն Վարազայ սուրբ նշանին շինեալ էին, ընդ ինքեանս ունելով զխաչն, թէպէտ զկնի անդրէն դարձուցին: Եւ երեք պռաստինս Մոնամախն ետ պատրիարզին, որ եւ կեցեալ ՚ի տեղոջն ամ մի, կատարի: Եւ առնու զքոզն Խաչիկ քորորդին իւր, զոր ձեռնադրեալ էր ՚ի կեանս իւր ՚ի յԱնի, եւ կեցեալ ամս երկու վճարի, եւ մնաց աթոռն թափուր զամս հինգ:

Քանզի ՚ի չորեքհարիւր իննսունեւերեք թուին մեռան Յովաննէս եւ Աշոտ, եւ ետուն զթագն ՚ի Գագիկ որդին Աշոտոյ. եւ յիշեցին Յոյնք զկտակն կորստեան վասն Անոյ. զի անդարձ է ասէն, եւ հաստատուն է զկնի մահու կտակ: Եւ կոչեցին երդմամբ զԳագիկ ՚ի Կոստանդնուպօլիս, որպէս թէ անդրէն դարձուցանեն պարգեւօք. եւ կատապան եղին ինքեանք քաղաքին. եւ վերացուցին ՚ի նմանէ զերկոսեան պսակս, զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկոսեան առ իւրեանս, եւ անդրէն ոչ դարձուցեալ: Վասն որոյ անյոյս եղեալ Գագկայ առնու փոխան զԿալօնպաղատն եւ զՊիգու, եւ կայր պանդխտութեամբ ՚ի մեջ ասեցողացն ազգիս:

Զայսու ժամանակաւ Գրիգոր որդի քաջին Վասակայ տայ զԲջնի ՚ի Մոնամախն, եւ զԿայեան եւ զԿայծոն, զոր ընդ ձեռամբ իւր ունէր, եւ առնու զղքսութիւնն Միջագետաց.

որ եւ առնու ընդ իւր զԱպիրատն զիշխանն Վրաց, եւ այլ եւս երկու Մաժիստրոսս, եւ երթայ ընդդէմ Բրեհիմայ զօրագլխի Տուրիլելեւէզ սուլտանին. ուր ըմբռնեցաւ Լիպարիտն եւ ածաւ առ սուլտանն. եւ առաքեաց առ նա դաւանել զհաւատ նորա: Եւ պատասխանեալ եթէ իբրեւ տեսից զերեսս քո՝ առնեմ զոր հրամայես: Եւ իբրեւ ետես ասէ. Յորժամ եղէ արժանի տեսանել զքեզ՝ ոչ արարից զկամս քո եւ ոչ երկեայց ՚ի մահուանէ. եւ ասէ սուլտանն. Զի՞նչ կամիս. եւ նա ասէ. Եթէ վաճառական ես, ծախեա՛ զիս, եթէ դահիճ՝ սպա՛ն զիս. իսկ եթէ թագաւոր ես, պարգեւօք ազատեա՛ զիս: Եւ ասէ սուլտանն. Ոչ գնոյ քո վաճառական, եւ ոչ արեան քո դահիճ կամիմ լինել, այլ թագաւոր եմ, ե՛րթ ուր եւ կամիս. եւ արձակեաց զնա պարգեւօք: Եւ զի կայսրն խնդրէր զնա, չոգաւ առ նա. եւ առեալ ՚ի նմանէ զօրս, եկն ՚ի Վիրս եւ կալեալ զթագաւորն Բագրատ՝ յղեաց զնա առ կայսր, եւ ինքն կալաւ զերկիրն ամենայն:

[ԾԶ]

Ի սոյն աւուրս կին մի Մամ անուն գայ ՚ի Պարսից երեք որդուովք ՚ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն, եւ առնուն զՇօթս եւ զԲերդն Շամիրամայ. եւ անտի ընտանացեալ ընդ Խլազիզն ամիրայն Գանձակայ սպանին զնա, եւ առին զԳանձակ եւ տիրեցին: Երեց որդին Պարգուան մեռաւ կարճ. եւ իշխանացաւ Լեշքարի միւս եղբայրն, եւ առնու զՊարտաւ եւ զՇամքոր ՚ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր որ Փատլուն կոչիր՝ սպանեալ զնա յորսի, առնու զիշխանութիւնն: Եւ գնացեալ առ նա Փիլիպէ՝ որդին Գրիգորոյ՝ սիրոյ աղագաւ, ըմբռնէ զնա ՚ի կալանս զկնի մահուան հօրն. եւ առնու ՚ի նմանէ զՇաշուաղ եւ զՇօթս: Եւ կոչեցեալ առ ինքն զԳագիկ որդի Համամայ զտէրն Տանձեաց սպանանէ, եւ առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն, եւ գոռ դնէ ընդ Գազկայ թագաւորին Չորոյգետոյ, եւ ընդ Կիրիկէի թագաւորին Աղուանից, եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց, եւ նեղէր զնոսա: Տիրեաց եւ Դունայ, եւ եղ հարկս ՚ի վերայ Հայոց երեքհարիւր հազար դրամ:

Սոյնպիսի օրինակաւ արք ոմանք քաղղէացիք ելեալք յաշխարհէն իւրեանց գան ՚ի Գարդման, եւ ասեն ցիշխանն Գարդմանայ. Տուր մեզ զմասն խաչին զոր ետ քեզ Հերակլ, եւ լինիմք քրիստոնէայք եւ քո ծառայք. եւ կատարեցան իրքն: Եւ լուեալ ամիրայն Բաղդատայ սպառնայ յոյժ. յորմէ երկուցեալ գնացին յոտն Կովկասու. եւ աջողեալք ՚ի Քրիստոսէ յոր հաւատացին՝ տիրեցին ամենայն գաւառացն. մինչ զի եւ ոմն ՚ի նոցանէ թագաւորեաց Դաւիթ անուն, որ ինսամացաւ ընդ արքային Չորոյգետոյ: Եւ կոչեցին զգաւառն Ծանարք, զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց. եւ իշխանն Գարդմանայ կոչեաց զնոսա Քորեպիսկոպոսս ըստ լեզուին Վրաց:

[ԾԷ]

Իսկ զկնի բառնալոյ թագաւորացն Հայոց ՚ի յԱնույ, ել ՚ի Հայս հօրեղբորորդին Տուրիլիլն Ալփասան, եւ աւերեաց քսան եւ չորս գաւառս. զի եր զօրագլուխ սուլտանին, որ եւ զկնի մահուան նորա սուլտանացաւ. եկն դարձեալ հարիւր հազարաւ, եւ առ զՆոր քաղաք, զոր Վիրք Ախալեքալաք ասեն, եւ զՄամշոյլդէ. եւ առնու կին զդուստր Կիրիկէի թագաւորին, եւ զդուստր քեռ թագաւորին Վրաց Բագրատայ: Առնու եւ զԱնի, եւ հազար այր զենու ՚ի փոս մի, եւ լոզանայ յարիւն, զոն մեռելոց իւրոց արարեալ:

Եւ ապա գայ 'ի խալիֆայէն դեսպան եւ արկանէ օդ ոսկի 'ի պարանոց նորա, եւ երկոտասան վարոց 'ի մի կապեալ հարկանէ գնա խածեալք արարեալ, որպէս թէ այնչափ հնազանդ է իւրում առաջնորդին:

Գործեցաւ այս զկնի մահուանն Յովաննիսի թագաւորին՝ քսան եւ երեք ամաւ, 'ի հինգ հարիւր երեքտասան թուին:

Այլ զկնի Մոնամախին Կիո Թօտորն կալաւ զթագն. եւ ապա Տուկիծն, եւ զկնի Դեուժանն, որ եկն 'ի վերայ սուլտանին, սպառնալով Հայոց՝ հոռոմ առնել զքնաւս. ըստ որում 'ի Կարս եկեալ այրէր զփայտակերտ եկեղեցին Հայոց: Եւ չոգաւ 'ի Մանծկերտ եւ ա՛ն գնա, եւ դարձաւ սուլտանն 'ի վերայ նորա եւ եհար գնա յոյժ, մինչ ըմբռնեցաւ 'ի նմանէ. որ զի թէպէտ եւ արձակեաց ողորմութեամբ, այլ ոչ եղև ընկալեալ յազգէն իւրմէ, այլ ետուն զթագն 'ի Միխայէլն որդի Տուկիծին, որ եւ կալեալ կուրացոյց զԴեոժանն, եւ մեռաւ 'ի ցաւոցն 'ի հինգհարիւր քսան եւ մի թուին:

[ԾԸ]

Իսկ թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ Թուրքացն՝ տայ զհայրենիս իւր 'ի Յոյնս, եւ առնու զԾամրնդաւ, եւ զԼառիա եւ զԱմասիա եւ զԿոմանա, եւ զպռաստինս հարիւր, որ է գեօղեան: Եւ գնացեալ առ կայսր՝ ինդրէ հրամանս ձեռնադրել Հայոց պատրիարզ զՎարհամ որդի Գրիգորի Մաժիստրոսի եւ տուկի. որ կոչեցաւ 'ի ձեռնադրելն Գրիգորիս. եւ ամ մի կալեալ զաթոռն 'ի Ծամնդաւ՝ թողու 'ի Գեորգ վարդապետն իւր Լօռեցի: Եւ ինքն անցեալ գնայ 'ի Կոստանդնուպօլիս 'ի թարգմանութիւն, եւ առեալ զգրեանն կամեցաւ գնալ յԵրուսաղէմ. եւ նաւին առեալ գնա տանի 'ի Մար. որ եւ մեծարեցաւ յոյժ 'ի սուլտանէն. եւ շինեաց վանս Հայոց, եւ ձեռնադրեալ զեղբօրորդի իւր Գրիգորէս եպիսկոպոս, եւ ինքն գայ կատարի 'ի Կարմիր վանքն 'ի սահմանս Եփրատ գետոյ առ Տօրոս լերամբն, մերձ տեառն Բարսղի պատրիարզի որ զկնի Գեորգեայ:

Իսկ 'ի հինգհարիւր քսան եւ մի թուին այրեցաւ սուրբ Պետրոս 'ի յԱնտաք. եւ եղև շարժ, եւ պատառեալ երկիրն եկով զպատրիարզն հոռոմ եւ տասն հազար այր ընդ նմա, վասն այրելոյ նոցա զաւետարանն Ասորոց ուղղափառաց, որ չորս անգամ ելանէր 'ի հրոյն ամբողջ, մինչեւ զհինգերորդ կատաղումն նոցա յանձն առնոյր, որպէս Տէրն զխաչն 'ի Հրէից (!):

[ԾԹ]

Ի հինգհարիւր քառասուն եւ երեք թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ, յանառիկ յամուրսն Բաղաց եւ կապանին, որ եւ խաբէութեամբ հնարեալ մտին անդր. եւ սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի, զի թագաւորքն որ անդ՝ հայկականք էին. եւ ոչ բարձաւ մինչեւ 'ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց անգաւակաց, Մմբատայ եւ Գրիգորոյ, որ առեալ զմանուկն Սենեքերիմ հայազարմ՝ եղին թագաւոր ժառանգորդ իւրեանց. զոր եւ սպանեալ հրամանաւ Փատլնոյ՝ շիջաւ ճրագն որ անդ, եւ տիրեցին Պարսք:

Այս Փատուին առնու զԱնի յԱլփասլանայ, տալով նմա ոսկիակուռ նկարս ծաղկոցի. եւ առաքէ տէր աւեր քաղաքին զՄանուչէ թոռն իւր յոյժ տղայ, որ իբրեւ զարգացաւ յաւելոյր ՚ի պարիսպն Անույ եւ յամբուրթինս նորա. եւ ած ՚ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն. որպէս եւ մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ՚ի ներքս զԳրիգոր գորդին Վասակայ, զթոռն Ապիրատին. զոր ասէն ունել ՚ի գլուխ ազատաց կանանցն հինգհարիւր թագս երեւելիս. զի տէր էր մեծ զօրաց, եւ բազում ազատաց: Եւ էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գեորգեայ ձեռնադրեցաւ ՚ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ եւ կամօք Մանուչէի եւ ամենայն Հայոց: Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն:

Իսկ Ալփասլանն գնացեալ ՚ի յԱլամուղն պաշարեաց զբերդ մի ամուր. եւ տէր բերդին արար մեծ խնդութիւն ՚ի տան իւրում եւ զկնի սուգ մեծ. եւ ապա իջեալ առ սուլտանն որպէս թէ ՚ի հնազանդութիւն, եւ ՚ի համբուրելն զոտս նորա՝ փողոտեաց զգազանն արբեալ արեամբ անմեղաց, եւ բարձաւ չարն ՚ի միջոյ: Եւ առ զպատիւ նորա ՄելիքեՇահն որդի նորա, այր ողորմած եւ բարեմիտ, առաւել ազգիս մեր. մինչ զի զպատրիարզն Բարսեղ վերացեալ խաչիւ առաջի իւր մուծանէր, եւ պատուէր պարգեօք, եւ տուղայիւ գրոյ. որով համարձակեալ առնու զգաւազանն եւ զանունն ՚ի Հոնեցոյն, որ անձամբ առեալ էր արտաքոյ կարգաց զկաթողիկոսութիւնն:

[Կ]

Ի հինգհարիւր քսան եւ հինգ թուին սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթողիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, ՚ի նմին քաղաքի, նենգութեամբ. եւ զօրք նորա ամբացեալ ՚ի կլայն, ետուն զքաղաքն ՚ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յայնժամ ՚ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ. որոյ առեալ զքաղաքն խնդրեաց զվրէժ արեան նորա: Այս Փիլարտոս ձեռնադրել էտ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի ՚ի Միջագետս, այր սուրբ եւ պարկեշտ, մինչ կենդանի էր Վահրամ եւ Գեորգ. զոր աքսորեցին տէր Վահրամ եւ տէր Բարսեղ՝ որ յարեւելս, զոր ՚ի Հաղբատ ձեռնադրեցին տէր Ստեփաննոս կաթողիկոս Ադուանից եւ թագաւորն Կիւրիկէ: Յորում աւուրս եւ զՍարգիս աւագերեցն արքունի դրանն արհեսպիսկոպոս ձեռնադրեցին երկոքեան կաթողիկոսքն սուրբ ուխտին Հաղբատայ, տալով վիճակս յերկուց կողմանցն: Այլ եւ զկնի մահուանն տեառն Սարգսի կաթողիկոսի էտ ձեռնադրել ՚ի տեղին Փիլարտոսն զԹեոդորոս ոմն:

Ի սոյն աւուրս սպանաւ Բեխդն իշխանն Շիրակունի, որ վասն յոյժ լաւութեանն նեղեալ սիրով ՚ի կայսերէ՝ եղեւ հոռոմ. եւ տուաւ հայր խոստովանութեան նորա արեղայ մի հոռոմ. եւ զի ոչ պահէր զօրէնս Հոռոմոց, իւեղդեաց զնա պիղծ կրօնաւորն ՚ի քուն գտեալ զնա միայն՝ ՚ի բերդն իւր յԱնդրիօնն, զոր իմացեալ զօրաց նորա՝ զահավէժ առնեն զվիրագն անօրէն: Իսկ զկայսրն Միքայել՝ փոխէ Վտանիօսն ամ մի. եւ զկնի Մեսելիանոսն՝ ամիսս վեց. եւ ապա Ալեքս՝ պիտանի այր եւ իսելացի:

Յորում աւուրս եղեւ նշան սոսկալի ՚ի վանքն Պիզու, զոր շինեաց Գագիկ արքայ: Արք երկու անապատաւորք եղեալ ՚ի տեսլեան՝ եկին ՚ի վանքն, եւ նախ քան զհարցն ասացին զոր տեսինն. մինն ասաց թէ տեսանէի, զի կանթեղ եկեղեցոյ գմբեթին անկաւ յատակ եկեղեցոյս, եւ ոչ շիջաւ լոյս նորա. եւ միւսն ասաց թէ տեսանէի զի անկաւ յերկնից աստղ մի, եւ լոյսն առաւել փայլէր յեկեղեցիս: Եւ հայր վանիցն ասաց, տեսք

զի անկեալ է 'ի սուրբ խորհրդոյն. եւ վառեալ մոմեղէն եւ գնացեալ գտին մասն անկեալ 'ի սուրբ խորհրդոյն 'ի բեմն 'ի սուրբ պենտեկոստէին, յանգգոյշ առնէ. որ եւ զկնի երեք աւուր գտաւ 'ի սուրբ պենտեկոստէին. եւ զայն երեք օրն չէր անկեալ ոչ յաւելն եւ ոչ յոտս, եւ զոհացան զԱստուծոյ:

Իսկ զտէրն Անույ զԳագիկ՝ որ չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս, շատ աղերսեալ Թօղորին քեռն Զոյի, զի լիցի հոռոմ եւ այր նմա եւ թագաւորէ Յունաց, եւ ոչ հաւանեցաւ. բայց զորդին իւր զկրտսեր տայ 'ի փեսայութիւն Ապլղարբի որդւոյ Խաչկայ, յիշխանացն Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՄսիս եւ զԱտանա, զՊապառօնն եւ զԼամբրօնն, զոր ատեաց եւ ետ 'ի բանդի. եւ լուեալ հօրն՝ գնաց հանել զնա. եւ 'ի դառնալն յիջավանս, խեղդեցին զնա շոռոմք: Եւ պիղծն Ապլղարբի սպան դեղով զփեսայն: Իսկ երեց որդին Յոհանէս փեսայացաւ տուկին Անույ հոռոմի՝ յուսով ինչ, եւ եկն յԱնի, եւ չգտեալ հանգիստ չոգաւ 'ի Վիրս. եւ դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս, միով տղայիւ Աշոտ կոչեցելով, զոր խնդրեաց կայսրն փեսայ եւ ոչ կամեցաւ տալ: Եւ սա չոգաւ առ սուլտանն հրամանաւ կայսեր, եւ ետ նմա զԱնի. եւ ներքինի ոմն ազգական Մանուչէի դեղով սպան զնա, եւ մարմինն բերաւ 'ի Կոստանդնուպօլիս: Եւ նախ քան զգալն մեռեալ որդւոյն՝ մեռաւ հայրն, եւ բարձան թագակալքն Անույ այսու օրինակաւ:

[ԿԱ]

Ի հինգհարիւր երեսուն եւ եօթն թուին Պուզան ամիրայն հրամանաւ Մելիքեւշահին առ զԳանձակ 'ի Փատլնեացն որ Շատատիկքն կոչէին: Իսկ Վրաց թագաւորն Բագարատ դարձեալ 'ի կայսերէ՝ առնու զհայրենիսն իւր. եւ զկնի նորա առնու Գէորգի որդի իւր. որ եւ գնացեալ զկնի Կիրիկէի 'ի Խորասան առ Մելիքեւշահն, դարձան պատուով: Այս Կիրիկէ որդի էր Դաւթի, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածի. սմա հայրն Դաւիթ շինեաց զԼօռէ, եւ այլ եւս երկոտասան բերդ, որ կայ թաղեալ 'ի Սանահինն: Որոց թոռունքն Աբաս եւ Դաւիթ նեղեալ 'ի Վրաց՝ չոգան առ տեարսն Ռանայ, եւ առին մէն մի բերդս, եւ կային տառապանօք: Այլ սուլտան Մելիքեւշահն խաղաղասէր եւ քրիստոնէայսէր բարուք, տիրեաց 'ի Կազբից ծովէն մինչեւ ցծովն Պոնտոսի երկոտասան թագաւորութեանց. եւ բարձեալ աւագ յովկիանու՝ տարաւ 'ի Պարսս, եւ էարկ 'ի վերայ գերեզմանի հօր իւրոյ, եւ ասաց. Ահա հայր աւետիս քեզ, զի որդի քո զոր թողեր տղայ՝ տիրեաց մինչեւ 'ի ծագս երկրի: Եւ առ սա չոգաւ Փիլարտոսն եւ տկարացաւ 'ի հաւատն: Եւ Պուզանն մեծ ամիրայն՝ հրամանաւ սուլտանին էառ զՈւռհա, եւ սպան արս ազնիւս 'ի փառաւոր իշխանացն Հայոց 'ի մատնութենէ քսու արանց:

Ի սոյն աւուրս թագաւորն Պեծենեկաց եկն վեց հարիւր հազարաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի վերայ Ալեքսին. եւ քրիստոնէիցն աղօթեալ զաւուրս ութ, ջնջեցին զնոսա բովանդակ, արկանելով հուր 'ի սայլս նոցա որովք եկեալն էին:

Ի նմին աւուրս յայտնեցաւ չարութիւն հոռոմ արեղայի մի, որ պաշտէր զշունն. եւ մոլորեցոյց արս իբրեւ բիւր մի, եւ զմայր Ալեքսին, մինչ դնել մասն 'ի սուրբ խաչափայտէն Տեառն ծածուկ 'ի կօշկի որդւոյ իւրոյ 'ի ներքանս կոխել միշտ. զոր իմացեալ Ալեքսին կորոյս զամենեսեան, եւ զմայրն եհան 'ի տիկնութենէ (!):

[ԿԲ]

Ի հինգհարիւր քառասուն թուին մեռաւ Պօղոս կաթողիկոսն որ 'ի Սարաշ, զոր եղեալ էր Փիլարտոսն. եւ սուրբ եւ մեծ գիտնականն Գեորգ վարդապետն Հայոց, եւ թաղեցաւ 'ի Կամրջաձոր առ Սամուելի վարդապետի: Եւ եղև միահեծան սուրբ աթոռն պատրիարգութեան. քանզի տէր Բարսեղ 'ի նմին ժամու ընկեց զկաթողիկոսն Թեոդորոս յաթոռոյն, եւ առ 'ի նմանէ զքօղն եւ զգաւագանն եւ զսուրբ նշանն տեառն Պետրոսի. եւ շրջեալ 'ի Կեսարիա եկն յԱնտիոք, եւ անտի 'ի յՈւռհա. եւ լինէր ամենայն ուրեք խնդութիւն մեծ:

Այլ խաղաղասէր սուլտանն դեղակուր եղեալ 'ի կնոջէն իւրմէ, վճարէր զկեանս իւր, 'ի հինգհարիւր քառասուն եւ մի թուին: Եւ լուեալ Պուզան ամիրային որ էր 'ի Նիկիա, դառնայ յՈւռհա. եւ տէր Բարսեղ երթայ յԱնի: Եւ թաղեցաւ Մէլիք-շահն 'ի Սարանդ առ հօր իւրում Արփասլանայ. որոյ էին երկու որդիք Բակիարուխ եւ Սափան կոչեցեալք. եւ Դուդուշն եղբայր Մէլիքեւշահին սուլտանացաւ 'ի կողմանս Յունաց. եւ Բէկիարուխն 'ի վերայ Պարսից եւ Հայոց: Որ եւ զքեռին իւր զԻսմայիլն արարեալ հէջուր, կարի քաղցր եւ բարեմիտ առ Հայս. վասն որոյ խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, եւ զամենայն եկեղեցականս: Իսկ Դուդուշն տիրեալ Միջագետաց՝ հարկանէր զթագաւորն Արաբկաց զԲրեհիմն, եւ առեալ զամենայն բանակս նոցա հարստանայր. եւ գայր առ նա զիր 'ի կնոջէն Բէկիարուխին, զի գնացէ 'ի Պարսս եւ լիցի նմա այր, եւ առցէ զամենայն աշխարհ ինքեան: Եւ նորա խնդացեալ ընդ լուրն խաղայ անթիւ բանակօք, եւ երթայ 'ի դաշտն Ասպահանայ, եւ յէ առ նա Բէկիարուխն աղաչանս, զի տացէ նմա զԱսպահան, եւ այլ ամենայն տիեզերք նմա լիցին: Եւ ոչ կալեալ նորա յանձին, յարձակին 'ի միմեանս, եւ մեռանի Դուդուշն, եւ փախչի Ըռատուան որդի նորա յՈւռհա, եւ նստի եւ նա սուլտան 'ի Հալպ եւ 'ի սահմանս նորա. եւ այլ ոմն յազգէ նորա Ալփիրակ կոչեցեալ՝ 'ի կողմն Յունաց սուլտանացաւ, եւ եկեալ յՈւռհա տիրել ջանայր նմա: Եւ Թորոս կիւրապաղատն սպան զնա դեղով զկնի աւուրց երեսնից:

Ի նմին ամի մեռաւ սուրբ կաթողիկոսն Թեոդորոս 'ի Հոնին, լին ամենայն առաքինութեամբ, եւ թաղեցաւ մօտ 'ի տէր Սարգիս:

[ԿԳ]

Յայնմ ժամանակի եղև 'ի պատճառս մարախոյ եւ երաշտոյ սով սաստիկ, եւ 'ի յԱնի կարի իմն նեղութիւն մեծ. ուստի զմեռեալսն թաղել ոչ կարէին 'ի սովոյն եւ ոչ օրինացն հաղորդել. որ եւ այր մի ասէն քաջութիւն ցուցեալ եւ սէր առ Աստուած՝ թաղեաց վեց հազար անձինս, որում անուն էր Բելի: Չայսպիսի աղետս լուեալ այր մի մեծատուն 'ի Պարսս, եւ երամակ մի ուղտուց բարձեալ ցորենով՝ գայր 'ի յԱնի, եւ ասէր, ոչ այլ ումեք տալ բայց տղայոց: Չոր լուեալ բերէին զբազումս յորդառատ արտասուօք, եւ նա յագեցուցանէր եւ կերակրէր զնոսա. եւ 'ի սպառել ցորենոյն ձայն արարեալ ծնողաց մանկանցն զի եկեացեն համբուրեացեն զուստերս եւ զդստերս իւրեանց: Եւ իբրև կական բարձեալ մորմոքէին գրկախառնեալք, եւ ահա բարբառ քաղցր եւ բարի այրն բարբառեալ ասաց. Առէք զտղայսդ ձեր, եւ գնացէք 'ի տունս ձեր փառաւորելով զտուողն բարեաց զԱստուած՝ 'ի մեծութեանն իւրում, զոր եւ արարինն իսկ:

Ջկնի անցանելոյ սովոյն, ազգ մի սկիւթական, որ 'ի վաղեաց ժամանակաց դողեալ կէայր առ Վրկանօք, անուն գլխաւորին Ելիսաղի կոչեցեալ, որ եկն եօթն հազարաւ ընդ

միջոցս աշխարհի մինչեւ յԱնի քաղաք պատերազմաւ. եւ մեռանի անդ եղբայր նորա, որ նման էր Գողիադու հսկայի, ՚ի Գրիգորոյ որդւոյ Վասակայ թոռին Ապիրատին. որ զկնի աւուրց նահատակեցաւ ՚ի Կաղզուանն, զերծուցեալ ՚ի մահուանէ զամիրայն Անուոյ զՄանուչէ. եւ տարեալ թաղեցին զնա ՚ի Կեչառուս. եղբայր տէր Բարսղի կաթողիկոսի. եւ Մանուչէ եւ ամենայն զօր բանակին Հայոց զկնի դիոյն: Իսկ Ելիսազի երթեալ ընդ Միջագետս առնու զԵրուսաղէմ ՚ի Փռանգաց, հարկանելով նետ մի ՚ի ձեղուն Յարութեանն, որ կայ մինչեւ ցայժմ ՚ի նշան գործոյն:

Ի հինգհարիւր քառասուն եւ չորս թուին Սուքման որդի Արդուխին, եւ ամիրայն Սամուսատայ Պալտուխն՝ որդին Ամիրելուզէ՝ զան ՚ի վերայ Ուռհայոյ. եւ դարձան լի ամօթով, զի կիրապաղատն Թէոդորոս իմաստութեամբ եւ քաջութեամբ պահէր զքաղաքն. մինչեւ ոչ սուլտանն Ռատուան կարաց հնազանդել զնա: Դարձեալ ՚ի հինգհարիւր քառասուն եւ եօթն թուին Ղլիճ Ասլան սուլտանն արեւմտից՝ թոռն Դղլմշոյ՝ զնայ ՚ի վերայ Մելտենոյ. եւ իշխան քաղաքին Ղալբիլն աներ կիրապաղատին Ուռհայոյ՝ դարձոյց զնա անարգանօք:

[ԿԴ]

Յայսմ ժամանակի լնու բան մարգարէութեան սուրբ հայրապետին Ներսիսի՝ որ վասն ելից Փռանգացն. քանզի մինչ տիրէին Սկիւթացիքն Երուսաղէմի, եւ առնուին վարձս ՚ի մտելոցն ՚ի սուրբ գերեզմանն, դիպեցաւ կոմս մի փռանգ ազգաւ ՚ի խռանն հարամդիլ եւ զայրանալ, եւ վասն այնր դանիլ, մինչեւ հանին զակն նորա զմի ՚ի կապճացն եւ ընկեցաւ ՚ի վայր. զոր առեալ եղ ՚ի գրպանն, եւ տարեալ ՚ի Հռոմ ցուցանէր. եւ նախանձու վառէր զբազումս: Եւ ելանէին արք փառաւորք զլուխք զօրաց բազմաց, որոց անուանք էին այս. Կոնդոփր, եւ Պաղտոյն՝ եղբայր նորա՝ յազգէ թագաւորաց. զոր ասէն ունել զթագն Վեսալիանու՝ որ աւերեաց զԵրուսաղէմ. եւ մեծ կոմսն Պայմունդ, եւ Տանկրի քեռորդի իւր, եւ կոմսն Ջնջիլ. եւ Ռոպերտն՝ Որմնաց կոմսն. եւ միւս Պաղտոյնն, եւ Ջօսլին կոմսն. արք յաղթողք եւ բազմազօրք: Յուղի անկեալք զան ՚ի Բիւզանդիա. եւ սիրով անցեալք ՚ի Նիկիա՝ հարին զՂլիճ Ասլանն միանգամ եւ երկիցս, եւ առին զՆիկիա, եւ ետուն յԱլեքսն. եւ ինքեանք զնացեալ ընդ Կիլիկէ՝ առին զԱնտիոք, եւ զամենայն ծովեզերսն եւ զԵրուսաղէմ. եւ եղին թագաւոր, որպէս ծանուցանեն յոլովից պատմութիւնք:

Առ այսու ժամանակօք եմուտ սուրբ խաչն Նունեայ ՚ի յԱնի. այն որ ՚ի յուրացմանն Վազգենի Վրաց առաջնորդի գաղթեցաւ ՚ի խորշս լերինն Պարխարու, ՚ի ձեռն սուրբ վանականին Անդրէասայ յաշակերտաց սրբոյն Սահակայ: Եւ կացեալ անդ զեօթն ամ, եւ ապա ազդ արարեալ մամիկոնեանն Գրիգորոյ որդւոյ Հմայեկի՝ տարաւ ՚ի Կապոյտն կոչեցեալ բերդ եւ անդի փոխեցաւ ՚ի Վանանդ, եւ կոչեցաւ Վանանդայ խաչ. եւ ՚ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրէնն Սուքմանայ՝ բերաւ յԱնի, ՚ի հայրապետութեանն տեառն Բարսղի. եւ կարգեցաւ նմա տօն կիրակէն՝ որ զկնի ութօրէից Խաչավերացն տօնի:

Այլ ՚ի հինգհարիւր քառասուն եւ եօթն թուին Պաղտոյն կոմսն էառ զԹլպաշար եւ զՈւռհա: Եւ ՚ի միւս ամին սպասալարն Բէկիարութին եկեալ յԱնտիոք ՚ի վերայ Փռանգին, եւ հարաւ ՚ի նոցունց իբրեւ բիրս ութ. քանզի գտին ՚ի ձախակողմն սրբոյն Պետրոսի զգեղարդն՝ որով Հրեայքն խոցեցին ընդ կատականս զպատկերն փրկչական,

ուստի ել արին եւ ջուր, որպէս 'ի կողէն Տեառն. եւ պատուեցաւ զէնն որպէս աստուածամուխն այն՝ զոր Հայք ունին. որով զօրացեալ Փռանգքն՝ հարին զթշնամիս իւրեանց, եւ ապա առաքեցին զնա Ալեքսին:

[ԿԵ]

Ի հինգհարիւր քառասուն եւ ութ թուին մեռաւ Կոստանդին մեծ իշխանն Հայոց՝ որդին Ռուբինայ, որ էր յազատաց Գագկայ արքայի, ուր ակնյայտնի ցուցաւ նշան մահու նորա: Զի 'ի նմին աւուր անկեալ շանթ 'ի յերկնից՝ հարկանէր զարծաթի սկտեղն՝ որ կայր առաջի նորա 'ի բերդն Վահկա կոչեցեալ. եւ մեռաւ այր մի առ ժամայն. յետոյ ապա եւ ինքն իսկ, որ բռնացեալ ունէր զլեռն Սեաւ: Եւ թողու երկու որդի, զԹորոս եւ զԼեւոն:

Ի հինգհարիւր քառասուն եւ ինն թուին Դանշմանն տէրն Սեբաստիոյ, զորմէ ասէն յազգէն Հայոց, եկեալ 'ի վերայ Մելիտենոյ, եւ Պեմունդն եւ Ռաջարդն՝ որ կային յՈւռհա, ելին ընդդէմ նորա, եւ ըմբռնեցան 'ի նմանէ եւ եղան 'ի բանտի:

Ի հինգհարիւր եւ յիսուն թուին յաւուր շաբաթու ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ, այլ յօր կիրակէին 'ի յինն ժամուն, եւ զարմացաւ ամենայն երկիրն. այլ պատճառն էր անուղղայ գործք Փռանգին, զի կանանց ետուն զսպասաւորութիւն աստուածընկալ գերեզմանին:

Եւ 'ի նոյն ամի գայր կոմսն մեծ Պետեւանն կոչեցեալ երեսուն բիւրօք 'ի Կոստանդնուպօլիս, եւ հպարտ բանիւք եպարքոս կոչելով նախատէր զԱլեքսն, եւ առնոյր զօրս 'ի նմանէ յուղարկաւորս ընդ երկիրն Թուրքաց: Եւ նոցա նենգ գործեալ հրամանաւ իւրեանց թագաւորին, տարան ընդ անջրդի անապատ, եւ տկարացուցեալ զնոսա՝ մատնեցին Դանշմանայ եւ զօրացն Խլիճ Ասլանայ, մինչ զի երեսուն արամբ միայն զերծեալ Պետեւանն անկաւ յԱնտիոք. եւ յԵրուսաղէմ հասեալ եւ ուխտեալ՝ դարձաւ անդրէն 'ի Հռոմ: Ի հինգհարիւր յիսուն եւ մի թուին՝ տասն ազգ քրիստոնէից թիւր զատիկ արարին 'ի ծառգարդարն, բայց 'ի Հայոց եւ յԱսորոց. 'ի չար սերմանց Իռիոնի:

Ի հինգհարիւր յիսուն եւ երկու թուին՝ իշխանն Հայոց Գողն կոչեցեալ Վասիլ գնեաց զՊեմունդն օգնելով 'ի գինս տասն հազար դահեկան, որ գնեցաւ հարիւր հազարաւ: Ի նոյն ամի կոմսն Ուռհայոյ Պաղտոյնն գնաց 'ի վերայ Թուրքին 'ի սահմանս Մերտնայ. եւ կալաւ զՈւլիսալար ամիրայն, եւ ած 'ի յՈւռհա յոլով գերութեամբ, եւ հազարս հազարաց ոչխարս: Յորում աւուրս գայր պատրիարզն Բարսեղ 'ի յԱնույ, եւ յոյժ պատուեալ լինէր 'ի կոմսէն գեղօք եւ գանձիւք:

Ի հինգհարիւր յիսուն եւ երեք թուին մեռաւ Դանշմանն, թողլով երկուտասան որդիս. եւ առ զիշխանութիւնն աւագն Ղազի: Եւ 'ի նմին ամի մեռաւ Բեգիարուխ սուլտանն, եւ առ զտեղի նորա եղբայր իւր Տափար: Եւ 'ի սոյն աւուրս առ զՄարաշ ճօշլինն. եւ իշխանն Յունաց որ կայր անդ՝ Թաթուլն՝ ծախեաց զպատկեր Տիրամօրն՝ Թորոսոյ որդոյ Կոստանդեայ, որդոյ Ռուբենի յոլով ոսկոյ եւ արծաթոյ:

Ի հինգհարիւր յիսուն եւ չորս թուին 'ի շփոթել իշխանութեանն Պարսից, յարեաւ ամիրա մի Ղզիլ անուն սկիւթացի, էառ զաւանն Լօռէ, եւ զնայ մտանէ 'ի Դուին

բոնութեամբ ուժոյ, սպանեալ զԱբունասար զեղբայրն Մանուչէի: Եւ գնացեալ Մանուչէի առնու զօր 'ի դրանէ արքային Պարսից, եւ գայ սպանանէ զՂզիլն 'ի վերայ գերեզմանի եղբօր իւրոյ, եւ զԴուին տայ 'ի ձեռս Պարսից:

[ԿԶ]

Յայնմ ժամանակի պատրիարզն Բարսեղ նեղեալ յազգի ազգի շփոթմանէն գնաց յաթոռն իւր յԱնի. եւ իսկոյն հասանէ նմա ինդիր 'ի տէր Գրիգորիսէ Պահլաւէ, որ եւ Վահրամն, Վկայասէր կոչեցեալ, եթէ հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր: Եւ նա ոչ յապաղեալ յուսով վերջին օրհնութեանն, եւ պատահէ նմա փորձութիւն ինչ սակաւ 'ի ճանապարհին 'ի բերդն Մենծկերտոյ մօտ 'ի Բալու, 'ի յունականացն որ անդ՝ որք կամեցան կողոպտել զնոսա. բայց նա քաջասրտաբար արիացեալ ոչ ետ ըստ կամաց իւրեանց առնուլ, այլ զոր ինքն թողացոյց. բայց զիսաչն երկաթի ձեռագործ առաքելոյն Թադէոսի, որ տանէին առաջի, ընկեց բարձոդն 'ի ծովակն, որ յետոյ գտեալ եղեւ 'ի քրիստոնէից 'ի ճաճանչ նշուլիցն զուշակեալ, եւ տարեալ եղին 'ի սուրբ Գրիգորոյ լեառն, ուր կայ գերեզման նորա. եւ կայ անդէն առնելով պէսպէս սքանչելիս: Իսկ նորա գնացեալ գերկայնաձիգ ճանապարհն, եւ հասեալ 'ի Կարմիր վանքն կոչեցեալ, ուր կայր այրն Աստուծոյ, առ իշխանն մեծ Վասիլն, եւ օրհնեալ 'ի նմանէ եւ յանձնեալ 'ի նա զտղայսն ձեռասուն, որք էին նորա քորորդւոյ որդիք, Գրիգորիս՝ որ եւ լինէր կաթողիկոս, եւ Ներսէս եղբայր նորա, եւ էին որդիք Ապիրատին: Եւ ինքն ննջեաց 'ի տրէ ամիս յաւուր շաբաթու, 'ի յիսնական ամարան, 'ի տօնի Երեմիայի մարգարէին, եւ թաղեցաւ 'ի տեղուջն: Եւ արարին կոծ մեծ 'ի վերայ նորա Վասիլն եւ ամենայն ազատագունդն Հայոց:

Ի նմին ամի կատարեցաւ սուրբ ճգնաւորն եւ մարգարէն Մարկոս 'ի Կոկաց գաւառին, 'ի լեառն Կոնկոնաթ մերձ 'ի Մարաշ, որ վաթսուն եւ հինգ ամ ոչ եկեր հաց, եւ ոչ որ ինչ նման է հացի, բայց միայն խոտ. որ եւ ասաց իսկ՝ եթէ յաճախեն չարիք մարդկան, եւ աւերի աշխարհ յայլազգեաց, եւ փակին դրունք եկեղեցեաց, եւ զԵրուսաղէմ դարձեալ առնուն Թուրքք: Սա յերկու տեղիս ջուր եհան 'ի նոյն անապատի եւ ամփոփեցաւ 'ի վանքն Կաստաղօն. յետ տօնի Աստուածածնին հինգշաբաթ օրն տօն է սմա:

Ի հինգհարիւր յիսուն եւ եօթն թուին առաւ Տրապօլիս, զամս մետասան տուեալ իսար 'ի վերայ նորա թագաւորն Երուսաղէմի, եւ կոմսն Պերդրան. այլ սակայն տուաւ քաղաքն 'ի Տանկրի 'ի տէրն Անտիոքոյ: Վասն որոյ բարկացեալ 'ի վերայ նորա թագաւորն եւ Պերդրան, առին վերստին զքաղաքն եւ մաշեցին սրով եւ կողոպտեցին. եւ Պերդրան ժառանգեաց զտեղին:

Ի հինգհարիւր յիսուն եւ ինն թուին Մամտուտն՝ սպասալարն Պարսից՝ աներեաց զամենայն երկիրն Ուռհայոյ կոտորածով եւ գերութեամբ, եւ 'ի սուգ նստոյց զամենայն քրիստոնէայսն:

Ի նմին ամի 'ի ժամանակս ձմերանի 'ի մթին գիշերի՝ անկաւ հուր 'ի բարձանց 'ի ծովն Վասպուրական. եւ գոչեցեալ ծովուն անկաւ զցամաքան. եւ դարձաւ ծովն 'ի գոյն արեան, եւ մեռան ձկունքն. եւ 'ի լուսանալ առաւօտուն կուտեալ կային առ ցամաքան իբրեւ զփայտակոյտս անտառաց:

Իսկ ՚ի հինգհարիւր վաթսուն թուին մեծ իշխանն Հայոց, կորովի իմաստութեամբ իւրով էառ զբերդն Կինտոսկալիս, ուր սպանին զԳագիկ Շահնշահ: Եւ զի կենդանի էին սպանողք թագաւորին՝ որդիքն Մանդալեոնի՝ երեք եղբարք, եսպան զնոսա չարչարանօք. եւ էառ զթուրն եւ զհանդերձս թագաւորին, եւ զգանձն ամենայն գաւառին՝ որ կայր անդ ՚ի պահեստի վասն անառ ամրութեան դղելիին. եւ իսաչ եւ պատկեր ոսկի՝ բազում յոյժ. եւ տարեալ զբովանդակն ՚ի Վահկայն՝ գոհանայր զԱստուծոյ, եւ կացոյց յիւրոցն պահապան բերդին:

Իսկ պատրիարզն Բարսեղ այլ ոչ դարձաւ ՚ի յԱնի, այլ անդէն կեցեալ ժամանակս ինչ՝ ապա եղ ՚ի մտի երթալ յԵրուսաղէմ: Եւ հրաւիրեալ զԵպիսկոպոսունս եւ զվանորեայս երկրին եւ զիշխանսն գալ ՚ի տօն վարդավառին, ձեռնադրել զԳրիգորիս յաստիճան առաքելական. զի ինքն աներկբայ զառաջի եղեալ ճանապարհն վճարեսցէ: Եւ պատահեալ նմա որոգայթ ինչ ՚ի վանքն՝ որ Շուորն կոչի, շինելով տուն, որ եւ ՚ի վեր տանելն զհեծանն, զերծեալ ՚ի ձեռացն անկաւ ՚ի վերայ, եւ հրաւիրեաց մահու: Սակայն կեցեալ զկնի գաւուրս հինգ, տայ Գրիգորի զաստիճանն, եւ ինքն վճարի, ուր եւ թաղեցաւ անդէն ՚ի հինգհարիւր վաթսուն եւ երկու թուին: Իբրեւ լուսա զայս Դաւիթ ոմն որդի Թոռնկայ ՚ի կղզւոջն Աղթամարայ, արարեալ ժողով Եպիսկոպոսաց հնգից ձեռնադրեցաւ կաթողիկոս, պատճառելով եթէ Վահանիկ կաթողիկոս եկն առ Աբուսահլ որդի Գագկայ ՚ի Ձորոյվանս՝ եւ անդ վախճանեցաւ. եւ կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի, եւ գաւազանն եւ գօտին մաշկեղէն, եւ հողաթափ սրբոյ Հոփսիսիմեայ եւ պերեգոտն ներկեալ արեամբ, եւ շղարջն՝ որ է դաստառակ, մնացեալ անդ ՚ի ժառանգաւորաց. եւ ՚ի ժամանակս հալածանացն ամրացաւ ՚ի կղզին Աղթամարայ: Եւ զի ասէն աթոռ է սա թագաւորացն Արծրունեաց եւ վայել է լինել եւ պատրիարգ: Սակայն ոչ եղեւ ընկալեալ, թէ եւ շատիցս եղեւ աշխատ ընծայիւք եւ աղաչանօք, մանաւանդ ՚ի յԱնույ գլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարզն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, եւ շրջակայ Եպիսկոպոսացն ձեռագրով:

Բայց մինչ կենդանին էր տէր Բարսեղ, մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն, որ Աստուծոյ յաջողելովն տիրեալ էր բազում բերդից եւ գաւառաց. եւ հոգաց զտունն նորա պատրիարզն Բարսեղ, եւ ետ զիշխանութիւնն ՚ի տղայ Վասիլն, ձեռնասուն մեծ Վասիլն՝ յազգէ կամսարական: Զի տուն Վասիլն էր յայնժամ հաւաքարան թագաւորագանց եւ ազատաց Հայոց, եւ աթոռ հայրապետաց:

Ի նմին ամի մեռանէր մեծ կոմսն Անտիոքոս Տանկրի քրիստոսասէրն եւ իրաւադատն. եւ առ զիշխանութիւնն Ռոճէր քորորդին իւր:

[ԿԷ]

Ի հինգհարիւր յիսուն եւ երեք թուին ՚ի մարերի երկոտասանն՝ դողաց երկիր հանդերձ աղիողորմ ձայնիւ որ գայր ՚ի լերանց եւ ՚ի դարափուլ վիմաց, եւ օրն էր կիրակէ եւ ձայնն վառ. վասն որոյ եւ կարծեցաւ թէ օրն է կատարած աշխարհիս. եւ փլան յոլով քաղաքք եւ մեռան քառասուն հազար անձինք, զոր թուել կարացին:

Ի նմին ամի մեռաւ Գէորգ վարդապետն մականունն Մեղրիկ կոչեցեալ սակս քաղցրուտոյց վարդապետութեանն, նորոգօղ սուրբ ուխտին Դրագարկուն, որ էր ՚ի

Վասպուրական գաւառէ 'ի յԱնալիւր կոչեցեալ գեղջէ, սուրբ եւ սքանչելի եւ մեծ ճգնաւոր: Եւ 'ի գալ միւս ամին, անկաւ հուր յերկնից 'ի ճեմիայն Ամթայ, որ է մնիրայն հաւաքման մսլիմանաց, եւ այրեաց զքարաշէն յարկն եւ ելանէր բոցն մինչեւ յերկինս:

Ի հինգհարիւր յիսուն եւ հինգ թուին Թորոս եղբայր Լեւոնի որդի Կոստանդեայ՝ կալեալ գողայ Վասիլն ետ 'ի Պաղտոյնն 'ի կոմսն Ուռհայոյ, եւ նա չարչարեալ գնա էառ զամենայն երկիր նորա, եւ ելաւ աշխարհն 'ի Հայոց: Եւ Վասիլն գնաց 'ի Կիլիկէ առ աներն իւր Լեւոն, եւ անտի 'ի Կոստանդինուպօլիս. եւ պատուեցաւ 'ի կայսերէ ազատովքն իւրովք: Եւ 'ի միւս այլ ամին գնայ Պաղտոյն 'ի Նզեպն 'ի վերայ Ապլղարիպին՝ Հայոց իշխանին, որդոյ Վասակայ, եղբօր Լիկոսին, որ էին տեարք հազար զօրականի. որ յառաջ ունէին զԹլպաշարն եւ զՊիրն, առեալ 'ի Թուրքաց մեծաւ քաջութեամբ. զոր 'ի իսար արկեալ ամ մի, էառ 'ի նմանէ զբովանդակն. եւ նա գնաց առ Թորոսն: Նոյնպէս քակեաց զմիւս իշխանն որ բնակեալ էր յԱրեւրնդան՝ զԲագարատ, եւ զԿոստընդին տէրն Կառկատայ, զոր մեռոյց 'ի կապանս 'ի բերդին Սամուսատ:

Ի հինգհարիւր վաթսուն եւ եօթն թուին մեռաւ թագաւորն Երուսաղեմի Պաղտոյնն, եւ առ զթագն միւս Պաղտոյնն կոմսն Ուռհայոյ: Ի նմին ամի մեռաւ Տափարն սուլտանն Պարսից, որ եւ մերձ 'ի մահ եղեալ՝ ետ սպանանել զաւագ կինն իւր զԳոհար իաթունն, որ ունէր ասեն առաջի իւր ութսուն կուսանս 'ի սպասու ինքեան թագ 'ի գլուխ, եւ էր տէր զօրաց բազմաց, յորոց գաղտ զենուլ ետ. զի մի՛, ասէ, արասցէ այր գեղբայրն իմ, որ ունէր զխորին աշխարհն Պարսից. զԱւզկան քաղաք, եւ զԽզնէ, որ իննսուն աւուրք ճանապարհաւ անդր է քան զԱսպահան. եւ զաթոռն տայր յաւագ որդին 'ի Սահմուտն, եւ զկրտսերն՝ զՄէլիքն՝ դներ տէր Գանձակայ Հայոց: Եւ 'ի գալ տարւոյն՝ մեռաւ Ալեքսն, եւ առ զթագն որդին իւր Փեռփեռօժէն, որ եղեւ բարեմիտ առ Հայս. եւ մեղադրէր հօր իւրում, որ մոլեալ 'ի սուտ առաջնորդաց, կրկին մկրտելով իսաչէր կրկին զՏէրն:

[ԿԸ]

Յայնմ ժամանակի զօրանայր Դաւիթ թագաւորն Վրաց որդի Գեորգեայ, որդոյ Բագարատայ. եւ առ զՏփիսիս 'ի Պարսից. եւ եհար զՄէլիք գսուլտանն Գանձակայ 'ի հարուածս սաստիկս. եւ հինհարիւր արս սրահանգս բարձրացոյց 'ի փայտ մահու 'ի Տփիսիս քաղաքի: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ, զի մեռեալ էր Սանուչէ՝ ամիրայն Անույ, եւ Ապլսուար որդի նորա տիրէր նմա, այր անարի եւ կնամարդի, որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դենարի 'ի վերայ Կարուց ամիրային. եւ ետ բերել նալ ծանրագին եւ բարձրահասակ 'ի Խլաթայ, եւ դնել 'ի վերայ գմբեթի կաթուղիկէին, փոխելով զեղեալն յառաջնոցն. վասն որոյ սրտառեալ քրիստոնէիցն՝ կոչեն զԴաւիթ, եւ տան 'ի ձեռս նորա զքաղաքն Անի. եւ ընկեցեալ զգէնն ասելի 'ի պատուական գլխոյ կաթուղիկէին, զոր ունէր վաթսուն ամ վասն մեղաց մերոց համբերելով՝ եղին զպսակն զարդու, եւ զթագն Յիսուսի՝ զպարծանքն Պողոսի, զփրկութեան մերոյ արեգակն, զխաչն աստուածընկալ. եւ հարեալ զժամահարն առ իսաչին՝ դաւանեցին Աստուած զիսաչեալն 'ի փրկութիւն հաւատացելոց: Իսկ թագաւորն զԱբուլէթ, եւ զորդին իւր զԲուանէ թողեալ 'ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպլսուար որդովք իւրովք, որք անդէն մեռան եւ ոչ եւս դարձան: Եւ ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւխթիս եւ զսահմանս իւր, եւ զԳագ, եւ զՏէրունականն, եւ զՏայուշ եւ

զԿայեանն եւ զԿայծոն, եւ զԼօռէ եւ զՏաշիր, եւ զՄահկանաբերդ, եւ զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի եւ Աբասայ, հնազանդէր եւ զլեառն Կովկասու, եւ զթագաւորութիւնն Սոնաց, զՄրաճուլք, եւ զՃքեթ, եւ զԴուալէթ, զՀերէթ, եւ մինչեւ ցծովն Կազբից եւ ցՀաղբանդ, եւ ցՇապուրան քաղաք: Խնամածեալ եւ անիմաստ ազգին Վրաց, ընտրեալ մանկունս քառասուն առաքեաց 'ի Յոյնս ուսանել լեզու, եւ առնել թարգմանութիւնս եւ բերել. զոր եւ արարին իսկ. երեք 'ի նոցանէ լաւագոյն գտան եւ մտաւոր, զարդարեցին զազգն անգարդ: Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցոյ եւ յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր 'ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն: Սա թագաւորեաց երեսուն եւ երեք ամ, եւ մեռաւ 'ի Տփխիս. եւ թաղեցաւ 'ի Գելաթ 'ի գերեզմանս հարց իւրոց: Եւ առ զթագն Դեմետրէ որդի իւր, որ պահեաց նոյնպէս զիշխանութիւն հօրն. եւ յաւել եւս զԴմանիս, եւ զԽունան քաղաք առեալ 'ի Պարսից:

[ԿԹ]

Ի ժամանակին յայնմիկ որդի մի Ապլուարայ, որ կայր 'ի Խորասան, իբրեւ լուաւ զանցս հօրն եւ զեղբարցն եւ զմահն Դաւթի, գայ 'ի խնդիր հայրենի քաղաքին Անոյ, եւ աղերսանօք խնդրէ յԱպուլէթէ եւ յաւազաց քաղաքին. եւ զի կայր քաղաքն 'ի մեծի վտանգի 'ի Թուրքաց, ետ 'ի նա Ապուլէթ խնայելով 'ի քրիստոնէայսն, եւս առաւել յորդին իւր Իւանէ, զի մի՛ կորիցէ 'ի յաճախ մարտիցն. եւ ինքն անցեալ գնայ 'ի տուն իւր: Իսկ Փատլուն որդին Ապլուարայ բարիոք խնամարկեալ քաղաքին եւ ամենայն սահմանացն՝ արիաբար ջանացեալ, արար խաղաղութիւն. առ եւ զԴուին եւ զԳանձակ եւ եղեւ անուանի: Եւ զի կամեցաւ ձեռնարկել 'ի սուրբ կաթողիկէն, զկնի երից ամաց եղեւ 'ի վերայ նորա արհաւիրք 'ի խոցոտմանէ հրակերպ արանց, որք ելանէին 'ի բանալեաց եկեղեցոյն, զոր առեալ էր 'ի սուրբ սպասաւորէն Գրիգորոյ: Եւ 'ի վաղին կամէր կողոպտել զեկեղեցին 'ի զարդուէն՝ զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթսնամեայ սգոյն. յորմէ տեսլենէ հիւանդացեալ եւ ահաբեկեալ, խնդրեաց աղօթս 'ի Գրիգորոյ՝ հանելով զնա 'ի բանտէ կապանացն յորում կայր. յաղագս զի 'ի կարճ աւուրսն գնացեալ էր 'ի Վիրապն. եւ 'ի դառնալն նորա 'ի Դին՝ տեսեալ զահագին ժողովն Թուրքաց յոգնախուռն բանակին, աղաղակեաց 'ի ձայն մեծ եւ ասաց՝ Օրհնեալ է Քրիստոս Աստուած, որդին Աստուծոյ, զոր սովորն էր առնել օր ըստ օրէ յԱնի. քանզի աղօթակից ընկերն ասաց ընդ կատակ յականջս նորա, եթէ ահա տեղիս օրհնելոյ զՔրիստոս. վասն որոյ կապեալ զնա եւ տարեալ 'ի Փատլուն՝ եղին 'ի զնդան, եւ կամեցեալ անդ սպանանել 'ի նմին զիշերի յորում կալան. բայց Տէր պահեաց զնա այսպէս:

[Հ]

Էին եւ վարդապետք յայնմ ժամանակի. Յովհաննէս, որ եւ Սարկաւազ, 'ի գաւառէն Փառիսոսոյ 'ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչեւ ցարդ 'ի բանս իւր, եւ 'ի նմանէ աշակերտեալսն.- Երեմիա որ եւ Անձրեւիկ, որ զամս երեսուն չորակեր եղեւ, այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ եւ 'ի սաստելն երբեմն թէ լուռ լէր՝ զամս երիս ոչ խօսեցաւ ընդ մարդ, բայց եթէ ընդ վարժիչն իւր 'ի կարիս.- եւ Սամուէլ երեց աշխարհի՝ որ զգաւազանսն յօրինեաց քրոնիկոնին՝ Անեցին: Եւ նախ քան զոսսա Անանիա, որ զառաքեալսն համառօտեաց հրամանաւ կաթողիկոսին Պետրոսի, Սանահնեցին: Իսկ Սարկաւազ վարդապետն կեցեալ 'ի ժիր

մշակութեան զաւուրս իւր, հանգեալ 'ի հինգհարիւր ութսուն եւ ութ թուին: Եւ զկնի ամի միոյ լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ կանոնք գրեաց դիրահաս: Եւ Թորակերայ որդին կոչեցեալ աշակերտ նորին, եւ այլ արք ճգնաւորք 'ի յԱդուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդին, եւ Յակոբ սքանչելին, որ յաւուր միում տեսանէր զաստանայ հեծեալ յուս կրօնաւորի միում՝ որ գայր առ նա 'ի խոստովանութիւն, եւ 'ի մօտիլն մտրակեալ զնա եւ խոթեալ, անդրէն դարձոյց որպէս փախստական: Եւ նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զկնի եւ բերել առ նա բռնութեամբ. եւ հարցեալ զնա ասաց. Եկի առ քեզ զղջացեալ 'ի յապաշխարութիւն, եւ յիշեալ զսովորական գործն իմ դարձայ 'ի քէն: Եւ սուրբն պատմեաց նմա զտեսիլն. եւ նորա լուեալ անկաւ յոտս նորա եւ խոստովանեալ էառ զլուծն ապաշխարութեան: Էին եւ կանայք թագաւորագունք կրօնաւորեալք կուսութեամբ 'ի Քոբայրն, Խորասու եւ Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագն զգուշական խրատս:

[ՀԱ]

Ի հինգհարիւր եօթանասուն եւ ինն թուին Խուրթի, որդի Կզին՝ գայ 'ի Դուին եւ տիրէ, վիրաւորեալ 'ի պատերազմին զՓատլուն, զոր նենգիչք ոմանք գաղտ խեղդեցին պատճառելով զվերն, որ չէր մահու: Եւ առ զամիրայութիւնն կրտսեր եղբայրն Փատլունոյ Խուշէրն. եւ զկնի սակաւու աւագն Մահմուտ. եւ անկաւ դարձեալ 'ի թշուառութիւն երկիրն Անույ:

Ի նոյն ժամանակաց ոչ հեռագոյնս ինչ՝ որդին Ապուլեթի Իւանէ կամեցաւ սպանանել զԴեմետրէ եւ զեղբայրն իւր զԳորգի. եւ հայր նորա Ապուլեթ ճողելով զալիսն իւր առաջի որդւոյն՝ արգել զնա: Եւ էին երկոքեանն արգելեալք 'ի բերդն Դմանիս պատճառանօք ինչ խաբէութեան 'ի մէջ եղբարցն. զոր ապա իմացեալ Դեմետրէ, ասաց ցԻւանէ. Կալար զիս, մամ: Եւ նա զղջացեալ ասաց. Ոչ, արքայ, այլ ետու զեղբայր քո 'ի ձեռս քո, որ ինդրէ առնուլ զթագաւորութիւնդ: Եւ նա ըմբռնեալ՝ խաւարեցուցանէ, եւ թողու:

Յորում ժամանակի լցաւ դաշտն Գագայ անթիւ եւ անհամար հեծելօք յամենայն ազգաց անօրինաց հաւաքեալ, որ կամեցան այրել զսուրբ խաչն՝ որ յանուն զօրավարին Սարգսի: Եւ 'ի բարկութենէ Տեառն խելացնորեալք կոտորեցին զմիմեանս. զոր լուեալ Դեմետրէ երթեալ ժառանգէր անաշխատ զկարասի նոցա: Ի սոյն աւուրս պատանի մի յեղբարցն Փատլնոյ լուեալ էթէ հան նորա Կատայն 'ի տանէ Բագրատունի՝ քրիստոնեայ էր յազգէ թագաւորաց, խաղայր հոգի իւր 'ի սէրն Քրիստոսի, եւ երթեալ 'ի լեառն սրբոյն Գրիգորի՝ մկրտեալ կրօնաւորեցաւ անդ՝ զամս հնգետասան մեծ ճգնութեամբ, մինչ զի տեսանէին լոյս անճառելի բորբոքեալ ընդ երդս խցկանն. եւ զկնի զնաց 'ի Դրագարկն եւ անդ փոխեցաւ 'ի Քրիստոս:

Ի հինգհարիւր ութսուն թուին, Իւանէ որդի Ապուլեթին ասպատակեաց 'ի Գառնի եւ հարան զօրք նորա 'ի Խուրթէ, զորոց կտրեալ զգլուխսն եփեաց թանով, եւ զգանկսն դնէր 'ի բարձրութեան մնիրային 'ի շարս քարորմոցն: Եւ 'ի գալ միւս ամին սպանաւ Իւանէ 'ի Դեմետրէ նենգիւ. եւ որդին նորա Թիրքաշն զնաց առ ամիրապետն Շահի Արմենն, եւ առեալ 'ի նմանէ զԱշարունիս՝ աւերեր զտունն Վրաց մեծաւ քաջութեամբ:

Ի հինգհարիւր ութսուն եւ ութ թուին կործանեցաւ Գանձակ 'ի շարժմանէ:

[2Բ]

Եօթն ամօք նախ քան զայս Շահի Արմէնն տիրեաց երկրին Խլաթայ եւ այլ բազում քաղաքաց, որ էր թոռն Սուքմանայ. եւ սպան զհանիկն իւր, որոյ սպանեալ էր զորդիսն եւ կալաւ զիշխանութիւնն: Եւ իբրեւ զարգացաւ սա, կամեցան եւ զսա հեղձուցանել, որ զերծեալ Աստուծոյ յաջողելովն եւ տիրեալ երկոտասան քաղաքաց, կոչեցաւ թագաւոր Հայոց. որ է Շահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին: Որ եւ փեսայացոյց ինքեան զՍալդուխն եւ խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի: Յորում ժամանակի էր եւ Ելտկուզ Աթաբակն նովին բարի կամօք, յԱստուծոյ եղեալ երեքեան սորա քրիստոնէասէր եւ աշխարհաշէն: Այս Շահի Արմէն գնացեալ ՚ի Սասունս յօրանայր ՚ի գեօղի միում. եւ լուեալ Վիգենայ տեսոն երկրին՝ երթեալ ՚ի գիշերի միում պատեր զտունն յորում կայր, եւ յասելն ումեմն ՚ի կատակս. Ա՜յ Վիգէն, ո՞ւր ես. ետ պատասխանի ընդ երդն եւ ասէ. Կամ աւասիկ շնորհօքն Աստուծոյ: Եւ կալեալ տանի գնա յամուրս իւր. եւ զկնի աւուրց արձակէ ուխտիւ եւ երդմամբ սիրոյ:

Յորում աւուրս ել ՚ի վերայ նորա զօրավարն Պարսից Ելտկուզն, եւ հարեալ գնաց ամօթով: Սա էառ զԱմուկ ՚ի Խետենկայ, եւ զՍասունք ՚ի Վիգենայ ամենայն վանորէիքն. եւ պահէր ՚ի խոր խաղաղութեան, զամս վաթսուն:

Յաւուրս սորա եղև սով սաստիկ ՚ի Սիջագետս, եւ քահանայ մի Աւետ անուն հայ ազգաւ՝ բարձեալ ցորեան իշոց՝ տանէր աղալ ՚ի ջրաղացն, եւ ՚ի տեսլենէ տառապելոցն աղէխարշեալ բաշխէր զամենայն աղքատաց. եւ զէշսն վաճառեալ նոյնպէս արար, եւ այլ ոչ դարձաւ ՚ի տուն իւր, այլ զգեցեալ այծեայս շրջէր քարոզութեամբ ընդ քաղաքս եւ ընդ գեօղս քրիստոսաբար. զի ունէր բանս հանճարեղս, եւ ետ նմա Տէր շնորհս նշանաց. եւ զղջացեալ ՚ի բանս նորա՝ դառնային բազումք ՚ի չարեաց. եւ ինամ ածէր որբոց եւ այրեաց, լնլով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ ՚ի կարողացն: Եւ ել համբաւ գնմանէ. եւ գային յարենային ՚ի նա յլովութիւնք ժողովոց, եւ եկն մինչեւ ՚ի Մանձկերտ, եւ ել ընդ առաջ նորա Շահի Արմէնն մեծաւ հանդիսիւ եւ ինդրեաց ՚ի նմանէ աղօթս եւ եմոյծ պատուով ՚ի քաղաքն: Եւ զի յանդիմանէր զպոռնիկ քահանայսն՝ քսեցին գնա առ շահն, թէ լրտես է Հոռոմ թագաւորին, եւ ետուն գնա քարկոծել. յորոյ վերայ տեսին լոյս երկնային զերիս տիւս եւ զերիս գիշերս: Չոր տեսեալ շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն, եւ ետ հրամանս պատուել զոսկերս նորա:

[2Գ]

Ի հինգհարիւր իննսուն թուին եկն Փերփերօթանն եւ առ զԿիլիկիա, եւ տարաւ տամբ եւ որդուովք զԼեւոն եղբայր Թորոսոյ, եւ զպատկեր Տիրամօրն ՚ի Կոստանդնուպօլիս. եւ անդ մեռաւ Լեւոն, որդին Կոստանդեայ: Եւ զկնի երկուց ամաց մեռաւ Փերօթն, եւ առ զթագն Կիո Մանիլ որդի նորա: Եւ ՚ի նոյն ամի մեռաւ թագաւորն Երուսաղէմի. երկոքին սորա ՚ի յորսի որոզայթեցան, վասն խոզի՝ թագաւորն Յունաց, եւ վասն նապաստակի՝ թագաւորն Երուսաղէմի:

Ի հինգհարիւր իննսուն եւ չորս թուին Ջանդի ամիրայն էառ զՈւռհա. եւ զկնի երկուց ամաց էառ գնա Ջօսլինն, որ էր տէր նորա. եւ զկնի եօթանասուն աւուր սպանաւ ՚ի Թուրքաց, որք եկին վերստին առին զքաղաքն, եւ մեռաւ քաջն եւ յոյժ հայասէրն. որում արար ողբս Գէորգ վարդապետն, որ հայրն էր խոստովանութեան նորա:

Իսկ ՚ի հասանել թուիս մերոյ ՚ի վեցհարիւր ամն, եկին որդիքն Լեւոնի Թորոս եւ Ստեփանէ, եւ մեծաւ իմաստութեամբ եւ քաջութեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլիկիոյ, հարեալ զԱնդրոնիկոս զօրագլուխն Յունաց, որ կայր անդ երկոտասան հազարաւ. զոր լուեալ Մանիլին ՚ի վարձու կալաւ միանգամ եւ երկիցս զՄասուդ սուլտանն, առնուլ զքէն վրիժուց նորա. որ եւ ՚ի յերկրորդ մուտն սուլտանին անկաւ ահ Տեառն ՚ի վերայ նոցա, եւ փախեան առհասարակ, զմիմեանս սատակելով, անդէն թողեալ զքնաւ արարս իւրեանց. քանզի Ադուլն զօրագլուխ նոցա կամեցաւ գնալ երեք հազարաւ յԱնաւարզու ՚ի կողմանս Անտաքու, յորոյ վերայ անկեալ Ստափանէ եղբայր Թորոսի՝ սատակեաց զամենեսին. եւ ՚ի լսել զձայնն գուժին ՚ի բուն բանակին՝ դողացին առհասարակ, եւ ոչ մնաց շունչ զօրութեան ՚ի նոսա: Եւ հազիւ զերծեալ սուլտանն՝ անկեալ ՚ի յորջս իւր սատակի, տալով զպատիւն Խլիճ Ասլանայ որդւոյ իւրոյ, ՚ի թուին վեցհարիւր եւ չորս:

Ի նմին ժամանակի առին Փռանգք զԱսկադոն քաղաք: Ի սոյն ժամանակս եկն Մանիլն ՚ի Կիլիկիա, եւ սիրով նուաճեաց զԹորոս. եւ առեալ զնա եւ զգօրսն Փռանգաց, զնաց ՚ի վերայ Հալպայ. եւ լուեալ համբաւ յարթոռոյն՝ դարձաւ ՚ի տուն. եւ ծայրաքաղ արար ՚ի նոցանէ Թուրքն երկոտասան հազար ՚ի ճանապարհին:

[ՀԴ]

Իսկ թագաւորն Վրաց Դեմետրէ կալեալ զթագաւորութիւնն ամս երեսուն եւ երկու, վճարի. եւ առնու զթագն՝ Դաւիթ որդին իւր, կորովամիտ եւ բարեսէր, եւ հանեալ ՚ի բանտէ զԹիրքաշն, զհօրն կապեալն, դնէ զօրագլուխ, եւ զկնի ամսոյ միոյ մեռանի. (ոմանք ասեն ՚ի դաւելոյ Օրբելեանց ՚ի Սմբատայ եւ յԻւանէէ, վասն ՚ի տեղի նոցա դնելոյ զԹիրքաշն, բանս եղեալ ընդ Գէորգայ եղբօր Դաւթի՝ զնոսա դնել զօրավար). եւ առ զթագն Գէորգի, ՚ի թուին վեցհարիւր եւ հինգ:

Յաւուրս յայտոսիկ յայտնեցան ՚ի Շահապիվանս՝ մարմինք սպանողացն Գնելոյ՝ անփուտ հանդերձիւք, եւ արիւնաշաղախ մարմնով՝ որպէս եւ սպանանն, ըստ անիծից սրբոյն Ներսիսի:

Ի վեցհարիւր եւ տասն թուին էառ Գէորգի Վրաց թագաւորն զԱնի ՚ի Փատլուն ամիրայէն. որ փոխեաց զՇատատն եղբայր իւր. եւ զկնի յիսուն աւուր եկն Շահի Արմէնն բազում հրոսակօք ՚ի վերայ հարուածեալ եւ ախտացեալ քաղաքին ՚ի Սոնացն: Զոր լեալ Գէորգի անդրէն դարձաւ, եւ եհար զնոսա կոտորմամբ սրոյ, զորոց զթիւն ոչ ոք կարաց գիտել. բայց ձերբակալքն էին քսան հազար. եւ թողոյր ՚ի յԱնի զՄադուն իշխանն, յորոյ վերայ կարծիք ապստամբութեան եղեն՝ վասն ինամով ամրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ թագաւորն ընկենու զնա ՚ի պատուոյ: Եւ նա սրտառեալ զնաց հաստուած առ Ելտկուզն. զոր խաբէութեամբ կալեալ Երիսթավն Շաքէոյ, բերէ անդրէն առ արքայ եւ մեռանի. եւ զիշխանն Զաքարեան զՄարգիս՝ դնեն ՚ի տեղի նորա ՚ի յԱնի: Իսկ Ելտկուզն զայրացեալ չէր ինչ ձեռնհաս առնել, զի չորեք հազար Պարսիկ կորեաւ ընդ Սադունին:

Իսկ թագաւորն Վրաց կուտէ առ ինքն զկովկասային զօրսն, եւ զայ առնու զԴուին՝ իստագոյն իսայտառակեալ զնոսա ՚ի սուր եւ ՚ի հուր, բաց ՚ի քրիստոնէիցն որ անդ. եւ զգազաթունսն թանեփեացս առեալ ՚ի մնիրայէն՝ զարդարէ ոսկերել հանդերձիւք. եւ

եղեալ 'ի դագադս՝ բառնայ 'ի յուսս մուկրեաց, եւ բոկոտիք տայ տանել մինչեւ ցՏփիսիս, նախագահ քաղաքն իւր, 'ի վեցհարիւր երկոտասան թուին: Ջոր լուեալ Ելտկուզն գայ յայրեցեալն եւ 'ի քանդեալն Դուին, եւ խոցոտեալ սրտիւ եւ մրմռեալ իբր զգագան կատաղի՝ գայ 'ի Մրեն եւ այրէ անդ զամբոցն, ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրեւ չորեք հազար. եւ դառնայ 'ի դաշտն Գագայ, եւ ասաց այրել զխաչն հոչակաւոր. վասն որոյ 'ի բարկութենէն Տեառն պատժեալ լինէին 'ի տուէ եւ 'ի գիշերի 'ի թինաբեր օձից: Եւ զկնի 'ի թագաւորէն Վրաց ահաբեկեալ փախչի, թողլով զկարասին եւ զգերիսն անդէն. սակայն գրգռէ զԾովիզ սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան եւ ածէ յԱնի, եւ զամս չորս պահէ 'ի տառապանս անվար եւ անհանգիստ. մինչեւ թագաւորն Վրաց Գեորգի ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն եւ տայ 'ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել 'ի բազմութենէ անօրինացն:

[ՀԵ]

Յայնմ ժամանակի աթոռն Հայոց շրջեալ 'ի բազում վայրս՝ 'ի Կարմիր վանքն, եւ 'ի Շուղրն, եւ 'ի Ծովքն, գնացեալ դադարէ 'ի Հոռոմկլայն կոչեցեալ դղեակն, վասն Հոռոմ արեղայի անդ բնակելոյ. յորմէ առին Տաճիկք, եւ 'ի նոցանէ Վասիլ իշխանն Հայոց, եւ 'ի նմանէ առին Փռանգք. եւ 'ի յորսի պատահեալ իշխանին որոգայթիւ մատնիլ 'ի ձեռս Տաճկաց, զոր տարեալ 'ի Հալպ, մեռաւ անդէն. եւ կին նորա՝ որ 'ի Հոռոմկլայն, առաքէ 'ի Ծովքն, եւ բերեալ զպատրիարզն՝ տայ 'ի ձեռս նորա ասելով, եթէ Կայ իմ որդի յայնկոյս ծովուն առ ծնողսն իմ. եւ երթամ, եթէ լինի կենդանի՝ առաքեցից առ քեզ, եւ տուր 'ի նա՝ որպէս ճշմարիտ աւանդապահ. եւ թէ ոչ՝ լաւ քեզ քան օտարաց: Եւ գնացեալ առաքէ զորդին, որում տուեալ ինչս յոլով՝ դարձուցին անդրէն. զի եւ ինքն ոչ վատահանայր միայն բնակիլ 'ի մէջ այլազգեաց. քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացն. եւ սեփեականեցաւ աթոռ Հայոց. զոր բարեպաշտ կին Ջոշլին իշխանին շարժեալ 'ի հոգւոյ ետ յերկոսեան հարազատսն 'ի Տէր Գրիգոր եւ 'ի Ներսէս:

Որ եւ 'ի վեցհարիւր հնգետասան թուին կատարեալ տէր Գրիգոր՝ յաջորդէ զաթոռն տէր Ներսէս: Առ սոսա առաքեաց Մանիլն վասն հաւատոյ դաւանութեան. եւ ետուն գրով, յոյժ կորովի եւ հաճելի բնաւից դաւանութիւնս, զոր ունիմք. եւ կամեցան միաբանութիւն առնել ազգացս, եւ մնաց զործն անկատար, որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք:

Ի նմին ամի ահագին շարժ եղեւ եւ կործանեցաւ Եզնկայն:

Ի սոյն ժամանակի առան եւ մնացեալ դղեակք Կապանին յայլազգիս, Գրիհամ եւ Գեղի եւ Կաքաւարբերդ, վասն սաստկացեալ մեղաց մերոց:

Յորում ժամանակի եւ 'ի միսիթարութիւն քրիստոնէից՝ գեղեցիկ պտուղն հասուն եւ քաղցրաճաշակ պատանին Յովսէփ՝ վկայեաց չարչարանօք յամսեանն յահելի 'ի քսանն, եւ թաղեցաւ 'ի Հաւութառ. որ էր պարսիկ ազգաւ, 'ի սահմանացն Դունայ, 'ի գեղջէն որ նորաշէնք կոչի:

Ի սոյն աւուրս եւ Գեորգ Աշիկայ 'ի գնալն իւր 'ի Հոռոմ՝ յարոյց 'ի մեռելոց զառաջնորդն իւր զԳրիգոր, զոր սպանին յելուզակք 'ի գաւառին Ունկոաց. որ եւ մեղադրէր նմա, եթէ

ընդէ՞ր յանճառելի բարութեանցն յորում կայի՝ դարձուցեր վերստին՝ ի թշուառութիւն կենցաղոյս:

Եղեւ նշան եւ ՚ի Հռոմայրն ՚ի հռչակաւոր սուրբ նշանէն, ածեալ մանուկ մի կոյր ՚ի ծնէ եւ եղեալ ՚ի վերայ աչացն տեղոյ զգէնն աստուածամուխ՝ նոյնժամայն պատառեալ տեղոյ աչացն եւ հոսեալ արիւն բագում՝ կազմեցան աչքն անարատ ամենեւին ՚ի փառս խաչելոյն Աստուծոյ: Եւ էր ՚ի յՈւձնայ, (եւ հօր վանիցն Պետրոս էր անունն ՚ի լինել գործոյն):

Ի վեցհարիւր քսան եւ մի թուին կատարեաց պատրիարզն Ներսէս զվարս իւր. եօթն ամ պաշտեալ զպատիւն, եւ եօթն եպիսկոպոս ձեռնադրեալ ձրի, արք անուանիք եւ ընտիրք, որ վարդապետ եւ որ փիլիսոփայ: Եւ առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտութեամբ Նորադնին: Եւ միւս եղբօրորդին Գրիգորէս, որ եւ Ապիրատ կոչէր, չոգաւ ՚ի Լամբրօնն, եւ ինամէր զՏարսնի վիճակն:

[ՀԶ]

Ի վեցհարիւր քսան եւ երեք թուին էառ Գէորգ զԱնի երկրորդ անգամ, ՚ի սադրելոյ Իւանէի ամիր սպասալարի, զի ինքն նստցի ՚ի նմա, եւ արասցէ գերադարձ քրիստոնէից. եւ զՇահնշահ ամիրայն տարաւ ընդ իւր արքայն, եւ այլ ոչ եւս դարձաւ անդրէն: Եւ լուեալ զայս ամենայն Թուրքաստանաց՝ հաւաքեցան ՚ի մի, զԱլփասլանն կոչեցեալ սուլտան՝ ընդ ինքեանս առեալ գան ՚ի յԱնի, եւ աւերեն գտունն Շիրակայ: Իսկ Իւանէ կամեցաւ տալ զքաղաքն ՚ի Թուրքն, եւ ոչ աջողեցաւ գործն. զի իմացաւ քաղաքն եւ զգուշացան, եւ գնաց սուլտանն եւ աթաբակն իւր սրտախոցեալ, եւ մեռան երկոքեան ՚ի միում ամի:

Ի նմին ժամանակի ել ՚ի բանտէն Կարուց մեծ իշխանն Ապիրատն եւ եկն ՚ի յԱնի. սա էր եղբայր եպիսկոպոսի քաղաքին տեառն Բարսղի, որ աղաչեաց զթագաւորն Վրաց, եւ ետ փոխան նմա ամիրայ, եւ առ գնաւ եւ եօթնէտասն հազար դահեկան: Յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, զեղբօրորդի թագաւորին իւրեանց զԴեմնէն եւ զյոլովս յազատացն յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զթագաւորն, մինչ կայր ՚ի Սախատա յանհոգս. գոր իմացեալ յառնէ միոջէ՝ փախեաւ ՚ի Տփլիս, զի սակաւամարդ էր. եւ անդ հաւաքեցան առ նա բագումք՝ թողլով զչար խորհուրդն: Եւ յորժամ զօրացաւ կողմն թագաւորին, եւ կամէր գնալ ՚ի վերայ ապստամբացն՝ որք ՚ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, եւ ապա մտին ՚ի Լօռէ, բաց ՚ի Լիպարտէն՝ որ չոգաւ ՚ի Պարսից կողմն երկու որդուվք. եւ էառ թագաւորն զամենայն գանձ Օրբէլեանց, եւ ամենեքեան անկան յոտս թագաւորին, եղբօրորդին եւ ընդ նմա այլքն, մինչեւ ինքն իսկ Իւանէ. գորոյ զաչսն կուրացոյց, եւ զկրտսեր որդի նորա զՔավթար եւ զԻնէն, գորդի Լիպարտին սպան, եւ յոչինչ եղեն չար խորհուրդքն ամենայն, ՚ի վեցհարիւր քսան եւ վեց թուին:

Այլ զԱրփասլան սուրտանն փոխեաց Տուղրիլն, եւ զԵլտկուզն՝ Փալիաւանն, որ տիրեաց խորին աշխարհին, եւ Խզլասլան՝ վերին աշխարհիս, որք էին որդիք նորա: Ի նոյն աւուրս առաւ Ծառաքար ՚ի գողոց հրմանաւ Ղարաչայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց գնա Խզլասլանայ ընդ բագում ոսկւոյ. եւ նա բնակեցոյց անդ արս վնասակարս որք ոչ դադարէին յարենհեղութենէ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի. մինչեւ

զքրիստոնէայս 'ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով եւ գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին. որ եւ հինգ կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէին:

[ՀԷ]

Ի վեցհարիւր քսան եւ ութ թուին թագաւորն Երուսաղեմի երեքհարիւր ձիաւորով եհար զՍալահադինն՝ 'ի դրանն Երուսաղեմի գօրութեամբ սուրբ խաչին, որ եկեալ էր հարիւր քառասուն հազարաւ յառնուլ զԵրուսաղեմ բարձեալ ջուր վաթսուն հազար ուղտով, (որք միշտ կրէին 'ի գետոց եւ յաղբիւրաց): Յառաջ Յուսուֆ էր անուն նորա, որդի Էուբին, առն տառապելոյ Դնացոյ, որ եւ 'ի մեծանալն կոչեցաւ Սալահադին՝ որ է խաղաղութիւն հաւատոց:

Ի վեցհարիւր քսան եւ ինն թուին Գէորգի եբարձ զգող եւ զաւագակ յերկրէ. զի ամենայն գօրացն 'ի միասին եղելոյ՝ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու եւ մեծի իրաց՝ անողորմ զամենայն մարդ, եւ յուլվք 'ի պատուաւորաց կախեցան. եւ զգտեալ ինչսն տանէին կախէին զփայտիցն պատուհասից, եւ կախեցին մինչեւ ցանասուն եւ ցշուն եւ ցմուկն, եւ ահ անկաւ 'ի վերայ ամենեցուն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ:

Յայնմ ժամանակի մեռանէր Մանիլն. եւ կին նորա՝ զի դուստր էր Բրնձին Անտաքայ, կամեցաւ Փռանգ այր առնուլ եւ սպանանել զորդին իւր զԱլեքսն՝ որում տուին զթագն: Եւ փախեաւ տղայն յեկեղեցին եւ ազդ առնեն Անդրոնիկայ ազգականին Մանիլին. եւ զայ սպանանէ զսեւաստօսն՝ որ կամէր առնուլ զթագուհին. եւ զագն Փռանգաց՝ որ էին 'ի քաղաքին՝ կոտորէ, եւ որք 'ի նաւ մտեալ փախչէին, նֆատ ձգեալ 'ի նաւսն՝ այրեաց երեսուն հազար արանց. սպան եւ զտղայն, եւ առ զթագն: Եւ առաքեաց կոչել զայր մի թագաւորագն Փիսիկ անուն, զի եւ զնա սպանցէ. եւ նորա զօրացեալ սպան զկոչողն. եւ մեծաձայն դոչմամբ երթայր 'ի սուրբն Սոփի. եւ շարժեցաւ քաղաքն, եւ չարամահ սատակեցին զԱնդրոնիկոս, եւ զերկու որդիս նորա անմեղ մանկունս՝ ծովամոյն արարին:

Ի վեցհարիւր երեսուն եւ մի թուին Խարաչայն որ էառ զԾառաքար, եւ խորտակեաց կռանաւ զխաչն Գորոզոյ կոչեցեալ, անկեալ 'ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն իւր զԿեչոր եւ զՈւխթիսն եւ զամենայն ձորն Երասխայ, եւ երթայ կնաւ եւ որդուվք 'ի Դուին. եւ տեսանէ այր մի ահաւոր՝ որ ասէր ցնա, Ես եմ խաչն Գորոզոյ՝ զոր կոտորեցեր. եւ ահա սպանանեմ զքեզ ձեռօք սիրելոյն քո Շահի-արմենին: Եւ պատմեաց զտեսիլն, եւ 'ի վաղիւն զնաց բռնութեամբ զերծեալ, թէպէտ արգելուին զնա վասն երկիւղի տեսլեանն, մինչեւ փակեցին զդրունսն. այլ նա ընդ պարիսպն իջեալ, եւ երկու ջնիբայով չոգաւ 'ի Մանծկերտ, եւ եկաց առաջի Շահին, որ եւ նոյնժամայն յարուցեալ եհար զդանակն ընդ սիրտն եւ սատակեաց զնա:

Ի նոյն ամի Սարգիս ոմն խաչենեցի կայր 'ի Գանձակ եւ առնոյր խարաճ, եւ ոմն պարսիկ 'ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պարիսպն, ասելով. Խաչակից լեր Քրիստոսին քում. զոր լուեալ իշխանք նորա՝ տարան առ ինքեանս զպարսիկն եւ չարամահ սպանին:

Ի սոյն աւուրս եւ Յորդանան ուն ՚ի Տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսի ՚ի Կարնոյ քաղաք. եւ եղան նշխարք նորա ընդ Յովսէփայ եւ ընդ Սահակայ ազգականին իւրոյ:

[ՀԸ]

Ի վեցհարիւր երեսուն եւ երեք թուին մեռաւ Գեորգի Վրաց թագաւորն եւ ոչ գոյր նորա որդի, եւ Դեմնայն յաչաց եւ յերանաց յապաւած էր, որդին Դաւթի: Ապա առնու զթագն դուստր նորա Թամարն, բերեալ նմա այր գորդին Ռբղոց թագաւորին զՍօսլան, որ առ զԴուին քաղաք: Եւ ՚ի գալ միւսոյ ամին մեռաւ Շահիւարմէնն անորդի, եւ աւեր եւ սուր եւ գերութիւն բազմացաւ ՚ի վերայ աշխարհի նորա ՚ի շրջակայ ազգացն: Եւ զի թոռն Վիդենայ Շահնշահ քեռորդի տեառն Գրիգորի կաթողիկոսի առընթեր կայր մահուան շահին, առեալ զիւրսն անկանի ՚ի Սասունս. եւ անդ անկաւ ՚ի ձեռս նորա Բէկդամուրն՝ որ էր իշխան ամենայն տան շահին. առնու ՚ի նմանէ զբերդն որ Թառձեան կոչի, եւ ուխտի արձակեաց զնա, որ եւ ստեաց ուխտին ՚ի տիրելն իւրում աթոռոյ շահին. եւ զայն եւս եւ զամենայն Սասունք՝ եհան ՚ի նմանէ, եւ արկ ընդ հարկաւ զեկեղեցիս եւ զուխտս:

Ի վեցհարիւր երեսուն եւ չորս թուին ըմբոնեցաւ Ռուբէն ՚ի բրնձէն, եւ թափեաց զնա Լեւոն եղբայրն իւր, որդին Ստեփանեայ, որդւոյ Լեւոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռոբէնայ, որ տիրեաց եօթանասուն եւ երկու բերդից եւ զօրացաւ ՚ի վերայ Յունաց եւ Պարսից, եւ արար ընդ հարկաւ զՂլիճ ասլան սուլտանն մեջերկրեայ:

Ի վեցհարիւր երեսուն եւ հինգ թուին առին Անեցիք զԾառաքար զհայրենիս տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց ՚ի կանանց եւ ՚ի մանկանց: Զոր լուեալ Ալիշէրն ամիրայն Դունայ ճողէր զմօրուսն, եւ սեաւ զգենոյր ՚ի վերայ կնոջն եւ որդեացն որ անդ, եւ ՚ի վերայ զօրացն կոտորման. եւ ՚ի քրիստոնէից փառաւորիւր սուրբ Երրորդութիւնն:

[ՀԹ]

Իսկ ՚ի վերայ Յունաց թագաւորեաց Փիսիկն որ եւ Սահակ, եւ յարոյց հալածանս եւ չարչարանս հայագաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարզն Գրիգոր իսաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. եւ ոչ լուաւ նմա, այլ զյոյզս դարձոյց ՚ի կրօնս իւր, եւ զայլս հայլածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք եւ հազար եւ վեցհարիւր քահանայք. զորս ՚ի մի հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով: Եւ զայսպիսի աղէտս գրեաց յարեւելս տէր Գրիգոր. եւ խոշորեալ սրտի ոչ ինչ կարացին առնել: Առաքէր եւ նոյն պատրիարք եպիսկոպոս մի Գրիգոր անուն ՚ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ ՚ի Յունաց կրէին Հայք, եւ զի խնդրեցեն աղօթս եւ օրհնութիւնս, որպէս եւ առաջինքն, զոր կարի մեծարեաց Պապն, եւ ետ պատարագ առնել եւ հաղորդեցաւ (!), եւ զգեցոյց նմա զիւր քահանայապետական հանդերձն: Եւ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս, զկայսրն Ալամանաց, եւ զթագաւորն Անկլիզաց, եւ զթագաւորն Փռանցիսաց, իւրեանցայովքն. եւ զպատրիարզն Ալամանաց՝ որ ունի քսան եւ հինգ հազար ձիաւոր. եւ զարհի եպիսկոպոսն Սպանիոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, եւ զարքեպիսկոպոսն սուրբ Յակոբայ՝ որ տիրէ հինգ հազար ձիաւորաց. եւ զմեծ արքեպիսկոպոսն մեծի քաղաքին Մելանայ, որ տիրէ երեսուն եւ

վեց հազար ձիաւորաց. եւ յայսմ կողմանէ զպատրիարզն Երուսաղեմի: Եւ ՚ի խորհուրդ մտեալ նոքօք՝ զրեաց զիր հրամանաւ սուրբ առաքելոցն ՚ի նոցա երեսաց, եթէ Հայոց պատրիարզն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի ՚ի վերայ Հայոց եւ Յունաց եւ ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր եւ երկրաւոր Բանալեօք: Եւ վասն զի երկայն ճանապարհ է ՚ի մեջ իմ եւ եղբօրն իմոյ, Հայոց պատրիարզին, առաքեցի նմա զիմ վակասն եւ զպսակն եւ զկօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեալ հանդերձ: Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. Տար եւ զգեցո պատրիարզին. եւ յայնմ հետէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից:

[2]

Ի սոյն ժամանակս ոմն ՚ի գլխաւորաց Սալահադինին գայ ՚ի վերայ Մանձկերտոյ, եւ պաշարեալ, զնա ոչինչ կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն ՚ի վերայ նոցա ՚ի մեջ ամարան. եւ դարձաւ եւ սատակեցաւ ՚ի ճանապարհին, եւ Բեգդեմուրն շնորհ կալեալ քրիստոնէիցն՝ սկսաւ պատուել եւ սիրել յայնմհետէ զքրիստոնէայսն:

Զայնու ժամանակօք թարգմանեաց Միսիթար պատուեալ քահանայն կաթողիկեցի զպատճառս խաւարման արեգական եւ լուսնի, ՚ի պարսկէ միոջէ ՌՃիէ անուն, զոր ասէր թարգմանեալ ՚ի յունաց ՚ի պարսս, եւ թէ Յոյնք ՚ի յԵնովքայ մարգարէութենէն ունէին. որ ասէր թէ արեգակն բնութեամբ ոչ երբէք խաւարի՝ այլ ՚ի լուսնէն լինի պատճառն. յոյժամ ՚ի միում կենդանակերպի դիպին արեգակն եւ լուսին, եւ ժամ իցէ ծննդեան լուսնի, եւ անդ դիպին թանձր ամպքն կոչեցեալ ռաստ, եւ կամ զանապն. զոր թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խաւարման. թէպէտ ժամ իցէ ծննդեան լուսնի, եւ իցեն ՚ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն մերձ՝ խաւարի արեգակն. թէ բոլորն հանդէպ է միմեանց՝ բոլորն խաւարի, եւ թէ մասամբ ինչ՝ առ ՚ի շեղ մասն նսեմանայ. եւ որ մեզ երեւի՝ պատեան լուսնին է եւ ոչ արեգականն աման, որպէս որ եղեւ ՚ի վեցհարիւր քսան եւ հինգ թուին մեծ խաւարումն: Իսկ լուսնին խաւարումն լինի՝ յորժամ վեց կենդանակերպօք հեռի լինի յարեգակնէն, եւ զանապն եւ ռաստն ՚ի նոյն կենդանակերպի, մութ ամպք չտան առնուլ լոյս յարեգակնէն, եւ ստուեր թանձրութեան երկրի անկանի զլուսնաւն, խաւարի լուսինն. եթէ զոյգ եւ կշիռ միմեանց կայցեն՝ բոլորն խաւարի, իսկ եթէ առ ՚ի շեղ լինի՝ ապրեալ մասն լուսաւորի յարեգականէ: Զայս աշխատեալ ծրարոլորին փոխեաց ՚ի մերս:

[2Ա]

Ի սոյն ժամանակս ոմն ՚ի գլխաւորաց Սալահադինին գայ ՚ի վերայ Մանձկերտոյ, եւ պաշարեալ, զնա ոչինչ կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն ՚ի վերայ նոցա ՚ի մեջ ամարան. եւ դարձաւ եւ սատակեցաւ ՚ի ճանապարհին, եւ Բեգդեմուրն շնորհ կալեալ քրիստոնէիցն՝ սկսաւ պատուել եւ սիրել յայնմհետէ զքրիստոնէայսն:

Զայնու ժամանակօք թարգմանեաց Միսիթար պատուեալ քահանայն կաթողիկեցի զպատճառս խաւարման արեգական եւ լուսնի, ՚ի պարսկէ միոջէ ՌՃիէ անուն, զոր ասէր թարգմանեալ ՚ի յունաց ՚ի պարսս, եւ թէ Յոյնք ՚ի յԵնովքայ մարգարէութենէն ունէին. որ ասէր թէ արեգակն բնութեամբ ոչ երբէք խաւարի՝ այլ ՚ի լուսնէն լինի պատճառն. յոյժամ ՚ի միում կենդանակերպի դիպին արեգակն եւ լուսին, եւ ժամ իցէ ծննդեան լուսնի, եւ անդ դիպին թանձր ամպքն կոչեցեալ ռաստ, եւ կամ զանապն. զոր

թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խաւարման. թէպէտ ժամ իցէ ծննդեան լուսնի, եւ իցեն՝ ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն մերձ՝ խաւարի արեգակն. թէ բոլորն հանդէպ է միմեանց՝ բոլորն խաւարի, եւ թէ մասամբ ինչ՝ առ ի շեղ մասն նսեմանայ. եւ որ մեզ երեւի՝ պատեան լուսնին է եւ ոչ արեգականն աման, որպէս որ եղև ի վեցհարիւր քսան եւ հինգ թուին մեծ խաւարումն: Իսկ լուսնին խաւարումն լինի՝ յորժամ վեց կենդանակերպօք հեռի լինի յարեգակնէն, եւ զանապն եւ ռաստն ի նոյն կենդանակերպի, մութ ամպք չտան առնուլ լոյս յարեգակնէն, եւ ստուեր թանձրութեան երկրի անկանի զլուսնան, խաւարի լուսինն. եթէ զոյգ եւ կշիռ միմեանց կայցեն՝ բոլորն խաւարի, իսկ եթէ առ ի շեղ լինի՝ ապրեալ մասն լուսաւորի յարեգակնէն: Չայս աշխատեալ ծրաբոլորին փոխեաց ի մերս:

[2Բ]

Յաւուրս ժամանակացս այսոցիկ էին փառաւոր իշխանքն Չաքարէ եւ Իւանէ որդիք Սարգսի, որդւոյ Վարհամայ, որդւոյ Չաքարի յորդւոյ Սարգսի, ի Քուրդ ազգէ, հատուած եղեալ առ թագաւորսն Չորոզետոյ, որ ի Բագրատունեաց ազգէ, հաւատացին ի Քրիստոս, եւ պատուեցան. եւ տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի. եւ զի արիագոյնք էին, յառաջեցին օր ըստ օրէ ի բարձ եւ ի պատիւ. Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, եւ ետ նոցա զԼօռէ. եւ ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին ի Թուրքաց յոլով բերդս եւ զաւառս ի սուղ ժամանակի. քանզի ի վեցհարիւր քառասուն թուին առին զերկիրն Շիրակայ. եւ վեցհարիւր քառասուն եւ հինգ, առին զԱնբերդ. եւ ի վեցհարիւր քառասուն եւ ութ թուին առին զԱնի. եւ ի վեցհարիւր յիսուն թուին առին զԲջնի. եւ ի վեցհարիւր յիսուն եւ երկու թուին առին զԴուին. եւ ի վեցհարիւր յիսուն եւ հինգ թուին առին զԿարս թագաւորին. եւ ապա զԳետաբակս եւ զՉարեքն. եւ ել անուն նոցա ընդ ամենայն երկիր: Բայց Իւանէ խաբեալ ի թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն, եւ անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի ի Խլաթ. եւ եղբօրն արիական անուամբ՝ ազատեցաւ դարձեալ, զդուստր իւր տալով ի կնութիւն Մելիք Աշրաֆին տեառն Խլաթայ: Իսկ Չաքարէ եղբայրն Իւանէի մնաց ի սեփհական հաւատն. սկայն կամեցաւ զտօն Տիրամօրն եւ զխաչին ի պատկեր աւուրն տօնել, եւ զճրագալոյցսն չլուծանել, եւ կրօնաւորաց միս չուտել, եւ կենդանոյն պատարագ մատուցանել. եւ վրանով պատարագել ի բացեայ՝ դպրօք եւ սարկաւագօք. վասն որոյ առաքեաց առ Լեւոն որ այն ինչ օծեալ էր թագաւոր ի Ֆռանգաց եւ Յունաց, առաքելով նմա թագս ի վեցհարիւր քառասուն եւ վեց թուին. եւ էր ճոխ եւ յաղթագգեաց եւ հարկադիր եւ լծատանջ ամենայն շրջակայ ազգացն: Իսկ նոքա յամեցուցին զպատասխանին, վասն զի յետ տեառն Գրիգորի առ Տէր փոխելոյն՝ էառ զաթոռն Գրիգորիս, Տղայն կոչեցեալ. զոր կալեալ Լեւոնի եղ ի բանտի զկնի ամի միոյ, որ եւ կամեցաւ ելանել ի բանդէն բերդին, պարանաւ իջմամբ, եւ մեռաւ, կտրելով պարանին: Եւ զաթոռն էառ Ապիրատն, ամս, հինգ: Եւ ապա տէր Յովհաննէս, որ կայր ապստամբ ի Լեւոնէ, յորմէ վշտացեալ թագաւորին Լեւոնի՝ դնէ կաթուղիկոս զտէր Դաւիթ յԱրքակաղնին: Եւ յերկպառակութենէն անտի հազիւ եկեալ ի մի կամս՝ ամենեքեան հաւանութեամբ արարին պատասխանի, առնել Չաքարի՝ զոր ինդրէ. զի չէ, ասեն, արտաքոյ զրոց, եւ մեր է սահմանդ հայրենի, եւ յաւերմանէ եկեղեցոյ է խանգարեալ: Բայց ի յարելելս միանգամ եւ երկիցս արար ժողով՝ կատարեալ արանց՝ ի Լօռէ եւ յԱնի, եւ ոչ եղև ընկալեալ. զուցէ, ասեն, եւ ամենայն իրօք հարկեալ լինիմք գնալ զկնի աղանդոյն Յունաց եւ Վրաց:

Իսկ ՚ի յաւուրս ժամանակաց Թամարայ թագաւորին Վրաց, զօրացան քրիստոնեայք. թեպէտ ընկէց զայրն Ռուս, եւ էառ զՕսն Սօսլան, որ ելից զՎիրս գերութեամբ եւ աւարաւ ՚ի Թուրքաց. յորմէ ծնաւ միամօր որդի, եւ կոչեաց զնա Լաշա, եւ ինքն կալեալ զթագն ամս քսան եւ երեք՝ վճարի: Եւ նստի յաթոռն Լաշայն, որ ՚ի զօրացն կոչեցաւ Գեորգի, ՚ի թուին վեցհարիւր յիսուն եւ եօթն:

[24]

Ի վեցհարիւր յիսուն եւ ինն թուին մորեխն աւերեաց զբազում զաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ աւերէր զտունն Պարսից մինչեւ ցԱրտաւիլ քաղաք, առնլով ՚ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից, ըստ որում եւ զաղօթատուն նոցա լցեալ արամբ՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանացն՝ որք ՚ի Նախջուանու եկեղեցիսն, եւ կուռայքն եւ մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, որ Բագուան զենեցան, եւ արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցոյն: Եւ դարձեալ յայնր կոտորուածէ՝ կատարի ՚ի տէր ուղղափառ եւ ամբիծ հաւատով, եւ թաղի ՚ի սուրբ ուխտն Սանահնին, ՚ի վեցհարիւր վաթսուն եւ մի թուին, թողլով տղայ մի հնգամեայ Շահնշահ անուն, (՚ի պատիւ տէրութեանն Անույ կոչեցեալ), զոր դարձոյց յաղանդն (!) Քաղկեդոնի Խոշաքն զուզակիցն Իւանէի:

Եւ զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ եւ սքանչելի վարդապետն Մխիթար, մականունն Գոշ Գանձակեցին, եւ թաղեցաւ յիւրում ձեռակերտին ՚ի Գետիկ, զոր շինեաց հրամանաւ Իւանէի քեռորդոյն մեծի իշխանին Քրդին, որոյ հրամանաւ եկեալ իսկ էր յերկիրն Կայենոյ, ՚ի Հինն կոչեցեալ Գետիկ. զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենեօք ՚ի Հասանայ Կայենեցոյ շինողէ բերդին:

Ի վեցհարիւր վաթսուն եւ երեք թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա եւ որդիք իւր տարածամ. եւ միւս Վաղթանգ Սակոեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ, թողլով երկու տղայս, զՀասան՝ որ ՚ի զգուանաց Զալալդօլա, եւ զԶաքարէ՝ որ եւ Նասրադօլա. զորս խնամարկէր Իւանէ մարքն իւրեանց Խորիշահի: Որ եւ ապա յԵրուսաղէմ երթեալ եւ յամեալ, մեծաւ ճգնութեամբ կատարի յոլով դրուատիւք ՚ի տէր: Եւ մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՉարեքն եւ զամենայն շրջակայս նորա. եւ ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդոյ Զաքարիայ, առնուն զՇամբոր. եւ ՚ի վեցհարիւր վաթսուն եւ ութ թուին առնու զՌոբոտն, եւ զմերձակայ դղեակսն, թեպէտ ոչ զբովանդակ. քանզի երբ ունէին զնա Հայկազունքն, քառասուն եւ երեք բերդք էին նշանաւորք, եւ հազար չորեքհարիւր գեղք, եւ քառասուն եւ ութ վանորեայք. որոց սկիզբն աւերման եղեւ ՚ի հինգ հարիւր յիսուն եւ երկու թուին, ՚ի պատճառէ երիտասարդի միոյ մատռուակի Մէլիքեւշահ սուլտանին, որ ՚ի գնալն հայկազնի թագակալին ՚ի հնազանդութիւն սուլտանին, նեղէր զնա զինով խիստ, մինչ խոստանալ նմա զդուստր իւր կնութեան, եւ նորա հանգուցեալ զգօտին՝ ցուցանէր սուլտանին ըստ իւրեանց սովորութեանն: Եւ զկնի անցեալ աւուրց ինդրէր զխոստացեալն, եւ ՚ի հարկանելն զնա նախատանօք՝ լինի նախանձաբէկ. եւ առեալ յոլովութիւն զօրաց աւերէր զաշխարհ, մինչեւ ամենեւին քանդեալ ապականեցաւ. որում յետոյ տիրեալ հղօրն Իւանէ:

[25]

Ի սոյն թուականի փոխի առ Քրիստոս պսակաւորն մեր Լեւոն, եւ առնու զթագն դուստր նորա միամօր, Եղիսաբեթ անուն, որ ըստ Տոանգաց լեզուին Զապիլ կոչի, ածեալ նմա այր զՖիլիպն գորդի տեառն Անտաքու, զամս երկու. եւ զի ասելի էր նմա ազգս Հայոց, եւ զիւրսն մանաւանդ պատուէր զՏոանգսն, երդմնագանց եղեալ ՚ի յեղեալ ուխտէն հայադաւան եւ հայասէր լինել, վասն որոյ եւ զպատուական թագն եւ զպաղատն առաքէր ՚ի տուն հօր իւրոյ: Որում ոչ կարացեալ տանել իշխանացն, դնեն զնա յարդելանի՝ մինչեւ մեռաւ անդէն. եւ տան զաղջիկն՝ Հերթմոյ, որդւոյ Կոստանդեայ, մեծահոգի եւ հանճարեղ պատանեկի, որ էր անձնեայ եւ թիկնեղ եւ գեղեցկադիտակ երիտասարդ, պսակելով զնոսա պատրիարզին Կոստանդեայ, որ ժառանգեաց զաթոռն սուրբ՝ զկնի մահուան տեառն Յովանիսի ՚ի վեցհարիւր վաթսուն եւ ինն թուին. ոչ յարենէ եւ կամ ՚ի պատուոյ, կամ ՚ի մամոնայէ, այլ ՚ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ, եւ յամենայն լեզուաց վկայեալ:

Նախ քան զձեռնադրիլն նորա միով ամաւ՝ եղեւ շարժ ահագին, եւ փլաւ պաճուճագարդ եկեղեցին, որ ՚ի Մշակավանս ՚ի մետասանն յունուարի ՚ի ժամ ճաշոյ, եւ չորս պատարագող ընդ մեծ զենմանն նուիրեցան: Իսկ ՚ի յերկինս տեսեալ լինէր ՚ի բոլորից աստղ նիզակաձեւ զամենայն գիշեր. որք երկոքեան ցոյցքն նշանակէին զշարժումն խաղաղութեան աշխարհի ՚ի խռովութիւն նիզակաւոր թշնամեաց. որպէս եւ եղեն իսկ ՚ի զալ թուականին ՚ի վեցհարիւր վաթսուն եւ ինն: Չօր ինչ օտարադէմ եւ այլալեզու շարժեալ ՚ի Չին եւ ՚ի Մաչին աշխարհէն, Մուղալ եւ Թաթար անուն կոչեցեալ՝ եկին մտին յերկիրն Գուգարացոց առ դաշտավայրօքն, ՚ի կողմանցն Ադուանից, իբրեւ թէ քսան հազար. եւ կոտորէին զամենայն կենդանի՝ զորս գտանէին, եւ փութով դառնային: Չորոց զհետ մտեալ ամենայն ուժով Լաշն՝ հասանէ առ գետովն Կոստանայ. եւ պարտեալ ՚ի նմանէ՝ ապրի փախստեամբ հանդերձ Իւանէիւ, զորոյ երիվարին ածեր զջիլն իշխան ոմն՝ զրկեալ ՚ի նմանէ. բայց Վահրամ տէր երկրին՝ մեծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ՝ մինչեւ ցԳարդման, չգիտելով զայլոցն փախուստն:

Եւ ՚ի վեցհարիւր եօթանասուն եւ մի թուին կամեցան այսրէն դառնալ նոյնք. այլ զի գտին դեսպանք նոցա կազմ եւ հաւաք զՀայս եւ զՎիրս, եւ տարեալ զհամբան՝ ոչ համարձակեցան զալ, այլ անդրէն դարձեալ գնացին, յո՛ւ եւ գնացին: Եւ ՚ի նոյն ամի զօր բազում հատուածեալ ՚ի Հոնաց, զոր Խւչաղն կոչեն, եկեալ ՚ի Գանձակ միաբանեցան ընդ նոսա. եւ ՚ի գնալ մերոցս վստահութեամբ եւ անզգուշաբար ՚ի վերայ նոցա, հատուածեալք դարձան փախստեամբ, զբազումս սրոյ ճարակ տուեալ, եւ զոմանս կենդանի կալեալ ՚ի փառաւոր ազատացն՝ եղին ՚ի բանտի. ընդ որս եւ զԳրիգոր իշխանն զկոչեցեալն որդի Խաղբակայ, եւ զեղբօրորդին իւր զարիական եւ զքաջ նահատակն զՊապաքն անուանեալ. զորոց զվրէժն առին ՚ի զալ ամին զօրքս մեր ջնջելով զաւելի մասն Խւչաղին, ՚ի զալն նոցա յերկիրն Վարդանաշատոյ:

[2Ե]

Իսկ ՚ի վերանալ թուիս մերոյ ՚ի համարն վեցհարիւր եօթանասուն եւ չորս, երկոքին որդիքն Խորազմն շահին պարտեալ եւ նեղեալ ՚ի Թաթարացն, զան երկերիւր հազարաւ, որպէս ասեն, ընդ Ադլպարական երկիր ՚ի յՈստանն Հայոց, առնուն զնա, եւ լնուն զդաշտն լայնատարած վրանօք. յորոց վերայ երթեալ մերքս՝ յաղթահարեալ կորնչին ոչ սակաւք, առ զեղաքաղաքին Գառնոյ, աւելի մասն՝ վիժմամբ ընդ իւրամս

խորխորատին, յաստուածասաստ բարկութենէն՝ ՚ի վերայ Իւանէի. յաղագս նոր եւ օտար չարեացն, զոր գործեաց կին նորա: Քանզի Պարկեշտ անուն երեց մի մեռեալ, հանել ետ ՚ի գերեզմանէն եւ այրել, եւ շուն զենուլ ՚ի տեղուջն, վասն յաճախ ուխտականացն երթելեկաց, զոր պատուեաց Աստուած իջմամբ լուսոյ ՚ի վերայ նորա. ակներեւ բերդաքաղաքին Բջնոյ, ուր եւ հիմն արկին եկեղեցոյ, ելեալ ՚ի բանս բանսարկու առն միոյ, զոր շանթակեզ արար Տէր ՚ի նմին գիշերի, յորում ՚ի տուրնջեանն զայնպիսի անցս կրեցին:

Իսկ սուլտանն յաղթագգեաց պերճանօք յանհոգս եղեալ, կոխե՛ բազում տեղիս, եւ ընդ կրունկն դարձեալ ՚ի Դավրեժ, զկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրացն Գագայ ՚ի Տփիսիս. եւ բազում ոճիրս գործեալ դառնայ ՚ի վերայ Խլաթայ. եւ առեալ զնա եւ հարստացեալ՝ երթայ ՚ի Հոռոմք ՚ի վերայ Ալատին սուլտանին եւ Մելիք Աշրաֆին. եւ մեծապէս խորտակումն կրեալ ՚ի գորն, փախչի սակաւութի ՚ի Մուղան ՚ի դաշտն ամենունակ զամենայն պէտս մարդոյ եւ անասնոյ. յորոյ վերայ հասանէ վաղվաղակի Տաթարն, որ հանեալ էր զնա յիւրմէ աշխարհէն յառաջագոյն, եւ անտի դարձուցանէ զնա ՚ի փախուստ դէպ ՚ի յԱմիթ. եւ յանգէտս մեռանի ՚ի փախչելն, թէ սրով Թաթարին, եւ թէ որպէս ասեն՝ յիւրայոցն ոմն մի՝ զորոյ մերձաւոր սպանեալ էր ՚ի կարճոյ, եւ սրտառեալ կայր վասն այնորիկ, եւ յաղագս անհանգիստ շրջեցուցանելոյն զնոսա. եւ այնպէս խնդրեցաւ վրէժ արեան անձանց անմեղաց: Իսկ Թաթարն կոչեցեալ որ եկեալ էր յառաջագոյն սակաւութի վեցհարիւր վաթսուն եւ ինն թուին, եւ կամեցաւ դառնալ ՚ի վեցհարիւր եօթանասուն եւ մին՝ եւ ո՛չ վստահացաւ, յաւելեալ յինքն անհուն բազմութիւն առաջնորդ ունելով զՉարմաղանն կոչեցեալ զօրապետ, գայ ՚ի Գանձակ շահաստանի ՚ի վեցհարիւր եօթանասուն եւ չորս թուին. պաշարէ զնա ւաւուրս ինչ եւ առնու. եւ կոտորէ անողորմաբար, բաց ՚ի մատաղ տղայոց եւ ՚ի կանանց՝ յորս հաճէին: Եւ յայսմանէ ոյժ առեալ մտանեն ՚ի թագաւորութիւնն Վրաց, եւ բաժանեն զանուանի տեղիս գաւառաց, եւ զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն՝ զորս Նոյինս կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ դղեակս գաւառացն՝ վաղվաղակի մատնեալ լինէին ՚ի ձեռս նոցա, ՚ի պատուհաս մեղացն մերոց: Չաղաղա նոյինն էառ զԼօռէ քաղաք, եւ որք յայնր կողմանէ գաւառք. Դոլաղա նոյինն՝ զԿայեն բերդ, ուստի հանին զԱւագն տէր երկրին. եւ մեծն Չորմաղանն՝ զԱնի եւ զԿարս, եւ զմերձակայսն. Ղատաղա նոյինն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակուց եւ զՎարդանաշատու: Իսկ Մուլար նոյինն ՚ի բաժնի առեալ զբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ, եւ նախ առնու զՇամքոր հնարիւք. եւ Վահրամ որդուովն Աղբուղայի փախչի տեղուջէ ՚ի տեղի, մինչեւ գիտաց էթէ ինայեն ՚ի հնագանդեալս՝ որք կամօք խոնարհին ՚ի ձեռս նոցա: Եւ ապա եկեալ առնոյր զառեալն ՚ի նոցանէ զդղեակս եւ զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա ՚ի հայրենեաց. որ եւ զամենայնն առեալ էին, զՏաւուշ, զԿաճարէթ, զՏէրունականն, զԵրզնէանքն, զՄաճնաբերդ՝ որ էր Կիւրիկեանց Ասխարթանայ. զՆոր բերդ՝ որ էր Վասակայ թագաւորագնին, եւ զՔաւազինն անմարտնչելի ամրոց, եւ զԳագ անուանի բերդ, եւ գաւառ ՚ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հոչակաւոր եւ սուրբ ուխտն իսպ եւ եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ՚ի սրբոյն Մեսրոպբայ վարդապետէն եւ թարգմանչէն Հայոց, որ կայ ՚ի գլուխս Գագայ, եւ հայի ՚ի դաշտն լայնանիստ եւ երկայնատարած. եւ զայլ ամրոցս եւ զգեօղս եւ զագարակս. ամենեքեան տուեալ լինէին ՚ի ձեռս նոցա ՚ի սուղ ժամանակս, անվաստակ եւ առանց աշխատութեան. զի գիտացուք էթէ ձեռն Տեառն է որ ետ զաշխարհս մեր առաջի աչաց մերոց կերակուր օտարաց:

[22]

Եւ սկիզբն 'ի սրբութեանց իւրոց եւ 'ի սրբոց արարեալ, առեալ լինէր նեղեալ 'ի կարօտութենէ պիտոյից, եւ աւելի 'ի ջրոյ, քարայրն վսամականին համբաւատենչ եւ արդիւնական վարդապետին Վանականն կոչեցեալ. յորում ինքն իւրայովքն ամբացեալ էր աշակերտօք եւ այլովք գաղթականօք յոլովիւք՝ 'ի նա ապաւինելօք. որոց տուեալ զանձն փոխանակ քրիստոսաբար՝ գնայ գերի, ազատելով զնոսա, եւ ժամանակս ինչ շրջեալ ընդ բանակս խուժական ազգին վաճառի քրիստոնէիցն՝ որք 'ի բերդն Գագայ. որք գնեցին ոչ հրէաբար 'ի մահ նախատանաց, այլ տիրանման յազատութիւն փառաց (յիսուն դահեկանաւ, աւելի քան զՏէրն: Այնքան ժատ էր վաճառողն Տեառն, եւ դիրագին եւ թեթեւ ունէր, որում ինքն էր արժանաւոր): Յետ որոյ կեցեալ ամս հնգետասան 'ի փառս Աստուծոյ եւ յօգուտ բազմաց, հանգչի 'ի Քրիստոս 'ի բազմավաստակ ճգնութեանցն 'ի խորանս լուսաւորչացն աշխարհի, յետքն հարիւր թուականին, 'ի յութելտասն մարտի եւ 'ի տասն յարեգի հին զուգին, 'ի յաղուհացն յաւուր շաբաթի, 'ի յիշատակի Ովրենդի եւ եղբարցն իւր 'ի կարգի. եւ ըստ մեզ՝ Կիրոյի Երուսաղեմի հայրապետի, առնելով տօն վերին Երուսաղեմի, որ աստէն տօնիչ եւ զգուիչ էր զաւակաց նորա, որդւոցն լուսոյ 'ի փառս փեսայի նորա, անմահ թագաւորին Յիսուսի եւ Հօր իւրում եւ Հոգւոյն սրբոյ. զհարիւրապատիկն աստէն թողեալ զանուն քաջութեան յաշակերտս իւր, եւ 'ի գիրս զանձուց եկեղեցւոյ, զոր ամբարեաց 'ի շնորհացն Աստուծոյ եւ 'ի յստակ մտաց ծննդականաց:

[23]

Արդ 'ի վեցհարիւր ութսուն եւ հինգ թուականէն Հայոց մինչեւ յետքն հարիւր չորեքտասան, յորում եմքս մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց, ընդ աշխարհս եւ ընդ իշխանութիւնս, որ յայսմ կողմանէ ծովուն մեծի, ընդ Պարսս եւ ընդ Աղուանս, ընդ Հայս եւ ընդ Վիրս, եւ ընդ աշխարհն Հռոմոց կոչեցեալ. ուր էին բնակեալ Հայք եւ Ասորիք, Յոյնք, եւ Տաճիկք եւ Թուրքմանք, գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վանական վարդապետն, եւ հարագատն մեր Կիրակոս վարդապետն հօրն համանման. զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել, այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց եւ գործոց յիշատակօք՝ 'ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յոլով ժամանակօք սկսեալ եւ թերի թողեալ պատկառելով 'ի գրողացն պատուոյ զոր վերագոյն յիշեցաք. թէպէտ եւ չկարէ բան եւ նիւթ պեղել եւ 'ի յիշումն ածել զյորդութիւն բազմութեան մեղաց եւ յանցանաց եւ անզգամութեան մերոյ, ըստ որում եւ ոչ զհատուցումն վրիժուց արդար դատաստանին Աստուծոյ: Մանաւանդ էթէ գոյ հնար թուել զհատուցումնս, եւ զհամար չարեացն մեր ոչ բնաւ. որում յաղթեաց եւ միշտ յաղթէ խորոցն խորք եւ անդնդոցն անդունդք, զթութեանցն Աստուծոյ անբաւութիւնք: Որում շնորհ եւ զօրութիւն, փառք եւ պատիւ, օրհնութիւն եւ զոհութիւն, անթուական եւ անտլորտ յաւիտենիւն, 'ի բոլորից եւ 'ի մասանց արարածոց իւրոց, յիմանալեաց եւ 'ի զգալեաց, յորոց եւ ամէնն ասացի անսպառ եւ անէզր էին անվախճանիւն:

[24]

Արդ ՚ի վեցհարիւր իննսուն եւ մի թուին Հայոց Բաշաւնուինն փոխեաց զիշխանութիւնն Չարմաղանին եւ էառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երեւելի մեծատուն եւ երկիրդած ՚ի Տեառնէ գՈւմէկն, եւ զազգականս նորա գորդիսն պարոն Յոհաննու, զՍտեփաննոս եւ զեղբայրսն իւր հինգ.- եւ ՚ի վեցհարիւր իննսուն եւ երկու թուին զամենայն աշխարհն Հոռոմոց՝ կոչեցեալ, եւ զանուանի քաղաքսն, զԿեսարիա նախ, ապա զՍեւաստ, յորս խնայեցին ՚ի կոտորելոյ, զի վաղ եկին ՚ի հնագանդութիւն, ապա զԵզնկա, զորս յանխնայ կոտորեցին եւ գերեցին. քանզի ընդդէմ դարձան: Եւ զայլ աշխարհս եւ զգաւառս, ուր մանաւանդ ազգ Հայոց վշտատեսաց բնակեալ էին. զի համարագիր թուականին ՈՂԲ (վեցհարիւր իննսուն եւ երկու) էր, եւ ըստ այն գործեցան արդիւնքն արժանաւոր ողբոց եւ արտասուաց, ոչ միայն բանականաց, այլ եւ անբանից, լերանց եւ դաշտաց, որք ոռոգեցան արեամբ եւ արտասուօք: Որ եւ սոյն ողբ կրկնեցաւ ՚ի վեցհարիւր իննսուն եւ ութ թուին. քանզի կարծիս առին Բաշուն եւ այլ աւագանին ամբարտաւանութեան եւ ապստամբութեան թագաւորին եւ իշխանացն Վրաց. եւ ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ, եւ զայլ մեծսն՝ կապեցին եւ հատին վճիռ մահու, այլ ՚ի խնամոց վերնոյն արձակեցին ՚ի մահուանէ: Սակայն անթիւս կոտորեցին եւ գերեցին գեօղս եւ ազարակս եւ գործեցին խայտառականս ՚ի կանայս՝ ՚ի Հայս, եւ աւելի յաշխարհն Վրաց:

Ի վեցհարիւր իննսուն եւ ինն թուին մեռաւ Աւագն որդին Իւանէի եւ թաղեցաւ ՚ի Պղնձահանքն ընդ հօր իւրում, այր անագահ եւ պատերազմասէր եւ աղօթական:

[2Թ]

Յեօթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր ՚ի մեծ Պապէն Հռոմայ, եւ գրեաց յազգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին Աստուած՝ խոստովանել ՚ի Հօրէ եւ յՈրդոյ բղխեալ. եւ ոչ եղէ հաճոյ Աստուոց եւ Յունաց եւ Վրաց, բայց ՚ի Հայոց. որք քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց ՚ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականին, եւ գտին համախոհ երեւելի արանց փառաւորաց Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացոյ, Գրիգորի Լուսաւորչին եւ այլոց սրբոց:

[Դ]

Յեօթն հարիւր եւ մի թուին մարախ եկն ՚ի վերին աշխարհս Հայոց, եւ արար վնաս յոլովից գաւառաց:

Յեօթն հարիւր եւ երեք թուին Մանկու դանն հրաման ետ համարել զհնագանդեալ աշխարհս ընդ իւրով իշխանութեամբ ՚ի ձեռն առն երեւելոյ Արդօն կոչեցելոյ, եւ դնել հարկս ըստ գլխոց արանց, բաց ՚ի կանանց եւ բուն ծերոց եւ ՚ի մատաղ տղայոց:

Յեօթն հարիւր եւ երեք թուին քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում չոգաւ ՚ի Բաթաւ մեծ թագաւորն հիւսիսոյ, համագգի Չանգգ դանին, եւ անտի առ Մանկու դանն. եւ ըստ արժանւոյն մեծարեցաւ, եւ դարձաւ յետ տարւոյ խաղաղութեամբ յաթոռ իւր:

Յեօթն հարիւր եւ չորս թուին եկն Հուլաւոյն եղբայր Մանկու դանին անթիւ գօրօք, եւ մեծասաստ իշխանութեամբ ՚ի վերայ Պարսից, Ասորեստանեաց, Հայոց, Վրաց եւ Ադուանից, եւ հրաման ետ նախ եկեալ գօրուն՝ ամենայն ախիւն իւրեանց գնալ յաշխարհն Հոռոմոց: Յորմէ ահէ թողին զվերին աշխարհս, եւ գնացին ՚ի հարկէ, եւ

կալան գամենայն միջերկրեայս մինչեւ 'ի ծովն, տիրելով աշխարհացն՝ որ ընդ իշխանութեամբ սուլտանացն Հռոմոց կոչեցեալ:

Իսկ մեծն Հուլաու 'ի նոյն ամի գալստեանն իւրոյ 'ի թուին եօթն հարիւր եւ չորք, չոգաւ յերկիրն Մլիեդաց յԱլամուդն կոչեցեալ, եւ առ զնա, հանեալ զգլխաւորն, զի յառաջ քան զգալն նորա՝ պաշարեալ եւ 'ի նեղ արկեալ էին զօրք նոցա, որոց գլխաւոր էր Իսաւուր նուինն կոչեցեալ: Եւ 'ի դառնալն անտի կոչեաց առ ինքն զԴաւիթ թագաւորն Վրաց եւ զմեծամեծս աշխարհին, եւ սիրով եւ պատուով տեսեալ զամենեսեան, մանաւանդ զքրիստոնեայսն. զի աւագ կին նորա Տողուզ խաթունն կոչեցեալ քրիստոնեայ էր ըստ Աստուծոց ուսմանն՝ որ Նեստորքն կոչին. սակայն չէր տեղեակ նոցա աղանդոյն, այլ անխարդախ սիրով մեծարէր զամենայն ազգ քրիստոնեայ եւ խնդրէր աղօթս. որպէս եւ ինքն իսկ Էլդանն կոչեցեալ Հուլաուն. խորան կտաւեայ 'ի ձեւ եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նոսա, 'ի ձայն ժամահարի եւ աղօթից կարգաւորութեան եւ պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք եւ սարկաւագունք. եւ գոյր դպրոցս եւ ուսմունս մանկանց համարձակութեամբ: Եւ անդ հանգչէին եկեղեցականք որ յամենայն կողմանց եւ 'ի լեզուաց քրիստոնէից գնային խնդրել զխաղաղութիւն եւ գտանէին եւս, եւ դառնային խնդութեամբ եւ պարգեւօք:

Յեօթն հարիւր եւ հինգ թուին մեռաւ Բաթաւ մեծ կողմնակալն հիւսիսի: Եւ 'ի նոյն տարւոջն որդի նորա Սարդախն դեղակուր եղել յիւրոցն եղբարց վասն նախանձու. զի նմա յանձնեցաւ իշխանութիւնն 'ի հօրէն եւ 'ի Մանկու դանէն յաւելուածով. եւ սուզ մեծ եղել մահն նորա քրիստոնէիցն. զի կատարեալ քրիստոնեայ էր եւ լինէր պատճառ փրկութեան բազմաց, ածելով 'ի հաւատս յիւրոցն եւ յօտարացն:

[ՂԱ]

Յեօթն հարիւր եւ եօթն թուին քաջն Հուլաու էառ զԲաղտատ, զկնի հինգհարիւր եւ եօթնէտասն ամի շինութեան նորա 'ի Ջափրէ Իսմայելացւոյ՝ 'ի հարիւր իննսուն եւ չորս թուին Հայոց, 'ի վերայ Տիգրիս գետոյ, որպէս ասեն, հեռի 'ի հին Բաբելոնէ եօթն ասուր ճանապարհ, սպան եւ զխալիփայն իւրով իսկ ձեռօքն Հուլաղու, որում անուն էր Մուսթապ, եւ ապրեցան քրիստոնեայք որ կային անդ կամօք եւ բարեխօսութեամբ Տողուզ մեծի թագուհւոյն:

Եւ զի Խալիփայն՝ յետամնաց ասի ազգին Մահմետի՝ որ 'ի վաթսուն թուականին Հայոց երեւեցաւ, եւ տեսեաց յետնորդն մինչեւ 'ի յօթն հարիւր եւ եօթն թիւս: Ի դառնալն Ելդան Հուլաուին յաւերմանէն Բաղդատայ՝ 'ի նոյն թուին պաշարեցաւ Մուփարկինն քաղաքն Մարտիրոսաց զամս երկու, զի անուանեալ սուլտանն որ անդ՝ ընդդէմ դարձաւ որդւոյ Հուլաին Իսմուդին, եւ փակեաց զքաղաքն եւ մարտեաւ ընդ նմա եւս, որ էր յազգէն Եղեաց, որ եղել նիւթ բարկութեանն Աստուծոյ. զի 'ի սղարն կերան գտուրք եւ զանսուրք անասունս, եւ ապա զաղքատսն, ապա զծնունդս իւրեանց եւ զմիմեանս զոր կարէին: Մինչ զի աւագ եւ գլուխ երիցանցն որ անդ՝ հարկեալ 'ի կատաղի բոցոյ որկորին եւ զագանացեալ՝ եկեր յիւրոցն, եւ գրեաց խոստովանութիւնս 'ի քարտիսի, եւ յուսացաւ տեսանել մեզ զգիրն, եւ ողորմութիւն գտանել յողորմածէ բնութեանս ստեղծողէն: Եւ ինքն տուեալ զինքն կողկողման եւ լալեաց՝ վայիւք եւ հառաչմամբ անդադար ափսոսանօք, մինչեւ քաղեցաւ շունչն: Չորոյ զգիր խոստովանութեանն ըստ յուսոյն իւրոյ տեսաք մեք, եւ ակն ունիմք նմա ողորմութիւն

գտանել 'ի դիտողէն եւ ստեղծողէն բնութեանս, որ մահուամբ եւս կարակցեաց մեզ. գրածն հայր եւ ողորմութեան խորքն, եւ սիրոյն անդունդքն. նովիմբ կամօք եւ կարողութեամբ ողորմեսցի նմա, եւ քաւեսցէ խորհրդով սուրբ եկեղեցւոյ. եւ ամենեցուն իսկ՝ որ զղջմամբ ապաւինեցան եւ ապաւինեսցին յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եւ պատահեալքդ սրտի մտօք հայցեցէք զամենն ասելով:

[78]

Յեօթն հարիւր եւ ութ թուին չոգաւ Հուլաւուն յաշխարհն Միջագետաց, եւ ա՛ն զքաղաքսն եւ զգաւառսն զայնոսիկ, որպէս եւ գրեցին մանրապատում գրողքն: Եկն առ նա պատրիարզն Հայոց, կաթողիկոսն, օրհնեաց զնա եւ սիրեցաւ 'ի նմանէ. ընդ նմա էր 'ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ՝ եւ մեր պսակաւորն Հեթում, ազատելով 'ի մահուանէ զքրիստոնէայսն զեկեղեցականս եւ զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով: Որում հատուցէ Տէր հազարաւոր թողութեամբ մեղաց, եւ յերկարութեամբ կենաց ըստ իւրոց կամաց, յորդոց, յորդիս:

Դարձաւ Հուլաւուն յիջեւանս 'ի ձմերոցս 'ի դաշտն Մուղանայ, եւ 'ի կայս ամարան 'ի Դառին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց՝ 'ի Դարանեղաշտ. զի այրք եւ դերբուկք քարանց կան անդ շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց, եւ շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում. եւ խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր, մարդ եւ անասուն, փայտս ծանունս 'ի հեռաստանէ բերելով:

Յեօթն հարիւր եւ ինն թուին առաւ Մարտիրոսաց քաղաքն, զկնի յովով աղետից եւ վնասուց՝ ոչ միայն պաշարեալ քաղաքին, այլ եւ պաշարողացն զօրացն Տաթարուն, եւ քրիստոնէիցն որ ընդ նոսա. կռուելով ընդ միմեանս 'ի ներքուստ եւ արտաքուստ. ուր սպանաւ զեղեցիկ երիտասարդն Սեւադա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ եւ յայնոսիկ պսակեալ, հաւատ եւ երկիրդ պահելով՝ զԱստուծոյն եւ զԵլղանին. որում մասն հասցէ արեամբ նահատակացն Քրիստոսի՝ պահողացն զհաւատ եւ զերկիրդ նորա. ամէն:

Ի նոյն թուին կոտորեցան զօրքն զոր թողեալ էր Ելղան Հուլաւուն կողմնապահ երկրին Շամայ իբրեւ քսան հազար, ընդ մեծ զօրագլխին Քիթրուդա կոչեցեալ, քրիստոնէայ հաւատով, ընդ որս մարտեաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թաբորական լերինն անթիւ բազմութեամբ, եւ զի սակաւք էին բուղայեանքն՝ կոտորեցան եւ զերեցան, եւ էին որք ցրուեցան թաքեան եւ ապրեալ եկին առ թագաւորն Հայոց. եւ 'ի նմանէ յովով գտեալ մարդասիրութիւն, հանդերձ եւ երիվարս եւ ռոճիկս, եկին գոհութեամբ առ տէրն իւրեանց, Տաթարք եւ քրիստոնէայք: Եւ յայնմանէ յովով փառաւորեցաւ անունն Քրիստոսի յարքայն Հեթում, յօտարաց եւ յընտանեաց:

[79]

Ի յեօթն հարիւր թուին իշխանաց իշխանն արքայաշուքն Ջալալն դառն չարչարանօք կցորդեցաւ մահուն Քրիստոսի եւ վկայից նորա՝ 'ի զրախօս Տաճկաց, զուր պարտաւորեալ եւ մատնեալ Արդունին. տարեալ 'ի Տաճկաստան՝ 'ի Խազուինն, եւ անդ զիշերի յօդակոտոր արարեալ սպանին, միայն զքրիստոսասիրութիւնն ունելով պատճառս, պահօք եւ աղօթիք եւ ողորմածութեամբ եւ զմիաշարքսն

յոտնկացութեամբ անցուցեալ զԺամանակս իւր մինչեւ ՚ի ծերութիւն. վասն որոյ եւ լուսով ՚ի Բարձանց պատուեաց զնա Աստուած՝ իջանելով ՚ի վերայ յօշեալ անդամոցն նորա, պսակելով եւ վկայելով զանպարտաւոր մահ նորա զմարտիրոսական: Ջոր տեսեալ սպանողացն սոսկացեալ ընկեցին ՚ի ջրհոր մի ցամաք, մինչեւ եկին իւրքն եւ տարեալ թաղեցին յիւր սեփեական վանքն Գանձասար կոչեցեալ, հայրենեօք տուն գերեզմանի իւրեանց. զնոյն ճառագայթս լուսոյ տեսանելով բերողացն: Ի նոյնքանիս թուականին Հայոց յեօթն հարիւր սպանին ՚ի դուռն Ելղանին Հուլաւին զսպարապետն Վրաց զԶաքարէ՝ զորդի Շահնշահի, ՚ի տիս երիտասարդութեան ՚ի գեղ ծաղկի՝ եւ յառաջադէմ յաջողման ժամանակի, յերեւանի եւ ծանօթ ամենեցուն, բարուրս ինչ եղեալ ՚ի վերայ. եւ զայն եւս՝ թէ խափանեալ եղէւ կարգեալ հարկն յիւրում ժամու երթալոյ յարքունիս: Ջորոյ մահն ողորմագին աշխարանօք սգացին ամենայն տունն Վրաց, Հայաստանօք մերձաւորօք նոցա. քանի՜ առաւել որք ծնանն զնա ծնողքն դառնակսկիծ եւ մարմնատանջ ողբովք: Վասն որոյ ՚ի նոյն աւուրս եւ նոյն սելու սգին սրտակտուր լեալ մեռաւ հայրն Շահնշահ կոչեցեալ, իբր տէր մայրաքաղաքին Անույ, որ երբեմն նստոց էր արքայի, որ աւագն էր թագաւորացն Բագրատունեաց, այլ եւ այլ աշխարհացն, զանուն տեառն Անույ Շահնշահ կոչելով, իբր թագաւորաց թագաւոր:

[ԴԴ]

Թիւքս խորհրդաւորք, 2, (եօթն հարիւր) որ է կատարեալ հանգիստ, եւ Ժ՝ (տասն) սուրբ, իբրեւ զսուրբս Աստուծոյ հանգուցեն ՚ի շաբաթն Աստուծոյ՝ որ առաջի կայ, զասացեալ նշանաւոր որեարսդ յայսմ թուաբերութեան, կատարեալ յաղօթս ամենայն սրբոց:

[ԴԵ]

Յեօթն հարիւր եւ մետասան թուականին վախճանեցաւ տէր Ներսէս կաթողիկոսն Աղուանից դառն ցաւով ջրգողութեամբ, չգտեալ ՚ի բժշկաց դեղ, բայց միայն զմինն Յիսուս Աստուած, եւ դեղ կենաց անմահութեան. առ որ փոխեցաւ մեծ յուսով խոստովանութեամբ եւ անդարձիւ ըստ արժանւոյն, կեցեալ զԺամանակս իւր հեզութեամբ եւ ողորմածութեամբ:

Յեօթն հարիւր եւ երկոտասան թուին հանգեաւ ՚ի Քրիստոս անուանի ճգնաւորն եւ արժանաւորն պատուելի աստիճանաց եւ կոչմանց, ուր կոչեաց շնորհն Աստուծոյ ՚ի քահանայութիւն, ՚ի վարդապետութիւն եւ յարհեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ եւ այլոց բերդից եւ գաւառաց, այրն անուանի եւ յերեւանի աշխարհի՝ տէրն Յովհաննէս Տուեցին անուանեալ, որ գերիս յիսնական անհաց եւ անջուր կատարէր, եւ զուրբաթ եւ զչորեքշաբաթ, եւ յԵրուսաղէմ գնացեալ բոկոտիւք, եւ զաւուրս աղուհացիցն յոտն կալով եւ անհաց ՚ի սուրբ Յարութեանն. եւ զարմացոյց զագգն Փռանգաց՝ որք անդ էին. զի ոչ միայն յոտն եւ անկերակուր, այլ եւ լռութեամբ կէայր, եւ ինդրէր յԱստուծոյ յայտնի հաւատ համբաւոյն՝ որ գայր յագգս. թէ յիջանել լուսոյն՝ Հայոց կանթեղն է ՚ի վառիլ, որպէս եւ ինքն պատմեաց, եթէ որ զկուրբայ սուրբ գերեզմանին պահէր՝ սիրէր զմեզ եւ փարէր զմեօք, եւ մեք ինդրեցաք ՚ի նմանէ զհաւաստիս իրացն. եւ նա ասաց դու զնէ կանթեղս, եւ բէ՛ր կախէ քոյին ձեռօքդ. եւ արարի այնպէս, զնեցի երեք կանթեղ, եւ կախեցի ՚ի վերայ սուրբ գերեզմանին. յաջմէ յանուն Փռանգաց եւ ՚ի ձախմէ Յունացն եւ ՚ի միջին զՀայոցն, որպէս ինքեանք սովոր

էին. թերեւս փակեցաք զդուռն եւ մատանեցաք: Եւ ետ ցիս պահապանն զմատանին եւ զբանալին յաւուրն մեծի ուրբաթուն. եւ յաւուրն մեծի շաբաթուն՝ յինն ժամուն մինչ կայաք յաղօթս՝ առհասարակ ամենայն քաղաքն եւ աղօթականքն եկեալ ՚ի հեռաստանէ, ասէ ցիս պահապանն գուբային, Տէր հրամէ՛, եւ բաց, զի իջաւ լոյսն, եւ չոգայ բացի, ՚ի վեր առեալ զմատանին. եւ ճշմարտապէս առանց կարծեաց միջին կանթեղն վառեալ բորբոքէր անպատմելի գեղով: Եւ այսու սքանչելեօք փառաւորեցաւ համբաւեցաւ այրն այն տէր Յովհաննէս: Ասաց ինքնին եւ զայս բան եթէ, չոգայ ՚ի սուրբ Բերդեհէմ, եւ տեսի անդ զսուրբ առաքելոցն պատկերսն նկարեալ ՚ի պարիսպ եկեղեցոյն, եւ Տաճիկք ՚ի պատճառս անարգութեան փորեալ էին զաչսն. տրտմեցայ ընդ իրսն, եւ աղօթեցի առ սուրբ առաքեալսն աղաչելով յայտնել ինձ՝ եթէ հաճո՞յ է նոցա ամենայն ուրեք նկարել զնոսա: Եւ յորժամ դարձայ յԵրուսաղէմ՝ յայնմ գիշերի տեսի ՚ի տեսլեան երկու արս փառաւորս, զի գային առ իս, եւ ելի ես ընդ առաջ նոցա եւ ասացի, թէ Ո՞վ էք սուրբքդ Աստուծոյ. եւ նոքա ասեն, Պետրոս եւ Յովհաննէս, որ աղաչեցեր ցուցանել քեզ վասն ձեռակերպելոյն զմեզ քրիստոնէից՝ որ բնաւ չէ մեզ հաճոյ եւ ձանձրացեալ եմք. եւ յայտնեմք ուրեք ուրեք եւ չլսեն մեզ: Ասէր եւ արեղայն իւր ուղեկից յԵրուսաղէմ. եթէ բոկ երեկ մինչ ՚ի տեղն. եւ ապա յաւուր միում կոչեաց զիս, եւ ասաց. Տես զոտս իմ զի ցաւէ եւ նեղէ զիս. եւ ՚ի տեսանելն իմ եւ ՚ի յորոնել զուռիցն ասղամբ՝ սրագոյն եւ ստուար կտորս փշոյ գտի՝ որ ելանէր թարախով ոչ սակաւ. եւ զարմանք կալաւ զմեզ, զի չյայտնեաց մինչեւ ՚ի տեղին, առ սերն Աստուծոյ եւ սուրբ տեղեացն առ ոչինչ համարեալ զկսկիծն: Այսպիսի զատ ՚ի վեր եւ նեղ ճանապարհաւ կացեալ մինչ ՚ի խորին ծերութիւնն՝ հանգեաւ ՚ի Քրիստոս, ՚ի հոչակաւոր վանսն Նոր-բերդին անապատ կոչեցեալ. թաղեցաւ ՚ի դուռն եկեղեցոյն, զոր իւր իսկ էր շինեալ. եւ այլ բազում շինուած եւ արդիւնս վաստակեալ հրամանաւ, կամօք եւ ձեռնտուութեամբ Վասակայ թագաւորագին Բագրատունոյ. որոյ յիշատակն օրհնութեամբ ՚ի կաթողիկէ եկեղեցոջ կացցէ առաջի Աստուծոյ անշիջանելի ՚ի հոտ անուշից յաւիտեանս:

[19]

Ի յեօթն հարիւր երեքսասան թուին կոչեաց զմեզ մեծն Հուլաւու Էլղանն ՚ի ձեռն Շնորհաւոր կոչեցեալ փառաւորելոյ առն յայնմ ժամանակի՝ յամենեցունց, եւ աւելի յաշխարհակալացն, ՚ի Բաթու կուսակալէն հիւսիսոյ, ուր չոգաւն եւ պատուեցաւ նախ, ապա ՚ի Հուլաւու Էլղանէն՝ որ տարաւ իւրով ծախիւք եւ գրաստիւք զմեզ եւ որք ընդ մեզ էին վարդապետք եղբայրք մեր Սարգիս եւ Գրիգոր, եւ աւագ երէցն Տփխեց տէրտէրն: Եւ տեսաք զմեծն զայն ՚ի մեծի աւուրսն ամսամտի եւ տարեմտի իւրեանց, ՚ի յամսեանն յուլիս ըստ հռոմայեցոց, եւ ըստ մեզ յարաց: Եւ էր նոցա աւուրք ուրախութեան իբր լուսին մի. եւ կոչէին զաւուրսն զայնոսիկ խուռուլթայ, իբր խորհրդատօնս, յորս խորհէին այլղանքն ազգայինքն Չանկղանին՝ առ մեծն եկեալ, զոր ինչ պատշաճն տեսանէին, հանդերձ ամենայն աւագունօքն իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ յամէն աւուր որիշ գունով փոփոխս: Անդ լինէին եւ ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ եւ երեւելի նուիրօք՝ թագաւորք եւ սուլտանք. որպէս եւ ՚ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում, եւ թագաւորն Վրաց Դաւիթ եւ Բրինձն Անտաքու, եւ սուլտանք ՚ի Պարսից կողմանց յուղվք: Եւ ՚ի տեսանելն զմեզ ծունր ոչ ետուն կրկնել եւ ոչ չոքել ըստ իւրեանց սովորութեանն. իբր թէ արքաւունքն՝ Աստուծոյ միայն երկրպագեն. զինի ետուն օրհնել, եւ ՚ի մեր ձեռաց առնուլ: Եւ խօսք զոր ինչ հրամայեաց՝ առաջին այս. Կոչել եմ զքեզ որ տեսանես զիս եւ ճանաչես, եւ ՚ի սրտաց

աղօթես վասն իմ: Եւ աւելորդ է թերեւս զամենայնն գրել, շատ խօսեցաւ: Եւ մեք տուաք պատասխանի եւ նստուցին զմեզ, եւ գինի ետուն. եւ շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ. եւ Վրացիք զիրեանց պաշտօնն, եւ Ասորիք եւ Հռոմք զիրեանցսն: Ձի յայնմ աւուր տեսին զեկեալսն յամենայն կողմանց, մինչ ասել Այլղանին, թէ եւ զքեզ միայն եմ կոչեալ, ի՞նչ է այս նշանս, որ ոչ յառաջ եւ ոչ յետեւ՝ մի աւուրք յամենայն կողմանց եկին ընդ քեզ, տեսանել եւ օրհնել զիս: Եւ յառաջեաց հրամայեաց ինքն, թուի եթէ նշան է, որ Աստուծոյ սիրտն լաւ է ինձ: Ասացաք. Ձմեզ այլ կալաւ զարմանք, եւ պատճառ՝ զոր դուք հրամայեցիք: Ապա հրամայեաց, թէ Ծածուկ բան ունիմ առ քեզ: Եւ յաւուր միում արար անապատ յոյժ, եւ հեռի կացուցեալ զամենայն բանակն, եւ երկու արամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար. յիւր ծննդենէ հետեւ եւ 'ի մօրէ՝ որ քրիստոնէայ էր, ասէ. եւ թէպէտ դայեակ սնուցանէ զտղայն, երբ 'ի հասակ գայ՝ զիւր մայրն սիրէ. չենք օտարք 'ի սիրոյ քրիստոնէից, զոր ինչ ունիս ասելոյ ասա՛: Եւ բռնեալ էր զիմ ձեռքս, եւ մեք ասացաք զինչ Աստուած երես ասել բան. թէ Որչափ 'ի վեր եւ դու քան զայլ մարդիկ, մօտ եւ յԱստուած. Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ: Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի. մինչ 'ի ձեզ՝ աշխարհաւեր են լեալ, եւ աղքատաց անողորմն ծանր շալակ են դրել. նաքան յոգոց են հանել, եւ լացեալ առաջի Աստուծոյ. Աստուած առեալ է զիշխանութիւնն եւ յա՛յլ ազգ տուեալ. թէ դուք աշխարհաշէն լինիք եւ աղքատաց ողորմած, 'ի ձեզանէ չառնու Աստուած, զոր տուեալ է՝ թողու առ ձեզ, եւ զոր տալ կամի՝ զայն այլ տայ: Ի՞ քո դրանս հէնց մարդ կացո՞՛ր յԱստուծոյ երկնչի եւ զձեզ սիրէ. որ զլալով եկած տառապեալն՝ որ աղերս չունի եւ կաշառք՝ ուրախ 'ի տուն աղարկէ, քեզ յիշեցնէ. եւ զաշխարհս տեսանել տուր հէնց մարդոյ՝ որ յստակ տեսանէ, կուրանայ ո՛չ կաշառօք, եւ քեզ ասէ զիրան:

Եւ յայս կարգիս շատ խօսեցաք: Հրամայեաց թէ 'ի սրտումս դրի զքո խօսքդ: Ո՞նց է որ զամէն զայն ասացեր որ յիմ սիրտս կայր՝ որ ինձ դիւր թուեաց. Աստուած խօսեցեալ է քեզ, երեւեալ է քեզ: Ասացաք, թէ Չէ. մեք մեղաւոր մարդ ենք, ապա զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացել ենք, եւ սիրտ թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ են, Աստուած յայտնեալ է քեզ առանց գրոց: Ապա ասացաք, թէ Առաջի աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ եւ ապա դու՝ որ սուտ չկայ 'ի ներս: Հրամայեաց, թէ ասա՛: Ասցի, թէ զինչ քրիստոնէայ կայ եւ արքաւուն ընդ ծով եւ ընդ ցամաք, ամիսոյ սիրտ հետ քեզ լաւ է եւ քեզ աղօթք են առնում: Հրամայեաց, թէ Հաւատալ եմ որ հէնց է. ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքաւունքն, ինձ ի՞նչ աղօթք առնեն, եւ թէ առնեն՝ Աստուած ե՞րբ լսէ. մէշում արքաւունն զԱստուած յերկնից յերկիրս բերե՞՞, չբերէ: Ասցէք որ յԱստուծոյ ճանապարհն կենան եւ աղօթք առնեն. մեր եղբարքն հետ մեզ վասն այն են 'ի կռուիլ, որ մեք քրիստոնասէր ենք եւ քրիստոնէութիւն կայ 'ի մեր տանս. նաքա տաճկասէր են եւ տաճկութիւն կայ 'ի նացա տանն:

Ապա ասէ ցմեզ. Ոչխարենի է՞ր եւ զգեցեալ եւ ոչ ոսկի. եւ իմացեալ թէ մեք մեծ մարդ եւ աստիճանի տէր չենք, լուր արեղայ մի եմք. եւ հրամայեաց թէ Մեծացանեմ զքեզ ոսկի զգեստիւ, եւ շատ ոսկի տամ: Եւ մեք ասեմք. Ոսկին մեղ եւ հողն մի է. մեք ա՛յլ մեծ ուզենք, որ վայել է քո մեծութեանդ, ողորմութիւն 'ի վերայ աշխարհի: Եւ հրամայեաց, թէ մէշում քթեթ կարեմ խիստ գեշ. եւ խիստ փոքր իրք, լուր այնչափ որ խունկ գնես եկեղեցւոյն, թէ չէ երկիր ինչ ասեն թէ Այլղանն զնա ո՞նց տեսաւ: Եւ զայդ զոր ասացեր՝ առնեմ, եւ մարդիկ յղարկեմ՝ որ տեսանեն զաշխարհ:

Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ, այլ կոչեաց զմեզ եւ խօսեցաւ. եւ ունէր 'ի ձեռքն բալիշ մի, եւ երկու հանդերձ էր տուել կարել: Յիշեցուցաք, թէ Այլդան, այդ դրամդ հատանի եւ հանդերձդ մաշի, մեք անհատանելի եւ անմաշելի խնդրեցաք պարգեւք: Եւ հրամայեաց թէ առաջի օրն զքո խօսքդ լմնեցի, առլէիւ եւ տուել դրել. կարդալ տուր եւ զինչ քո սրտիդ պիտի աւելի՝ զայն այլ գրել տուր: Եւ 'ի Սախալթու եւ 'ի Շահաբատինն եւ յանձնել զերկիրդ եւ զքեզ, որ զինչ ասես առնեն: Եւ մեք շնորհ կալաք եւ էլաք: Թերես աւելորդ թուիմք գրելով զայս, այլ վասն բարեսէր եւ քաղցրաբարոյ մեծի Հուլաուսինն յիշատակի գրեցաք յօգուտ, կամ յօրինակ այլոց՝ որ գալոց են յետ մեր, ո՞ զիտէ:

[ՂԷ]

Քանզի 'ի մտանել թուականութեանն Հայոց յեօթն հարիւր չորեքսասան, եհաս մեծին այնորիկ մեծագոյն հրաւիրակ, եւ եհար դաւազանն զօրեղ զքաջն զայն յաղթագեաց Հուլաուսն, եւ ժամանեաց նմա վճիռ նախահօրն. քանզի որդի էր եւ նա Ադամայ, որ էարբ 'ի բաժակէն յորմէ ամենեքեան ճաշակեցին եւ ճաշակեն. թէ եւ դառն էր նմա, էարբ զլէղին մահու՝ ոչ ուրախութեամբ որպէս Տէրն եւ յուսացեալք 'ի նա. զի խաբէին զնա աստեղագէտք եւ քուրմք պատկերաց ոմանց Շակմոնիիայ կոչեցեալ, որ է ասեն՝ Աստուած երեք հազար եւ քառասուն ամաց. կալոց է դեռ այլ եւս երեսուն եւ հինգ դումանս, որ է դումանն տասն հազար: Եւ ապա հանէ զնա ասեն միւս եւս Մոնդրին անուն. Տոյինք կոչէին զքուրմսն զայնոսիկ, որոց հաւատայր եւ հրամանաւ նոցա էլանէր 'ի պատերազմ, կամ չէլանէր. որք ասէին եթէ յերկար մնալոց եւ 'ի մարմինդ յայդ. եւ յորժամ յերկար ձերանաս այլ նոր մարմին զգենուս. շինել ետուն նմա մեհեան պատկերացն այնոցիկ. եւ երթայր անդ յաղօթս, եւ դիւթէին նմա զոր ինչ կամէին:

Եւ մինչդեռ սպասեաք մեք այլ ժամանակի, եւ երկրորդ տեսութեան եւ ծանօթութեան աւելագունի, ասել ինչ նմա զարժանն, այլ եւ մնայաք 'ի բարեսէր բարուցն եւ 'ի քրիստոնէասէր ցուցանել նմա յԱստուծոյ նշան ինչ ձեռնտու քրիստոնէից, ասել ինչ նմա վստահութեամբ. քանզի վարժեալ էր 'ի նոցա բանսն եւ հիւանդացեալ: Քանզի թողեայ պատկերաց խօսել տային եւ ձիոց, եւ յոլով էր 'ի նոսա արուեստ խաբէութեան եւ հմայութեան. եւ էին պարկեշտ 'ի կերակուր եւ 'ի հանդերձ եւ 'ի կուսութիւն, եւ 'ի չափաւոր ամուսնութիւն եւ 'ի խառնակութիւն. քսան ամաց կին առեալ, ասեն, մինչ յերեսուն ամն՝ 'ի շաբաթն երեք հետ խառնին. եւ անդի մինչ 'ի քառասուն ամն՝ ամսեանն երեք, եւ անդի մինչ 'ի յիսունն՝ տարեանն երեք. եւ ընդանցեալ՝ բնաւ ասեն ոչ մերձենալ, ուստի մանաւանդ կարէին խաբել: Եւ յայտոսիկ գայր հասանէր օրհասն, եւ կոխէր զբարձրն զայն բլուր լայն ոտամբն մահն. եւ փլուցանէր հաւասարէր իւրոցն նախնեաց. քանզի լեառն որ փլանելոցն է՝ փլցի, ասէ զիր: Եւ լինէր հաւատարիմ բան մարգարէին. Ամենայն փառք մարդոյ իբրեւ զճաղիկ խոտոյ. այլ հաւատարիմ է Տէր եւ արդար հատուցանել նմա զմասն բարւոյն, զոր օրինօք բնութեանն ստացեալ ունէր, եւ զիւրեանցն հայրենիս պահելով. զի ասախն, որպէս ասէին ինքեանք կոչելով զեղեալ սահմանն՝ 'ի Չանկզղանէն, սուտ չասել, չգողանալ, յայլոյ կին չխառնակել, սիրել զիրեարս հաւասար անձին, յիշոցք չունել եւ չզիտել բնաւ, զկամաւ հնազանդեալսն ապրեցուցանել՝ զերկիր եւ զքաղաք. եւ զանուանեալ տունս Աստուծոյ, եւ զկոչեցեալ նորա ծառայսն՝ զիարդ եւ իցենն՝ ազատ թողուլ 'ի հարկաց, եւ դնել պատիւ: Չոր եւ նա հրամայէր պահել եւ պահէր: Այլ եւ յիշենք զոր ասացն, թէ մեք որ պատուիրեմք աղօթել վասն մեր, ոչ թէ 'ի մահուանէ զերծանել, զայն չզիտենք, այլ խնդրէք յԱստուծոյ

որ 'ի մեր թշնամեացն ձեռացն չմեռանինք: Թէ կատարեցաւ՝ այն Աստուած գիտէ. զի համբաւեցին նախ, թէ դեղով եւ հնարիւք սպանին, եւ յետոյ ծածկեցին զգրոյցն: Սակայն մեծ թագուհին Տողուզ խաթունն կոչեցեալ՝ նախ քան զհամբաւել մահուն առաքեաց առ մեզ գաղտ, թէ Աստուած սիրեաց զԱյլղանն եւ տարաւ աստի, եւ զինչ որ աստ սիրէր եւ գայս աշխարհս նմա էր տուեալ, նոյնպէս եւ արդ գայն աշխարհն երեսո նմա. պատարագ լինի՝ թէ ոչ: Եւ ասացաք, թէ չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն եւ հարկաց թեթեւութիւն առնէք. զի Ասորիքն ասացեալ էին՝ թէ պատեհ է: Հարցեալ էր եւ վասն Ապաղային, որ աւագ որդին էր Հուլաւին, թէ պա՞րտ է գնա դնել, զի անդարձ նմա արար: Եւ մեք պատուիրեցաք՝ որ 'ի գրոց է գաւազն դնել, եւ անդարձն անկրկնելի կոչի ստուգաբանութեամբ: Որպէս եւ եղեն իսկ. եւ իւրեանց ազգայինն՝ որ եւ նա կոչէր Այլղան՝ Տակութար՝ երթեալ նստուցանէր զԱպաղէն կոչեցեալ 'ի տախտն եւ 'ի գահոյս հօրն, եւ հաւանեցան զօրքն ամենայն եւ հնազանդեցան: Այլ սակայն զի մեղքն մեր անչափ էին, չեղեւ սուզն չափով. զի յետ երկից ամսոց 'ի նոյն թուին՝ փոխեցաւ 'ի Քրիստոս քրիստոսասէր թագուհին Տողուզ խաթունն, եւ սրտակտուր միջաբեկ եղեն ազգք քրիստոնէից բազմապատիկ սգով եւ տրտմութեամբ. զի նմա կենօքն վաղվաղակի ողջանալ սկսաւ խոցն Այլղանին, ակն ունելով առաւել պայծառանալ քրիստոնէութեանն. զի որքան եւ էր պատճառն՝ նա իսկ էր ըստ մեր կարծելոյն: Այլ քանզի Աստուած իսկ է ամենայն բարեաց պատճառ, զոյսն չէ պարտ հատանել մեզ. քանզի կացոյց նա 'ի տեղի իւր միւս եւս հաւատացեալ ազգական իւր, կին բարեպաշտօն՝ կոչեցեալ Թուխթանի: Եւ բերեալ եղեւ 'ի Յունաց կին Ապաղային Դեսպինայ անուն, դուստր թագաւորին զոր Վատաճն ասէին, եւ պատուէր՝ թէ կնքուի Ապաղայն, եւ ապա առնու: Եւ ել համբաւն նոյնպէս եթէ մկրտեցաւ եւ առ գնա, 'ի փառս Քրիստոսի:

Յաւուրս յայս 'ի մեղաց իմոց անկաւ գրքունկս 'ի ձեռս հարամեաց, տղայօք մեր, եւ յողորմութենէն Յիսուսի ապրեցան տղայքն առ ժամն. եւ յետ ամի եւ կիսոյ գիրքս 'ի Տիխիսի 'ի վաճառ բերեալ եւ գնեալ 'ի տանէ երբօր մերոյ միոյ Մելէր կոչեցելոյ: Վասն որոյ ողորմութեան Տեառն փառք 'ի սուրբս ամենայն եւ յարարածս, եւ գնողին զսա՝ զթութիւն 'ի Քրիստոսէ:

[ԴԸ]

Իսկ 'ի մտանել թուականին յետքն հարիւր եւ հնգետասան՝ կողմնակալն հիւսիսի կոչեցեալն Բարքա, որ ունէր զտեղի Բայթուին եւ զՍարդախին եւ հաւանեալ էր օրինացն Տաճկաց, լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ գայ բազմութեամբ առ Կուր գետով, եւ ցուցանէ զինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Ապաղային, եւ երբօր իւրոյ՝ Իսմուդին, իբր թէ կենդանի է յետ մահու հօր նոցա: Եւ գայ կռիւ գնոսա, եւ անհոգութեամբ մինչեւ 'ի Հէճն, աղօթել անդ յուրախութիւն ամենայն Տաճկաց. յորմէ զարհուրեալ յայսմ կողմանէ կացելոցն՝ ցանկեն զերկայնութիւն գետոյն աստի՝ զոր Շիբարն կոչէին, եւ զգուշացան ամենայն պատրաստութեամբ զաւուրս ձմերայնոյն: Իսկ Բարքայն վրիպեալ 'ի յուսոյն՝ դառնայր 'ի տեղի իւր. եւ յաւուրս ամարայնոյն վճարէր զկեանս. զոր ասեն լինել բարուք ոչ խոռվարար, եւ ատեցող արեանհեղութեան:

[ԴԹ]

Ի նոյն թուին մերձ յաշնան յեղանակն՝ բացաւ մեզ աման դառն քացախուն, եւ մրուր բարկութեանն Աստուծոյ հայկազարմ ազգիս: Քանզի սուլտանն Մսրայ Փնտխտար անուն խնդրէր զբերդսն՝ զոր Տաթարին ուժովն առեալ էր Հայոց թագաւորն Հէթում: Եւ ՚ի չտալն, աւելի վասն երկեղի Տաթարին, բարկանայր յոյժ, եւ զօրս գումարէ բազում յոյժ, եւ առաքէ ՚ի ձեռն զօրագլխի որումն Սմլւօթ անուն յերկիրն Կիլիկեցոց. որ եւ յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՄիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ ՚ի նմա, եւ գտանէ գտունն գետնափոր գանձուցն, եւ առնու յոյժ բազում, զոր ՚ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր: Եւ գնայ աւերմամբ մինչեւ յԱտանա, եւ ապա լսէ համբաւ երկիւղի եւ դառնայ աւարաւ եւ գերութեամբ քառասուն հազարաւ, բաց ՚ի կոտորելոցն. որ գլուխ եւ խոց անողջանալի կոտորելոցն՝ Թորոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ ՚ի մատաղ հասակի մերձ ՚ի փթիթս մուրուաց, վկայեալ յամենայն բերանոյ, անպակաս ՚ի բովանդակ բարւոյ, եւ կուսութեամբ շտեմարանեալ ՚ի ծրարս շնորհացն Աստուծոյ: Որ յօժարութեամբ եւս դիմեալ ՚ի պսակն արեան. քանզի հարցեալ զովն ոչ էտ զանուն հօրն. զի կենօքն գերեալ՝ մի՛ լիցի աւելի բեռն հօրն եւ աշխարհին՝ ընդ անդրանիկ եղբօրն Լեւոնի, պսակելոյ եւ հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն առ կենօք հօրն: Քանզի նա եղև գլուխ գերելոցն մեր, եւ հուր աղէկէզ լերդաչարչար եւ սրտակտուր աշխարհիս մեր եւ ազգիս, որ կամք շնչարգել եւ յերերման: Հասանէ ձեռն վերին, որ եհարն ցասմամբ նոյն բժշկէ ողորմութեամբ, ածելով զմեծաբաց խոցն, առնելով գերեղարձ՝ զոր տարան ընդ այլսն. հնգետասան օր յամելով յաշխարհն եւ լնլով աղետիւք, զնոսա՝ իրօք, եւ զմեզ՝ խոցոտիչ համբաւովն:

[Ծ]

Իսկ ՚ի վերանալ թուոյն մերոյ յեօթն հարիւր եւ վեշտասան ՚ի կատարման քառասներորդաց աղուհացիցն, ՚ի լնուլ վեցերորդ շաբաթուն ՚ի յարութեան աւուր Ղազարու, սահմի ամսեան ՚ի քսան եւ վեց, փոխի յաշխարհէս զգալոյ յիմանալին՝ տէրն Կոստընդին պատրիարզն Հայոց, ծերացեալ եւ լի աւուրբք ըստ մարմնոյ, եւ առաւել եւս ըստ հոգւոյ եւ ըստ կամացն Աստուծոյ, յորովայնէ ընտրեալ, եւ ընդ ամենայն աստիճանս յառաջանալով անցեալ, ամենեքումք հաճոյացեալ, յամենայն ազգաց եւ ՚ի լեզուաց վկայեալ. կուսութեամբ անփուտ մնացեալ յիմանալի եւ ՚ի զգալի մարդն եւ ՚ի զգայութիւնս եւ ՚ի զգայարանս, եւ ՚ի բոլոր անդամս մարմնոյ. կրակից եւ վշտակից եւ սգակից ազգիս եղեալ ՚ի մեղսաբեր եւ ՚ի ցասմնահար դարուս. եւ ՚ի ժամանակս ցաւալից եւ ՚ի կսկծահար՝ զբոլորն յինքն տարեալ եւ ըստ կարի թեթեւացուցեալ, սիրտ եւ բան եւ գանձ ծախելով առատաբար եւ անխնայ: Վասն որոյ եւ յարմարի նմա ասել տեսոն իւրոյ. Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր զանազան փորձանաց, այրիչ եւ խեղդիչ որոգայթից. որ եւ ճաշակեաց իսկ եւ ՚ի թանձրացեալ եւ զմոսեալ վերջնոյ լեզուոյս, մերձ ՚ի կատար կենացն տեսոնաբար, զդրդումն թագաւորութեան մերոյ, զսուր եւ զգերութիւն իւրական ծննդեան սննդեան աշխարհին. մտեալ ՚ի փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բորբոքման, ձեռասուն արքայորդեացն կորստեան. որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա եւ արարին տազնապել ստիպեան շնչոյն, բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիժ կենցաղոյս: Զոր տեսեալ Յիսուսին իւրոյ եւ Աստուծոյ՝ ընդ Ղազարու հանէ արտաքոյ այսքան դժնդակ կրիցս՝ յանպատումն: